



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9714

651

9-34

4 March
1881

2011

2002

651

Գ-34

ՓՈՔՐԻԿ

391

ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՄ

ԿԱՆՈՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՒ


ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆԻՒԹՈՅ ՎՐԱՅ ՆԱՄԱԿԻ ԹՐԻՆՈՒԵՐ

Ի ՊԵՏՍ Դ ՊՐՈՑԱՅ



ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԾ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՑՊԵԴՐՈՒԹԻՒՆ Յ. ՓԱՓԱԶԵՅՆ

1881

ԱԿՑ Ա 2504/53



ՆԵՐԱԿԱԳՐՈՒԹԵԸՆ ՎԱՐԺԱՐԵԱԸ
ԷՆԴՀԱՆՈՒՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ Ի ՆՉ

ԵԿ

ԶԵՒՔ Բ Ա Ն Ի Ց

1. ԹՈՒՂԹ ՆԱՄԱԿԻ

Հասարակ նամակներ կը գրուին , ինչպէս
յայտնի է , քան զսովորական գրի թուղթը
սակաւ ինչ ազնուագոյն թղթոյ վրայ , որ նա-
մակի թուղթ կը կոչուի , և քառածալ թերթի ,
այսինքն՝ մէջտեղին ըստ լայնութեան կտրուած
թերթի մեծութեամբ է . իսկ աղերսագիրք
ամբողջ թերթի վրայ կը գրուին : Աղերսագրի
համար յատուկ թուղթ կայ , որ սպիտակ և
ազնուագոյն է քան հասարակ թուղթ նամակի ,
և կը կոչուի զիւանաթուղթ : Գործի և առեւտրոյ
վերաբերեալ նամակներ կրնան երբեմն թեր-
թին կիսուն , այսինքն մէկ խաւին վրայ մի-
այն գրուել : Ուրիշ նիւթերու վերաբերեալ
նամակներ միշտ երկխաւ թղթոյ վրայ գըր-



36836-66

Տադար - Ահ. հ.

ուելու են : Տոմսակներ և ընտանեկան նամակներ կրնան ութածալ մեծութեամբ թըղթոյ վրայ գրուիլ :



2. ԹՈՒԱԿՈՒՆ ՆԱՄԱԿԻ

Նամակի թուականն է թիւ տարւոյն և ամսոյն օրուան յորում կը գրուի նամակն , և որ թուանշանով կը նշանակուի՝ հանդերձ անոր ուամբ ամսոյն , նաեւ տեղւոյն ուր կը գրուի նամակը : Արեւելք , ուր թուականը դեռ ըստ հին տոմարի կը գործածուի , նոր տոմարին հետեւողը , շիոթութեան առիթ չտալու համար , նոր տոմարին ամսաթուոյն հետ հին տոմարինն եւս կը նշանակեն , այսպէս՝ 7/19 Մայիս : Որովհետեւ , ինչպէս յայտնի է , ըստ հին տոմարի ամիսը 12 օր ետ մնացած է , ուաղին թուանշանը կը ցուցնէ ամսոյն օրն ըստ հին տոմարի , երկրորդն՝ ըստ նոր տոմարի :

Գործի և առեւտրոյ նամակներու մէջ թուականը նամակին գլուխը կը գրուի՝ թըղթոյն վերի եղբը գէպ յաջ : Ուրիշ նիւթերու վերաբերեալ թղթոց թուականը կը գրուի ի վերջ նամակին գէպ ի ձախ : Այս կերպն յարգ գական է :

Կրնայ շարթուն օրը միայն յիշուիլ առանց

թուականի , եթէ նամակը մի և նոյն քաղաքի մէջ կամ անոր մօտ բնակողի մը կը գրուի , և նոյն օրը կրնայ համել այն անձին ձեռքն առ որ ուղղուած է : Նամակին թուականն ընդհանրապէս կարեւոր է , և պէտք չէ զանց առնել :



3. ՎԵՐՆԱԳԻՐ ՆԱՄԱԿԻ

Նամակի վերնագիրն է յարգութեան , երբեմն նաեւ պաշտօնի կամ պատույ անունը որ կը տրուի անձին առ որ կ'ուղղուի նամակը : Վերնագիրը միշտ նամակին վրայ , վերի եղբէն քանի մը մատ վար և թղթոյն երկու եղերաց մէջտեղ կը գրուի առանձին տողով : Որչափ պատուաւոր է անձն առ որ կ'ուղղուի նամակը , վերնագիրն այնչափ վար գրուելու է գէպ ի մէջ թղթոյն , և այնչափ աւելի միջոց թողարկու է ի մէջ վերնագրին և մարմնոյ նամակին :

Ծնատանեկան նամակներու և տոմակներու վերնագիրը կրնայ բուն նամակին տողին մէջ դրուիլ այսպէս :

Ասչնար է լիճ , տէր , կամ , սիրելի բարեկամ , յայտնել , և այլն :



4. ՄԱՐՄԻՆ ՆԱՄԱԿԻ

Նամակի մարմարվ կը հասկցուի բուն նամակը :
Նամակին մարմարյն մէջ բառ քերելէ , և բառ
կամ խօսք գծելով ուրիշ մը վրան գրելէ
պարտ է զդուշանալ :

Իւրաքանչիւր էջի վարի կողմը , նոյնպէս
թղթոյն ձախ դին , գոնէ երկու մատ լայն
լուսանցք թղղուելու է :

Երբ նամակը թղթոյն երրորդ էջը պիտի
լեցնէ , մոռնալու չէ թղթոյն աջ եզրը պա-
րապ մաս մը թղղուլ ինքոյ համար որ դու-
ցէ , երբ նամակը կը բացուի , բառ վերնայ ,
և խօսքին իմաստը խանդարուի կամ քանի
մը տող միայ անիմանալի :



5. ՎԵՐՋ ՆԱՄԱԿԻ

Ի վերջ նամակին խօսքի այլեւայլ ձեւեր
կը գործածուին , զոր օրինակ՝ շատ մեծարոյ
անձի մը ,

Խորին յարդանօք եմ ,

Տէր ,

Զեր խոնարհ և հազանդ
Ժառան Ա . Ա .

և կամ ,

Պատիւ կ'համարիմ ինձ , Տէր , լիսել
Զեր խոնարհ և հազանդ
Ժառան Ա . Ա .

Հետեւեալ ձեւերն աւելի ընտանեկան են .

Ըսկալարուք դհաւաստիս կատարեալ բարեկամութեան ,
կամ , սիրոյս :

Սեռն և սերտ սիրով եմ միշտ
Հաւատարիմ բարեկամ ձեր
Ա . Ա .

Ըսկալարուք մեծարանաց ողջոյնս :
Ա . Ա .

Վաստահ լերուք երախտավիտութեան և սիրոյս :
Ա . Ա .

Ողջոյն սիրոյ և մեծարանաց :
Կալթողին բարեկամ ձեր
Ա . Ա .

Ողջ լերուք :
Հաւատարիմ բարեկամ ձեր
Ա . Ա .

Ողջ լերուք :
Համբուրիւ ձեռաց եմ միշտ խանդակալթ ,
կամ , հազանդ որդի ձեր
Ա . Ա .

Ողջ լեռ :

Սիրելի , կամ , չարազատ եղբայր քո

Ա . Ա .

Այն նամակաց մէջ որ կը գրուին պաշտօնատարէ կամ սպասաւորէ կամ որ և իցէ խոսնարհադոյն անձէ առ տէր իւր կամ առ այլոք աւագ՝ չըսուիր այն անձին . Մատուցէք ողջոյն այս ինչ անձնն : Ծնողաց կամ ազգականաց կամ բարեկամաց գրուած նամակներու մէջ միայն ներելի է այդ համարձակութիւնը :

Եթէ հարկ է աւագ անձի մը գրուած նամակի մէջ ուրիշի բարեւ գրել , յարդական կերպով կրնայ ըսուիլ , զոր օրինակ .

Կերեցէք , Տէր , համարձակութեանս աղաչել ղջեղ մատուցանել յարգանաց ողջոյն Զէր մեծարոյ եղբօր , կամ , սիրելի բարեկամին , և այլն :



6. ՑԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ

Յետ գրութեան կ'ըսուի այն մասը զոր կը յաւելունք երբեմն նամակին և ստորագրութեան յետ աւարտման :

Այսպիսի յաւելուածներէ առաջ տողին սկիզբը կը գրուին Յ. Գ. գիրելը որ կը նշանակեն յետ գրութեան : Պէտք է գիտնալ որ այսպիսի յաւելուած աւագ անձանց գրուած նամակներու մէջ անվայել է :



7. ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ստորագրութիւնը ցուցնելու համար է թէով է գրող նամակին , և կը գրուի , յետ աւարտման նամակին , ի ստորեւ գէպ յաջ , հանգէպ թուականին եթէ թուականը դրուած է ի ստորեւ , և կը պարունակէ նամակագրին պատուոյն և աստիճանին համեմատ խոնարհական կամ յարդական ածական մը , նամակագրին անունը , մականունը , ախտղոսը կամ պաշտօնին և կամ արուեստին անունը . զոր օրինակ .

Հաղանդ որդի ձեր Ա. Ա. աշակերտ այս անուն վարժարանի :

Առ աւագ և մեծարոյ անձինս գրուած նամակներու մէջ ստորագրութիւնը շատ վար կը գրուի : Թուականը և ստորագրութիւնը պէտք չէ մոռնալ : Այսպիսի մոռացում մը նշան է համբակութեան , և կրնայ վնաս բերել նամակը գրողին :



8. ՆԱՄԱԿՆԵՐ ՓԱԿԵԼ ԿԱՄ ԾԱԼԵԼ

Նամակներ կը ծալուին երկայն քառակում ձեւով . իսկ կարեւոր նամակներ կամ աղերսագիրք կը ծալուին ի չորս և պահարանի մէջ

կը գրուին : Որ և իցէ նամակ պահարանով
զրկել պատիւ է անձին առ որ կ'ուզզուի նա-
մակը :



9. ՆԱՄԱԿՆԵՐ ԿՆՔԵԼ

Առ աւագ և մեծարոյ անձինս գրուած
նամակներ կը կնքուին կարմիր կնքամնով.
Խոկ սովորական նամակներու համար կնքոյ
նշխար կը գործածուի : Սգաւորներէ և առ
սգաւորս գրուած նամակներու համար կնքա-
մնով կամ նշխարը պարտի լինել սեւ : Երբ
կնքամնոմ կը գործածուի , պարտ է ջանալ
նամակին վրայ այնչափ մոմ կաթեցնելոր քան
զտարածութիւն կնքոյն քիչ աւելի ըլլայ ,
այնպէս որ գրոշմին բոլորտիքը բարակ շրջա-
նակ ձեւանայ . խոշոր և թանձր կտոր կնքա-
մոմ նամակին վրայ տգեղ է և համբակու-
թեան նշան :



10. ՀԱՅՑ ՆԱՄԱԿԻ

Հասցէ կըսուի ինչ որ կը գրուի նամակին
վրայ յետ փակման նամակին : Հասցէին մէջ
կը յիշուին անուն , մականուն , տիտղոս և
արուեստ անձին առ որ կը գրուի նամակը ,
նաեւ անուն քաղաքին կամ տեղւոյն ուր պի-

տի երթայ նամակը : Տեղւոյն անունը կը գըր-
ուի միշտ ի խոնարհ դէպ յաջ , այսպէս .

Առ մեծապատիւ Տէր , Գարեգին Կանարեան

Ի ՎԱՆ

Սովորութիւն է նշանակել , յետ անուան
քաղաքին եւ անձին առ որ կը գրուի նա-
մակը՝ փողոցին անունը և տան թիւը , եթէ
այս վերջինք ծանօթ են :



11. ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՒ ԿԱՐԳԻ ԱՆՁԱՆՑ
ՀԱՄԱՐ ՎԵՐՆԱԳՐԻ , ՊԱՏՈՒԱՆՈՒԱՆ ԵՒ
ՀԱՍՑԵԻ ԶԵՒԵՐ

Կ Ե Ր Ն Ա Գ Ի Ռ

Կայսեր կամ թագառի . ՄԵծափառ , կամ ,
ՎԵհափառ . Տէր :

Խշանսի . Հոյակապ իշխան :

Ազնուականի . Ազնուազարմ Տէր :

Պաշտօնի տէր անձանց . Բարձրապատիւ Տէր :

Պատուաւոր անձանց . Մեծապատիւ Տէր :

Հասարակ բաղաքացւոյ . Սիրելի և պատուական
Տէր :

Տիկնոջ և Օբիորդի . Ազնիւ Տիկին , կամ , Օրի-
որդ :

Կաթողիկոսի . Գերերջանիկ հոգեւոր Տէր :
Պատրիարքի . Արհիապատիւ Սրբազն Տէր :
Արքեպիսկոպոսի կամ Եպիսկոպոսի . Ամենապատիւ
սրբազն Տէր :
Աբբաչօր . Գերապատիւ Արբահայր Տէր :
Վարդապետի . Յարդոյապատիւ Տէր :
Քահանայի . Յարդելի և պատուական Տէր :

**ՊԱՏՈՒԱՆՈՒՆ ԿԱՄ ՎԵՐԱԴԻՐ ԳՈՐԾԱԾԵԼԻ
Ի ՆԱՄԱԿԻՆ**

Կայսեր կամ թագաւորի . Կայսերական , կամ,
Սրբայական վեհափառութիւն ձեր :
Խշանի . Հոյակապ տէրութիւն ձեր :
Ազուականի . Ազնուազարմ տէրութիւն ձեր :
Պաշտօնի տէր անձին . Բարձրապատիւ տէրու-
թիւն ձեր :
Պատուաոր անձին . Մեծապատիւ տէրութիւն
ձեր :
Հասարակ քաղաքացւոց . Պատուական տէրութիւն
ձեր :
Տիկնոջ և Օբխորդի . Ազնուութիւն ձեր :
Կաթողիկոսի . Գերերջանիկ հոգեւոր տէրու-
թիւն ձեր :
Պատրիարքի . Արհիապատիւ տէրութիւն ձեր :
Արքեպիսկոպոսի , կամ Եպիսկոպոսի . Ամենա-
պատիւ տէրութիւն ձեր :

Աբբաչօր . Գերապատիւ տէրութիւն ձեր :
Վարդապետի . Յարդոյապատիւ տէրութիւն
ձեր :
Քահանայի . Յարդելի տէրութիւն ձեր :

ՕՐԻՆԱԿԻ ՀԱՍՑԵՒ

Կայսեր կամ թագաւորի . Առ Մեծաղօր և Վե-
հափառ Ա. Ա. Կայսր , կամ , ինքնակալ ,
կամ , թագաւոր :
Խշանի . Առ Հոյակապ Տէր և Խշան Ա. Ա.
Ազուականի . Առ Ազնուազարմ Տէր Ա. Ա.
Պաշտօնի տէր անձին . Առ Բարձրապատիւ Տէր
Ա. Ա. Խորհրդական , եւայլն :
Պատուաոր անձին . Առ Մեծապատիւ Տէր Ա. Ա.
Հասարակ քաղաքացւոց . Առ Պատուական Տէր Ա. Ա.
Տիկնոջ և Օբխորդի . Առ Ազնիւ Տիկին , կամ ,
Տիկնոջ :
Օբխորդ . Ա. Ա.
Կաթողիկոսի . Առ Գերերջանիկ Հոգեւոր Տէր
Ա. Ա. Կաթուղիկոս եւայլն :
Պատրիարքի . Առ Ամենապատիւ Սրբազն
Տէր Ա. Ա. , Պատրիարք եւայլն :
Արքեպիսկոպոսի կամ Եպիսկոպոսի . Առ Ամենա-
պատիւ Տէր Ա. Ա. , Արքեպիսկոպոս ,
կամ Եպիսկոպոս , եւայլն :
Աբբաչօր . Առ Գերապատիւ Տէր Ա. Ա. Աբ-
բահայր , եւայլն :

Վարդապետի . Առ Յարդոյապատիւ Տէր , Ա .
Ա . Ծայրագոյն Վարդապետ , կամ , Քա-
րողիչ , Եւայլն :
Քահանայի . Առ Յարդելի Տէր Ա . Աւադե-
րէց , կամ , Քահանայ , Եւայլն :

ՀԵՂԱՎԱՐ

ԳԼՈՒԽ Ա .

Ն Ա Մ Ա Կ Ք Մ Ա Դ Թ Ա Ն Ա Ց



Գ Ի Տ Ո Պ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Որդիք մանաւանդ կը դրեն մաղթանաց
նամակներ մեծ զգուշութեամբ և յարդանօք
առ ծնողս իւրեանց ի սկզբան տարւոյ կամ
ի տարեդարձի ծննդեան կամ անուան նոցա :
Յորդւոց առ ծնողս գրուած նամակներու գըլ-
խաւոր նպատակն է ցուցնել զիւրեանց յա-
ռաջդիմութիւն անցեալ տարւոյ մէջ , վասն
զի կը հաւատան թէ ծնողաց համար չկայ բան
մը այնպէս ցանկալի և պատուական , ինչպէս
տեսնել թէ որդիք կը զարդանան ոչ մարմ-
նով միայն այլ և մոռք , և թէ արդարեւ
կ'օդտին դաստիարակութենէն որ կը տրուի
նոցա :

Որ հեռի են ի ծնողաց՝ կը մաղթեն նոր
տարին նամակաւ . իսկ որ մօտ են ծնողաց
իւրեանց , ընդհանրապէս մեծ և ազնիւ թըլ-
թոյ վրայ գրելով իւրեանց մաղթանքը՝ կըն-
թեռնուն զայն նոր տարւոյն օրը կամ նախ-
ընթաց երեկոյին ի լուր ծնողաց :
Նոր տարւոյ նամակներու մէջ գրողն պար-

տի յիշել նախ զարժանաւորութիւն և զերախսիս անձին առ որ կը դրէ , և ապա ասել թէ ի մեծարանաց և յերախտագիտութենէ եկած էի դրել , ոչ թէ հետեւելու համար սովորութեան՝ որմէ օգուտ քաղաք է միայն իրեւ պատեհ առթէ իւր պարտքը կատարելու : Ի վախճանի պարտի խնդրել յանձնէ առ որ կը դրէ՝ չդադրեցունել զերախտիս իւր և զսէր : Այս բանքը կը սուին մանաւանդ երբ անձն առ որ կը դրուի՝ մեծարայ ոմն է և բարերար :

Իսկ մտերիմ բարեկամներէ կամ ի հաւասարից առ միմեանս գրուած մաղթանաց նամակներու ոճը տարբեր է , այսինքն զուարթ և ընտանեկան քան ծանր և յարդական . բաւական է պարզութեամբ և համառօտիւ մաղթել միայն երջանիկ տարի : Կատակ անդամ կրնայ մտնել , եթէ ընտանութիւնը կը ներէ , և գրողին հանձարը կրնայ հաճոյացնել կատակը : Չէ պարտ մնուանսալ սակայն թէ բըռնազրօսութիւն և սեթեւեթ , այսինքն աւելորդ զարդ , ցուրտ և ծաղքելի , շատ անդամ նաեւ զլուելի կը նեն գրուածը , թէ ծանրը ըլլայ ոճն և թէ զուարթ . ինքնին բղխելու են բանք , ոչ թէ վնառուելու կամ ստեղծուելու են :

Ա. ՂԱՄԱԿԻ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

1. Մանուկ որդի որ հեռու տեղ գպրոց է՝
առ ծնողու իր :

Սիրելի ծնողք իմ .

Եատ կը փափաքէի ձեր քով գտնուիլ նոր տարւոյ օրը , յայտնելու համար սէրս և չնորհակալութիւնս առ ձեզ : Այսու պատեհութեամբ պիտի խոստանայի հնազանդութիւն առ ձեզ , հանդարտութիւն և խմասութիւն ի վարս , և ջանք և յարատեւութիւն յուսման : Եւ որովհետեւ հեռու գտնուելով չեմ կարող յայտնել ձեզ զայսոսիկ անձամբ , կը փութամ ահաւասիկ կատարել դրով : Ընկալարուք ուրեմն , սիրելի ծնողք , ձեր մանուկ որդւոյն անկեղծ փափաքը , չնորհելով փոխարէն զօրհնութիւն ձեր , որով միայն կը յուսամ կատարել բարի առաջադրութիւններս յառաջիկայ տարւով , և առնել զձեղ ուրախ և գոհ :

Հնազանդ որդի ձեր

(Թառական)

Ա. Ա.



2. Հեռու տեղ ուսում որպվող երիցագոյն որդի
առ ծնող իւր :

Սիրելի ծնողք .

Բարի որդւոյ պարտք է յայտնել նոր
տարւոյ օրը սէր և չնորհակալութիւն առ
հայր և առ մայր իւր : Այս պարտքը կը փու-
թամ ահաւասիկ կատարել այս օր , որ կ'աւե-
տէ մեզ նոր տարին : Ապերախտ չեմ , և կըր-
թութիւնը զոր կընդունիմ ձեր խնամով՝ եւս
աւելի երախտագէտ կընէ զիս : Գիտեմ թէ
չեմ կարող այլ աղդ հատուցում ընել ձեր
երախտեաց , բայց եթէ ջանալով լինել այն-
պիսի՝ որպիսի կը փափաքիք տեսնել զիս : Մի
տարակուսիք որ այս ջանքը կընեմ և պիտի
ընեմ միշտ : Եւանդս մեծ է , և կը յու-
սամ չամցնել զձեղ , այլ մանաւանդ լի-
նել ձեղ արժանաւոր որդի , այնպէս որ
միխթարուիք տեսնելով թէ ունայն չեղեւ
ինչ որ ըրիք մինչեւ ցարդ վասն իմ : Հաճե-
ցէք ուրեմն , սիրելի ծնողք , ընդունել փա-
փաքս ձեղ գոհացնելու , և մաղթանքս ձեր
կենաց և երջանկութեան համար : Կը յուսամ
թէ ինչ որ կը զրեմ միամիտ սրտիւ՝ բաւա-
կան է լուու զձեղ ուրախութեամբ և միխ-
թարութեամբ և ընդունել տալ ինձ զօրհ-
նութիւնն ձեր , որում կը սպասեմ իբրեւ
խոնարհ և հնազանդ որդի

(թուական)

Ա. Ա.

3. Ա. Ա. օրինակ սոյս սիւթոյ :

Սիրելի հայր իմ և մայր .

Յուսամ թէ այս նոր տարւոյ արեւը ողջ
առողջ պիտի տեսնենք դուք և ես , և այս
մեծ ուրախութիւն է վասն իմ . ցաւ է ինձ
սակայն որ այն ցանկալի առաւոտը պիտի ան-
ցունեմ ձենէ հեռու : Ոչ թէ , ինչպէս անց-
եալ տարիներ , նոյնպէս այս տարի , կարող
պիտի ըլլամ զարթուցանել զձեղ այն առաւոտ
համբուրիւ և մաղթանօք , այլ այն երջանիկ
օրը , և բարէ , բոլոր տարին խոլ պիտի ան-
ցունեմ առանց տեսանելոյ զձեղ և վայելելոյ
ձեր դութը : Ուստի ոչ այլ ինչ մնայ ինձ , բայց
եթէ այսու համառօտ գրով մաղթել ձեղ
այս նոր տարին , ոչ ի սովորութենէ , այլ ի
սիրոյ և ի չնորհակալութենէ , և խնդրել յերկ-
նուստ վասն ձեր յաջողութիւն , հանդիստ և
ուրախութիւն : Գիտեմ թէ որպէս ինձ , նոյն-
պէս ձեղ ծանր է այս բաժանումն , զոր կը
թեթեցնէ միայն յոյսը թէ պիտի չնորհուի
մեզ տեսանել զմիմեանս , և վայելել երջա-
նիկ օրեր : Այս երջանկութեան համար ես կը
ջանամ ընել ինչ որ կարող եմ , որպէս զի
չպիտիք դուք ձեր ակնկալութենէն որ է
տեսմել զիս բարի , հնազանդ և յառաջա-
դէմ , և ես՝ ի համբուրելոյ զձեղ ողջ և ա-

ոռղջ յերջանկութիւն ինձ , որ թէպէտ հեռի
ի ձէնջ , սակայն հոգւով մօտ առ ձեզ՝ կը
մատչիմ ի համբոյր ձեր աջոյն , ինդրելով
զօրհնութիւն ձեր իբրեւ

Հնաղանդ և երախտաղէտ որդի

(Թագավորին)



Ա. Ա.

4. Ա. Ա. օրինակ նոյն նիւթոյ :

Եկրելի ծնողք .

Ո.հա միւս եւս նոր տարի : Ո՞րշափ տարբեր
կ'երեւի ինձ այս տարի անցեալ տարիներէ :
Ուրիշ տարեգլուխներ կըխորհէի թէ նոր տա-
րին ոչ այլ ինչ է եթէ ոչ կաղանդ , այսինքն
ուտելու , հագուելու , պարգեւ ընդունելու
և ուրախանալու օր : Բայց այս անդամ սկսայ
շատ տարբեր խորհիլ : Հիմա կը զգամ թէ
նոր տարին մոտաց և սրտի նորոգութեան ժա-
մանակ է : Մեր պատուական վերակացուխն
խրատը շատ ազդեց ինձ : Սորվեցայ թէ Ո.սո-
ուած կը չնորհէ մեղ նոր տարի , որպէս զի
ժամանակ ոննենանք խորհելու մեր անցեալ
կենաց վրայ , և ուղղել մեր վարքը : Ուստի
կը յուսամ , սիրելի ծնողք , որ այս տարի գոհ
պիսի լինիք յինէն : Եթէ մինչեւ ցարդ այն-
պիսի էր վարքս որ ձեզ ցաւ և գժգոհութիւն
տուի , ներում կը ինդրեմ , և կը խոստանամ
ջանալ այսուհետեւ ուղղել թերութիւններս ,
և այսու գոնէ թեթեւ հասուցում ընել ձեր
այնչափ վաստակոց և ճգանց վասն իմ :

Առաջադրութիւններս բարի են . անդըրդ-
ուելի մնալու համար կարօտ եմ ձեր աղօթից
և օրհնութեան : Մաղթելով ձեզ երկար
կեանք և ամէն երջանկութիւն , համբուրեմ
յարդանօք զաջ ձեր :

Հնաղանդ որդի ձեր

(Թագավորին)

Ա. Ա.



5. Ա. Ա. օրինակ նոյն նիւթոյ :

Եկրելի ծնողք .

Ձեր նոր տարւոց ընծային զոր ընկալայ շը-
նորհակալութեամբ՝ չէի կարող լաւագոյն փո-
խարէն ընել , բայց եթէ զրկելով ձեզ գծա-
գրութիւն մը որ իմ ձեռագործս է : Հաճե-
ցէք ընդունել զայս , սիրելի ծնողք , ոչ մի-
այն իբրեւ երախայրի փութոյս և յառաջա-
դիմութեանս , այլ իբրեւ ապացոյց թէ կը
ջանամ գոհ ընել զձեզ զարդանալով օր ըստ
օրէ յուսման և իբարի վարս : Այսու առթիւ
կիմացնեմ ձեզ նաև , որ ի սկզբան տարւոյս
առաջադրած եմ ունենալ ընտիր վարք , զոր
գիտեմ թէ կը փափաքիք տեսնել յիս առա-
ւել քան զայլ ամենայն ինչ :

Ոչ միայն գիր , այլ և իմաստ և լեզու նա-
մակիս՝ իմ է , և ջանացած եմ ըստ կարի ա-
ղատ գործել զայն թերութենէ : Համբուրե-

ցեք ուրեմն հոգւով ձեր որդին և տուք
զօրհնութիւն ձեր, որպէս և ես կը համբու-
րեմ հոգւով կաթոդին զաջ ձեր :

Հնազանդ որդի ձեր

(Թագավորական)

Ա. Ա.



6. Ի պատմաւոյ՝ առ ծնողս լոր:

Սիրելի հայր իմ և մայր .

Մեծամեծ պարտականութիւններէս միոյն
մէջ պակսած պիտի համարէի զիս, եթէ ի
սկզբան նորոյ տարւոյս չյայտնէի ձեղ սէրս
և երախտագիտութիւնս որ առ ձեղ: Ընկա-
լարուք ուրեմն, իղծս և աղերսս ձեր առող-
ջութեան և երջանկութեան համար: Իցիւ
լսէր ինձ ամենակախն և տայր ձեղ անմռայլ
օրեր: Իցիւ յերկարէին աւուրք ձեր յերջան-
կութիւն մեր գերգաստանին, մանաւանդ-
ինձ զոր կարօտ եմ միշտ ձեր խրատուն և
պաշտպանութեան: Խրաքանչիւր տարի ա-
ճեցնելով հասակս կ'աճեցունէ նաեւ չնորհա-
կալութիւնը զոր պարտիմ ձեղ այն ամենայն
աշխատութեանց և նեղութեանց համար զորս
յանձն կ'առնուք կամաւ վասն իմ: Մոռաց-
կոտ չեմ և ոչ ապաշնորհ. երախտագիտու-
թիւնը կը զօրացնէ յիս սէրը զոր ունիմ ի բը-
նէ առ ձեղ իբրեւ որդի:

Հաճեցէք, սիրելի ծնողք, որ համբուրեմ
ձեղ հոգւով այնու ջերմութեամբ զոր պիտի
տեմնէիք յիս, եթէ այսպիսի ուրախալի օր
մը մօտ գտնուէի ձեղ մարմնով:

Խորին մեծարանոք եմ

Հնազանդ որդի ձեր

(Թագավորական)

Ա. Ա.

7. Յամումնացեալ որդւոյ՝ առ ծնողս լոր:

Սիրելի ծնողք .

Ահա եկաւ օրն որ կ'իմայնէ ինձ թէ պար-
տական եմ յայտնել սէրս և երախտագիտու-
թիւնս որ առ ձեղ: Տարիները փոխանակ
նուաղեցնելու կ'աճեցունեն բարի որդւոց բը-
նական սէրն առ ծնողս իւրեանց: Ուրախ եմ
որ կը գտնեմ զիս ի թիւ այսպիսի որդւոց:
Արդարեւ, սիրելի ծնողք, որչափ կը զօրա-
նան հասակս հետ մտաւոր կարողութիւն-
ներս, այնչափ աւելի կը ճանչնամ ձեր յար-
գը: Չեր բարութիւնը և իմաստութիւնը
յայտնի կը տեմնեմ, և կը զդամ որ այժմու
համեստ և երջանիկ կեանքս արդիւնք է ձեր
օրինակին և խրատներուն զորս վայելեցի ի
մանկութենէ: Միով բանիւ, գիտեմ թէ ինչ
որ ունիմ և կը վայելեմ, առաքինութիւն,
բարի համբաւ, կը թութիւն, հարստութիւն,

ունիմ ձեր միջոցաւ և ձենէ : Անտարակոյս կը
հաւատաք թէ անկեղծաբար կը խօսիմ, և
թէ անջինչ է և պիտի մնայ յիշատակ ձեր
ի միտս իմ: Երանի թէ կարող լինէի և ես
այնպէս կըթել դաւկներս, ինչպէս կըթեցիք
դռւք զիս :

Այսպէս կը խորհի և կը զգայ նաեւ կինս
որ ընդ իս միաբան կը մաղթէ ձեզ երկայն և
երջանիկ օրեր։ Փռքըի լի իշխանս որ միշտ կը
յիշէ զձեզ՝ շատ տխուր է որ չէ կարող ըն-
դունել իւր բարի հաւուն և սիրելի հանուոյն
գոռանքը։ Բոլոր տամր ողջունելով զձեզ
կաթողին, կը մնամ ի սերտ պրտէ

(ပုဂ္ဂန်များ)

U. U.

—>>>◆◆◆—

8. Յորդելոյ՝ առ. Հայր իւր :

ԱՐԵՎԻ ՀԱՅՐ .

Գիտնալով ձեր սիրոյն սաստկութիւնն առ
իս, չեմ ուղեր կորուսանել որեւիցէ պատե-
հութիւն յայտնելոյ չնորհակալութիւնս առ
ձեզ: Եւ Բնչ աւելի մեծ պատեհութիւնն քան
առաջին օր տարւոյն, զոր սովորութիւնը նը-
ուիրած է մաղթանաց և չնորհաւորութեան:
Աւստի մաղթելով ձեզ այսօր ամէն բարիք
որոց արժանի էք՝ կը խնդրեմ փոխարէն զօրհ-

Նութիւն ձեր միայն , սիրելի հայր . պատուականն է ինձ այն քան զայլ ամենայն պարգեւ : Տարակյոս չունիմ թէ չեք զանար ինձ զայս պարգեւ , քանդի կը լսեմ թէ գոհ էք յինէն , և ուրախութեամբ կը յիշէք զիս : Արդարեւ եթէ ունիմ դովելի բան մը սա է որ պատրաստ եմ ընկել ինչ որ կը պահանջուի բարի զաւկէ մը , այն է՝ ջանալ հետեւիլ իւր հօր բարի օրինակին , և որեւիցէ անվայել գործով չբերել արատ համբաւոյ նորա : Ապաքէն ծանր էր ինձ հեռու գտնուիլ ձենէ , բայց յանձն առի այս բաժանումը , և կ'ուղեմ քաջութեամբ համբերել ամենայնի հնազանդելու համար ձեզ , որպէս զի ուսմանս տարիներն ըստ արժանւոյն լրացնելով եղէց ձեզ արժանի որդի , մինչեւ մտնեմ միւսանգամ ընդ հայրենի յարկաւ վայելելու երջանիկ օրեր , որոց անձկանօք սպասելով , եմ սիրելի հօրդ Հաւատարիմ և հնազանդ որդի

(ପରମାଣୁକାଣ୍ଡିକାନ୍)

U. U.

卷之三

9. Ուստի կամ դուստր առ Հայր կամ առ մայր եւր :

Ոիրելի Հայր, կամ, մայր :

Անհամբերութեամբ կը սպասեմ միշտ այն
օրուան յորում սովոր են որդիք յայտնել սէր
և չնորհակալութիւն առ ծնողս իւրեանց :

Այս ցանկալի օրը տարեդղուխն է, որ չնորհեցաւ մեղ անդամ մի եւս: Սէր և չնորհաւկալութիւն յայտնել առ ծնողս պարտականութիւն համարուած է, բայց ինձ հաճոյք է այս մանաւանդ քան պարտք: Հաճոյք է, կարծեմ և ձեզ ընդունել սէր և չնորհակալութիւն յինէն, որ կը յաւելում առ այն նաեւ բարի վարուց խոստումն բոլոր տարւոյ համար: Չեմ դիտեր թէ կրցայ արդեօք մինչեւ ցարդ գոհ ընել զձեղ. դիտեմ սակայն թէ տարուէ տարի կ'աւելնայ յիս փափաք առաքինութեան յուրախութիւն ձեր: Ինչ երջանիկամ լինիմ, եթէ ձեր ամէն նամակէն իմանամ թէ գոհ էք յինէն: Այս բախտն ունենալու համար պատրաստ եմ ամէն բան ընել, սիրելի հայր, կամ, մայր, և կը յուսամ թէ այս ջանքս բաւական է վայելել տալու ինձ զձեր հաճութիւն:

Օրհնեցէք ուրեմն, սիրելի հայր, կամ, մայր, այս տողերն արտասուօք և սիրով դըրով ձեր որդեակը, որ է և եղիցի միշտ ձեղ Հաւատարիմ և հնաղանդ որդի, կամ, դուստր

(Թագավորական)

Ա. Ա.



10. Հեռու աեղ ուսում սորվող դուստր՝ առ մայր իւր:

Բարի և դժաճ մայր իմ.

Որչափ խիստ է ինձ հեռու դանուիլ ձեռէ տարւոյ այն օրը յորում ամէն դուստր կը վութայ յայտնել սէր և չնորհակալութիւն առ մայր իւր խանդակաթ: Աւազ որ ստիպուած եմ անկենդան թղթով լսել ինչ որ պիտի լսէի կենդանի բարբառով: Կ'աղաչեմ սակայն, սիրելի մայր, երբ եղբարքս և քոյրս կու գան բանիւ մաղթել ձեղ նոր տարին, զիս եւս հոգւով համարեցէք ձեղ մօտ, և մատուցեալ ի համբոյր լի դորովով: Կը յուսամ թէ չեմ անարժան այս չնորհաց, երբեւ միշտ ձեղ երջանկութիւն մաղթող և ձեր օրինակին հետեւող դուստր: Խնդրելով ուրեմն զօրհնութիւն ձեր իբրեւ միսիայն միշտարութիւն ինձ այս օտարութեան մէջ, եմ խորին յարդանօք

Հնաղանդ դուստր ձեր

(Թագավորական)

Ա. Ա.



11. Նոր տարւոյ մաղթանը որդուոյ առ. հայր ,
կարդացուելու համար :


Սիրելի հայր իմ .

Ի՞նչ երջանկութիւն է ինձ այսպիսի գեղեցիկ օր մը դալ յայտնել ձեզ սէր և շնորհակալութիւն : Թէպէտ ինչ որ պիտի ըսեմ՝ ամէն օր կը կրկնեմ սրտով , տարակոյս չկայ սակայն թէ օրս այս , իբրեւ սկիզբն նորոյ տարւոյ , աւելի ազդեցութիւն պիտի տայ խօսքիս :

Ուրիշ ընծայ չեմ սպասեր այսօր ձենէ , բայց միայն զօրհնութիւն ձեր , ինչպէս որ իմ միակ ընծայս է բարի վարուց խոստում , որ կարծեմ ձեզի համար եւս քան զայլ ամենայն ինչ պատուական է : Այս , սիրելի հայր , այսօրւընէ պիտի սկսիմ արդեամբ ցուցնել թէ չեմ անարժան որդի , և թէ ինչ որ ըստք ցարդ վասն իմ՝ չեղեւ և պիտի չինի ընդունայն :

Օրհնեցէք ուրեմն , հայր , ձեր սիրելի որդին որ ահա կը մատչի համբուրել զայլ ձեր : Կեզզէ Սիրելի ՀԱՅՐԸ

Խոնարհ և հնաղանդ որդի ձեր
(թուական) Ա. Ա.



ՆԱՄԱԿԻ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ԱՌ ԱԶԳԱԿԱՆՍ

—

12. Պանուկ մի՝ առ. հաւ իմ :

Սիրելի հաւս .

Կը սիրեմ զձեղ , և սէրս կը յաւելու օր քան զօր , և , ինչպէս կը յուսամ , միշտ պիտի սիրեմ , ցորչափ դուք և ես ողջ ենք : Ոչ հասակս և ոչ գիտութիւնս կը նկրեն ինձ քան զայս աւելի բան մը ըսել ձեզ : Բայ , ինչ որ սիրտս և լեզուս ազդեցին ինձ : Հաճեցէք ուրեմն ընդունել , սիրելի հաւս , ձեր մանուկ թոռան այս առաջին գիրը զոր տկար հանճարս կը մատուցանէ ձեզ իբրեւ երախայրի : Այսմ փոխարէն ոչ այլ ինչ կը խնդրեմ ձենէ , եթէ ոչ աղօթք և օրհնութիւն , որով կը յուսամ լինել բարի , և սիրելի ձեզ , պատուական հաւուս :

Ողջ լերուք , և օրհնեցէք զիս իբրեւ ձեր ՀԱՂԱՆԴ թոռը

(թուական)

Ա. Ա.



13. Մասուկ մի՝ առ. հօրեղբացը իւր :

Սիրելի հօրեղբայր.

Զկրնալով այս նոր տարին անձամբ մաղթել ձեզ, ինչպէս կը փափաքէի, կը դիմեմ ի գիր, թէպէտ գիտեմ թէ դիրը բաւական չէ կատարել ինչ որ կարող է լեզուն։ Նա՝ լեզուն իսկ շատ անգամ անբաւական է լինել թարգման սրտին։ Բայց դուք, սիրելի հօրեղբայր, որ գիտէք արդէն սիրտս, ուրիշ բան չէք վնատեր։ Եթէ կը հաճի Աստուած ընդունել աղօթքս ձեզի համար, անտարակոյս պիտի տեմնէք շատ երջանիկ տարիներ, և ձեր աղօթից համեմատ նաեւ ես՝ որ եմ Խանդակաթ եղբօրորդի ձեր

(Թուական)

Ա. Ա.



14. Առ. կնքահայր, կամ, կնքամայր :

Սիրելի կնքահայր, կամ, կնքամայր.

Սէրս և չնորհակալութիւնս որ առ ձեզ՝ յայտնելու իրեւ պատեհ ժամանակի, կը սպասէի տարւոյ առաջին աւուր։ Արդարեւ, յետ ծնողացս, աշխարհիս վրայ ո՞լ կայ զօր պարտական եմ սիրել և մեծարել իրեւ զնեզ։ Ուխտը զոր ըրիք առաջի Աստուծոյ

յաւուր յորում ընկալայք զիս աւաղանէն՝ կատարեցիք հաւատարմութեամբ, հոգ տանելով ինձ իրեւ որդւոյ։ Քաջալերութիւն, խրատ, յանդիմանութիւն չխնայեցիք երբ հարկ եղաւ, և որչափ վտանգներէ աղատեցայ ձեր ինամով։ Ինչպէս ուրեմն չփրեմ և չյարգեմ զնեզ, սիրելի կնքահայր, և չհամարիմ ինձ պարտք յայտնել չնորհակալութիւնս, և մաղթել ձեզ երկար կնանք և յաջողութիւն այսպիսի նշանաւոր օր։

Հաճեցէք ուրեմն, սիրելի կնքահայր, ընդունել ինչ որ կըսեմ իրեւ անկեղծ սրտի նուէր, գիտնալով որ եմ

Հնաղանդ և խոնարհ սան ձեր
(Թուական) Ա. Ա.



15. Առ. մուերիմ բարեկամ :

Սիրելի բարեկամ.

Յայնպիսի օր մը որ օտարք անգամ կը փութան մաղթել իրարու ամէն օրհնութիւն, բարեկամաց լուել ըստ իս մեղադրելի է։ Դիտեմ, պիտի ըսէք։ Հաճոյ չէ ինձ սովորութիւն մը որ լոկ ձեւ է, և զոր կատարողը լեզուն է մանաւանդ քան սիրտը։ Սակայն մըտերիմ բարեկամաց համար որպիսի եմք մեք, նոր տարին չեմ համարիր ես սովորութեան

օր , 'այլ պատեհութիւն միայն զոր չեմ ու-
ղեր փախցունել , ապա թէ ոչ յաջողութիւն
և երկար կեանք ըղձանալ ձեղ ամէն աւուր
գործ է վասն իմ , ոչ թէ միոյ աւուր միայն ի
տարւոջ : ի վերայ այսր ամենայնի , եթէ պըն-
դէք տակաւին թէ այս սովորութիւն բարե-
կամաց համար չէ , չէք կրնար սակայն չըն-
դունել գիրս գէթ իրեւ նշան թէ բարեկա-
մութիւնս առ ձեղ դեռ այնպէս հաստատուն
է , ինչպէս մինչ գրեթէ ամէն օր անբաժին
էինք յիրերաց : Բայց , թէ ախորժիք թէ ոչ ,
ես պիտի յամսուիմ դարձեալ ըսել . երջա-
նիկ նոր տարի , ողջ լեր , սիրելի բարեկամ ,
ոչ միայն յուրախութիւն գորովալի ամուսնոյդ-
և աննման որդւոցդ որոց ճշմարիտ երջան-
կութիւն ես , այլ և ինձ որ եմ սիրելոյդ

Մտերիմ բարեկամ

(Թուական)

Ա. Ա.

~~~

16. Հայր ոմն առ դաստիարակ որդւոյն՝ հաներձ ընծայի :

Տէր .

Որդւոյս դաստիարակութեան համար փոյթ-  
և ինամք ձեր պարտական կ'ընեն զիս շնոր-  
հակալ լինել ձեղ միշտ , և դիտնալով թէ  
այս պարտականութենէ չեմ կրնար ազատիլ  
չնորհակալութեամբ միայն , արդէն դասած

եմ զձեղ ի թիւ և ի գլուխ սիրելի բարեկա-  
մաց իմոց : Եթէ կ'ընծայէք յարդ այս բարե-  
կամութեան , հաճեցէք ընդունել փոքրիկ  
ընծայս , որ է գիտութեանց և արուեստից նոր  
հրատարակուած երկհատոր բառարանէն մի  
օրինակ ամբողջ կաշեկաղմ կարմիր այծեմոր-  
թէ , ծանր ոսկեղօծ : Կը յուսամ թէ այս գիր-  
քը հաճելի պիտի ըլլայ ձեղ ոչ միայն իրեւ  
ընտիր գործ , այլ և իրեւ նուէր անկեղծ  
բարեկամի և զարդ ձեր մատենադարանին  
որ սակաւ բայց ընտիր գրենով անուանի է :  
Մի կարծէք սակայն , տէր , թէ կը համարիմ  
զայս բաւական ի հատուցումն ձեր ինամոց  
զոր ընծայիս հարիւրապատիկն անդամ չէ  
կարող փոխարինել : Հանդերձ այսու կը մաղ-  
թեմ ձեղ այսպիսի շատ և երջանիկ տարի-  
ներ յուրախութիւն այնչափ պատանեկաց ո-  
րոց էք ոչ դաստիարակ միայն , այլ և հայր :

Հաճեցէք , տէր , ընդունել մաղթեանքս և  
չպակսեցնել ինամքը զոր կը ցուցնէք մեր որ-  
դեկին Տիրանայ , որ երջանիկ է մանաւանդ-  
դաստիարակ ունենալուն համար զձեղ , ինչ-  
պէս նաեւ ես՝ որ եմ

Հաւատարիմ բարեկամ ձեր

( Թուական )

Ա. Ա.

~~~

17. Առ բարերար ոք :

Տէր .

Տարեգլխոյ նամակներ , գիտեմ , շատ ան-
գամ ձանձրալի են , բայց եթէ գիտնայի
թէ իմն եւս տաղտկալի պիտի թուէր ձեզ ,
պիտի չուզէի տակաւին ետ կենալ ի գրելոյ
այս սակաւ տողերն ի սկզբան տարւոյս , որ
պատեհ ժամանակ է ինձ տալ ձեզ մի անդամ
եւս չնորհակալութեանս ապացոյցը : Գիտէք
պարտականութիւնս առ ձեզ , բայց միթէ գի-
տէք նաեւ թէ ինչ մեծ հաճութեամբ կը յի-
շեմ միշտ այս պարտականութիւնը , որում
եթէ հատուցում ընել չեմ կարող , կարող
եմ գէթ յայտնել թէ չեմ երախտամուաց ,
այլ միշտ աղօթող առ ամենակալն չնորհել
զձեզ աշխարհի շատ տարիներ առողջ և եր-
ջանիկ ի միիթարութիւն ոչ ձերայոց միայն ,
այլ և ինձ որ եմ

Խոնարհ և հնազանդ ծառայ

(Թագավորական)

Ա. Ա.



18. Յումեքէ առ դաստիարակ կամ վարդապետ իւր :

Տէր .

Ապաքէն մեծ է պաշտօն և պատասխանա-
տուութիւն դաստիարակի , բայց մեծ է նա-
եւ պատիւ նորա և յարդ : Իբրեւ զձեզ ի-

մաստուն և խնամոտ դաստիարակ արժա-
նի է համարուելու երկրորդ հայր սանուց իւ-
րոց , մանաւանդ ինձ որ ի՞ և ը՞ վայելած եմ
ձենէ ամէն խնամք , զորս մոռցած չեմ և
պիտի չմոռնամ յաւիտեան : Այսմ կրնաք
հաւատալ , գիտնալով զիս ի բնէ չնորհակա-
լու և յիշող երախտեաց , մանաւանդ ձերոցն՝
զորս համառօտիւ յիշեցի այս նոր տարւոյ
առթիւ , ոչ այնչափ ձեզ ի գովութիւն որում
կարօտ չէք , որչափ ի յայտնել սիրտս : Ինչ
որ եմ այսօր , եմ ձեր միջոցաւ , և զամենայն
պարտիմ ձեզ , ահա խորհուրդս . իսկ մաղ-
թանքս վասն ձեր յերկնից զինչ կարէ լինել
եթէ ոչ երկայն և երջանիկ կեանք մինչեւ ի
պարարտ ծերութիւն ուրախութեամբ լի՛ շա-
տերուն երջանկութեան համար օդտակար և
բազմարդիւն կենաց յիշատակաւ :

Կը խնդրեմ , տէր , այս մաղթանաց հետ
հաճեցէք ընդունել նաեւ դոյզն ընծայս զոր
(այս անուն) բարեկամը պիտի մատուցանէ ձեզ
յիմ անուն : Ողջ լերուք , և մի մոռանաք

Ձեր չնորհակալու սանն

(Թագավորական)

Ա. Ա.



19. Առ մեծարոյ ոմն :

Տէր .

Աղերս և մաղթանք սիրելոյ կամ բարեկամի համար ամէն օր կընայ ընել մարդ , իսկ բանիւ յայտնելոյ պատեհ ժամ ընդհանրապէս այն օրն է որոյ առաւօտուն պիտի ընդունիք նամակս : Սիրոյ և մաղթանաց գիր մը այսպէս կանուխ ձեղ հասցնելու միջոցն ընարելով , կ'ուզեմ յայտնել թէ ձեղ երջան կութիւն և երկար կեանք մաղթող բարեկամաց մէջ կը բաղձամ լինել առաջին : Յուսամ թէ այս գիտաւորութեամբ աճապարելս բաւական պատճառ է որ չնորհէք ինձ , կամ , լւա եւս ըսեմ , պնդէք ընդ իս բարեկամութեան կապը զոր ցարդ չկրցաւ խզել պատույ և աստիճանի բարձրութիւնն ուր հասած էք ձեր տաղանդներով և առաքինութեամբք : Զեմ գիտեր թէ արդեօք յանդուգն է ձեր բարեկամը կոչուելու փափաքս . բայց եթէ գիտամ եւս թէ այսպէս է , պիտի յուսամ տակաւին թէ սէրը որ ծածկէ զբաղմութիւն յանցանաց , պիտի ծածկէ նաև յանդգնութիւնս , եթէ երբէք յադգնութիւն է ցանկալ սիրել զայն որ արժանի է սիրոյ : Բայց ընդէր է ինձ կասկածել . ձեր սիրու բաւական երաշխաւորութիւն է ինձ

թէ պիտի չմերժուիմ ձեր բարեկամաց գէթ յետինն համարուելէ , և այս բաւ է ինձ որ եմ միշտ

Հաւատարիմ ձեր

(Թուական)

Ա. Ա.

20. Առ բարեկամ ոք որ ի յաջողութեան է :

Սիրելի բարեկամ .

Երջանիկ նոր տարի : Ուրախ եմ որ մինչեւ ցարդ գուշակութիւններս անվրէպ կատարուեցան վասն քո : Անցեալ տարեգլույ նամակաւ մաղթեցի քեղ յաջող ամուսնութիւն և սիրուն մանկիկ մի , քանզի գիտէի թէ խօսեալ (նշանած) էիր : Օրիորդը որ լինելոց էր քեղ կողակից՝ չէի ճանչնար , բայց մարդարէական հոգիս վկայեց թէ քու սրտիդ համեմատ պիտի ըլլար նա , և եղեւ իսկ , ինչպէս վերջիննամակիդ իմացայ : Ըսի նաեւ թէ ուստրիկ մը սիրուն և կայտառ՝ նշան պիտի ըլլար ձեր երկոցունց երջանկութեան , միանգամայն կնիք ձեր միութեան կապին . արդ կը լսեմ թէ ձեր սիրուն Դանիկը կը կատարէ իմ այս երկրորդ գուշակութիւնս : Զարմանօք կըսես նամակիդ մէջ , « Զգիտեմ , մարդարէական հոգի թէ սրտիդ պարզութիւնն է պատճառ որ ինչ որ կ'ըսես կը կատարուի : » Զես խորհիր բնաւ թէ առաքինութեանցդ համար

Է թերեւս որ երկինք հաշտ են ընդ քեզ:
 Նոր և մեծ ձեռնարկութեամբ յաջող ելքը
 լցուց զիս խնդութեամբ ։ այս յաջողութիւնը
 որու տանք ։ Ես կ'ըսեմ թէ անմեղ մանկանդ
 և գրեթէ նոյնչափ անմեղ լծակցիդ բախտին
 պարզեւն է այս : Զիարդ և իցէ , կատակը
 մէկդի , ուրախ եմ , բարեկամ , որ 1881ն եղաւ
 վասն քո նշանաւոր տարի : Ուստի պէտք է որ
 բան մը ընենք . Ես հոս տարեդիխոյ նախըն-
 թաց երեկոյին յարեւ ձեր պիտի բանամ ըն-
 տիր շամբանեի դինի , կը խնդրեմ որ դու եւս
 այնպէս ընես : Եւ որովհետեւ գիտեմ թէ ձեր
 օրհնեալ քաղաքը զուրկ է բաքոսի այս պար-
 զեւէն , բարսեղ ծառայիս հետ կը դրկեմ ձեզ
 յիշեալ նեկտարէն արկղիկ մի լեցուն . արբ ,
 սիրելի , և ուրախ լեր հանդերձ բարեկամօք ,
 բայց կը խրատեմ , չարբենաք : Դոյզն է ըն-
 ծայս , բայց խորհրդաւոր , և գիտեմ թէ քան
 զայս աւելոյն չես կարօտ : Ընկալայ զքոյսդ ,
 որ են եղան լեզու չորս զոյգ ապիտեալ , ար-
 գարեւ ընտիր տեսակէն , և երկու զոյգ մա-
 ճառակ պանրոյ . շնորհակալութիւն քեզ յի-
 նէն մինչեւ յերկինս , յորմէ կը խնդրեմ երեք
 երկայն և երջանիկ կեանք , մին՝ քեզ , և
 միւս երկուքն անոնց որոց անունները վերը
 առւի : Ողջ լեր :

Հաւատարիմ քո

(թուական)

→→→:○<<<→

Ա. Ա.

21. Առ բարեկամ ոք որ է ի ձախողութեան :

Սիրելի բարեկամ .

Ահա միւս եւս նոր տարի : Երբեմն տարին
 յաջողութեամբ կը սկսի և յաջողութեամբ կը
 վերջանայ . Երբեմն եւս սորին հակառակը կը
 պատահի : Ըսել չեմ ուզեր թէ յաջողութիւն
 և ձախողութիւն տարիներէ կախում ունին :
 Կը հաւատանք արդարեւ թէ դիպաց որպի-
 սութիւնն նախախնամութեան կարդադրու-
 թենէն է . բայց և այնպէս կրնանք յուսալ
 թէ Աստուած յետ փորձելոյ զմեղ ժամանակ
 մի փոթորիկներով , պայծառ օրեր կը պար-
 զեւէ : Այս շնորհքն արդարեւ երբեմն գրե-
 թէ նոր տարւոյ հետ կը տրուի մեղ : Ուստի
 սիրելի բարեկամ , կը հաւատամ և կը յու-
 սամ եւս թէ նախախնամութիւնն պիտի սկսի
 հաշտ ակամի հայելի քեզ , և թէ՝ դառնու-
 թեան բաժակն զոր քամեցիր մինչեւ ի յատա-
 կըն՝ այս նոր տարւոյ հետ պիտի փոխուի ի
 քաղցրութիւն : Իմ իղձ այս է , և Աստուած
 որ բարին անվարձ չի թողուր՝ պիտի վար-
 ձատրէ համբերութիւնդ յորում սքանչելի
 օրինակ եղեր այս անցեալ երեք տարուան
 մէջ : Այս յոյս և իղձ զոր կը յայտնեմ՝ չէ
 առանց հիման . մեծ ուրախութեամբ լսեցի
 թէ տիկնոջդ երկար հիւանդութիւնն որ ա-
 ռաջին օղակն եղեւ ձախողութեանցդ շղթա-

յին՝ սկսած է դառնալ յառողջութիւն։
Այս բարւոք սկզբնաւորութիւն եղիցի ան-
տարակոյս նոր և յաջող շղթայի մը առաջին
օղակ։ Ընկալ, սիրելի բարեկամ, զիղձ բա-
րեկամիդ որ, ինչպէս վշտակից էր քեզ ի ձա-
խողութեան, նոյնպէս ուրախակից լինելոց
է ի յաջողութեան՝ իւր համարելով երջան-
կութիւնդ։

Հաւատարիմ բարեկամ քո

(թուական)

Ա. Ա.



22. Առ բարեկամ որ առ որ երկար ժամանակէ
հետէ նամակ գրուած չէ։

Սիրելի բարեկամ։

Ուրախ եմ որ նոր տարի մաղթելու սո-
վորութիւն կայ բարեկամաց մէջ։ Այս սովո-
րութիւն երբեմն թերութիւններ կը ծածկէ,
և ցրտացեալ բարեկամութիւններ կ'արծար-
ծէ։ Քան զայս այլ միջոց չէր կարող ծածկել
թերութիւնս զոր ահա պարզութեամբ կը
խոստովանիմ։ Գիտեմ որ վերջին երկու նա-
մակներդ անպատասխանի թողով, ոչ միայն
բարեկամութեան, այլեւ վայելչութեան դէմ
գործեցի։ Թերեւս կարծեցիր թէ հեռաւորու-
թիւնն ցրտացոյց սէրը, և մոռնալ տուաւ
բարեկամութիւնը, մանաւանդ որ երախտիս
տեսած եմ քենէ։ Կրնաս հիմա ըսել ինձ

ուամկական առածը . Անցուկը մոռցուկ եղաւ։
Բայց չարցունե՞ս թէ անցուցի՞ օր կամ ժամ
առանց յիշելոյ դքեզ, և առանց ըղձանալոյ
վամն քո ինչ որ ըղձանալ ջերմագոյն բարե-
կամի մտքէն հազիւ կ'անցնի։ Զբաղումն, դրժ-
ուարին պարագաներ, նաեւ նամակ դրելու
ծուլութիւնը զոր ունիմի բնէ, պատճառ եղան
ժամանակ մի զանց անելոյ գիրս։ և երբ յա-
պարզումը յերկարեցաւ, յառաջ եկաւ տեսակ
մը ամօթ որ ցարդ կը ծածկէր երեսս կարմիր
քողով։ Օրհնեալ նոր տարի որ պատռեց այս
ամօթը, և կը յուսամ թէ պիտի փարատէ
նաեւ այն սեաւ ամպը որ պատեց առ վայր
մի մեր բարեկամութիւնը, և որոյ գոլորշին
ելաւ իմ ցրտութենէս։ Զիարդ և իցէ, նե-
րէ, սիրելի բարեկամ, յանցանքս զոր կը
խոստովանիմ, ինչպէս կը տեսնես, միամտու-
թեամբ։ և խոստովանեալ յանցանք մը, ինչ-
պէս կ'ըսէ առակը, կէս ներուած է։ Ուրիշ
բան չի մնար ինձ արդ, եթէ ոչ մաղթել քեզ
նոր տարի և երկար կեանք, որպէս զի վա-
յելէմ, ցորչափ կենդանի եմ, քաղցր բարե-
կամութիւնը որով պատռեցեր զիս, և որոյ
տեւելուն կը փափաքիմ, խոստովանելով զիս
միշտ հաւատարիմ քեզ։

(թուական)

Ա. Ա.

~~~

ՊԱՏԱՍԽԱՆԻ Գ

23. Պատասխանի երկրորդ նամակին :

**Սիրելի որդեակ .**

Մեծ հաճութեամբ ընթերցայ նոր տարւոյ նամակդ : Աշխատութիւն , առաքինութիւն և ընտանեկան սէր , այս երեք են որ կու տան ծշմարիտ երջանկութիւն : Մեծ միիթարութիւն է ինձ որ ըրի վասն քո ինչ որ կարող էի ընել , և ուրախ եմ որ օգուտ կը տեսնես գաստիարակութենէ . քան զայս աւելի հատուցում չեմ պահանջեր քենէ : Գիտես որ մեծ երջանկութիւն պիտի ըլլայ ինձ ամուսնացեալ և բախտաւոր տեսնել զքեզ . կը յուսամ թէ նախախնամութիւնը կը պարզեւէ ինձ նաեւ այս չնորհքը , և այն օրը որ այս փափաքս պիտի կատարուի՝ չէ այնչափ հեռի որչափ թերեւս կը կարծենք :

Բարեւաւ մնա , սիրելի որդեակ , վստահ լեր ի սէր հօրդ որ պիտի ըլլայ միշտ աղնուադոյն բարեկամդ ,

**Խանդակաթ հայր քո**

(Թառապէն )

Ա. Ա.



24. Պատասխանի չորրորդ նամակին :

**Սիրելի որդեակ .**

Նոր տարւոյ նամակդ . մեծ ուրախութիւն տուաւ ինձ : կը գովեմ փոյթդ և բարի առաջադրութիւններդ . գիտցիր որ , եթէ կը յարատեւես ի նոսին , ոչ միայն իմ , այլ և Առտուծոյ օքնութիւնը կը հանդչի վրադ , և լինիս երջանիկ և օգտակար : Մայրդ և եղբարքդ սիրով կը համբուրեն գքեղ . առաջին առթիւ պիտի զրկեն քեզ իւրեանց նոր տարւոյ ընծաներ : Ողջ լեր , սիրելի որդեակ :

**Խանդակաթ հայր քո**

(Թառապէն )

Ա. Ա.

25. Պատասխանի եօթներորդ նամակին :

**Սիրելի որդեակ .**

Շնորհաւորութեան նամակդ . Ժամանակին հասաւ , և մեծապէս միիթարուեցանք տեսնելով ոգւյցդ աղնուութիւնը . գիտեմ թէ ի սրտէ կը խօսիս : Ուրախ եմ որ դաստիարակութեան յարգը կը զգաս , և օգուտը կը վայելես : Ես ըրի ինչ որ պարտական էի ընել իրեւ հայր , և նախախնամութեան մեծ շընորհքն է որ անբեր երկիր չսերմանեցի : Այս է որ երջանիկ պիտի ընէ ծերութիւնս : Ինչ

բարիք որ կը մաղթես ինձ՝ զնմանն և աւելին  
եւս կը մաղթեմ քեզ, կողակցիդ և փոքրիկ  
Միհրանիդ որոյ կարօտով կը մաշինք, մանա-  
ւանդ մայրդ : Փութա մօտերս դալ առ մեզ  
ընտանեօք : Ողջ լեռ, սիրելի որդեակ :

(Թուական)

Խանդակաթ հայր քո

Ա. Ա.



26. Այլ պատասխանի նոյն նամակին :

Սիրելի որդեակ .

Շնորհակալութեամբ ընկալայ ինչ որ կը  
մաղթէք, դու, կինդ և մանկիկդ, և ուրախ  
եմ լսելով որ ողջ և առողջ էք : Արդարեւ բա-  
րի ամուսնոյ և իմաստուն հօր արժանի է  
վարքդ, և կը յուսամ թէ նախախնամութիւ-  
նը պիտի տայ քեզ փոխարէն երկայն և եր-  
ջանիկ օրեր : Արդէն կը վայելես առտնին  
խաղաղութիւն և խնդութիւն : Առաքինի կը-  
նոջ բարեկամութիւնը և որդեկաց սէրը խա-  
ղաղ և հաճոյ կ'ընեն կեանքը, և եթէ այս  
վայելման հետ կայ նաեւ չափաւոր աշխատու-  
թիւն, աշխարհ դրախտ է այնպիսւոյն :

Դու եւս, սիրելի որդեակ, նաեւ կինդ և  
որդիդ, ընդունեցէք իղձս ձեր երջանկու-  
թեան համար : Եթէ Աստուած կը լսէ աղօթ-  
քըս, բոլոր փափաքներդ պիտի լցուին : Մե-

ծագոյն հաճութիւնս պիտի ըլլայ տեսնել  
զքեղ առաւել քան զոր ցանկաս լինել : Ողջ  
լեռ, սիրելի որդեակ, ջանա դալ տեսնել զիս  
ընդ հուազ կնոջդ և որդւոյդ հետ : Ողջոյնս  
տուր անոնց զորս սերտիւ կը սիրեմ, և վստահ  
լեռ սիրոյս և բարեկամութեանս :

Հայր քո

(Թուական)

Ա. Ա.



27. Պատասխանի տանսերորդ նամակին :

Սիրելի դուստր .

Սիրոյ և գորովոյ գիրդ որով կը մաղթես  
ինձ նոր տարի՝ ընթերցայ նոյնչափ գորովով :  
կը տեսնեմ, դուստր իմ, որ ի մայրենի գըգ-  
ուանաց հեռու մնալ ծանր է քեզ, քեզ՝ որ  
ամէն գդուանաց արժանի ես : Եթէ հեռա-  
ւորութիւնը չկրցաւ նուաղեցնել սէրն ի քեզ,  
որչափ եւս առաւել չկարէ նուաղեցնել յիս՝  
զոր բնութիւնն ըրած է մայր, և մայր ան-  
համեմատ զաւկի մը որպիսի ես դու : կը  
ինդրես որ տարւոյն առաջին օրն համարիմ  
զքեզ ինձ մօտ . գիտցիր, սիրելի դուստր իմ,  
որ տարւոյն ոչ առաջին օրը միայն, այլ ամէն  
օր և ամէն ժամ, չըսեմ թէ ամէն ըոպէ, մօտ  
ես ինձ : Համբերէ, սիրելիդ իմ, կը մերձենայ  
օրն որ զքեզ պիտի դարձունէ անձկայրեաց  
մօրդ գիրկը : Փոյթ տար ուսման և առող-

ջութեանդ . ինդրուածս Աստուծմէ այս է ,  
նորէն ընդունել զքեղ այնպէս բարի և հա-  
մեստ , ինչպէս էիր՝ երբ յուղարկեցի զքեղ  
աստի :

(Թուական )

Խանդակաթ մայր քո  
Ա. Ա.



28. Պատասխանի երեքտասաներորդ նամակին :

### Սիրելի Եղբօրորդիս .

Նոր տարւոյ նամակդ ընկալայ , և չնորհա-  
կալ եմ քեղ վասն բարեաց զորս կը մաղթես  
ինձ : Գիտեմ թէ լեզուդ սրտիդ պէս է , և  
ինչ որ կը յայտնես բանիւ՝ կ'ընդունիմ իբ-  
րեւ ճշմարտապէս ի սրտէ բղխեալ : Գիտես  
որ կը սիրեմ զքեղ իբրեւ զորդի , և կ'ըդճամ  
վասն քո ինչ որ բարի հօրեղբայր մը կրնայ  
և պարտի ըղձալ իւր եղբօրորդւոյն : Բարի և  
իմաստուն լեր , սիրելի , երջանկութիւնը կը  
համնի անշուշտ : Երջանկութիւնը ոչ թէ ըղ-  
ձիւք կը ստացուի , այլ՝ արդեամբ : Ողջ լեր ,  
սիրելիդ իմ , յուղախութիւն և ի պարձանս  
գերդաստանիդ , և ինձ եւս որ եմ մտերմա-  
դոյն բարեկամ քո :

(Թուական )

Հօրեղբայրդ



Ա. Ա.

29. Պատասխանի հնգետասաներորդ նամակին :

### Սիրելի բարեկամ .

Ահա պատասխանին նոր տարւոյ նամակիդ  
զոր ընկալայ չնորհակալութեամբ : Չնորհեն  
քեղ երկինք զուարժ և երջանիկ տարի յու-  
րախութիւն և յերջանկութիւն սիրելեաց և  
բարեկամաց քոց յորոց մին եմ ես : Արդա-  
րեւ ողոքոյ նամակներու մեծ յարդ չեմ ըն-  
ծայեր , բայց այնպիսի չէ քոյն : Ինչ որ քու  
բերնէդ կ'ելլէ՝ կը համարիմի սրտէ բղխեալ:  
Որպէս յամենային՝ նոյնպէս յայսմ միաբան են  
ընդիս կինս և որդիքս , որ ուշի ուշով և հա-  
ճութեամբ կարդացին նամակդ և չնորհակալ  
են : Ամենեքին կը ցանկան տեմնել զքեղ . նա-  
մակներդ չեն կընար քու տեղդ բռնել , թէ  
եւ շատ հաճելի են մեզ : Ողջ լեր , սիրելի բա-  
րեկամ , և ծանիր զիս քեղ

Հաւատարիմ բարեկամ

(Թուական )

Ա. Ա.



Բ. ՆԱՄԱԿԻ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԾՆՆԴԵԱՆ  
ԿԱՄ ԱՆՈՒԱՆ ՈՒՐՈՒՔ



30. Առ հայր՝ յաւուր տօնի անուան :

### Սիրելի հայր .

Այսօր կը կատարենք ձեր անուան տարե-  
դարձը : Ահա նոր պատեհութիւն վասն իմ

յայտնելոյ ձեղ սէրս որ կ'առաւելու տարուէ  
տարի , վասն զի երթալով աւելի կը զգամ  
պարտականութիւնս առ ձեղ : Թոյլ տուքինձ  
ուրեմն յայտնել այսօր բանիւ ինչ որ կ'ըղձամ  
միշտ վասն ձեր ի սրտիս ի ծածուկ : Գիտէք  
որքան զայս աւելին ընելու կարող չեմ փոխա-  
նակ ձեր այնչափ երախտեաց վասն իմ : Ըն-  
կալարուք ապա , սիրելի հայր , մաղթանացս  
հետ համբոյրս զոր կը մատուցանեմ ձեղ հոգ-  
ւով , խոստովանելով զիս

Հնազանդ որդի ձեր

( Թուական )

—————

Ա. Ա.

31. Առ մայր՝ յաւոր տօնի անուան նորա :

Սիրելի մայր .

Ձեմ այնչափ ապերախտ որ չդիտնամ ձեր  
անուան տարեդարձին օրը : Յամոյ հետէ և  
աւելի կը սպասէի անհամբերութեամբ այս  
աւուր . եկաւ այն վերջապէս , և ահա կարող  
եմ յայտնել ձեղ ինչ որ կը խորհիմ և կը զգամ  
վասն ձեր : Մեծ է շնորհակալութիւնս վասն  
այնչափ բարեաց զորս ընդունած եմ ձենէ և  
կ'ընդունիմ ի մանկութենէս , բայց եւս աւելի  
մեծ է փոյթս ապերախտ չգտնուելու այն  
երախտեաց՝ ջանալով յօգուտ ի կիր արկանել  
զնոսին , և լինել պատճառ գոհութեան զոր  
զգալ բնական է մօր , երբ կը աւեսնէ զորդին

հլու մայրական խրատուց և պատուիրանաց :  
Երանիք թէ բոլոր կենացս մէջ առաջնորդէիք  
ինձ ձեր իմաստուն խորհուրդներով : Այս է  
իմ այսօրուան իղձս և աղօթքս առ Աստուած :  
Ողջ լերուք , սիրելի մայր :

Ձեր հնազանդ որդին

( Թուական )

Ա. Ա.



32. Առ հայր կամ առ մայր յաւոր տօնի անուան նորա :

Սիրելի հայր , կամ , մայր .

Աւելորդ է ինձ օրացոյց նայել գիտնալու  
համար ձեր անուան տարեդարձին օրը : Ուր  
սէր կայ , հոն յիշողութիւնը բաւական է :  
Արդարեւ ցանկալի էր ինձ ձեր քով գտնուիլ  
այն օր ձայնակից ըլլալու համար եղբարցս որ  
զեեղ կը բոլորեն անտարակոյս մեծ խնդու-  
թեամբ . բայց որովհետեւ չունիմ այս բախ-  
ար , հաճեցէք փոխարէն այս զրկման առաջին  
աեղին տալ ինձ ձեր սրտին մէջ : Զեմ կար-  
ծեր թէ այս շնորհին անարժան կը դատէք  
զիս , որ առաջին պարտք կը համարիմ ինձ  
ընել ինչ որ հաճոյ է ձեղ , և եմ յարդանօք  
մեծաւ

Հնազանդ որդի ձեր

( Թուական )

Ա. Ա.



33. Ա.Ա. օրինակ նոյն նիւթոյ :

**Սիրելի ծնողք.**

Եթէ կայ վասն իմ հաճելի ժամանակ ի տարւով, ձեր անուռան, կամ, ծննդեան տարեգարձի օրն է : Այն օրուան գրեթէ բոլոր նախնինթաց գիշերը կ'անցունեմ մաղթանօք, և առաւտօտուն կ'ելլեմ ընդուստ անկողնէս ցնծութեամբ : Կը տիսրիմ սակայն երկու պատճառաւ, մի՛ վասն զի հեռի եմ ձենէ այն վայրկենին մինչ այլք կը վայելեն ձեր սիրոյ համբոյըները, երկրորդ՝ վասն զի բառ չեմ գըտներ յայտնելու ըստ բաւականին ինչ որ կը զգամ: Գիտնալով սակայն որ քան զամբենայն ինչ հաճոյագոյն ձեղ բարի վարուց և յառաջադիմութեան ապացոյն է, կ'առաջադրեմ զանալ ըստ կարի չտալ ձեղ պատճառ դժողովութեան զինէն, և փոխարէն՝ կը սպասեմ միայն ձեր օրհնութիւնն ի քաջալերութիւն ինձ:

Խնդրելով յերկնից չնորհել ինձ շատ տարիներ տեմնել այս օրը, կը մնամ  
Հնազանդ որդի ձեր

( Թառական )

Ա. Ա.

~~~~~

34. Ա.Ա. պաշտպան ոք յաւուը տարեգարձի ծննդեան նորա :

Տէր.

Զեր բարութեան յիշատակը չի թողուր ինձ անցունել որեւէցէ պատեհ ժամ յայտնել շընորհակալութիւնս առ ձեզ: Պատեհ ժամուց մին և գլխաւորը կը համարիմ ձեր ծննդեան տարեգարձի բարենշան օրը: Շատ բաներ ունիմ այսօր վասն ձեր ի սրտի, բայց յայտնել բանիւ չեմ բաւական: Լեզուն սրտին թարգմանն է, բայց ոչ միշտ: Ուրախ եմ սակայն որ գիտէք թէ ինչ կը զգամ և կ'ըղձամ վասն ձեր, և աւելի խօսք չէք պահանջեր: Սա միայն կ'ըսեմ, տէր, որ այսօրուան աղաչանացս մին է վայելել ոչ այս տարի միայն, այլ և միշտ ձեր հզօր պաշտպանութիւնը, և կը խընդրեմ որ ձեր եւս ուխտերուն մին ըլլայ այսօր՝ ձեր հովանին պակաս չընել ինէ որ կը փափաքիմ լինել միշտ

Հաւատարիմ ծառայ ձեր

(Թառական)

Ա. Ա.

~~~~~

35. Գուրզէն առ մօրեղբայր իւր ի տարեգարձի ծննդեան նորա :

**Սիրելի մօրեղբայր.**

Ամէն տարի ձեր ծննդեան տարեգարձը կը նորողէ յիս անցեալ իրաց, մանաւանդ ձեր

ինամոց որ առ իս՝ յիշատակը : Ո՞րչափ կը  
փնտուեմ, սիրելի մօրեղբայր, այն դեղեցիկ  
օրերը որ, եղուկ, անցան : Անմոռաց են ինձ  
վերի գիւղն որ կ'երթայինք ստէպ մերթ ձի-  
ով և մերթ կառօք, մեծ անտառին գետակն,  
անուանի կարմրաձկամբք զորս դուք մեծ յա-  
ջողութեամբ կ'որսայիք, մինչ ես կը փախցու-  
նէի միշտ, և միթէ կրնամ մոռնալ օդտակար  
խրատները որովք կը քաջալերէիք զիս լինել  
աշխատասէր, բարեգործ, արդար և խնայող:  
կը յուսամ սակայն յառաջիկայ պարապոյ ամ-  
սեան գալ տեսնել զձեղ: Տենջանօք կը սպա-  
սեմ այն երջանիկ ժամուն, և կրնամ թերեւս  
բանիւ բերանոյ յայտնել ձեղ ինչ որ չեմ կա-  
ռող գրով:

Հաւատարիմ քեռորդի ձեր

(Թիուական)

Ա. Ա.

36. Կոյս նիւթոյ վրայ առ հօրեղբայր :

Սիրելի հօրեղբայր .

Չեր վրայ խորհիլ, ձեր առողջութեան և  
երջանկութեան փափաքել, խնդրել յերկ-  
նուստ ամէն բարիք վասն ձեր, ահա գլխաւոր  
հաճոյքս, մանաւանդ այնպիսի օրեր որ ա-  
ռանձինն կը յիշեցնեն զձեղ ինձ, որպիսի է  
ձեր ծննդեան տարեդարձին օրը : Այն օրը ես  
նուիրական կը համարիմ ձեղ և ինձ միանդա-

մայն . ձեզ՝ վասն զի այն օրը տեսաք արեգա-  
կան հետ ձեր պատուական կենաց արեւը .  
ինձ՝ վասն զի երկրորդ հայր ծնաւ ինձ այն  
օր, երկրորդ հայր՝ ըստ մարմնոյ, առաջին՝  
ըստ խնամոց և գորովոյ : Արդարեւ, յետ  
տարաժամ մահու թշուառ հօրս, ով ինա-  
մեց զիս՝ հէք որբս, ով պաշտպան կեցաւ ինձ,  
ով աղատեց զիս կորստեան վտանգներէ և ա-  
ճեցոյց հայրենական դոյզն ժառանգութիւնս,  
համառօտիւ՝ ով համբերեց այնչափ սիրով  
մանկական յիմարութիւններուս, և դաստիա-  
րակութեան պտուզները վայելել կու տայ ինձ,  
եթէ ոչ դուք, դուք միայն, սիրելի հօրեղ-  
բայր : Ի՞նչ հատուցում կրնամ ընել ուրեմն  
ձեղ, որ այսպէս հայր, մայր, բարեկամ,  
պաշտպան և բարերար էք ինձ : Գիտեմ որ  
առայժմուրիշ բան չեմ կրնար ընել վասն ձեր,  
բայց խնդրել յերկնից չնորհել ձեղ երբ վաթ-  
ունիցս այսպիսի օրեր, յայնժամ պիտի ունե-  
նաք իսահակայ տարիներուն մօտ տարիք, և  
պիտի օրհնէք ձեր անառակ Եսաւը որ արդէն  
Յակոբ ըլլալու սկսած է : Այլ ես այժմէն  
խնդրելով ձեր օրհնութիւնը ձեր այս ծնն-  
դեան տարեդարձին, կը համբուրեմ խոնարձ  
հութեամբ ձեր բարերար աջը, խոստովանե-  
լով զիս ձեր հնազանդ եղբօրորդին :

(Թիուական)

Ա. Ա.

37. Առ կարի մտերիմ բարեկամ ոք՝ նոյն նիւթոյ վրայ :

### Սիրելի .

Այն օր որ նամակս պիտի ընդունիս՝ Սուրբ Յակոբ է, ուստի անունովդ ապրիս, շատ տարիներու համնիս, և ուրիշ ինչ որ կը բառուի և ըսել սովոր էի ուրիշ տարիներ՝ դարձեալ կը սեմ: Այս արարողութիւնը կը կատարուէր ամէն տարի մօտէն, և միշտ՝ նախընթաց երեկոյին: Գիտես որ պարտականութիւնը ճանչցող և ճշգիւր կատարող բարեկամներուդ առաջինն էի ես, և ինչ ուրախութեամբ կը պարպէինք բաժակներ յարեւ միմեանց: Այս տարի այնպէս գիպեցաւ որ գրով կը կատարեմ այս պարտքը, բայց կը կատարեմ: Արդարեւ բախտը զատեց զմեղ իրարմէ ոչ տեղեաւ միայն, այլ և վիճակաւ: Դու հոն յաջող ես, իսկ ես գրեթէ տարի մի և աւելի է, կը թիավարեմ հողմոյ գէմ: Թէ ինչ դժուարութեանց հանդիպեցայ, յոր վայր հասան գործերս, և ինչ թանձր մառախուղ կը պատէր զիս՝ գիտես: Ութ օր է որ ամէն բան փոխուեցաւ, սեւ ամպեր փարատեցան, հորիզոնը բաց է առջեւս: Երեք հազար ոսկին զոր կը պահանջէի բ է՝ առի, Գի հետ դատու վերջացաւ ինպաստ ինձ, վճռագիրը կը նդունիմ այսօր կամ վաղիւ: Զայսոսիկ կը ծանուցանեմ ինամակիս չնորհաւորութեան անուա-

նդդ, որպէս զի գիտնաս և պարծիս, քանդի պարծել կը սիրես, թէ որչափ բարենշան է անուանդ տարեդարձը ։ գիտնաս, կըսեմ, և սեւ ջրոյ վրայ ճերմակ կամ կարմիր մի եւս աւելցունես բարեկամներուդ՝ անուանդ երեկոյին:

Մեր իւղարերին ըսէ որ Հաճի Մաղաքը կանչէ. թող տունը մաքրել տան, մանաւանդ մեծ պահը կ'ուղեմ որ շակուած և պատրաստ ըլլայ ընդունելութեան համար. վարագոյրներն և օթոցը ( սալին ) կարծեմ փոխել հարկ է: Հաճի Մաղաք գիտէ ախորժակս, թող պատրաստէ ինչ որ պիտոյ է: Միւս ուրբաթ կ'ելնեմ աստի, և կիրակի երեկոյին հոն եմ: Ըսէ Միհրանիդ չնորհաւորութեան գիր մը պատրաստել անուանս երեկոյին: Ստեփանոսի գիշեր կոչունք ունիմ, առանց վարձատրութեան չեմ թողուր: Ողջ լեր, սիրելի:

Մաերիմ բարեկամքը

( Թառական )

ՍՏԵՓԱՆ ՄԱՐԳԱՐԵՍԻՆ



38. Առ ճամփաբարոյ ոմն յաւուր տարեդարձի ծննդեան նորա:

### Տէր .

Ահա միւս եւս տարի այն բարենշան աւուր վրայ յորում լցոյ տեսաք առաջին անդամ, և յոյր սակս ուրախակից են Ճեղ ծանօթք և բարեկամք, որոց գլխաւորը, պարծանոք կը սեմ թէ ես եմ: Թերեւս պիտի ըսէք. փոխա-

նակ ըսելու տարի մը եւս աւելցաւ , պարտ էր  
մանաւանդ ըսել թէ տարի մը պակսեցաւ : Ար-  
դարեւ ճշմարիտ է այս , և մեր կենաց ամէն  
օրուան , ամէն ժամուն և բոպէին համար յի-  
րաւի կրնայ ըսուիլ թէ պակսեցաւ մենէ :  
Բայց ի՞նչ ընենք , միթէ տրամբնք : Որովհե-  
տեւ ամէն օր չնորհք է մեղ , պատճառ ունինք  
ուրախանալու ամէն անդամ որ նոր առաւօտ  
կը ծագէ մեղ : Զայս կ'ակնարկէ բան բանա-  
տեղծին .

իւրաքանչիւր վայրկեան և օր , ամիս և ամ ,  
Որս է կորզեալ յանդութ ժանեաց ժամանակին :

Զայս ասեմ , քանդի գիտեմ թէ կը սիրէք  
ծանր խորհուրդներ , և անդէպ չէք համարիր  
լուրջ խոկումներ եւս և ինամակի չնորհաւո-  
րութեան : Երանի թէ ամէն բարեսէր և բարե-  
բար անձ իբրեւ զձեղ ունենար յերկնից պար-  
գեւ ոչ տարիներ միայն , այլ և գարեր յօդուտ  
բաղմաց : Ներեցէք որ բան մը եւս մաղթեմ  
վասն իմ . ապրել ընդ ձեղ և հաւասար ձեղ՝  
ձեր ընտիր օրինակներն յարգելու և օգտելու  
ինոցունց , ոչ թէ ուրիշ բանի համար : Թող  
ուրեմն երկար և երջանիկ ըլլայ ձեր կեանքը  
յուրախութիւն բարեկամաց , մանաւանդ ինձ  
որ գիտեմ յարգել զձեղ ի վեր քան զամենայն :

Հաւատարիմ և մոտերիմ ձեր

( Թուական )

առաջաւ

Ա. Ա.

## ԳԼՈՒԽ Բ.

ՆԱՄԱԿԻ ԽՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ՊԵՍՊԵՍ  
ՊԱՏՃԱՌԱՅ

— 2 —

## ԳԻԾՈՂՈՒԹԻՒՆ

Խնդակցութեան նամակներ ընդհանրա-  
պէս կարճ են : Այսպիսի նամակներու մէջ  
պարտ է նախ ուրախակից լինել անձին առ  
որ կը գրուի նամակը , և ապա մաղթել յա-  
ջողութիւն , երբեմն եւս համառօտիւ գովել  
զարժանաւորութիւն նորա , որպէս թէ յի-  
րաւի էր նմա այն պատուոյն կամ պաշտօնին  
համնիլ , կամ այն յաջողութեան հանդիպել :  
Խոկ ոճը պարտի լինել քաղաքավարական և  
յարգական , առանց աւելաբանութեան կամ  
ողոքանաց : Մարթ է նաեւ զուարծաբանու-  
թիւն խառնել , եթէ անձն առ որ կը գրուի՝  
ընտանի է կամ մանաւանդ աստիճանաւ հաւա-  
սար գրողին :

— 3 —

39. Առ այր կամ կին՝ սորոգ ամումնացեալ:

**Տէր, կամ, Տիկին.**

Խնդակցութեան նամակս առ ձեղ՝ այնպիսի միութեան համար է որ, ինչպէս ես համոզուած եմ, արժանի և վայելուչ է ձեղ։ Կա որ կապուեցաւ ընդ ձեղ այս անխղելի դաշամբ՝ արժանի է մեծարանաց, և չունիմ տարակոյս թէ լաւագոյն կը համարի ձեր առաքինութիւններ քան ձեր հարստութիւնը, ինչպէս որ յաչս ձեր պատուականագոյն են առաքինութիւնք նորա քան ստացուածն որում եղաք մասնակից։ Անհնար է թէ երջանիկ չըլլայ ամումնութիւն մը, երբ երկու ամոլք այսպիսի ոգւով և սրտիւ կու գան իրարու։ Գոնէ ես հարկ չեմ համարիր մաղթել որ ձեր միութիւնն այսպէս ըլլայ, քանզի դիտեմ թէ այսպէս է։ Եթէ այսպիսի միութեան վրայ աւելնայ նաեւ հայր կամ մայր լինելոյ բախտն, յայնժամ, ինչպէս կարծեմ, բան մը չի պակիր ի լրումն փափաքանաց ձերոց։ ուստի կը ձամ ձեղ ընդ հուպ փոքրիկ ժառանդ մը, հաղորդ այն ամենայն լաւութեանց որ զձեղ սիրելի և ցանկալի կ'ընեն ամենուն։ Այսոքիկ են ահա զորս կը մաղթէ վասն ձեր

Հաւատարիմ բարեկամ ձեր

(Թուական)

Ա. Ա.

40. Առ այր ոք՝ նոյն նիւթոյ վրայ :

**Տէր.**

Հաճեցէք որ ձեր ամումնութեան առթիւ ըսեմ ինչ որ կը խորհիմ և կ'ըղձամ վասն ձեր։ Այն որ իրմով հանդերձ նաեւ զայլս երջանիկ ընել դիտէ, արժանի է երջանկութեան։ Եւ որովհետեւ այսպիսի կը ճանչնամ զձեղ, կը փափաքիմ որ երջանիկ ըլլաք ամենայնիւ, քանզի այսուհետեւ ունիք և պիտի ունենաք շուրջ զձեօք այնպիսիններ՝ որոց երջանկութիւն կախում ունի ձենէ. նախ՝ ձեր աղնիւ կողակիցը, և ապա անմեղ արարածներ որ այս միութեան քաղցր պտուղներ պիտի ըլլան, եթէ, ինչպէս կը յուսամ, երկինք օրհնեն ձեր միութիւնը։ Զայս կը բաղձամ ոչ միայն ձեր բարի տիկնոջ համար որ ազգականս է, այլեւ վասն ձեր, քանզի երջանկութիւն նորա դարձեալ ձեր երջանկութիւն է։ Եթէ լսեն երկինք մաղթանքս, ձեր այս նոր կենաց ասպարէզը դիւրին, և զձեր մթնոլորտն առանց ամպոյ պիտի ըլլայ։ Եւ միթէ և ես երջանիկ պիտի ըլլամ զձեղ այնպիսի տեսնելով, ես՝ որ մինչեւ յարդ բարեկամութեամբ միայն կապուած էի, և հիմա նաեւ ինամութեան կապը կը տեսնեմ յաւելեալ։ Ո՛չչափ ուրախ եմ որ մօրաքեռս սիրելի դուստրը և մեր բոլոր աղգատոհմին անձկալին կը տեսնեմ յանձնուած

ի խնամս բարեկամի՝ որ քան զազդական աւելի սիրելի և պատուական է ինձ : Երկար կեանք և ամէն բարիք մաղթելով ձեզ, տէր, կը մնամ Հաւատարիմ բարեկամ ձեր

( Թուական )

Ա. Ա.

41. Առ կին ոմն՝ նոյն նիւթոյ վրայ :

Տիկին .

Կը փութամ յայտնել ձեզ ուրախութիւնս ձեր երջանիկ ամուսնութեան համար, քանզի ձենէ սորված եմ լինել հաղորդ ուրախութեան և տրտմութեան այլոց : Ուստի կը մաղթեմ ձեզ ամէն երջանկութիւն որում արժանի էք, և կը յուսամ թէ երբէք պատճառ պիտի չունենաք ձեր ամուլութեան օրերը վինտուելու, քանզի չունիմ բնաւ տարակոյս և չեմ կարծեր թէ իրբեւ զձեզ առաքինւոյ մը ամուսնական վիճակը կարէ դառնութեան պատճառ լինել : Բան մը միայն կը մնայ ինձ՝ մաղթել ձեզ, այն է ժառանգ մը որ բոլորովին նման ըլլայ իւր մօրը պատկերին, բարոյական տիպար նորա : Կարծեմ թէ այնուհետեւ բան մը պակաս պիտի չըլլայ ձեր և ձեր պատուական ամուսնոյն երջանկութեան :

Ինգրելով որ ձեր բարեկամութեան վրայ զրո ի վազուց կը վայելեմ՝ աւելնայ նաեւ ձեր

ամուսնոյն սէրն և հաճութիւնն առ իս, եմ ի սերտ սրտէ, տիկին,

Հաւատարիմ բարեկամ ձեր

( Թուական )

Ա. Ա.



42. Առ հայր կամ առ մայր վասն ծննդեսն որդույ :

Տէր, կամ, Տիկին .

Ահա հիմա ընտանիքն ամբողջ է : Որդեկի մը ծնունդը լցուց ձեր և ձեր արժանաւոր ամուսնոյն փափաքը : Նոր կապ է այս որ կը պնդէ և կը լրացնէ ձեր միութիւնը : Ինչ ուրախութեամբ ընկալայք արդեօք այս պատուական շառաւիղը : Այսուհետեւ դուք անոր համար պիտի ապրիք, ձեր փոյթը և հոգը պիտի ըլլայ անոր դաստիարակութեան համար, նա պիտի լինի ձեր բոլոր յոյսը : Բայց ինչ մեծ բախտ ձեզի համար, տէր, կամ, տիկին, որ այն մատաղ տնկոյն, իւր նեցուկ բարի օրինակ վինտուելու համար հեռուն երթալու պէտք չունիք : Թող այս մանկիկն հետեւի իւր հօր կամ մօր օրինակին, թող նոցա առաքինութիւններէն օգուտ քաղել գիտնայ, անտարակոյս պիտի ստանայ բոլոր բարի մարդոց սէրն ու մեծարանքը : Այս է, տէր, իմ միմիայն իղձս ի ծննդեան այս երջանիկ մանկան : Հաւատացէք որ ան-

կեղծ են բանքս , քանզի ի սրտէ կը բղխեն ,  
և չկարէ լինել այլ աղդ , ցորչափ եմ և պի-  
տի մնամ

Հաւատարիմ բարեկամ ձեր

(Թառական )

Ա. Ա.

~~~~~

43. Առ ճնողս՝ վասն ճննդեան ուստեր :

Սիրելի բարեկամ .

Ուրախութեամբ իմացայ որ կինդ ուստր
մի բերաւ յաշխարհ : Ի բազմաց հետէ կը փա-
փաքէիք այսմ դու և նա , և ահա կատարեց
Աստուած ձեր փափաքը : Զաւակ ունենալ
արդարեւ հասարակ բան կը համարուի , բայց
է մինի մեծամեծ շնորհաց նախախնամութեան ,
եթէ բարի է զաւակը . և այս կախում ունի
մեծապէս ի փութոյ և ի խնամոց ճնողաց : Օգ-
տակար տունին անդամ դժուարաւ բարւոք
պառուղ կու տայ առանց յատուկ խնամոց
պարտիզանին , և ինչպէս կընան յուսալ
մարդիկ որ տղայ մը բարի և աղնիւ ըլլայ ,
եթէ կը թողուի առանց փութոյ և խնամոց :
Բայց այս բանք ձեղի համար չեն , սիրելի , ձե-
ղի համար՝ որ կը թութեան յարգը գիտէք ,
և արդինքը ճանչնալու կարօտ չէք : Բաւա-
կան է որ նորածին մանուկն սկսի ճանչնալ
զծնողս իւր , իմաստութենէ և առաքինութե-

նէ ուրիշ բան պիտի չտեսնէ : Գիտեմ , այս
մանկիկը ձեղ արժանի որդի պիտի ըլլայ , եթէ
տայ ձեղ Աստուած երկայն կեանք անոր վրայ
հսկելու : Այս է միայն հաւատարիմ բարեկա-
մուդ փափաքը որ բոլորովին հաղորդ է այժ-
մու ցնծութեանդ :

Մարերիմ քո

(Թառական)

Ա. Ա.

44. Առ տիկին ոք որոյ դուստր պիտի ամուսնաց :

Տիկին .

Իբրեւ վաղեմի բարեկամ հանդուցեալ
ամուսնոյն ձերոյ , կը յաւելում խնդակու-
թիւնս այն ամենայն խնդակցութեանց վերայ
զորս ընդունած էք անտարակոյս յայլոց ի
պատճառս հարմախոսութեան ձեր երիցա-
գոյն դստեր ընդ որդւոյ տեառն Մամիկոնե-
նոյ : Ուրախ եմ որ վաղեմի բարեկամիս դուստ-
րը կը մննէ այսպիսի պատուանը տուն : Նոր
փեսայացուին հայրը Տէր Մամիկոնեան , իբրեւ
հաւատարիմ և աննենդ , մեծ համբաւ ունէր
ընդեղինաց առեւտրոյ մէջ , զոր իբր քառա-
սուն տարի վարեց , և տարակոյս չունիմ թէ
որդի և յաջորդ նորա Տէր Մարգար Մամի-
կոնեան մեծ փոյթ ունի հին հայրենի համ-
բաւը պահելու : Այս երիտասարդը բարեբա-
րոյ , ժիր և խնայող է , և նախանձելի հայր

պիտի լինի անտարակոյս : Ուստի և երջանիկ կը համարեմ ձեր դուստրը, վասն զի դիպեցաւ այնպիսի ամուսնոյ որ գիտէ յարդել չքնաղ առաքինութիւնները որովք բնութիւնն և դաստիարակութիւն կը պճնեն զօրիորդ Պայծառ :

Կը ցաւիմ, տիկին, որ պիտի չկրնամ լինել առաջիկայ հարսանեաց օրիորդին : Կնոջս վատառողջութիւնը որ սկսած է վարանեցունել զիս՝ չի թողուր ինձ առայժմ մի օր անդամ հեռանալ : Հաճեցէք, տիկին, հաւատալ թէ կը ցաւիմ ի սրտէ, և ընդունել յարդանքս :
Հաւատարիմ ձեր

(Թուական)

Ա. Ա.



45. Ի տիկնոջէ առ այլ տիկին որ դուստր մը ծնած է :

Տիկին .

Այսօր ընկալայ տոմսակդ որ կ'աւետէ ինձ թէ հուսկ ուրեմն հասար փափաքանացդ, սիրուն դստրիկ մը բերելով աշխարհ : Ընդունէ, տիկին, բարեկամիդ ինդակցութիւնն այս բարենշան դիպաց, և երջանկութեան համար զոր այս պատճառաւ պիտի ունենաս առ յապա : Ուրախակից եմ նաեւ պատուական ամուսնոյդ որ դուստր մի ունենալ կը բաղձար, և ահա լցաւ փափաք նորա : Ողջ լեր,

սիրելի տիկին, և ընկալ համբոյրս քեզ և սիրական մանկանդ զոր կարօտ մեծ ունիմ տեսնելու :

Մտերիմդ

(Թուական)

Ա. Ա.



46. Առ հայր՝ վասն ամուսնութեան դստերն :

Տէր .

Ես որ մինչեւ ցարդ ձեր ամէն ուրախութեան մամնակից էի, չէի կրնար չմաննակցիլ ձեր վերջին ուրախութեան ի պատճառս ամուսնութեան ձեր աղնիւ դստեր : Զաւկի մը երջանկութեան համար ամէն դժուարութեան տանել ապաքէն հօր պարտականութիւնն է . բայց հազիւ կը դտնուի հայր որ իբրեւ զձեզ ճանչցած և հաւատարմնութեամբ կատարած է զայս պարտականութիւն : Յուսամ թէ ձեր այս առաքինութեան համար Աստուած պիտի օրհնէ զայս ամուսնութիւն, մանաւանդ որ երկու ամուսինք եւս այնպիսի առաքինութեանց տէր են, որ անհնար է թէ անոնց միւթիւնը դժբախտ ըլլայ : Հարմացելոյն առաքինութիւններն արդէն դիտեմ, և կը վկայեմ թէ իսր ընկերը գոհ և երջանիկ ընելու ամէն հանդամանք ունի : Խոկ փեսայացելոյն համար կը լսեմ թէ ոչ միայն հարստութեամբ երեւելի է, այլ և խելօք և առաքինութեամբ,

և կարծեմ թէ այս է կարեւորն , և այս էր զոր և դուք կը վնտուէիք միշտ : Եթէ ամենեւին տեղեկութիւն չունենայի անոր անձին վրայ , գիտնալով ձեր ընտրողութիւնը և օրիորդին ճաշակը և իմաստութիւնը , պիտի ըսէի թէ խարուած կամ սխալած չէք ձեր ընտրութեան մէջ : Կը խնդրեմ որ երկինք չնորհեն երկուց ամուսնացելոց բարի պտուղներ , որ ճշմարիտ ժառանգներ ըլլան իրենց ծնողաց առաքինութիւններուն : Կ'աղաշեմ , տէր , սիրոյ և յարդանաց ողջոյնս տուէք օրիորդին և անոր նորընակը ամուսնոյն , համոզելով զիս միշտ

Հաւատարիմ բարեկամ ձեր

(Թուական)

Ա. Ա.

47. Առ ոմն որ նոր պաշտօն ըստունած է :

Տէր .

Լսելով որ այս նու պաշտօնի հասած էք , կը փութամյայնել ձեղ խնդակցութիւնս , թէս պէտ պարտէի խնդակից լինել մանաւանդ կառավարութեան (քաղաքին , ազգին , ընկերութեան , ևա) որ ունեցաւ պաշտօնեայ մի իրրեւ զձեղ , քան ձեղ՝ որ բեռ և հոգ միայն յաւելիք ձեր վրայ : Ձեղարժան է մանաւանդ դովեստ և չնորհակալութիւն , գովեստ՝ ձեր արժանեաց և տաղանդներուն համար , չնոր-

հակալութիւն՝ վասն զի այսպիսի ծանր բեռ յանձն առիք յօդուտ աղդին : Բայց ես զճըշմարիտն ասելով , ուրախ եմ որ այսուիկ վարձատրեցաւ ձեր արժանաւորութիւն . Եթէ ցաւալի բան մը կայ , ըստ իս սա է , որ ձեղ տրուած պաշտօնը , ձեր կարողութեան , գիտութեան և տաղանդին նայելով , փոքր է : Կը յուսամ թէ , տէր , ձեր զբաղանաց յաճախութիւնը և պաշտօնին բարձրութիւնը չեն փոխեր մարդասիրութիւնը և քաղցրութիւն զորոյ հանդէս ցարդ սքանչելի խոնարհութեամբ ցուցած էք նուաստութեանս : Այսպիսի փոփոխութիւն մը արդարեւ ուրախութիւնս պիտի դարձունէ ի յուսահատութիւն : Մի դադրեցունէք ուրեմն , տէր , ձեր բարեկամութիւնը , և այսմ կը փափաքիմ որպէս զի առիթ ունենամ միշտ ցուցնել թէ եմ ձեղ հաւատարիմ :

Խոնարհ ծառայ ձեր

(Թուական)

Ա. Ա.

48. Առ պաշտպան ոք որ հասած է բարձր պաշտօնի :

Տէր .

Աւելորդ է ասել թէ ինչ հաճութիւն իմացյ , երբ կարդացի լրագրաց մէջ թէ այս նու պաշտօն տրուած է ձեղ : Գիտեմ թէ վարձատրութիւն է այս ձեղ մանաւանդ քան Ա-

նորհք, վասն որոյ աւելորդ կը համարիմ խընդակից լինել ձեղ վասն այսր : Ո՞ւմ կը վայել է հատուցումն, եթէ ոչ այնմ որ հանդերձ կարողութեամբ ունի նաեւ հանճար, գիտութիւն և եռանդ : Այսպիսի կը ճանչայ զձեղ աղդը : Ապա մեք եմք բարեբախտ որ կը տեսնենք զձեղ այսօր մեր բարձրագոյն պաշտօններէն միոյն գլուխը : Իսկ ձեղ ցաւակից ըլլանք արդեօք, վասն զի մեծ պաշտօն հարկաւ մեծ ծանրութիւն կը բերէ ընդ իւր : Ուրիշի մը համար, տէր, թերեւս պատշաճ էր այս օրինակ ցաւակցութիւն, ոչ թէ ձեղ որոյ զօրութիւնն և արւելթիւն բաւական են բառնալ զեւս ծանրագոյնն . իսկ հանճարոյ, գիտութեան և եռանդեան փորձը ցուցած էք արդէն շատ անդամ : Բան մը միայն կը մնայ ինձ խնդրել ձեր մեծութենէն, այն է ձեր բարձր պաշտպանութեան տեւողութիւնը : Կը հաւատամ, տէր, որ ձեր հզօր աղդեցութեան փշրանքն անդամ բաւական են յագեցունել իբրեւ զիս հաւատարիմ ոմն որ կը խոստովանի լինել պարծանօք

Խոնարհ և հնազանդ ծառայ ձեր

(Թուառէան)

Ա. Ա.



49. Առ բարեկամ ոք որ յետ երկար պահպատութեան դարձեալ է ի հայրենիս :

Սիրելի բարեկամ.

Օտար երկիր ապրել միշտ վտանգաւոր և գրեթէ կէս մահ է, մանաւանդ այնպիսի օտար երկիր ուր դու գտնուեցար այս հնդամ եայ երկար պանդիաութեան ժամանակ : Արդարեւ նոր և զարմանալի տեղեր և մարդիկ տեսար, և անտարակոյս կը զուարժանայիր, և շատ բան սորվեցար, թէպէտ չեմ կարծեր թէ առանց նեղութեան և կարօտոյ էիր : Բայց քոյքդ ուրիշ բան չտեսան բայց անձկութիւն և հոգ վասն քո : Գիտես թէ քո աղագաւ մեծ հոգ ընողներուն մին եւս ես էի, և այնչափ աւելի՝ որչափ քաջ տեղեակ եմ հանդամանաց տեղերուն յորս դու կը գտնուէիր : Կը յուսամ թէ նամակներս առիր, և բաւական օգտակար եղան քեզ, քանզի ինչ որ գիտէի ի փորձոյ՝ հաղորդեցի քեզ : Զիարդ և իցէ, փառք որ նորէն ողջ և առողջ դարձար և մտար յարկիդ տակ : Ի՞նչ բերկութիւն զգացին արդեօք կինդ և սիրուն ձագունքդ յորոց ումանք կարծեմ յանուանէ միայն գիտէին զքեզ, այնչափ մանր էին երբ թողեր զնոսա : Շատ բաներ ունիմ հարցունել քեզ և իմանալ . կարծեմ օրերով պիտի ստիպուիս .

նստել ընդ իս, և բաւական պիտի ցաւեցուանեմ գլուխդ : Այս պատճառաւ կը յապաղեմ դալս, որպէս զի ճանապարհորդութեանդ յոզնութենէն քիչ մը կազդուրիս, որ կարող ըլլաս դիմանալ ձանձրութեան զոր պիտի կը-ըես յինէն : Առ այժմ մնաս բարեաւ, սիրելի, շատ քնացիր, կեր բարւոք, զօրացիր և սպա-սէ շատախօս և հետաքրքիր բարեկամիդ որ կ'անձկայ և կը փութայ տեմնել դքեղ:

Հաւատարիմ բարեկամ քո

(Թուական)

→→→օ<<<←←←

Ա. Ա.

50. Առ բարեկամ որ որ նոր առողջացած է ծանր չիւանդութենէ :

Սիրելի .

Կարեկից լինել բարեկամին ի վիշտս, և խնդակից՝ յուրախութեան, ապաքէն առա-ջն պայման է բարեկամութեան : Սէրն այն պիսի մոգական զօրութիւն է որ լրով անդամ և ի հեռուստ կը հաղորդի, և կ'անցնի սրտէ ի սիրա : Եթէ կը հաւատաս, սիրելի թէ ճշ-մարիտ բարեկամ եմ քեզ, պարտիս հաւա-տալ նաեւ թէ ինչ հոգ և անձկութիւն պա-շարեց զիս, երբ առի ծանր և վտանգաւոր հիւանդութեանդ դոյժը, և հիմա որ առող-ջութեանդ աւետիմն հասաւ մեզ, ուրախու-թիւնս անպատում է : Թերեւս զարմացած ես

թէ վասն էր յերկամնեայ ժամանակի հիւան-դութեանդ ամենեւին նամակ չգրեցի, ոչ քեզ և ոչ ընտանեացդ : Մի կարծեր թէ անհոդ էլ : Անդադար կը թղթակցէի, գրեթէ եր-կիցս յեօթնեկի, Տէր Ա. ի հետ որ հիւանդու-թեանդ որպիսութիւնը միշտ կ'իմացունէր ինձ: Խոհեմութիւն չամարեցայ գրել քեզ ուղղա-կի, չտալու համար երկիւղ կամ կասկած քեզ և քոյոցդ : Նախախնամութիւնն դարձեալ պարզեւեց զքեզ մեզ, ուստի և մեծ է մեր չնորհակալութիւն : Հիմա պարտք մը ունիմ կատարել, այն է խրատ տալ քեզ որ այս նոր առողջութեանդ ժամանակ ամէն զդուշութիւն ընես . թէպէտ դիտնալով խոհեմութիւնդ, կը հաւատամ թէ կարօտ չես ազգարարու-թեան : Կը յիշեցունեմ սակայն թէ ինչ ծանր հետեւանք կընայ ունենալ քո այժմու վի-ճակիդ մէջ դոյզն անհոգութիւն կամ զանցա-ռութիւն : Զդուշանալ առողջութեան միշտ պարտ է մարդոյ, բայց մանաւանդ յետ ծանր ինչ հիւանդութեան, մինչ ախտը ոչ թէ մեկ-նած և կորսուած է, այլ որպէս թէ ի դարա-նի կայ առ դրան, և կը սպասէ նորէն ձեռք ձգել զիւր որս : Առողջութեան ժամանակին սովորական բաները եօթնեակ մը կամ երկու ետ ձգէ, թէեւ թուի քեզ թէ կատարեալ առողջ ես : Խրատներուս միտ դիր, սիրելի, և այնպէս զերծ պիտի պահես վտանգէ

դքեզ, և անձկութենէ՝ բարեկամներդ, որոց
դլսաւորն ըլլալ կը պարծիմ:

Մտերիմ քռ

(Թուական)

~~~~~

Ա. Ա.

51. Խնդակցութեան ընդհանուր պատասխանի:

**Սիրելի բարեկամ,** կամ, տէզ.

Մեծապէս չնորհակալ եմ վասն սիրոյն և  
բարեկամութեան զոր կը յայտնէք ձեր խըն-  
դակցութեան նամակին մէջ ամուսնութեանս  
(կամ, առողջութեանս, կամ նոր պաշտօնիս,  
կամ, յաջող գարձիս) համար: Ուստի կը  
խնդրեմ ընդունել չնորհակալութիւնս: Այն-  
չափ ուրախութիւն և հաճութիւն տուաւ ինձ  
ձեր զուարթ նամակը որ կարծես թէ մաս-  
նաւոր յարդ սկսայ ունենալ նոր վիճակիս  
(կամ, պաշտօնիս) վրայ: Ճշմարիտ կ'ըսեմ որ  
առաջ անհոգ էի, և չէի խորհեր ինչպէս  
պարտ և պատշաճ էր, ձեր բանք իրը մողա-  
կան զօրութեամբ փոխեցին յանկարծ միտքս:  
Հաւատացէք, սիրելի, որ ձեր բերնին պատ-  
դամը, չեմ գիտեր ընդէր՝ միշտ ազդու և ար-  
դիւնաւոր է ինձ: Գիտէք որ բարեկամու-  
թիւն ձեր առ իս՝ քան որկեցէ յաջողութիւն  
աւելի պատուական է: Ուստի եթէ դուք ու-  
րիշ բարեաց համար երջանկ կը համարիք զիս,  
ևս երանելի կը համարիմ զիս, վամ զի կը

վայելեմ ձեր բարեկամութիւնը, և պիտի ջա-  
նամ միշտ լինել ձեզ

**Հաւատարիմ բարեկամ**

(Թուական)

~~~~~

Ա. Ա.

52. Այլ պատասխանի:

Սիրելի բարեկամ.

Ճշմարիտ բարեկամութիւնդ որոյ ապա-
ցոյցը յաճախ տուած ես ինձ արդեամբք և
բանիւք՝ կը կին հաստատուեցաւ վերջին նա-
մակովդ, ուր կ'ըսես և կը մաղթես ինձ շատ
բաներ որոց արդարեւ չեմ համարիր զիս ար-
ժանի: Մի միայն փափաքս այս է որ նախախ-
նամութիւնն պատեհութիւն չնորհէր ինձ
ցուցնել արդեամբ թէ ո՛չչափ չնորհակալ եմ
գեղ, և թէ ինչ մեծ երջանկութիւն կը հա-
մարիմ ունել դքեզ ինձ բարեկամ: Առ այժմ
սա միայն կրնամ ըսել թէ քան զիս աւելի
մտերիմ չունիս: Հաւատա ինձ, և պահէ բա-
րեկամութիւնդ, որոյ կորուստն հաւասար է
ինձ կենաց կորստեան: Ողջ լեր:

Բարեկամ քռ

(Թուական)

Ա. Ա.

~~~~~

## ԳԼՈՒԽ Գ.

ՆԱՄԱԿԻ ՑԱԽԱԿՑՈՒԹԵԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ցաւակցութիւն յայտնելու համար նամակ  
գրել սովորութիւն է, բայց շատ անդամ խո-  
հեմութիւն կը համարուի այսպիսի նամակ մը  
զանց առնել, քանզի երբեմն ցաւը փոխա-  
նակ թեթեւնալու միսիթարական բանիւք, կը  
նորոգուի: Ցաւակցութեան նամակ կը գրուի  
ընդհանրապէս շատ ընտանի մարդոց: Եթէ  
միսիթարելի անձն անձամբ տեսնել հնար է,  
լաւագոյն է այցելութեան երթալ և անձամբ  
խօսել ինչ որ պէտք է, քան նամակով ցաւա-  
կից լինել շանալ: Պարտ է նաեւ թողով որ  
ի մէջ ցաւալի դիպաց և ցաւակցութեան  
բաւական ժամանակ անցնի: Եթէ ցաւակ-  
ցութիւնը մահուան համար է, կընայ մեռ-  
նող անձն յիշուիլ գովութեամբ, բայց շատ  
դուշութեամբ և համառօտիւ: Շատ ան-  
դամ, մանաւանդ բարեպաշտ անձանց գը-  
րուած նամակի մէջ, կընայ գրողն հոգեւոր  
խրատ խառնել, բայց զգուշանալի է չտալ  
կարծել թէ ցաւալի դէպքը թեթեւ ինչ կը  
համարինք:



54. Ցաւակցութեան նամակ առ բարեկամ ոք վասն  
մահու հօր կամ մօր նորա:

**Սիրելի բարեկամ.**

Խորին ցաւով իմացայ ձեր կորուստը, կո-  
րուստ արդարեւ աննորոգելի: Եթէ ձեր ցաւոց  
վրայ խորին կարեկցութիւն կընայ գոնէ դոյ-  
զըն ինչ մեղմել ձեր վիշտը, գիտցէք որ ցա-  
ւելու կողմանէ ձեր երկրորդն եմ: Բայց դուք  
սիրելի, ունիք, եթէ ոչ միսիթարուելու ա-  
ռիթներ, գէթ այնպիսի պատճառ որ կը ստի-  
պէ զձեղ չափ գնել ձեր վշտին: Խնամքը զոր  
պարտիք ձեր ընտանեաց՝ չի թողուր, կար-  
ծեմ, ձեղ բոլորովին յափշտակուիլ յիշատա-  
կաւ կորստեան որ անդարմանելի է: Բայց և  
այնպէս գիտեմ թէ դուք հիմա ուրիշ բան  
չէք կրնար ընել եթէ ոչ սպասել: Ժամանակը  
որ չէ կարող ջնջել այդ տիսուր յիշատակը  
ձեր մոռքէն՝ թեթեւս սակաւ ինչ մեղմացնէ  
ցաւը: Այսմ կը փափաքի ձեր միշտ հաւա-  
տարկիմ և կարեկից բարեկամն

(Թուական)

Ա. Ա.

55. Առ այր որոյ կինն մեռած է:

**Սիրելի բարեկամ.**

Նամակս ոչ թէ միսիթարելու համար է  
զձեղ, կամ խրատելու որ ցամաքեցունէք ձեր

արտասուք, այլ, ընդհակառակն, յայտնելու համար թէ ցաւակից և արտասուակից եմ ձեզ: Լացէք, սիրելի, լացէք, արտասուք միայն կրնան մեղմել այսպիսի աղետից տապը: Եթէ գիտնալ թէ շատեր հաղորդ են մեր ցաւոց՝ կրնար նուազեցնել մեր վիշտը, դուք մանաւանդ պարտէիք զգալ զայս թեթեւու թիւն, քանզի գիտէք թէ ինչ կսկիծ տուաւ բոլոր լսողաց ձեր ազնիւ տիկնոջ տարաժամ մահ: Բայց ես կ'ուզեմ ուրիշ բան յիշեցունել ձեզ: Կարծեմ շուրջ նայելով պիտի տեսնէք իսկոյն պարտականութիւններ որ շատ պիտի նապաստեն յորդորել զձեզ մեղմացունել ձեր ցաւը: Բաւ է ուրեմն այնչափ կսկիծ դոր տուաւ ձեզ այդ աւազելի կորուստ, այսուհետեւ գարձուցէք ձեր հոգը մնացելոց. այս խմաստուն խորհուրդը պիտի բերէ անտարակյս զովութիւն ձեր այրած սրտին:

Հաւատացէք, սիրելի, որ շատ տխուր եմ, քանզի քաջ գիտեմ չքնաղ առաքինութիւնները բարեյիշատակ անձին՝ որ պատճառ է արդ ձեր ողբերուն. բայց և այնպէս կը խոստովանիմ որ ցաւս ստուեր միայն է ձեր ցաւոց: Կը յուսամ սակայն թէ կ'ընդունիք կարեկցութիւնս, համարելով զիս ձեզ

Հաւատարիմ և վշտակից բարեկամ

(Թուուական)

Առաջաւագ

Ա. Ա.

56. Առ կիս որոյ այրն մեւած է:

Տիկին.

Չեր դառն ցաւոց առաջին օրերն յարգելով, խոհեմութիւն չհամարեցայ վրդովել ձեր վշտահար սիրոը որ առանձնութեան և լուութեան կարօտ էր: Այս է պատճառ որ այսպէս անագան կու դամ յայտնել ցաւակցութիւնս: Առանց կամելու խափաննել տխուր բայց գորովալի խորհուրդներն որ դեռ դըրաւած են ձեր միտքը, պարտ կը համարիմ ինձ յորդհրել զձեզ, տիկին, որ, յօդուտ այն անմեղաց որ կարօտ են ձեր առողջութեան և խնամոց, չանաք զբաղեցնել ձեր միտքն ուրիշ խորհուրդներով:

Արդարեւ հանգուցեալն արժանի էր ձեր սիրոյն, քանզի իրբեւ հայր, իրբեւ ամուսին, և իրբեւ բարեկամ, իւր իմաստութեամբն և բարութեամբ, մեծարոյ և սիրելի էր բոլոր իւր ծանօթներուն: Այս պատուական անձն արդարեւ չկայ հիմա, բայց միթէ ընաւ յիշատակ մը չմողնուց: Այն սիրուն անմեղներն զորս արդէն յիշեցի, ոչ ապաքէն պատկեր և նկարագիր են հանդուցելոյն, և բաւական ի միսիթարել զձեզ: Մեղմացուցէք ուրեմն, աիկին, ձեր ցաւը, յիշեցէք որ ամէնքս մահկանացու ենք, և թէ այն օրէն որ մեր ոտքը

դրինք կենաց սեմին վրայ , կ'երթանք յառաջ  
գէպ ի մահ , և նորա ենք :

Եթէ բարեկամութիւնս առ Հանդուցեալն  
հաճոյ էր ձեղ , և եթէ տկար ծառայութիւնս  
կարէ լինել ձեղ օդտակար , կը խնդրեմ , տի-  
կին , յիշել զիս իբրեւ բարեկամ , յամենայնի  
պատրաստ ծառայելոյ ձեղ :

Կարեկից ձեր

(Թուական)

Ա. Ա.

Առօռա

57. Ա. Ա. նամակ նոյն նիւթոյ վրայ :

Սիրելի բարեկամ .

Մի կարծեր թէ այս նամակը կը գրեմ ըզ-  
քեզ միսիթարելու , այլ մանաւանդ խառնելու  
համար զարտասուս իմ արտասուացդ : Ար-  
դարև այնչափ մեծ է կորուստ մը որչափ պա-  
տուական է կորուսեալն : Հանդուցեալն զորոյ  
մահն յիրաւի կ'ողբանք՝ իբրև մայր , ամու-  
սին և տիկին՝ իւր վիճակին սեպհական ամէն  
առաքինութիւն ունենալով , ստացած էր հա-  
սարակաց սէրը և յարդանքը : Թողլով ուրիշ  
առաքինութիւններն , բաւական կը համարիմ  
յիշել սէրը որ առ քեզ , և փոյթը երջանիկ  
ընելու զքեզ և նախանձելի ամենուն : Զայ-  
սոսիկ յիշելով , դիտեմ , կը յաւելում կոկի-  
ծըդ , բայց բնչ , միթէ կրնամ տալ քեզ մո-  
ռանալ զայս մեծ կորուստ : Յաւալի է այն որ

արժանի է ցաւոց : Աշխարհէս հրաժարելոց  
վրայ միսիթարուելու պատճառ այս է որ ա-  
զատեցան նոքա այս արտասուաց հովտէն ,  
և կը վայելեն լաւագոյն կեանք : Եւ որովհե-  
տեւ կը հաւատանք թէ մեր բաժանումը ժա-  
մանակաւոր է , և թէ ընդ հուպ վերստին պի-  
տի տեմնենք զիրար , հիմ վշտանանք յան-  
չափս , մանաւանդ որ չափազանց կոկիծը մար-  
ժնոյ ևս զնասակար է : Բարեպաշտութիւնդ ,  
սիրելի , կը թելագրէ քեզ անշուշտ այս ճըշ-  
մարտութիւններն . դիտաւորութիւնս է յիշե-  
ցնել միայն քեզ զայսոսիկ ոչ թէ ուսուցա-  
նել , և որչափ ցաւակից եմ քեզ , նոյնչափ ցան-  
կացող միսիթարութեանդ , դիտնալով թէ բա-  
րեկամաց կարեկցութիւնը թէկ չի մոռցու-  
ներ , շատ անդամ կը թելեցունէ ցաւը : Ըն-  
դունէ ուրեմն , սիրելի , ցաւակցութիւնս իբ-  
րեւ այնպիսւոյ որ կը փափաքի լինել քեզ յա-  
փտեան :

Հաւատարիմ բարեկամ

(Թուական)

Ա. Ա.

Առօռա

58. Յաւակցութեան նամակ վասն մահու սիրելոյ  
(որդույ , ազգականի , բարեկամի) :

Սիրելի բարեկամ .

Մտերմութիւնս որ առ քեզ՝ կը ստիպէ  
զիս լինել հաղորդ ցաւոցդ վասն մահուան

որդւոյդ (կամ եղբօրդ, կամ այս անուն սիրելոյդ): Զեմ իրնար յայտնել բանիւ թէ որչափ վիշտ տուաւ ինձ այս դէպքը: Թէպէտ կը խորհէի թէ նամակս կ'աւելցունէ թերեւ ցաւդ, տակաւին չկրցայ լուել: Ինչ որ կը պատահի քեզ, ուրախալի կամ ցաւալի, չի կը ընար թողուլ զիս անկարեկիր: Եթէ կը խրնդաս՝ կը խնդամ և ես, եթէ կ'ուլաս՝ կուլամ: Ի փորձոյ գիտեմ թէ բնական է մարդուս միմիթարել, երբ կը տեմնէ թէ իւր ցաւերուն հաղորդ դանուողներ շատ են: Բնդունէ ուրեմն, սիրելի, ցաւակցութիւնս: Կամէի, եթէ հնար էր, սփոփել վշտահար սիրտդ իրեւ հաւատարիմ և կարեկից բարեկամ քո

(Թառական)

Ա. Ա.

59. Ուստի կամ դուստր առ հայր կամ առ մայր իր՝  
վասն մահուան միոյ ի նոցանէ:

Սիրելի հայր իմ, կամ, մայր .

Ի զուր կը ջանամ յայտնել սրտիս ցաւը .  
շիոթութիւն և թախծութիւն չեն թողուր  
բառ գտնել նկարագրելու կսկիծս: Տիսրու-  
թիւնս կը յաւելու մանաւանդ այնու զի հե-  
ռու կը գտնուիմ ձենէ: Իսկ թէ կարող ըլ-  
լայի իյնալ գիրկդ, խառնել զարտասուս իմ  
ընդ արտասուս քո, և փարել զքեւ . թե-

ըեւս կը մեղմանային ցաւերս, կամ գէթ չէին  
սաստկանար, քանզի կ'ունենայի զոք որում  
կրնայի հաղորդել վիշտս: Բարէ, ընդէր չալու-  
ուեցաւ ինձ ընդունել սիրելի հօրս (կամ մօրս)՝  
վերջին օրհնութիւնը, և լսել վերջին հեծու-  
թիւնը: Արդարեւ սոսկալի ժամ է այն յորում  
կը կորսնցնէ մարդ զիւր ծնող. չեմ գիտեր  
ինչ տագնապ կը պատէ զիս երբ կը խորհիմ  
թէ չկայ հայրս (կամ մայրս) վրիպեցայ իս-  
պառ անոր երեսէն :

Կակիծը չի թողուր ինձ աւելի խօսել: Վեր-  
ջին խօսքս քեզ, սիրելի հայր (կամ մայր), սա  
է որ այս հարուածն յաւել սէրս առ քեզ:  
Ծնողացս միոյն կորուստը զգացոյց ինձ միւ-  
սոյն յարդը, ուստի և եմ այսուհետեւ, սի-  
րելի հայր իմ (կամ, մայր), տասնապատիկ  
աւելի խանդակաթ որդի քո

(Թառական)

Ա. Ա.

60. Ա. Ա. նամակ նոյն նիւթոյ վրայ :

Սիրելի հայր իմ, կամ, մայր .

Արդարեւ մեծ ցաւ վասն մեր . կորուսինք  
անձ մը որ քան զամենայն սիրելի էր մեզ  
յաշխարհի: Աւաղ, այլ ևս պիտի չտեմնեմ  
զայն որ այնչափ նեղութեանց համերեց վա-  
սըն իմ: Դու միայն կրնաս, սիրելի հայր իմ  
(կամ, մայր), գիտնալ սրտիս ցաւը, քանզի գի-

տեմ թէ զնոյն կը զգաս , նաեւ դուն : Բայց  
վասն իմ մեծագոյն թշուառութիւն այն է  
մանաւանդ որ հեռու կը գտնուիմ քենէ .  
Եթէ քու առջևէ թափէի այս արտասուքը ,  
թերեւս սփոփուէի սակաւ մի , վասն զի գէթ  
սա միսիթարութիւնը կունենայի թէ դու մօտ  
ես ինձ , դու , որ այսուհետեւ միմիայն յոյս ,  
մի միայն պաշտպանս ես :

Եթէ զայսոսիկ գրելով կը յաւելում կսկի-  
ծըդ , և նորէն արտասուս թափել կու տամ  
քեղ , ներէ ինձ : Կամէի զքեղ միսիթարել ,  
բայց միթէ կարող եմ . վշտացեալ մը կընայ  
միսիթարել ուրիշ վշտացեալ . աղքատ մը՝ հա-  
ըստացունել ուրիշ աղքատ : Թողունք ուրեմն  
միսիթարութիւնը որ այսուհետեւ մեղի հա-  
մար չէ : Մեղի սա միայն կը մնայ ընել . դուն ,  
սիրելի հայր իմ ( կամ , մայր ) , մօրս ( կամ ,  
հօրս ) սէրն յաւել քու սիրոյդ վրայ որ առ  
իս , և ես ջանամ իմ սէրս ամփոփել ի քեզ  
միայն . այսպէս օդուտ կը քաղենք այս հա-  
րուածէն զոր նախախնամութիւնն հաճեցաւ  
տալ մեղ , մինչեւ որ կանուխ կամ անագան  
երթանք տեմսել զայն որ մեղ այսչափ դառ-  
նութեան մէջ ընկղմելով դնաց յիւր յաւիտե-  
նական հանդիստ : Յիշատակ արդարոց օրհո-  
նութեամբ եղիցի :

Հնազանդ և հաւատարիմ որդի քո

( թուական )      Ա. Ա.



61. Հօրեղըսյր ոմն առ եղբօրորդին իւր որոյ մայրն մեռած է :

Սիրելի վահան .

Չեմ կրնար պատմել թէ ինչ եղանք , երբ  
իմացանք նամակէդ մօրդ անակնկալ մահը :  
Զէի կրնար խորհել թէ այս էր պատճառ որ  
այնչափ օր չհանդիպեցար մեղ : Ո՞վ կ'ըսէր  
թէ քանի մը ժամ միայն խոնաւ տեղ մը կե-  
նալով թեթեւ պաղ առնուլը կրնար մահացու  
ըլլալ մօրդ պէս առողջ և ուժեղ կնոջ : Ո՞ր-  
չափ մօտ է մեղ մահը , և ինչ անմիտ ենք  
որ կը յուսանք առողջութեան և զօրութեան :  
Բայց , որդեակ իմ վահան , ուրիշ ցաւ մ'ալ  
տուաւ ինձ նամակդ . նամակդ կ'ըսէմ որ կը  
ցուցնէ թէ յուսահատութեան ժամանակ  
գրուած է : Կարծեմ մտացդ տէր չէիր , և  
դառնութիւն կը տիրէր սրտիդ , երբ կը գրէիր  
այն տողերն : Գիտեմ որ ցաւը խորհել չունի ,  
և ոչ գիտէ ընտրել բառ և խօսք : Խօսք մը մի-  
այն յիշեցնեմ քեզ նամակէդ , քանզի կը հա-  
ւատամ թէ մոռցած ես : « Նախախնամութիւ-  
նը , » կ'ըսես , « անիրաւ է : » Նախախնամու-  
թիւնը , սիրելիս , Պատուած է . անոր ինչպէս  
գդուանքը , նոյնպէս հարուածն ունի իւր  
պատճառներն որ անհաս են մեղ , և մենք ոք  
չենք կարող մոնել անոր գաղտնեաց խորը՝  
խոնարհութեամբ ընդունելու ենք խրատը :  
Աստուած մերթ կը իրատէ զմեղ և մերթ կը

գդուէ , ինչպէս գդուանքը կ'ընդունինք ուրախութեամի , նոյնպէս խրատն ընդունելու ենք խոնարհութեամի : Բայց առայժմ թողունք զայս : Հիմա փոխանակ տալու քեզ միսիթարութիւն որում կարօտ ես , արութիւն կը պահանջեմ քենէ , և գիտես ինչու համար . քանզի երէց որդի ես գերդաստանիդ , պատանի քաջ և ուշիմ : Ահա այսօր եղար , որդեակ իմ , մի միայն նեցուկ չորս թշուառ փոքրիկ որբերու : Այս անմեղ արարածք , մանչ մի և երեք աղջիկ , ապրելու համար այսուհետեւ կը նային քու ձեռքդ , ոչ իբրեւ եղբօր , այլ իբրեւ հօր : Բայց մի վհատիր , սիրելիդ իմ , Աստուած պիտի տայ քեզ , և գու՝ նոցա : Ժրացիր ուրեմն , այր եղիր . արդէն քսաներորդ տարին մտար , և ունիս բաւական շահաւոր գործ ի շնորհս համբաւոյ հօրդ , որ հարսաութիւն չթողուց քեզ , բայց թողուց բարի անուն որ ի վեր է քան զամենայն հարսաութիւնդ , վահան որդեակ , բայց մեծ է նաեւ միսիթարութիւնդ , եթէ գիտես , չարազատներդ պիտի գողան վրադ , իբրեւ իւրեանց բարերարի , բարի մարդիկ պիտի միքեն զքեզ իբրեւ ընտանեաց հայր , օտարք պիտի յարդեն զքեզ , և որ մեծն է՝ Աստուած պիտի օրհնէ զքեզ , քանզի հիմա իբրեւ որբերու հօր կը նայի քեզ :

Այս խրատներ կը գրեմ քեզ , որդեակ իմ վահան , քանզի մեծ վստահութիւն ունիմ ի քեզ , բայց մի կարծեր թէ ցաւակից չեմ քեզ : Եթէ տեսնէիր սիրտս , ինչ անհուն ցաւերու մէջ ընկղմած եմ . կը խորհիմ կորուստը որ ոչ քո է միայն , այլ և իմ . կը խորհիմ նաեւ որբերդ , կը խորհիմ և զքեզ . ցաւս մեծ է , սիրելիս , միսիթարէ հօրեղբայրդ , ծերացեալ և ցաւագար . բայց գարձեալ կ'ըսեմ , վստահ եմ յառաքինութիւն քո , մանաւանդ յարի և ի վեհանձն ոգիդ որ ի մանկութենէ քու սքանչելի յատկութիւնդէ : Մնաս բարեաւ , որդեակ իմ , զիտցիր որ քեզ ի սրտէ ցաւակից հօրեղբայրդ պատրաստ է միանդամայն լինել քեզ խորհրդատու և օգնական՝ զիարդ և որչափ կարող է :

Խանդակաթ հօրեղբայր քո

( Թագավորական )

Ա. Ա.

~~~

62. Բարեկամ ոմն ծանուցմնէ բարեկամին իւրում զմսէ
եղբօր նորա , և կը միսիթարէ զնս :

Սերելի բարեկամ .

Եղբօրդ վրայ է նամակս , Այսչափ միայն բաւական է քեզ հասկնալու համար թէ պատահած է հարազատիդ ինչ որ արդէն կը կասկածէիր : Արդարեւ նախախնամութիւ-

նըն յիշեց մարդոց ազնուագոյնը , և տուաւ այս առաւօտ քու հարսիդ հարուած մը զորոյ նմանն ընդունած չէր նա մինչեւ ցարդ : Այս ցաւագին տիկինն յանձնեց ինձ զայս գժուարին պաշտօն ծանուցանել քեզ որ հարազատ եղբայրդ և մեր սիրելի բարեկամն այսօր առաւօտեան վեցերորդ ժամուն աւանդեց հոգին իւր կնոջ և բարեկամներուն գիրկը :

Ի զուր է ջանալ միսիթարել զքեզ , քանզի գիտեմ թէ միսիթարական խօսք լսելու յարմար չես այժմ : Բան մը միայն կուղեմ ըսել . Եղբայրդ մեռաւ անվիշտ և խաղաղ : Յետ այնչափ երկայն և դառն ցաւոց կը վայելէր որ Աստուած անոր այսպիսի քաղցր և հանդարտ մահ պարգեւէր : Թշուառ հարսդ հիմա աւելի արդահատելի է քան զնա , քանզի թէպէտ շատոնց կը սպասէր այս տիսուր բաժանման , ընկղմեցաւ յանհնարին դառնութիւն , երբ հասաւ այն աղետալի ժամ : Մեր բոլոր հոգըն հիմա անոր համար է : Երկու մատաղ մանկամբք այրի մնալով , անձկութեան և վարանման մէջ է թէ ինչ պիտի ըլլան արդեօք այն որբեր : Կորոյս ամուսին մը որ սիրելի էր նման քան զաշխարհ ամենայն : Քաջ գիտես թէ որչափ արժանի էր հանդուցեան իւր բոլոր ծանօթներուն սիրոյն և յարգանաց : Բայց և այնպէս առաքինի այրուոյն վսեմ ոգին ըլնկ-

ճեցաւ այն խիստ հարուածէն , և կարծեմ թէ երկու փոքրիկ սիրուն որբերուն նայելով կը զօրանայ և կը ժրանայ այնպէս , որ չէր յուսացուէր այնպիսի փափուկ արարածէ :

Ըսի թէ չեմ ուզեր միսիթարել զքեզ , բայց կը յիշեցունեմ քեզ բնական իմաստութիւնդ և արութիւնդ : Զեմ տարակուալիր թէ գիտես ի դէպ ժամանակի համբերութեան և քաջութեան օրինակ ընծայել անոնց որ այս պարագայի մէջ կարօտ են օդնութեան և միսիթարութեան :

Սիրելի բարեկամդ

(Թուական)

Ա. Ա.

ՅԱՒԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԻ ՊԱՏԱԽԻԱՆ

ԴԻՑԱԼՈՒԹԻՒՆ

Ցաւակցութեան նամակի պատասխանը չկարէ լինել երկայն , այլ հակիրճ և ծանր , ըսկ չնորհակալութիւն մը , քան զոր աւելի խօսել չտայ թոյլ տրտութիւնը : Յաջորդ օրինակը քիչ փոփոխութեամբ կարէ լինել ամէն տեսակ ցաւակցութեան նամակի պատասխան :

~~~

63. Յաւակցութեան նամակի պատասխան :

**Տէր (կամ, տիկին) .**

Սերտ յաւակցութիւնը որով կը յայտնէք թէ արդարեւ մամակից էք վշտացս (կամ, այս ինչ ձախորդութեան՝) մեծապէս շարժեց զիս . ուստի կ'աղաչեմ, հաճեցէք ընդունել փոխարէն շնորհակալութիւնս : Շատ բան կ'ուզէի ըսել բայց չեմ կարող: Եթէ բան մը կը քնարական մեղմել վիշտս, կամ սիրտս սփոփել, անտարակոյս ձեր վշտակցութիւնը պիտի ըլլար: Արդարեւ մսիթարուիլ այսուհետեւ վասն իմ անհնար է . բայց և այնպէս կարեկցութիւնը որ ձեր նամակին մէջ կը տեմնեմ՝ յաւիտեան պիտի չեղէ մոքէս, և այս վշտագին օրերուս մէջ քաղցրագոյն ժամ պիտի համարիմ այն՝ յորում ձեր նամակը բացի :

Հաճեցէք, տէր (կամ, տիկին), համարել զիս ձեզ շնորհակալու բարեկամ:

(Թուական)

Ա. Ա.

→→→●●←←←

## ԳԼՈՒԽ Դ.

ՄԻՒԹԱՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆ

Յաւակցութեան այսինքն առ սգաւորս դրուած նամակներու մէկ տեսակն են միխթարական նամակներ որ կը դրուին հաւասարներու, այսինքն ազդականաց և բարեկամաց որոց ձախորդութիւն մը պատահած է : Միխթարական նամակներ գիւրին են քան զնամակս յաւակցութեան, քանզի որչափ ծանր ըլլայ ձախորդութիւն մը չէ ծանր քան զմահ: Այսպիսի նամակներու մէջ կրնայ շատ խօսք գտնել գրողն մեղմացնելու կամ թեթեւցնելու համար ախրութիւնը, յիշեցնելով մանաւանդ թէ ձախորդութիւնք կրնան շատ ծանր ըլլալ, բայց աննորոգելի չեն: Զանք և յարատեւութիւն կրնան ամէն վնասու տեղը լեցունել: Ո՞րչափ մարդիկ, յետ մեծամեծ կորուսաներու, աւելի փայլած են քան յառաջ: Միխթարութիւնն աւելի բանաւոր է, երբ ձախորդութիւն կրող անձն ունի այնպիսի բաներ որոց վասն կրնայ երջանիկ կամ բախտաւոր համարել զանձն, ինչպէս երիտասարդու-

Թիւն, առողջութիւն, պատիւ, կին, որդիս,  
բարեկամներ, այլովքն հանդերձ :

64. Միաժաման նամակ առ բարեկամ որ որ  
ճախորդութեան հանդիպած է :

### Սիրելի բարեկամ.

Դիտելով սէրս որ առ քեզ, կրնաս հաւա-  
տալ թէ ինչ կսկիծ ունեցայ, երբ լուր առի  
թէ այս ինչ ձախորդութիւնը պատահած է քեզ։  
Մի կարծելու, պիտի, թէ աւելի ցաւ և արրա-  
մութիւն պիտի զգայի, եթէ նոյնը պատահէր  
ինձ։ Չունիմ սովորութիւն ջանալ մսիթարել  
ուրիշը որեւիցէ ձախորդութեան համար։  
բանք բնչպէս կրնան իրաց վիճակը փոխել, և  
առանց փոխելու իրաց վիճակը կրնան անոնց  
արդիւնքը ջնջել կամ մեղմել։ Ուստի գրոյս  
նպատակը ոչ այլ ինչ է եթէ ոչ յայսնել քեզ  
կարեկցութիւնս, մաղթել որ յաջողութիւն մը  
մոռցնէ կամ գէթ թեթեւցունէ այս աղետից  
յիշատակը, միանդամայն իմացնել քեզ, սի-  
րելի, որ պատրաստ եմ ջանալ իմնվանն օգ-  
տակար լինել քեզ։ Գիտեմ նաեւ որ առաքի-  
նութիւններդ, մանաւանդ արութիւնդ, այն-  
պէս մեծ են որ որեւիցէ ձախորդութենէ գիւ-  
րաւ չես ընկճիր։ Ուստի մնալով ուրախալի  
ժամերու որ անտարակոյս պիտի գան, քան-

զի աշխարհի վրայ չիք ինչ տեւական, կը  
խնդրեմ ընդունել կարեկցութիւնս, և հա-  
մարել զիս միշտ քեզ

**Հաւատարիմ բարեկամ**

( Թուական )

Ա. Ա.

65. Առ մայր որոյ դուստըն հիւսնդ է :

### Տիկին.

Վերջին լուրդ զիս շատ տրամեցուց և Կը  
սպասէի լսել փոքրիկ Շուշանիդ կատարեալ  
առողջութիւնը, քանզի նախընթաց նամակիդ  
շատ յոյս կուտար, և որչափ ուրախ էի։ Նա  
մանաւանդ կը խորհիծի գրել քեզ և աղաչել  
որ նոր առողջացեալ մանկիկիդ առնլով գա-  
յիր առ մեզ, քանզի մեր գիւղին օդը շատ  
առողջարար է մատաղ մանկանց որ հիւսն-  
դութենէ նոր ելած է։ Բայց վերջին նամա-  
կիդ մէջ կ'ըսես թէ տղուն հիւանդութիւնը  
հնացեալ ախտ է և թերեւս անբուժելի։ Գի-  
տեմ որ տղան դարմանող բժիշկը վստահու-  
թեան արժանի է, բայց կարծեմ թէ քան  
զչափին աւելի երկիւղ տուած է ձեզ։ Կրնամ  
ցուցնել այս տեսակ հիւանդութեան շատ օ-  
րինակներ, ուր կորովագոյն բժիշկն անդամ  
յաճախ կը խարուի։ Եղբօրորդիս Արշակ,  
մինչ քու դստերդ տարիքն էր, նոյն ախտին  
հանդիպեցաւ, և արդարեւ մեծ երկիւղ տու-

աւ մեղ, բայց և այնպէս գիտէք թէ հիմա  
ինչպէս առոյդ է և ուժեղ:

Քաջալերուէ, տիկին, յուսա ի մանկու-  
թիւն և յառուգութիւն մանկանդ, և մանա-  
ւանդ ի բարութիւնն Աստուծոյ, որ չուզեր  
չարաչար հարուած տալ իբրեւ զքեզ բարի և  
ինամոտ մօր: Ողջ լեր, սիրելի տիկին, ըն-  
դունէ կարեկցութեանս վկայութիւնը, և  
գիտցիր որ եմ

### Հաւատարիմ բարեկամ քո

(Թուական)

Ա. Ա.

66. Առ բարեկամ ոք որոյ տուն և գոյք այրած են մեծ  
հրդեհէ:

### Աղնիւ բարեկամ.

Զեր վրայ յանկարծ եկող մեծ արկածին  
բօթը հասաւ յունին իմ, և յապուշ հարայ:  
Սակայն կը յուսամ թէ տիկին մօրդ յուսա-  
հատութիւնը ստուարացնելով կը պատմէ պա-  
տահարը: Ի՞նչ, տուն, խանութ, կահ, կա-  
րասի, արկղ, ստակ՝ բոլորը միանդամայն մո-  
խիր դարձան այդ սոսկալի հրդեհին: Բայց  
թէեւ արկածն այնպէս մեծ է ինչպէս կը  
պատմուի, տակաւին չնորհակալ ըլլալու ենք  
Աստուծոյ որ քու և տիկնոջդ և զաւկներուդ  
կեանքը պահուեցաւ այն ահեղ հարուածէն  
որ, ինչպէս տիրութեամբ կը լսեմ, թե-

ըեւս այնչափ մարդիկ խանձող ըրաւ, որչափ  
տուներ ի մոխիր դարձուց: Այսպիսի հարու-  
ած մը արդարեւ պնդագոյն հոգիներն ան-  
գամ սարսել բաւական է, բայց և այնպէս  
որչափ և մեծ է չարիքը, չէ անդարմանելի:  
Ամէն բան փոքր ի շատէ կուգայ նորէն,  
բայց կեանքը չի դար: Կորուսիր տուն, տեղ,  
դոյք, հարստութիւն, բայց բարի համբաւը  
զոր կը վայելես՝ կայ և մնայ. մի մոռանար որ  
այս եւս ստացուած է զոր բոլոր կենացդ մէջ  
աճեցուցիր, և որ միշտ պիտի ազատէ զքեզ:  
Ազգական, բարեկամ, քաղաքացի, յաճա-  
խորդ, ամէնքը ոչ ապաքէն վկայ են լաւու-  
թեանդ, և պատրաստ զքեզ միսիմարել և  
օդնել քեզ: Ապա իսկ և իսկ մ'երթար ի յու-  
սահատութիւն որ միշտ վատ խորհրդական  
է, այլ քեզ զարնող իսսու հարուածին դէմ  
դիր այն զօրութիւնը զոր ամէն հանճարեղ  
մարդ, ամէն առաքինի անձ և քաջ ոգի  
պարտի ունել յանձին:

Առ մեզ եկէք, սիրելի, եկէք իբրեւ մը-  
տերիմ ամենայն վատահութեամբ. միշտ, բայց  
մանաւանդ այսպիսի դիպուածի մէջ մեր սիր-  
տերն և քսակը բաց են ձեզ: Մնաս բարեաւ,  
սիրելի, մի կարի հոգար, հաւատա սիրոյ և  
կարեկցութեան

### Հաւատարիմ բարեկամիդ

(Թուական)

Ա. Ա.

67. Առ պատմի որ հիւանդութեան պատճառաւ չէ  
կարացեալ առնուլ զառաջին մրցանակն :

**Սիրելի Գառնիկ .**

Դիտեմ, շատ տխուր ես որ ձեր դպրոցին պարգեւաբաշութեան օրը չկրցար առնուլ առաջին մրցանակն որում իրաւամբ կը սպասէիր : Բարեբախտ ախոյեանդ շատ քիչ առաւելութեամբ քան զքեղ տարաւ մրցանակը , և ի՞նչ պատճառաւ : Այն դժբախտ հարբխին՝ որ ստիպեց զքեղ քննութեան մօտ քանի մը օր մնալ յանկողնի : Արդարեւ բաւական մը խիթարութիւն է քեղ , որ հարկը կամ բռնի դէպք մը առանց յանցանաց զբկեց զքեղ յաղթանակէն , ծնողքդ և բարեկամներդ քաջ գիտեն թէ այն մրցանակ քեղ անկ էր , և կրնամը ըսել թէ վեցամնեայ անդուլ փութով և աշխատութեամբ արդէն գրեթէ ստացած էիր զայն : Քո էր պսակն . ոխերիմ բախտը խլեց զայն ձեռքէդ :

Մխիթարուէ ուրեմն , սիրելի Գառնիկ , և գիտցիր որ յաչս մեր դու ես առաջին բոլոր ընկերացդ մէջ ոչ միայն ուսման և փութոյ , այլեւ բարի վարուց կողմանէ : Մնաս բարեաւ սիրելի , քանի մը օր միայն , քանզի կը յուս սամ տեանել զքեղ ընդ հուպ , և զուարճանալ ընդ քեղ այս պարապոյ ամիսը :

Հաւատարիմ բարեկամ քո

(Թուական)

Ա . Ա .

68. Հանի ոմն մխիթարէ ընծայիւ զիւր աղջիկ թռուն որոյ եղբայրն գիշերօթիկ դպրոց դացած է :

**Սիրելի Մաքրիկ .**

Ես , հանիդ , կը դրեմ քեղ զայս թռուղթ : Մի լար , որդեակ իմ , ահա արկղիկ մի պատառեալ , կապեալ և քաջ կնքեալ կու դայ քեղ երկաթուղեաւ , և կը բերէ հաղար մանր մունր բաներ քեղ ի մխիթարութիւն որում արդարեւ կարօտ ես : Կարծեմբաւական տըրառում ես , վասն զի բամնուեցար եղբօրէդ : Մինչեւ ցարդ եղբայր և քոյր բամնուած չէ իք իրարմէ . կ'աշխատէիք , կը խօսէիք , կը խաղացիք ի միասին , և եթէ երբեմն կը դըտէիք , կը հաշտուէիք շուտով : Գիտեմ որ այս բաժանումն ձեր երկուքին համար եւս ծանր է , բայց եղբայրդ Սեպուհ իններորդ տարին մտաւ , և ուսման սկսելու ժամանակ էր , թերեւս անցաւ իսկ : Նաեւ մայրդ չէր ուզեր , գիտեմ , հեռանալ իւր սիրելի որդեկէն , բայց յօդուտ նորա յանձն առաւ զայս բաժանումն : Ճշմարիտ մայրենի դութն անձնասէր չէ : Ապա պարտ է քեղ , հանձարեղ Մաքրիկ , լինել անձնուրաց և խոհական , և մանաւանդ աւելի դութ և ակնածութիւն ցուցնել մօրդ , որոյ սիրտն հիմա որչափ ցաւած է , որպէս զի քեւ մխիթարուի : Մինչեւ

ցարդ նա զքեղ կը միսիթարէր , կը դգուէր , և որչափ . արդ դու նմա պարտիս ընել այդ բաները : կը տեսնես , դուսար իմ , ինչ մեծ վստահութիւն ունիմ ի քեզ , որ կը համարձակիմ մայրդ քու խնամոցդ յանձնել :

Մոռնալու չես նաեւ որ այս բաժանման ժամանակ պիտի ունենաք , դու և մայրդ , երբեմն երբեմն զուարժ և միսիթարական օրեր : Սեպուհ պիտի գայ տեսնել զնեզ ամիսն երկու անգամ . խորհէ , ինչ ուրախութիւն վասն քո բազուկ առ բազուկ ճեմել պարտէզը կամ վերի պատշգամին վրայ , երբեմն եւս դուրս , ծովեզը , փոքրիկ սիրուն ուսանողի մը հետ գեղեցիկ նշանազգեստիւ , մայրդ առջեւէն , սպասաւորներն ետեւէն : Բայց և այնպէս սիրփելու համար զքեղ տես ինչ բաներ խորհեցայ , Մաքրիկ : Կը զրկեմ քեղ այսօր երկաթուղեաւ , ինչպէս ըսի , արկղիկ մի լի այնպիսի բաներով որ , կարծեմ , յարմար են ճաշակիդ : Նախ սիրուն փոքրիկ պարեգօտ մի վարդագոյն զոր Մարդարիտ ձեւեց քու վերջին կաղապարիդ վրայ և կարեց . և գիտես որ Մարդարիտ ձեւի և կարի կողմանէ առաջինէ : Երկրորդ՝ սեաւ երենու մէ կարի տուփ մի , ուր պիտի դտնես ինչ որ հարկաւոր է ժիր աղջկան մի իբրեւ զքեղ , մատնոց , մկրատ , կոճկիչ , և որ ի կարգին , բոլորը գեղեցիկ փայլուն պողովատէ : Ասոնք

արկղին մէջ անշարժ պահելու համար , հաւդ որ միշտ զքեղ կը խորհի՝ բոլոր այս բաներուն տակը , վրան , քովերը դրաւ մաքուր բարակ թուղթերու մէջ պատեալ շաքարեղններ : Արկղը բանալով պիտի դտնես ինմա այն սպիտակ թուղթէ ծրարներուն մէջտեղ աստ անդ գեղին նարինջ և կարմիր խնձոր : Բոլոր այս բաները կը զրկենք մեր սիրելի Մաքրիկան , քանզի գիտենք թէ Մաքրիկ բարի է և մտավարժ , կ'ուղենք որ մեր այս ընծայն փոխարէն ըլլայ սիրոյ և յարգանաց զոր Մաքրիկ կը ցուցնէ միշտ իւր ծերունի հաւուն և սիրելի հանւոյն :

Սիրելի հանիդ

(Թուական )

Ա. Ա.

69. Առքեռորդի որ ծանր դրամական կորուստ ըրած է :

Սիրելի .

Մայրդ կ'իմացունէ ինձ թէ մեծ վարանման և անձկութեան մէջ ես Ա. Ա. տան մնանկութեան պատճառաւ : Այս պատահար , կ'ըսէ մայրդ , այնպէս ծանր վնաս հասոյց ըստացուածոցդ և ապագայիդ , մինչեւ խորհեղ քեղ թէ , յետ կըելլոյ այսպիսի հարուած , սթափել այլկս անհնար է քեղ : Կը փափաքէի , եթէ մարթէր , թուշելով դալ ցաւակցութիւնս յայնել քեղ , և հասկցունել քեղ :

անձամբ թէ վարկդ և առեւտրոյ մէջ պատիւդ ընաւ չի խախտիր այսու արկածիւ . կը ընաս միշտ ժրութեամբ , խնայութեամբ և ուղղութեամբ շահել քեզ զայլոց վստահութիւն և օգնութիւն : Քաջալերուէ , սիրելի , և պիտի տեսնես որ շիտակ մարդուն կը համնի նպաստ՝ երբ և ուստի չէր յուսար : Ողջ լեր . կը յուսամ տեսնել զքեզ ի մօտոյ և խորհել ի միասին ինչ որ արժան է :

### Մօրեղբայրդ

(Թուուկու)

Ա. Ա.



### ԳԼՈՒԽ Ե

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆ

Շնորհակալութեան նամակի մէջ առ մեղմատուցեալ ծառայութեան կամ ընկալեալ երախտեաց կամ շնորհաց փոխարէն կը յայտնենք շնորհակալութիւն : Այս տեսակ նամակներու մէջ կընանք ըսել թէ մեծ պարտականութեան ներքեւ ենք այս ինչ շնորհաց կամ բարեաց աղադաւ , և թէ պարբաստ ենք ցուցնել զմեր շնորհակալութիւն , եթէ ծառայութիւն մը մատուցանելու առիթ պատահի : Բայց պէտք չէ ըսել թէ ընկալեալ բարեաց փոխարէնը կ'ուղենք հատուցանել , ապա թէ ոչ կընայ հասկցուիլ թէ պարտականութեան տակ ընկճած կը համերինք զմեզ , և թէ կ'ուղենք զայս խորհուրդը նետել մեր վրայէն իբրև բեռ :

→→→○↖↖↖←←←

70. Երախտեաց համար չսորհակալութիւն :

Տէր .

Շնորհակալութիւնն արդարեւ մարդկային սրտին գեղեցիկ արդիւնքն է , և հրէշ է ըստ իս ոչ այն մարդ միայն որ փոխանակ երախտեաց ապախտիս կը հատուցանէ , այլեւ այն որ զինք պարտական ճանչնալ չուզեր իւր բարերարին : Յետ ընդունելոյ ձենէ զայս մեծ երախտիս , բարերար տէր , ապերախտ գըտնուելու խորհուրդը բոլորովին հեռի է յինէն . կը վախնամ մանաւանդ թէ դուցէ երբէք ըստ արժանւոյն չկարենամ յայտնել շնորհակալութիւնս , թէպէտ գիտեմ թէ զձեղ բարերարելու մղողն ձեր սիրտին բարութիւնն է մանաւանդ քան դոյզն փոխարէն անդամ ընդունելու ակնկալութիւն : Զիարդ և իցէ , չեմ կարծեր թէ շնորհակալու սրտի ապաշոյցը կը մերժէք ընդունել , այնպիսի անձէ մանաւանդ որ երջանկութիւն և մեծ ուրախութիւն կը համարի անձին լինել բոլորովին ձերը : Այսու ոգւով գրելով նամակս , կը յուսամ , տէր , թէ պիտի հաճիք առիթտալ ինձ արդեամբ ցուցնել խոնարհ հպատակութիւնս և ձեղ ծառայելու եռանդս :

Խորին յարդանօք կը խոստովանիմ զիս , տէր , Հաւատարիմ ծառայ ձեր

( Թուական )

Առաջաւագ

Ա. Ա.

71. Պաշտօնի համսող մը առ այն որոյ միջնորդութեամբ հասած է յայն պաշտօն :

Տէր .

Ընդհանրապէս կըսուի թէ ամէն մարդ մասնաւոր ծրիւք կամ առաքինութեամբ կուգայ յաշխարհ : Եթէ ճշմորիտ է այս , պարտիմ ըսել թէ բնութենէ ձեղ տրուած ծրից մին , թերեւս գլխաւորն և անշուշտ գեղեցկագոյնն , է բարերարելու առաքինութիւնը : Ձեր այս առաքինութիւնը ճանչնալու և հըռչակելու համար այլոց վկայութեան կարօտ չեմ . առաջին վկայն ես եմ : Բազմապատիկ երախտեաց համար զորս ձենէ ընդունած եմ՝ ըստ բաւականին շնորհակալ ըլլալու դեռ առիթ ունեցած չեմ , և ահա նորէն պարտական ըրիք զիս , տէր , ձեր հզօր միջնորդութեամբ զիս ( այս նու ) պաշտօնի հասցնելով : Այս շնորհաց համար պարտականութիւնս կըրկին է . նախ երախտագէտ ըլլալ ձեղ , և երկրորդ՝ այնպիսի հաւատարմութեամբ կատարել պաշտօնիս պարտքը , որ պատճառ չտամ ձեղ ամացել , և խորհել թէ անարժանի համար և ընդունայն արկիք ի կիր ձեր աղղեցութիւնը : կը խոստովանիմ , տէր , որ ձեր միջնորդութիւնն ինձ վայելել տուողը ոչ իմ արժանաւորութիւնս է , այլ այն ձրի բարերա-

բութիւն զոր, չեմ դիտեր ինչ տեսնելով  
յիս, առատօրէն կը մատուցանէք: Բայց վրա-  
տահ լերուք, աէր, որ կորդ երկիր չսերմա-  
նեցիք: այս սիրտն ուր ձեր բարերարութեան  
սերմանք ինկան՝ պիտի տայ միշտ, վատահ  
եմ յԱստուած, երախտագիտութեան ան-  
թառամ ծաղիկներ:

Հաճեցէք ընդունել, աէր, խորին մեծա-  
բանօք հանդերձ սէր և հպատակութիւնն յի-  
նէն որ եմ

Խոնարհ ծառայ ձեր

(Թուական)

Ա. Ա.

~~~~~

72. Առ բարեկամոր որ փոխ տուած է նամակը դրողին:

Տէր.

Հաճելով փոխ տալ ինձ զգումարն ո-
րուն պէտս ունէի՝ այնպիսի մեծ չնորհք ըրիք
ինձ որ պիտի չմոռնամ երբէք: Վեհանձնու-
թիւնը ձեր բնիկ առաքինութիւնն է, և այս
է որ սիրելի ըրած է զձեղ ձեր բոլոր ծա-
նօթներուն: Որովհետեւ ձեր չնորհիւ կարող
եղայ առանց մեծ դժուարութեան գործե-
րուս մէջ յաջողութիւն գտնել, կը ինդրեմ
լինել վատահ յերախտագիտութիւն իմ, և ա-
մենեւին չգանդաղել, երբ կը կարծէք թէ
կրնամ ծառայութիւն մը մատուցանել ձեղ,

հրամայել ինձ որ պարտիմ ընել: Այսու-
հետեւ վամ իմ չկայ այնպէս մեծ ուրախու-
թիւն, ինչպէս պատեհութիւն ունենալ ցու-
ցընել ձեղ արդեամբ չնորհակալութիւնս:
Խորին յարգանօք եմ, աէր,
Խոնարհ և հաւատարիմ ծառայ ձեր
(Թուական)

~~~~~

Ա. Ա.

73. Շնորհակալութեան նամակ հանդերձ ըստային առ  
բժիշկ ոք :

Տէր.

Ինամքը և սէրը որով զիս դարմանեցիք  
ի վերջին հիւանդութեան՝ արժանի են խո-  
րին չնորհակալութեան և անմոռաց յիշման:  
Ձեր բարերարութեան փոխարէն ընել ան-  
հնար է, քանզի ինչպէս որ քան զկեանս պա-  
տուական բան չկայ. նոյնպէս չկայ հատու-  
ցումն որ կարենայ հաւասարել մեր կեանքը  
մեզ գրեթէ նորէն պարգեւողին երախտեաց:  
Կը խոստովանիմ, աէր, որ ձեր ազատեալն  
եմ. դուք զիս ձեր ճարտարութեամբ և ար-  
թուն զգուշութեամբ որպէս թէ ձեռքէս  
ըսնելով ի բաց տարիք մահուան վհէն, որոց  
բերանը հասած, և գահավէժ ըլլալէ մազիւ  
չափ հեռի էի: Այս մեծ երախտեաց համօր  
ինչ որ ըրի ձեղ՝ ոչինչ էր, և ինչ որ ընեմ՝ ո-  
չինչ պիտի ըլլայ: Բայց և այնպէս երախտա-

գիտութիւնն ստիպեց զիս ձեղ դոյջն ընծայ  
ընել իբրեւ յիշատակ : Յետ երկար խորհելոյ ,  
որոշեցի նուէր ընել ձեղ արկղ մի լի վիրա-  
բուժական գործեօք զարո պատրաստել տուի  
միում երեւելի արուեստագիտաց թարիզու :  
Կը յուսամ , տէր , որ հաճութեամբ կ'ընդու-  
նիք ընծայս , և կը յիշէք զիս իբրեւ ձեր հա-  
ւատարիմ բարեկամը որ միշտ կը խոստովա-  
նի զանձն երախտապարտ ձեղ :

բարեկամ ձեր

( Թուական )

առաջաւա

Ա. Ա.

74. Կնքահայր ոմն առ սան իւր որ անոր անուան դարձը  
չնորհաւորած է :

Սիրելի Միհրան .

Ուրախութեամբ լսեցի որ երէկ տուն գա-  
լով շքեղ փունջ մը բերած և մաղթած եսա-  
նուանս տօնը : Շնորհակալ եմ որ կը յիշես  
զիս . կը ցաւիմ սակայն որ չտեսայ քքեղ , մա-  
նաւանդ որ քեղ ընծայ ընելու համար գու-  
նաւոր պատկերներով զարդարուած եսովոս  
մը պատրաստած էի , միանգամայն այն նշա-  
նաւոր խաղալիկը զոր շատ կը սիրես , այն է  
« մոդական լապտեր » կոչուած արկղ մը , ուր  
աշխարհիս հինգ մասերուն հետաքրքրական  
տեղերը կը ցուցուին : կը յուսամ սակայն որ  
բարի մայրդ առաջիկայ կիրակի օր կը բերէ

զքեղ գիւղ . քանզի անուանս տարեդարձը  
կատարուած պիտի չհամարիմ մինչեւ որ համ-  
բուրեմ զքեղ և յայտնեմ անձամբ շնորհա-  
կալութիւնս այն գեղեցիկ շնորհաւորութեան  
և չքնաղ փունջին համար զորս սիրով ընկալայ  
իբրեւ քու կողմէդ ինձ մատուցուած սիրուն  
նուէր :

Կիրակի առաւօտ կը սպասեմ զձեղ կա-  
նուի . արդէն պատրաստութիւն տեսած եմ  
քուռակներով մեծ անտառն երթալ զբու-  
նուլ , և երեկոյին ուրիշ ուրախութիւն պիտի  
ունենանք : Տուր ողջոյն յինէն սիրելի մօրդ-  
ե երկու սիրուն քերցդ Նուարդայ և Նաղ-  
կան : Մնաս բարեաւ , անձկալիդ Միհրան .  
կիրակին յիշէ , բայց կը խնդրեմ որ կանուխ  
ճամբայ ելլէք :

Կնքահայր ք"

( Թուական )

Ա. Ա.

75. Ոմն առ ըսկեր իւր վամս ըսծայի նորա .

Սիրելի բարեկամ .

Շնորհակալ եմ քեղ ի սրտէ , որ ի ճանա-  
պարհորդութեանդ անդամ յեղերս Պոնտո-  
սի յիշեցիր զիս : Խեցեմորթք և ծովային  
տունկերն զորս զրկեցիր ինձ՝ սքանչելի են ,  
և պատուական զարդ եղան փոքրիկ թան-  
դարանիս , ուր դրի զնոսա չքնաղ իրաց հետ

զորս այլեւայլ տեղերէ հաւաքած եմ։ Երբ  
ձեր պատուական ընծայն ընկալայ, հայրս որ  
եռանդ Քիոսէ հոս հասաւ՝ քեզ զրկելու հա-  
մար կը կապէր առասանոք ծրար մի զոր եր-  
կուշաբթի կ'ընդունիս։ Ծրարին մէջ պիտի  
գտնես քանի մը տուփ շաքարեղին և բան-  
դակ ( թէչէլ ) քեզ և մօրդ համար։ Ասոնք  
բերած էր հայրս Քիոսէ իրրեւ այն երկրին  
արդինքը, և շատ ուրախ է որ ձեզ կը զըր-  
կէ։ Ի վերջ կոյս ամսոյս կը սպասենք զձեզ  
հոս։ Բաւական բերկրութիւն պիտի ըլլայ ինձ  
տեսնել զքեզ և խօսել մեր հին գպրոցական  
կենաց վրայ։

Մատո զողջոյնս սիրելի մօրդ, և մի ուշա-  
նաք։

Մտերիմ ընկեր քո

(Թուական)

Ա. Ա.

~~~~~

76. Պատանի ոմն առ մօրաքոյր իւր։

Սիրելի մօրաքոյր։

Տիրանայ ձեռօք զրկած էիր ինձ կողով մի
թ բալիւք, հաղարջիւք, ծիրանօք և ուրիշ
պէսպէս համեղ մրդօք։ Խակ և խակ բաժնե-
ցի զնոսա ինչպէս կը պատուիրէիր, այսինքն
տալ մանուկ ընկերացս, և ապա նստայ գը-
րել քեզ։ Շնորհակալ եմ որ յիշեցիր զիս՝
զրկելով ինձ այնպիսի համեղ բաներ։ Արդա-

րեւ, սիելի մօրաքոյր, ի վեր քան զարժա-
նաւորութիւն իմ ազնիւ և ներող ես առ իս,
քանզի պայմանդ այս էր, պարտիզիդ պտուղ-
ներէն զրկել ինձ նուէր, եթէ յեռամնեայ
քննութեան դպրոցիս առնուի զառաջին մըր-
ցանակն, բայց հազիւ կրցայ երրորդ մրցա-
նակին համնել, թէպէտ շատ աշխատեցայ։
ապա քու կողմանէդ մեծ շնորհք է զրկել ինձ
այդպիսի ախորժահամ ընծաներ, որոց ամե-
նեւին չէի սպասեր։


Այս մեծաննութիւնդ, սիրելի մօրա-
քոյր, գիտեմ կը պահանջէ յինէն փոխարէն
ջանք և յառաջադիմութիւն։ ուստի կը խոս-
տանամ կը կնել փոյթս ի հատուցումն պար-
տուցս որ առ քեզ։

Մնաս բարեաւ, սիրելի մօրաքոյր, կիրա-
կի կը տեսնենք զիրար, կը յուսամ։

Հնաղանդ քեռորդիդ

(Թուական)

Ա. Ա.



ԳԼՈՒԽ Զ.

ՆԵՐՈՒՄ ԽՆԴՐԵԼՈՒ ԿԱՄ ՉՔՄԵՂՈՒԹԵԱՆ
ՆԱՄԱԿՆԵՐ

—

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Այս տեսակ նամակներ կը գրուին, երբ
գրողն արդարեւ յանցաւոր է կամ յանիրա-
ւի յանցաւոր կարծուած: Այս տեսակին կը
վերաբերին նաեւ այն նամակներ որովք նե-
րում կը խնդրուի, երբ խոստում մի կատա-
րել անհնարին կ'ըլլայ իրաւացի պատճառաւ:

Ներում խնդրելու նամակաց մէջ գրողն
պարտի զգուշանալ որ իբր թէ բռնադատեալ
չերեւի. և պարտի ցուցնել թէ պատրաստ է
հատուցում ընել անիրաւութեան, և թէ կը
բաղձայ որ բարեկամութիւնը նորոգուի:

Այս տեսակ նամակներու մէջ սովորու-
թիւն է, յետ խոստովանելոյ զյանցանս, դի-
մել վշտացելոյն ներողութեան, երբեմն նաեւ
մեղադրել դանձն:

Ներում կը խնդրուի նաեւ շատ անդամ,
երբ նամակ կամ նամակի պատասխան կ'ու-
շանայ: Բայց այս պատճառաւ խնդրուելու
ներումը յանցանաց համար խնդրուած ներ-
ման պէս խոնարհական ըլլալու չէ: Բաւական

է ըսել թէ ինչ պատճառաւ յապաղուեցաւ,
և ցաւ յայնել յայն սակս. և եթէ լոկ առ
անհոգութեան եղած է, պէտք է անհոգու-
թիւնը կամ պղերգութիւնը խոստովանել, և
խոստանալ լինել առյապա զգուշագոյն:

77. Պատանի ոմն իւր հաէն ներում կը լննդրէ անոր հետ
յանդնաբար վարուելուն համար :

ՍԻՐԵԼԻ ՀԱՅԱ

Ուժ օր ետքը կը տեսնեմ զձեղ, բայց չեմ
ուզեր որ այս ութ օրուան մէջ տգէտ մնաք թէ
որչափ զեղջ և ապաշաւ է ինձ որ երեկ այն-
պէս յամառութեամբ և լրբաբար վարուե-
ցայ ընդ ձեզ: Ի դարձին մեր ի տուն, մայրս
իմացուց թէ ինչ մեծ յանցանք էր ինձ այն-
պէս թերի դանուել յակնածութեան և ի հը-
նազանդութեան առ ձեզ: Կը տեսնեմ, սի-
րելի հաւս, որ շատ անիրաւ եմ, և չափա-
զանց պիտի ըլլար վիշտս, եթէ առանց նե-
րում խնդրելու մնայի: Բոլոր վստահութիւ-
նըս ձեր ներողութեան և սովորական բարու-
թեան վրայ է: Ուստի ներում կը խնդրեմ
ձենէ, սիրելի հաւս, լրբութեան և խեռու-
թեանս համար, և կ'աղաշեմ որ մօրաքեռս
միջոցաւ որ այս թուղթը պիտի տայ ձեզ՝ ե-
մացունէք ինձ թէ կ'ուզէք ընդունել զղու-
մըս և ներել ձեր հէք թոռին: Հաւատացէք,

բարի հաւս , որ այսուհետեւ պիտի ջանամ մոռցնել ձեղ այն ցասման և ստահակութեան շարժումը՝ որոյ վասն ակնկոր եմ առաջի ձեր :

Կիրակի , ինչպէս կը յուսամ , պիտի փութամ դալ համբուրել զաջ ձեր , և լսել ձեր բերնէն թէ ներած էք ձեր թռոխն , որ մեծարանօք և խոնարհութեամբ կը խնդրէ ձեր օրհնութիւն :

Խոնարհ թռոխն ձեր

(Թուական)

Ա. Ա.

78. Աշակերտ ոմն ներում կը խնդրէ վարժապետէն զոր անարդած է :

Տէր .

Հաճեցէք որ ներում խնդրեմ ձենէ այն սրտնեղութեան համար որով յանցաւոր գըտնուեցայ առ ձեղ երէկ , մինչ արդարեւ հայրական և արդար խրատներ կուտայիք ինձ : Որչափ կը խորհիմ որ այնպէս յանարժանս վարուեցայ իրեւ զձեղ մեծարոյ անձի հետ , այնչափ ամօթ կը պաշարէ զիս , և կը նստիմ կոր ի գլուխ : Գիտեմ որ այս անձկութենէ պիտի չաղատիմ , բայց եթէ դիմելով ձեր ներողութեան և բարութեան որոց ապացոյցը շատ անդամ տուած էք ինձ : կը խընդրեմ ուրեմն , տէր , եղբօրս միջոցաւ որ այս թուղթը պիտի տայ ձեղ՝ իմացնէք ինձ թէ

կը հաճիք չնորհել ներումը զր կը խնդրեմ այսօր ձենէ , և ընդունել խոստումն այսուհետեւ ջանալոյ լինել արժանի ներողութեան ձերում :

Հաւատարիմ աշակերտ ձեր

(Թուական)

Ա. Ա.

79. Փոխ առնուած գիրքը ետ դարձնելու ականյ յապարդ մը ներում կը խնդրէ իւր բարեկամէն :

Սիրելի Սուրէն .

Շատ զարմացայ , նա մանաւանդ նեղացայ յոյժ , երբ գիւղէն դառնալով գտայ գրասեղանիս վրայ փոքրիկ նամակդ , որով կը խնդրես աշխարհագրութեան բառարանը և աղլասը զորս քանի մը օրուան համար միայն փոխ առած էի քենէ : Երբ ծովու բաղնիք պիտի երթացի , այն երկու գիրքը ծրաբելով և կապելով յանձնեցի ընկերիս Աշոտյ , և ազանցի իսկոյն զրկել զնոսա առ քեզ : Աշոտ , առ որ գացի հարցունել երբ առի նամակդ , հանդարտութեամբ պատասխանեց թէ խորհելով որ պարապոյ տմիսն զրօսանաց ժամանակ է և ոչ ընթերցման , լաւ համարեցաւ չղեկել քեզ յիշեալ գրեանը , և թէ այսու կարծեց ծառայութիւն մատուցանել առիթ չտալով քեզ որ կարդալու զբաղելով ետ մնաս զրօսանքէ : Մեծապէս մեղագրեցի զիս , սի-

ЧИТАЛЧЕ
ОКРАСИРАЦ

ըելիդ Սուրէն, որ այսպիսի գործ մը յանձնեցի մեր յոյլ և թոյլ Աշոտոյ, որ աշխարհի իրեն նման կը կարծէ : Զիարդ և իցէ, իսկ և իսկ առի գրոց ծրարը որ կը կենար այնպէս ինչպէս պահած էի, առանց շատ յանդիմանելու մեր մտացի բարեկամը որ ըստ իւր մտաց ծառայութիւն մը ըրած կը կարծէր :

Շատ կը ցաւիմ, սիրելի, այս սխալման վըրայ, և կը խնդրեմ որ ներես, քանզի գիտեմ թէ իրաւամբ պիտի մեղադրես զիս որ այնպիսի ուշիմ և խոհեմ գործակալ մի ընտրեցի :

Հաւատարիմ բարեկամ քո

(Թուական)

Ա. Ա.

80. Երեւելի պաշտպանի մը նամակ գրել ուշացնող մը
ներում կը խնդրէ :

Տէր .

Երկայն ատեն է որ գրած չեմ ձեզ, և եթէ ձեր ներու բնութիւնը չդիմայի, կարծեմ պիտի չհամարձակէի յիշեցնել զիս ձեզ. բայց խիղճս, մանաւանդ թէ սիրտս, այնպէս գառն կերպով կը ստուանէ զիս իրբեւ անհոգ յանցաւոր, որ ահա կ'իշխեմ ըսել ձեզ թէ երբէք չդադարեցայ խորհել ձեր վրայ, և պահել ի մոտի զերախտիս ձեր առիս, մինչ կարօտ էի ձեռնտութեան :

Ներեցէք ինձ ուրեմն, տէր, կ'աղաչեմ,

զայս լուսթիւն զոր աւելի կանուխ կամէի լուծել, և հաւատացէք որ ձեր անթիւ բարեաց համար առ իս՝ միշտ միեւնոյն նորհակալութիւնն ունիմ ի սրտիս, և միեւնոյն սէրը՝ ձեր անդուլ խնամոց և հայրական գթոյն համար վասն իմ: Հաճեցէք ուրեմն, տէր, երկտող գրուած թուուցանել առ իս որմէ հասկրնամ թէ դատապարտած չէք զիս առանց հարցափորձի, և թէ տակաւին արժանի կը համարիք զիս ձեր պաշտպանութեան: Գիտէք որ ըստ կարի ջանացած եմ ձգել յիս զձեր յարդան և չժողովլ զձեղ ամօթովլ: Տարի մը առաջ ոչ ապաքէն ձեր միջնորդութեամբ մուայ Եւրոպական Թուրքիոյ երկաթուղեաց դրագրութեան դիւանն իրբեք քարտուղար. նոյնպէս ի նորհս ձեր էր որ դիւանին տնօրէնը լինելով գոհ յինէն՝ յաւել ամսական վարձս այնչափ՝ որչափ հազիւ կրնայի ակընկալել յետ չորեքամեայ ծառայութեան: Հիմայ առաջին քարտուղար եմ, և ամսական վարձս եղաւ 3,500 ֆրանք: Ահաւասիկ, տէր, յաջող գործ մը զոր ձեր միջնորդութեամբ ընդունած կը համարիմ: Հաճեցէք ուրեմն ընդունել միւսանգամ նորհակալութիւնս, և ծաներուք զիս

Ձեր հնազանդ և երախտապարտ ծառայն
(Թուական)

Ա. Ա.

81. Վշտացեալ բարեկամներէ ներում խնդրելու նամակ :

Տիկին .

Երբ երէկ երեկոյին եկայ հրաժարական ողջոյնս տալ ձեղ, ձեր ընդունելութիւնը շատ ցուրտ թուեցաւ ինձ, ուր յառաջ այնչափ ջերմութեամբ և զուարթութեամբ կ'ընդունէիք զիս, մինչեւ սքանչանալ ինձ : Երկար խորհեցայ և տակաւին կը խորհիմ, տիկին, թէ ինչ պատճառ կրնար ունենալ այս յանկարծ փոփոխութիւն որ մեծ կսկիծ տուաւ ինձ . ինձ՝ որ այսչափ տարիներէ հետէ այնպէս հաւատարիմ գտնուած եմ ձեր պատռական գերդաստանին :

Եթէ արդարեւ ձեր յաչաց ելայ գըժբաղդաբար, գէթ հաճեցէք, տիկին, կ'աղաչեմ, իմացունել ինձ յանցանքս և բերել զիս յուղութիւն : Մի վարանիք պարզ ըսել ինձ ամէն բան . ամօթով և խոնարհութեամբ պիտի լսեմ յանցանքս : Յետ երկար խորհելոյ սակաւ ինչ դուշակեցի այն ցաւալի ցըրտութեան պատճառը, և, եթէ կարծիքս ուղիղէ, հաւատացէք, տիկին, որ ակամայ և առ տկարութեան յանցեայ : Կը թուի ինձ թէ կարի ջերմութեամբ խօսեցայ ի վերջին վիճարանութեան ձեր մեծարոյ հօր հետ, և այնպէս յամառութեամբ վիճեցի, որ այնտեւացեալ բարեկամներէ ներում խնդրելու նամակ :

պիսի պատկառելի ծերունւոյ մը վայելուչ ակնածութեան սահմանն անցաւ :

Եթէ այս է ձեր վշտանալուն պատճառը, կը խնդրեմ, իմացուցէք ինձ . անտարակոյս պիտի գամ անձամբ ներումն խնդրել յազնիւ ծերունւոյն, թէեւ գիտնամ թէ ձեր բարեկամութիւնը նորէն ստանալու բախտը պիտի չունենամ յաւիտեան : Հաւատացէք որ, եթէ կորուսանեմ խապառ ձեր գերդաստանին բարեկամութիւնը, ձեր գերդաստանին՝ զոր կը սիրեմ և կը պատռեմ, յարդանքս պիտի չպակսի մազիւ չափ :

Հաճեցէք, տիկին, ընդունել մեծարանքս :
Խոնարհ ծառայ ձեր

(Թուական)

Ա. Ա.



ԳԼՈՒԽ Ե.

ԽՆԴՐՈՒԱԾՈՅ, ՊԱՀԱՆՁՄԱՆ, ՅԱՆՁՆԱՌՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄԵՐԺՄԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԳԻՑՈՂՈՒԹԻՒՆ

Խնդրուածոյ նամակի գլխաւոր յատկութիւնն է համեստութիւն : Ոչ ամբարտաւանութեամբ պարտ է պահանջել, և ոչ նուաստկերպով աղաչել : Դարձեալ չէ պարտ գրողին զիւր արժանաւորութիւն յառաջ բերել, որպէս թէ վարձատրութիւն և իրաւունք կը պահանջէ, գուցէ փոխանակ շահելու զայրացունէ այն անձին սիրան առ որ կ'ուղղէ զիւր խնդրուած :

Պահանջման նամակ մի կարէ լինել հրամայական, նաեւ յանդիմանական : Եթէ անիրաւութիւնը չարակամութեամբ եղած չէ, այլ սխալմամբ կամ յանդէսս, պահանջումը պարտի լինել մեղմ և չափաւոր, դիմելով արդարասիրութեան անձին որմէ իրաւունք կամ փոխարինութիւն կը պահանջուի : Նոյն մեղմութիւնը և զգօնութիւն կը պահանջուի, երբ ստորակարգեալէ մը կը դանդատինք առ գլխաւոր նորա : Համառօտիւ, խոհականութիւն և պարագաներու ուշադրութիւն քան որեւիցէ կանոն աւելի են :

Յանձնառութեան նամակով մէկուն ծառայութիւն մը ընել կ'առաջարկենք՝ յառաջ քան զինդրել նորա մենէ : Այսպիսի նամակներ պարտին վեհանձնութեամբ գրուիլ, առանց ամցնելու անձը որում կ'առաջարկենք մեր ծառայութիւնը : Զգուշանակի է այնպէս չերեւյնել որպէս թէ նա առ որ կ'առաջարկենք մեր ծառայութիւնը՝ մնացած է անօգնական, և քան զմեզ այլ ապաւէն չունի : Վերջապէս չնորհքը զոր ընել կ'ուղենք՝ առաջարկելու ենք իբր ծառայութիւն և ոչ իբր ողորմութիւն . միով բանիւ պարտինք թեթեւ ցուցընել մեր ծառայութեան յարդը, եթէ մեր գիտաւորութիւնը ճշմարտիւ բարեկամութիւն ընել է, ապա թէ ոչ մեր գիտացինը կը ստիպենք մերժել մեր առաջարկութիւնը :

Խնդրուածոյ և յանձնառութեան նամակներու երկու կերպով կրնայ պատասխան տրուիլ, ընդունելով կամ մերժելով : Եթէ խնդրուած է զոր կ'ընդունիս՝ ցոյց թէ որչափ ուրախ ես որ հաճութիւն կամ ծառայութիւն կ'ընես բարեկամիդ : Իսկ եթէ զոր կ'ընդունիս՝ առաջարկութիւն է, յայտնէ չնորհակալութիւնդ թէ առաջարկուած ծառայութեան, և թէ առաջարկութեան եղանակին համար : Իսկ եթէ կը մերժես, նայէ որ մերժումդ վիրաւորիչ և կամ վշտացուցիչ չըլլայ :



82. Ո՞մն կը յանձնէ բարեկամի մը խնամոց զիւր որդին
որ Բարիղ կ'երթայ ուսման համար :

ՏԵՐ .

Թէպէտ մեր յարաբերութիւնն առեւտրական է, չեմ կարծեր թէ տամնամեայ մտերիմ թղթակցութեան սահմանէն գուրս կ'եւնեմ, եթէ խնդրեմ ձենէ ծառայութիւն մը որ մեր սովորական գործերէն տարբեր է, և բոլորովին անձնական է :

Որդիս յետ ութ աւուր ճամբայ պիտի ելէ Բարիղ երթաւ անտառագիտութեան ուսման վերջին քննութիւնը կատարելու : Վստահ եմ որդւոյս զգօնութեան և զգաստութեան, թէպէտ գեռ ութեւտամնամեայ է : Բայց ես պատանւոյ մը Բարիղ բնակելէն կը կասկածիմ, մանաւանդ որ որդիս Գալուստ պիտի ստիպուի հոն կենցաղավարիլ իրեն հասակակից պատանեաց հետ որոց մեծ մասը ցոփ և անառակ են : Այս պատճառաւ անոր կարճ բնակութիւնն անգամ ի Բարիղ մեծ անձկութիւն է ինձ :

Սրդեօք չեմ կընար, տէր, ձեր մարդասիրութենէն յուսալ որ այս պատանին ձեր քով ընդունիք, և ձեր իմաստուն խրատներով զգուշացնէք զնա վտանգներէ որ այս կարճ միջոցին կարեն պատահել նմա այնպի-

սի աղատ և զեղծ մայրաքաղաքի մէջ, մանաւանդ որ մեր պատանին դեռ անփորձ և զիւրահաւան է, և չունի ամենեւին խորագիտութիւն :

Հաճեցէք ուրեմն, տէր, իմացունել որդւոյս թէ ինչպէս պարտի վարուիլ. և եթէ չէք կարող ընդունել զնա ի տուն ձեր, գէթ յարմար պանդոկ մը դնել, և ծախուց համար հարկաւոր դրամը չափով տալ նմա : Գիտեմ որ Գալուստ հութեամբ պիտի անսայ ձեղ :

Հիմա կը մնայ ինձ ներումն իննդրել ձենէ այս համարձակութեան համար, որ թերեւս մեղադրելի թուի ձեղ. բայց գուք եւս, տէր, հայր էք, և կրնաք հասկնալ հօր մը գորովական հոգը և երկիւլ նորահաս որդւոյ մը համար որ կրնամ ըսել թէ տակաւին անարատ է :

Եթէ իննդրուածս ընդունելի է ձեղ և յաջող պատասխան կ'ընդունիմ, իսկոյն կը ծանուցանեմ ձեղ հեռագրով պատանւոյն մեկնելու և հոն համնելու օրը և ժամը : Հաճեցէք ընդունել, տէր, սիրոյ ողջոյնս, և համարեցէք զիս

ԶԵՐ ՀԱւատարիմ բարեկամը

(Թառական)

Ա. Ա.

~~~

83. Դասատուէ մը կը խնդրուի դաս տալ պատամաց  
ումեք ի տան :

Տէր .

Սէրն և խնամք զոր կը յուցնէիք միշտ  
որդւոյս մինչ ձեր աշակերտն էր՝ համարձա-  
կութիւն կու տան ինձ աղաչել զձեղ որ տուն  
դարվ յառաջ տանիք ձեր դասատուութիւն  
որմէ կը յուսամ թէ մեծ օգուտ պիտի քա-  
ղէ տղան : Գիտէք, տէր, որ Երուանդիս ա-  
ռողջութիւնը, թէպէտ բոլորովին գէշ չէ,  
չի տար նմա թոյլ այլ եւս վարժարանը մնալ:  
Ըստ խորհրդոյ բժշկին ստիպուեցայ տղան  
դպրոցէն առնուլ տուն, լաւ համարելով հե-  
ռացունել զնա առ ժամանակ մի դպրոցա-  
կան հրահանգէ : Բայց կը տեսնեմ որ անոր  
տկարութիւնն այնչափ չէ մինչեւ չկրնալ աշ-  
խատել գէթ ի տան :

Կը յուսամ, տէր, թէ պիտի հաճիք ձեր  
պարապոյ ժամերէն ժամ մի կամ երկու դո-  
ղանարվ տալ որդւոյս կրթութեան : Պա-  
տանեակն, ինչպէս կը տեսնեմ, ունի պէտո  
աշխատելոյ, որ անցեալ աշխատութեան ար-  
դիւնքը կորուսանելով իսպառ ձեռնունայն  
չելլէ :

Հաճեցէք իմացունել ինձ թէ շաբթուան  
որ օրը և որ ժամ կրնաք դալ տուն առան-  
ձին դաս տալ Երուանդիս որ արդէն մեծ ու-

ըախութիւն ունի խորհելով թէ նորէն իւր  
պատուական ուսուցչին ինամքը պիտի վա-  
յելէ :

Ընդունեցէք, տէր, առ ձեզ Երախտա-  
գէտ հօր մը և որդւոյ անկեղծ չնորհակալու-  
թիւնը :

Հաւատարիմ բարեկամ ձեր

( Թուական )

Ա. Ա.

~~~~~

84. Պաշտօնատար ոմն ըսկերութեան մը տնօրէսէն կը
լնսդրէ մի ամսական կանվիկ :

Տէր .

Մարդասիրութիւնը որով սովոր էք ըն-
դունել զառ ձեզ ուղղեալ աղաչանս՝ կը յու-
սացնէ զիս թէ նաեւ իմ աղերս լսելի լինելոց
է ձեզ :

Հայրս որ, ինչպէս գիտէք, դոյզն թոշա-
կաւ հրաժարած է զինուորական ծառայու-
թենէ՝ կը գրէ ինձ օգնել նմա այժմու դըժ-
ուարութեան մէջ մօրս ծանը և երկար հի-
ւանդութեան պատճառաւ: Որովհետեւ ծախ-
քը դոր ըրած է ցարդ այս պատճառաւ՝ քան
զթեթեւ թոշակն շատ աւելի է, և անհնարին
նեղութեան մէջ կը գտնուի :

Կրնամ արդեօք համարձակել, տէր տնօ-
րէն, աղաչել զձեղ հրաման առաջապե-

տին հատուցանել ինձ կանխիկ հարիւր յիսուն ֆրանք ի հաշիւ ամսականներուս : Այս չնորհքը զոր կը ինդրեմ ձենէ մեր այս նեղութեան մէջ՝ յաւիտեան չնորհակալ պիտի ընէ զմեղ առ ձեզ : Ներեցէք, տէր, որ այսպէս կը համարձակիմ դիմել առ ձեղ ուղղակի, արդարեւ մեծ յանդգնութիւն պիտի համարէի այսպիսի ինդիր մը մատուցանել ձեղ, եթէ չդիտնայի ձեր սովորական մարդասիրութիւնն առ պաշտօնատարս :

Հաճեցէք, տէր անօրէն, ընդունել խորին մեծարանք :

Զեր խոնարհ և հնազանդ ծառայն

(Թիուական)

Ա. Ա.



85. Մայր որ կամերվ գիշերօթիկ դպրոց դնել իւր որդին՝ կը ինդրէ բարեկամէ մը ցուցնել յարմար դպրոց :

Տէր .

Դարձեալ կը դիմեմ այն անխոնջ ինսամածութեան զորոյ ապացոյցներ տուած էք ինձ միշտ :

Փոքրիկ Միհրանս որ արդ եօթնամեայ եղաւ՝ յարմար է հիմա, ինչպէս կը կարձեմ, աւելի ընդարձակ և հաստատուն դաստիարակութեան քան զոր կ'ընդունէր ընդ

իմով իմնամով, այսինքն հասարակ ընթերցումն, քերականութիւն և դիր : Հիմա կը փափաքիմ դնել զողայն գիշերօթիկ դպրոց, քանդի կարծեմ թէ արդէն հասուն և պատրաստ է տղան, և ժամանակ է որ տղայութեան կարդէն և առտնին փափկութենէ ել լէ դուրս :

Հաճեցէք ուրեմն, տէր, ցուցնել ինձ վարժարան մը զոր դուք լաւագոյն կը համարիք, և ուր կարող ըլլամ դնել վստահութեամբ Միհրանս : Այս մանուկն, ինչպէս ուրիշ ամէն տղայ որ դեռ մայրական հսկողութենէ դուրս մնացած չէ, շատ ձախող ունակութիւններ ունի . աշխատելու եռանդը շատ նուազ է, և սորվելու յօժարութիւնը՝ շատ աւելի հարեւանցի : Սակայն միտքը սուրէ, և ունի փափաք աւելի բան գիտնալու քան զոր արդէն գիտէ :

Միով բանիւ, սիրելի տէր, ջանացէք յարմար դպրոց մը գտնել որդւոյս որում բաւական երկիւղ կու տայ դպրոցական կեանքը, կեանք մը որ արդարեւ բոլորովին նոր է նմա . և ես արդէն վարանման մէջ եմ այս բաժանման համար . բայց մօր մը կեանքը ոչ ապաքէն անձնուրացութեան կեանք է :

Այժմէն կրնաք վստահել, տէր, որ մեծ պիտի ըլլայ չնորհակալութիւնս առ ձեղ այս կարեւոր օգնութեան համար զոր իրնդ

ըեմ ձենէ : Հաճեցէք կ'աղաշեմ, ընդունել
ողջոյնս :

Հաւատարիմ աղախն ձեր

(Թոռական)

Ա. Ա.



86. Փոխ ստակ լմնկրող խարդախ վաճառականի
կը զացուի ստակ տալ :

Տէր .

Ընկալայ ձեր նամակն յորում կը ինդրէք
ինէ փոխ տալ ձեղ վեց հազար ֆրանք : Ան-
հընար է ինձ սակայն կատարել ձեր խնդիրը .
ինչ պատրաստ դրամ որ ունէի՝ տուի նոր ա-
մուսնացեալ գտներս օժտին : Բաց աստի ,
ներեցէք որ համարձակ ըսեմ ձեղ, քանզի
գիտէք որ եղբ հարկ է՝ չեմ գանդաղիր յայտ-
նել խորհուրդս : Թուի ինձ թէ ձեր յանցա-
նօք կը կրէք դրամն այժմու նեղութիւնը :
Գիտեմ թէ գրեթէ երկու տարի է որ ա-
ռեւտրոյ մէջ ուղղութեամբ չգացիք . աւելի
շահելու ակնկալութեամբ անստոյդ և ի վեր
քան զկարողութիւն ձեր գործերու ձեռն
արկիք : Յառաջ քան նոր վաճառք գնելը
պարտէիք ձեր շտեմարաններուն մէջ համ-
բարեալ ցորենոյն գոնէ մի մասը վաճառել .
եթէ այսպէս ընէիք , թերեւս աւելի իմաս-
տութեամբ , թերեւս նաեւ աւելի ուղղու-

թեամբ և ըստ խղճի կը գործէիք , քանզի ,
եթէ ցորենոյ վաճառականք , գինն հետզիե-
տէ բարձրացնելու խորհրդով , ցորեն չպահէ-
ին , լաւագոյն պիտի ըլլար շուկային վիճակը ,
և ժողովուրդը չէր նեղուէր այսպէս շարա-
չար :

Ուստի կ'ըսեմ դարձեալ , պարագայք չեն
տար թոյլ ինձ օդնել ձեղ . բայց թէեւ տա-
յին թոյլ , պիտի չուզէի , կարծեմ , քաջալե-
րել այսպիսի յանդուգն և ապիրատ շահա-
գիտական նպատակներ : Այսուհետեւ մի յու-
սաք թէ պիտի յօժարիմ երբէք օդնել ձեղ ,
մինչեւ տեմկեմ թէ կը հետեւիք առեւտը-
րական առողջ սկզբան , որոյ օրինակը տուաւ
ձեղ ձեր հանդուցեալ հայրը , և զոր գուք
եւս կը յարդէիք մինչեւ մօտ ժամանակ ,
ուստի և ունէիք պատիւ իրեւ իմաստուն
և ողջամիտ վաճառական :

Կ'ողջունեմ զձեղ :

(Թոռական)

Ա. Ա.



87• Ψαυτανήν οιμη ηρ Σωρούηλω Κρ φαντοτή· Κρ λυρές
δάνωσαμωρ ζηρητελ, έτι ήγερ θηρωα αηλωξε· θηγήν ρωηρωρρ εθνωκοη
ρωρετηλωιήν ιηρηθητελ φωτανηνήν ή ρωρη ήμη αηλη θημωτηλεκήν:

S₅P.

Յուսահատիչ նամակ մը առի Մարսիլիա
գտնուող ընկերէս, առ որում, ինչպէս գի-
տէք, դրած եմ որդիս Զոհրապ որ մեր գոր-
ծերուն մէջ վարժուի: Յիշեալ նամակով ըն-
կերս կիմացնէ ինձ թէ Զոհրապ ամսէ մը հե-
տէ այնպէս անհոգ կամ մանաւանդ այնպէս
վհատեալ էր, որ իւր կարեւորագոյն գործե-
րըն անգամ կատարելու անփոյթ էր: Մարսի-
լիոյ գեղեցիկ նաւահանդիսող եկող անթիւ
նաւերը տեսնելով, թէ անխոհեմ բարեկամի
մը թելադրութեամբ, չեմ գիտեր, կըսէ ըն-
կերս, այս վեշտասանամեայ պատանին միտ-
քը դրած է հիմա ծովերու վրայ թափառել:

Մինչեւ ցարդ փոյթ, հլու և հնազանդ
պատաննեղին բարուց և վարուց մէջ այս անա-
կընկալ փոփոխութեան բուն պատճառը
գիտնալ ինձ պարտք է: Ուստի կ'աղաչեմ
զձեղ, տէր, հաճեցէք տեսնել զջոհրապ, և
քաղցր ու համոզիչ բանիւք ջանացէք նախ
խրատել զնա, եթէ հնար է ետ կենալ այն
անմիտ խուրհուրդէն և անպատեհ երազնե-
րէն, որ, ինչպէս գիտեմ, շփոթած են պա-
տաննեղին միտքը: Խսկ եթէ կը գտնէք զնա յա-

մառ և անլսող, հաճեցէք իսկոյն իմացունել
ինձ գրով, որպէս զի անձամբ Մարտիլիա գա-
լով փութամ չարեաց առաջն առնուլ:

Ներեցէք ինձ, բարեկամ, այսնոր ձանձ-
րութեան համար զոր կու տամ ձեզ: Ձեր բա-
րութեան վրայ վստահ ըլլալով համարձակե-
ցայ աղաչել, և գիտէք որ հարք շատ ան-
դամ անձնասէր են, երբ ինդիրն իրենց որդ-
ւոց վրայ է:

Ի ԱԵՐԹ ԱՐԹԷ ԵՄ

(Բարեկամություն) Հաւատարիմ բարեկամ ձեր Ա. Ա.

88. ԲԺՇԿԵ ՄԸ կը լմսդրուի դալ դարմանել Հիւանդ մը :

850 F. H. L.

Փութացէք, կ'աղաչեմ, գալ մեր տունը՝
տեսնել մեր պարտիզանին որդին որ սան-
դըլէ մը վար ինկաւ, և, ինչպէս կարծեմ,
ծանր վնասուած է, քանզի անզգայ կը պառ-
կի: Յարդանօք կ'ողջունեմ զձեղ, տէր, ա-
շաշելով գարձեալ որ արագ համնիք յօդ-
նութիւն մեր թշուառ վիրաւորելոյն որ ձեր
ճարտար ինսամոզ կարօտ է:

(Թ Ա Խ Ա Տ Ա Ր Ի Մ Բ Ա Ր Ե Լ Ա Մ Ճ Ե Ր)

1964 BYB 1202

89. Խնդրուած առ տիկին ոմն :

Տիկին .

Կրնամ արդեօք համարձակել դիմել այն անսպառ բարութեան որոյ ապացոյցը շատ անդամ տուած էք ինձ :

Կարաձմեռն որ այս տարի կանուխ կսկըսի , ամէն կողմանէ գործերու դադարումը կը ստիպէն զիս կրկնել առ ձեզ աղերար դոր անցեալ տարի մատուցի , և գուք ընկալայք մարդասիրաբար :

Զեր կալուածոց պահապանը յօժար է թոյլ տալ ինձ առնուլ քանի մը բեռ վայտ ձեր անտառներէն , բայց ոչ համարձակի զայս թոյլուութիւնն ընել առանց ձեր մասնաւոր հրամանին : Ուստի կը համարձակիմ , տիկին , աղաչել զնեղ այս տարի եւս ընել ինձ վնոյն չնորհս , որոյ վասն չնորհակալ պիտի ըլլայ ընտանիքս , մանաւանդ ծերունի մայրս որ եօթանանամենի է : Խոնարհութեամբ կը խոստովանիմ զիս , տիկին ,

Զեր հնազանդ ծառայն

(Թուական)

Ա. Ա.



90. Տիկին ոմն կը խնդրէ աղախին ի հօրաքեռէն իւրմէ :

Սիրելի հօրաքոյր .

Հիմա կը տեսնեմ որ շատ գէշ ըրի ձեր ազդարարութեան հակառակ ջարմանդուխտ տիկինոջ աղախինն ինձ սպասաւոր առնլով : Վեց ամիս է որ այս աղջիկն իմ քովս է , և այսչափ ժամանակի մէջ ուրիշ բան չըրաւ , եթէ ոչ նեղութիւն տալ ինձ իւր ծուլութեամբ և լրբութեամբ , ուստի և որոշեցի արձակել ղնա : Բայց մինչեւ որ ուրիշ աղախին գտննեմ , տնտես կին մը պիտի առնում խոհանոցի և տան մանր ծառայութեանց համար զորս ես անձամբ չեմ կարող կատարել , վասն զի ուրիշ կարեւոր զբաղմունք ունիմ : Եւ որովհետեւ այս կինը տարւոք է և չի կըրնար երկար մնալ իմ տունս , կ'աղաչեմ , սիրելի հօրաքոյր , հաճեցէք փութալ գտնել մեզ յարմար աղախին մի : Զեր ընտրութիւնն այնպէս է որ կրնամ աչուըներս գոց ընդունել զով որ առաջարկէք : Կը խոստովանիմ որ ձեր խորհրդեան չանսալուս համար յանդիմանութեան արժանի եմ . բայց կը խնդրեմ , սիրելի հօրաքոյր , ներել ինձ , և կը խոստանամ այսուհետեւ անսալ միշտ ձեր խրատուն :

Զեր խանդակաթ եղբօր դուստր

(Թուական)

Ա. Ա.

91. Կառք մը գնել կ'առաջարկուի ումեք :

Տէր .

Այս առաւօտ ձեր տնտեսէն իմացայ որ
կուզէք կառք մի գնել փոխանակ այն կա-
ռաց որ մի քանի օր առաջ խորտակած էր :
Արդ կ'առաջարկեմ ձեղ գնել կառքը զոր
անցեալ ամիս գնեցի և զոր արդ ստիպեալ եմ
վաճառել, քանզի, ինչպէս դիտէք, ունիմ
ճանապարհորդել կովկասու կողմերն : Եթէ
կընդունիք առաջարկութիւնս, հաճեցէք ի-
մացունել ինձ . սպասաւորս իսկոյն կը բերէ
կառքն առ ձեղ, որպէս զի քննէք և փոր-
ձէք : Հաւատացէք որ նպատակս շահել չէ,
միայն կը փութամ որչափ մարթէ արագ առ-
գնող գտնել : Այս կառաց համար տուած
եմ 1570 Փրանք. կառագործը (Շաւարչ, թիւ
71, փողոց Վարդանանց) յորմէ գնեցի՝ կըր-
նայ վկայել : Եթէ կամիք զեղչել ինչ յիշեալ
գնէն, քանզի կառքն մի ամիս դործածուած-
է, զայն եւս հաճեցէք իմացունել ինձ : Զեղչ-
ման չափը ձեր որոշման կը թողում, քանզի
վստահ եմ ձեր խղճին և ուղղութեան :

Բնկալարուք, տէր, զհաւաստիս իմոյ յար-
գանաց :

Հաւատարիմ ձեր

Ա. Ա.

(Թուառէն)

ՀՅԱՅՑ

92. Ձի մը գնել կ'առաջարկուի ումեք :

Տէր .

Լուայ երէկ ձեր եղբօրէն թէ ձեր կա-
ռաց համար ձի մը գնել կ'ուզէք, և թէ կը
վարանիք դիմել առ ձիալաճառս առ երկիւ-
ղի թէ գուցէ խարուիք : Ուստի կ'առաջար-
կեմ ձեղ գնել ճերմակաձին զոր գնեցի տա-
րի ու կէս առաջ, երբ պատերազմէն գար-
ձող հեծելազօրաց գնդին երիվարներն աճուր-
դիւ ի վաճառ հանուեցան հոս : Նաւարկու-
թեան մը պատճառաւ դէպ յեղիպտոս՝ ըս-
տիպեալ եմ վաճառել կառքս և ձին :

Ձին զոր գնել կ'առաջարկեմ ձեղ՝ ութեւ-
տամնամեայ է, առողջ և կայտառ, դոյնը
ճերմակ, ուրեք ուրեք մոխրագոյն, հեծնե-
լու եւս շատ յարմար է, գնացքը միօրինակ :
Երեւելի թերութիւն մը չունի, միայն գիշե-
րը քիչ մը երկչոտ է, բայց կարէք անձամբ
փորձել, և պատրաստ եմ ամէն երաշխաւո-
րութիւն տալ ձեղ, եթէ սակարկութեան
մանենք :

Այս ձիոյն համար վճարած եմ 450 Փրանք,
բայց 300 ի կու տամ ձեղ : Աւելի նուազ գը-
նով տալ հնար չէ . զեղչը զոր ընել կ'առ-
նում յանձն՝ կարծեմ աւելի է քան զարժա-
նըն, ինչպէս կընան վկայել հմուտք :

Եթէ առաջարկութիւնս ընդունելի է ձեզ,
հաճեցէք, տէր, որչափ մարթէ արագ իմա-
ցունել ինձ, և ընդունել յարգանաց ողջոյնս :
Հաւատարիմ ձեր

(Թուական)

Ա. Ա.

93. Ո՞մն կ'իմացո՞նէ իւր բարեկամին թէ վարձու հա-
մար շատ յարմար տուն մը կայ :

Սիրելիդ Զարեհ .

Կը փութամ ծանուցանել քեզ որ գեղե-
ցիկ տուն մը կայ վարձու մեր արուարձանին
վերի ծայրը յաջակողման եղեր գետոյն ուր
ի վաղուց հետէ կը փափաքէիք, դու և կի-
նդրէ, դալ բնակել : Այս տունն, ինչպէս կար-
ծեմ, շատ յարմար է ձեզ, քանզի ոնի որոց
դուք կը ցանկաք : Ահա համառօտիւ նկարա-
գրեմ քեզ տունը : Նախադուռնէն ներս մտնե-
լով կը գտնես պարտէղ բաւական ընդարձակ,
ուր կը տեսնես պէսպէս ծաղկունս և պտղատու-
ծառեր : Զախ դին կայ գեղեցիկ ծառուղի՝
կակղիներէ, և շատ զուարձալի է ամառը,
քանզի է ծառաստան հովանաւոր, ամառ-
ուան տօթագին եղանակին՝ հովասուն, և ուր
մարթէ նաեւ ընթրել, քանզի խոտորնակ ու-
ղի մի կը տանի գրեթէ երկու բոպէի մէջ մին-
չեւ տան խոհանոցին դուռը : Եթէ ծիրանիք,
ինձորենիք և փոքրիկ այդ եստանն յաջակող-

ման պարտիղին՝ յարմար են ձեր տիկնոջ ախոր-
ժակին, ծառուղին զբօսանաց տեղ պիտի ըլ-
լայ ձեր մանկանց, որ կրնան չուան կապել հոն
օրուելու համար, կամ գնդի խաղալ, կամ
նաեւ ընթերցարան մը պատրաստել՝ պարապոյ
ամիսներուն մէջ իրենց դասերն ուսանելու :

Տան մէջ, գետնայարկին վրայ կայ ընդար-
ձակ ճաշարան, խոհանոց շատ լուսաւոր, և
ի մէջ այս երկուց՝ սենեակ վասն ստնտուին,
հուսկ յետոյ զուարձալի սրահ մը զոր կրնաք
ընել պատկերներու և գեղարուեստից թան-
գարան :

Առաջին յարկին վրայ կայ ննջարան շատ
անդորր, գրեթէ հարիւրամեան շքեղ կակ-
ղիներէ հովանաւոր, որոց ծաղկանց անուշա-
հոտ բուրումը գարնան եղանակին կը ընու-
բոլոր տունը : Սոխակ, շիկահաւ և կարմը-
րալանջ, քաղցրաձայն հաւեր, կը գնեն հոն
իրենց բոյներ և կը հնչեցունեն իրենց երգե-
րը բոլոր տարին : Բաց այս ննջարանէն կան
այլ եւս երկու սենեակք ձեր դստերաց հա-
մար, և սիրուն խուց մը որ հագուելու սեն-
եակ ըլլալու շատ յարմար է :

Թողի յիշել մանր սենեակիներն ի պէտս
սպասաւորաց, դոնապալանի և գնելու աւե-
լորդ կահ կարասի :

Տան գինն է 600 ֆրանք տարին, հատու-
ցանելի փետրուարէ ի փետրուար :

Փութա գալ, սիրելիդ ջարեհ, տեսնել
զայս տուն, ուր կը փափաքիմ որ բնակիք,
քանզի երջանիկ պիտի ըլլամ դպրոցի հին
ընկերս ունենալ ինձ դրացի: Դարձեալ կը-
սեմ, փութա գալ, եթէ կամք ունիք հոս բը-
նակել, դուցէ յապաղելով փախցունենք պա-
տեհութիւնը:

Կինս ձայնակից է ինձ հրաւիրել նաեւ ձեր
տիկինը, և կ'աղաչէ զձեղ իւր կողմանէ համ-
բուրել ձեր սիրուն տղայոց ականողիս:

Հաւատարիմ քո

(Թուական)

Ա. Ա.

94. Տելիս ոմն կը յայտնէ ուրիշ տիկոնջ երեկոյթը
երթալէ հրաժարելուն պատճառներ :

Տիկին .

Կը փութամ աւասիկ պատասխանել ձեր
սիրուն հրաւիրանաց: Արդարեւ կը փափա-
քէի դանուիլ յերեկութին զոր հանդերձեալ
էք տալ երկուշաբթի ձեր ամարանոցը: Կը
ցաւիմ սակայն որ չեմ կարող ընդունել ձեր
հրաւէրը, նախ՝ վասն զի դստերքս կիրակի
իրիկուն կը դառնան դպրոց, և դպրոցին տը-
նօրէն տիկինը չի տար թոյլ դուրս մնալ դըպ-
րոցին բացման օրն այնպիսի պատճառի մը հա-
մար որ շատ կարեւոր չէ: Երկրորդ՝ կը խոս-

տովանիմ որ, թերեւս քան զչավին աւելի աը-
նասէր սովորութիւնը, և մեր հանդարտ և
լուիկ կեանքը կը խրտնուն բազմամարդ ա-
կումբներէ, ուր կը նեղուինք մանաւանդ քան
կը զբօնունունք :

Սա եւս կ'ըսեմ ձեղ, տիկին, մոերմաբար.
կը վախնամ սովորեցնել դստերքս երեկոյթ-
ներու և պարուց որ թերեւս դարձունեն ա-
նոնց ուշադրութիւնը տնական և համեստ
հանդարտութենէ և ի կանացի տնտեսական
կենաց յունայն և ի բազմազբաղ հաճոյս որ
չեն յարմար տիոց նոցա: Թող մնան երկար
ատեն իրենց դպրոցական կանոնաւոր կենաց
և այն պարզ ու տնարար սովորութեան մէջ
զոր կը ցանկամ որ, եթէ հնար է, միշտ պա-
հեն :

Կը յուսամ, տիկին, թէ կը յարդէք պատ-
ճառներս և չէք մեղադրեր զիս, թէեւ բամ-
բասուիմ յոմանց իրեւ մարդատեաց: Հա-
ւատացէք, շատ չնորհակալ եմ ձեղ որ զիս
միտք բերել հաճեցաք: Այս միտք ունի ան-
ձամբ դալ կիրակի, և կրկին խնդրել ձենէ
բանիւ բերանոյ մեր հրաժարման ներումը,
մատուցանելով միանդամայն զհաւաստիս սի-
րոյ բարեկամութեան մերոյ առ ձեղ:

Եմ ի սերտ սրտէ

կաթողին բարկամ ձեր

(Թուական)

Ա. Ա.

~~~

95. Ո՞մ կ'իմացունէ իւր բարեկամին թէ չկարէ փոխ  
տալ նմա այս ինչ գումարը զոր կը խնդրէ :

Տէր .

Կը ցաւիմ յոյժ որ չեմ կարող կատարել  
ինչ որ կը խնդրէք յինէն ձեր քեռառն միջո-  
ցաւ : Դժբախտութեամբ ձեր խնդիրն հան-  
դիպեցաւ այնպիսի ժամանակ որ ես իսկ մեծ-  
նեղութեան մէջ կը դանուիմ, ուստի չեմ կա-  
րող փոխ տալ ձեզ 500 ֆրանքը զոր կը խընդ-  
րէք՝ լրացնելու համար ի մօտոյ հատուցանե-  
լի կարեւոր գումար մը : Քանի մի օր առաջ  
ինձ եւս հարկ եղաւ բաւական դրամ տալ կա-  
րեւոր գործի մը համար, և հիմա անհնար է  
ինձ կատարել զինդիր ձեր : Հաւատացէք,  
տէր, մեծ ցաւ է ինձ որ չեմ կարող դոհա-  
ցուցանել զձեղ այս անդամ: Հաճեցէք ըն-  
դունել սիրոյ ողջոյնս :

Հաւատարիմ բարեկամ ձեր

(Թուական )

Ա. Ա.

Առաջաւագ.

96. Պարաքը չհատուցանող ումեք կը զլացուի նորէն փոխ տալ:

Տէր .

Ահա կը պատասխանեմ ձեր նամակին յո-  
քում կը հարցունէք ինձ թէ արդեօք կարող  
եմ փոխ տալ ձեզ հարիւր ֆրանք ձեր անձին


պիտոյից համար : Կը խոստանաք հատուցա-  
նել ինձ այս գումարն յետ աւուրց ինչ 325  
ֆրանքօք հանդերձ զոր պարտիք ինձ ութ-  
եւտասն ամայ հետէ : Կը ցաւիմ որ ստիպ-  
եալ եմ ձեր հարցման թշ պատասխան տալ:  
Ներեցէք ինձ յաւելուլ նաեւ թէ լաւագոյն ե-  
րաշխաւորութիւնը զոր կրնայիք տալ ինձ այս  
էր, հաւատարմութեամբ և ճշդիւ հատու-  
ցանել ինձ ձեր նախնի պարտքը գէթ մասն  
առ մասն, ձեր եկամտից մի մասն յատկա-  
ցնելով այս պարտուց հատուցման : Եթէ  
այսպէս ըրած ըլլայիք, անտարակոյս պիտի  
հաստատուէր վստահութիւնս ձեր վրայ, և  
ձեր այս նեղութեան մէջ պիտի չհամարձա-  
կէի զլանալ ձեղ զայս փոքր փոխատուութիւն:  
Ներեցէք, տէր, զլացումն, և ջանացէք  
օդտիլ այս խրատէն զոր այսու առթիւ ստիպ-  
ուեցայ տալ ձեզ: Մեծագոյն շահն է մար-  
դուս համար ուղղութեամբ և հաւատարմու-  
թեամբ կատարել զիւր պարտ :

Ներեցէք որ այսպէս համարձակ և պար-  
զութեամբ դրեցի ձեզ:

Բարեկամ ձեր

(Թուական )

Ա. Ա.



## ԳԼՈՒԽ Ը.

ՅԱՆԱՀԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆ

Յանձնարարութեան նամակ կամ Յանձնարարական թուղթ կը կոչուին այն նամակներ որովք կը յանձնենք զոք ի պաշտպանութիւն և ի խնամն բարեկամի կամ ծանօթի, և կամ այնպիսի անձի մը առ որում յարգի ենք, կամ որ դիտենք թէ ի սէր մեր կուղէ կատարել մեր խնդիրը :

Յանձնարարական նամակներ շատ նմանութիւն ունին ինդրուածոյն նամակաց, սա տարբերութիւն միայն կայ որ ինդրուածոյն նամակներով մեզի համար շնորհք կամ ծառայութիւն կը խնդրենք, իսկ յանձնարարականի մէջ ուրիշի համար է ինդրուած շնորհքը :

Եթէ յանձնուած անձը մեզի ծանօթէ, կրնանք համարձակութեամբ, բայց առանց չափազանցութեան, գովել անոր լաւութիւնը. իսկ եթէ անձամբ չենք դիտեր յանձնուած անձին որպիսութիւնը, այլ ուրիշ պատուաոր և վստահութեան արժանի անձանց վկայութեան ապաւինելով կը յանձնենք այն անձը, հարկ է յիշել այս պարագան, անուա-

նել նաեւ այն անձինք որոց վկայութեան նայելով կ'ընենք զյանձնարարութիւն մեր :

Այս տեսակ նամակներու մէջ ընդհանրապէս գովութեամբ կը յիշուին բարեսիրութիւն և մարդասիրութիւն անձին առ որ կ'ընենք յանձնարարութիւնը, երբեմն նաեւ, մանաւանդ ի վերջ նամակին, ներումն կը խնդրուի արուած ձանձրութեան համար :

Յանձնարարական նամակի պատասխան տալ գիւրագոյն է քան բուն յանձնարարական թուղթ մը գրել: Եթէ յանձնարարութիւնը կ'ընդունինք, կրնանք ըսել թէ ուրախ ենք որ պատեհութիւն ունեցանք ծառայութիւն մը ըսել յանձնարարութիւնն ընող անձին: Եթէ կը մերժենք յանձնարարութիւնը, պէտք է ցուցնել պատճառներն որ կը ստիպեն զմեզ այն մերժումն ըսել, և թէ կը ցաւինք որ չենք կարող օգտակար լինել յայնմիկ:



97. Վարժարանի տեսուչ մը ուրիշ վարժարանի տեսչին  
վարժապետոցու մը կը յանձէ:

Սկրելի պաշտօնակից իմ.

Ահա կը գիմեմ ձեր մարդասիրութեան և բարութեան, քանզի վստահ եմ թէ ուշադրութեան արժանի կը համարիք խնդիրը զոր պիտի մատուցանեմ ձեզ:

Բերող նամակիս որդի է մտերիմ բարեկամիս տեառն Ա. Ա. զորմէ շատ անդամ խօսած եմ ձեզ : Պատանին կը ցանկայ մտանել ի պաշտօն ուսուցչութեան , քանզի ուսման և գիտութեան նպաստելու , ինչպէս կը տեսնեմ , մեծ կոչումն ունի :

Կարծեմ թէ կրնաք օգնել ինձ յայսմ , խօսելով պատանւոյն համար կրթութեան պաշտօնէին , և եթէ հարկ լիցի . տանել զնա առնա : Պատանին նոր ելած է . . . . եան վարժարանէն ուր անընդհատ կատարած է զիւր ուսումն , և կրնայ ցուցնել ձեզ իւր ուսուցիչներուն գոհութեան միանդամայն գովութեան վկայականներն : Ե բարեբարոյ , հանդարտ և խոհական : Կարծեմ թէ Մարտիկ Սուրենեան (այս է պատանւոյն անունը) շատ օգտակար պիտի ըլլայ ձեր վարժարանին , եթէ , ինչպէս կը յուսամ , ընդունուի ձեր չնորհիւ :

Ամսականին դալով , Մարտիկ մեծ բան չի պահանջեր . նպատակը սկզբնաւորութիւն մը ընել և համբաւ ստանալ է . վարձատրութեան դալով՝ բաւական կը համարի ինչ որ իւր աշխատութեան և արժանեաց համար պատշաճ կը դատուի . յոյս նորա ապագային մէջ է , ներկայն հրահանդ մը պիտի ըլլայ անոր :

Վստահ եմ թէ խոհեմ պատանին շուտով պիտի արդարացնէ իրեն չնորհուելու վստա-

հութիւնը զդաստութեամբ , իւր պաշտօնին մտադիւր հոդ տանելով և զուարթ վարմամբ ընդ ամենեսին : Արդէն իսկ չնորհակալ եմ ձեզ , միրելի պաշտօնակից իմ , վասն երախտեաց և նպաստից զորս պիտի մատուցանէք այս բարեկիրթ պատանւոյն , և կը յուսամ ի մօտոյ անձամբ դալ և յայտնել ձեզ չնորհակալութիւնս :

Յիշեցուցէք զիս , կը ինդրեմ , տէր , ձեր ազնիւ տիկնոջ , և ընկալարուք սիրոյ ողջոյնս : Մտերիմ պաշտօնակից ձեր

( Թուական )

Ա. Ա.

→→→●←←←

98. Թշուառ այրոյ մը օգնել կը խնդրուի ի կոմմուհոյ :

Ազնուազարմ կոմմուհի .

Մեծ վստահութեամբ կ'ընծայեմ ահա ձեր արդար և բազմագութ սրտին թշուառ մը սփոփելու պատեհութիւնը :

Սակաւ ինչ հեռի յապարանից ձերոց , ընդ առաստաղօք ողորմելի տան որ ձեր պարտէին վերի բարձրաւանդակէն կը տեսնուի . այս վայրկենիս մէջ յուսահատ և արտասուալից կը բնակի թշուառադոյնն ի մարս , հայցելով յերկնից իւր թշուառ տղայոց համար դոնէ ցամաք հաց զոր ինք չէ կարու հայթայթել , կամ ինդրելով բարեբար ձեռ-

Քի մը նպաստը՝ պահպանելու համար երեք  
անմեղ արարածներ իւր աչաց առջեւ սովա-  
մահ կորսուելէ :

Այս թշուառ մայրը ժապաւէն դործող կին  
է : Յետ մահուան ամուսնոյն սկսաւ այս դոր-  
ծով զբաղիլ, սնուցանելու համար իւր մա-  
տաղ զաւկներն, երեք մանր աղջկունք, որոց  
երիցադոյնը դեռ վեց տարեկան չկայ : Փու-  
թով, ինայողութեամբ և ժրութեամբ հա-  
զիւ կարողացաւ մինչեւ ցարդ հոգալ իւր աղ-  
քատին տնտեսութեան պիտոյքը : Այրոյն  
փոքրիկ յարկին կամ մանսաւանդ աղքատ աը-  
նակին մէջ կը տիրեր վայելչութիւն մը որ կար-  
դաւորութեան, փութոյ և մաքրութեան ար-  
դիւնք էր, մինչ յանկարծ անակնկալ արկած  
մը երկրորդ և աւելի սաստիկ հարուած մը տու-  
աւ այս ողորմելեաց : Կնոջ աչուրները յոգնե-  
լով շատ անգամ գրեթէ մինչեւ լոյս աշխա-  
տելէ՝ ծանր բորբոքման մը հանդիպեցան :  
Այս տեսակ հիւանդութիւնը դարմանելու հը-  
մուտ անարծաթ բժշկի մը դարմանները, իւր  
բուն ջանքը և զդուշութիւններն անօգուտ  
եղան : Տարակուսեալ այրին ստիպուեցաւ,  
ամէն մը հետէ, ամէն աշխատութիւն դադ-  
բեցնելով նստել անյոյս և լալադին տուըն-  
ջեան լուսոյն անգամ նայելու անկարող : Ինչ  
զարդ որ ունէր իւր ամուսնոյն ժամանակէն,  
ամէն աւելորդ հանդերձ, կահ, կարասի, ա-

մենայն ինչ արդէն վաճառուած կամ գրաւ  
դրուած է, և հիմա ուրիշ բանի չսպասեր,  
բայց սովալլուկ մատաղ տղայոց ցուրտ դիա-  
կունքը տեսնել իւր առջեւ : Ով աղետալի  
տեսարան : Արտասուօք կը դրեմ այս տողերս  
ձեզ, սիրելի կոմսուհի :

Կինամ համարձակիլ արդեօք, տիկին, ա-  
ղաչել զձեղ օդնել այս ընտանեաց : Միթէ  
հնար չը որ այնչափ կարօտելոց առատապէս  
ամէն նպաստ սփռող ձեռքն՝ այն օդնութիւն-  
ներէն բաժին մի եւս այս ողորմելեաց հանէ :  
Այս չորհակալու մօր և անոր երեք հրեշ-  
տակներուն աղօթիւք անտարակոյս պիտի  
վարձատրէ զձեղ, տիկին, բաժակ մը ցուրտ  
ջրոյն համար անգամ հատուցում ընող ծէ-  
րը : Որ ողորմի աղքատին փոխ տայ Աստու-  
ծոյ :

Հաճեցէք, աղնուազարմ կոմսուհի, ըն-  
դունել զհաւաստիս խորին յարդանաց և հը-  
պատակութեան

Զեր խոնարհ և հնազանդ ծառային  
(Թուական ) Ա. Ա.



99. Իրաւագիտ պատանի ոմն կը յանձնուի առեւտրական  
ժողովոյ նախագահին :

### Սիրելի տէր .

Դժբախտութեամբ կորուսի այս օրերս տը-  
ղայութեանս ազնիւ բարեկամներէն մին զԱ.  
Ա. զոր կարծեմ քանի մը անդամ տեսաք իմ  
տունս :

Այս պատուական անձը իւր վերջին ժա-  
մուն յանձնեց ինձ կաթողին իւր որդին Դատ ,  
որոյ բարձր գաստիարակութիւն տուած է  
հանգուցեալն : Հիմա որբ պատանին ստիպ-  
ուած է իւր պիտոյքն անձամբ հոդալ , և ժը-  
րութեամբ միջամուխ լինել գործերու իրեն  
վայելուչ ապագայ մը պատրաստելու համար :

Պատանին փութով և յարատեւութեամբ  
յառաջ տանելով զուսմունս իւր , հօրը վախ-  
ճանելէն քանի մը ամիս առաջ աւարտեց իրա-  
ւագիտութեան դասերն , և ի մեծ գոհու-  
թիւն հօրն ընկալաւ փաստաբանի պաշտօն :  
Պատանին շատ հլու և առաքինի է , բայց չա-  
փաղանց երկչոտ , այնպէս որ եթէ բարերար  
ձեռք մը ի սկզբան օդնութեան չհասնի , չեմ  
կարծեր թէ յաջողութիւն դանէ :

Ներեցէք ինձ , սիրելի տէր , յանձնել ձեր  
խնամոց յիշեալ պատանին այնպէս ջերմու-  
թեամբ , ինչպէս յանձնեց զնա ինձ հայր նո-

րա մահուան անկողնոյն մէջ : Կը ինդրեմ ու-  
րեմն ձեր սէրն և ինսամքը պատանւոյս հա-  
մար , մանսաւանդ որ իրեւ նախագահ առեւ-  
տրական ժողովոյ կարող է.ք ձեր հզօր պաշտ-  
պանութիւն շնորհել նմա ի լինել հարկի : Ինչ  
շնորհ.ք որ կընէ.ք նմա , սիրելի տէր , դիտ-  
ցէ.ք որ ինձ ըրած պիտի ըլլաք , և վստահ ե-  
ղէ.ք որ ձեր երախտիքն ընդունայն պիտի  
ըլլայ :

Ընկալարու.ք , տէր , դու.ք և ազնիւ տի-  
կին ձեր , անկեղծ բարեկամութեանս երաշ-  
խաւորութիւնը . և շնորհակալութիւններս զոր  
կանխերով կ'ընեմ այն ամէն շնորհաց համար  
զոր պիտի ընէ.ք պատանւոյն , որոյ եմ պաշտ-  
պան :

**Հաւատարիմ բարեկամ ձեր**

( Թուական )

Ա. Ա.

100. Օտար երկիր գացող սպասուոր աղջիկ մը կը  
յանձնուի բարեկամ գերդաստանի :

### Սիրելի տէր .

Գիտեմ որ ձեզ հաճոյ ըլլալու և զձեզ գոհ  
ընելու համար շնորհ.ք ինդրելու է ձենէ :

Օրիորդ Զարմանդուխտ , կնոջս տղայու-  
թեան բարեկամներէն մին , երեք օրէն կը  
մեկնի Դեհրան երթալ , իբրեւ սպասուոր ,

Անդղիացի հարուստ գերդաստանի մը հետ  
որ իբր տասը տարի պիտի բնակի ձեր կող-  
մերը : Այս սքանչելի օրիորդ մեծ անձնու-  
րացութեամբ կը բաժնուի յիւր ծնողաց որ  
անակնկալ ձախորդութեան մը պատճառաւ  
յետին չքաւորութեան մէջ կը գտնուին : Թղ-  
ուառ աղջիկն շատ տխուրէ , քանզի առան-  
ձին պիտի մնայ օտար երկիր , աղդականնե-  
րէ և ծանօթներէ հեռու , գերդաստանի մը  
հետ զոր նոր սկսաւ ճամշնալ : Բայց տխրու-  
թիւն նորա պիտի փարատի գրեթէ բոլորո-  
վին , եթէ գիտնայ թէ այն օտար երկրին մէջ  
զոր աշխարհիս ծայրը կը համարի՝ պիտի գըտ-  
նէ իրեն ձեռնտու բարեկամ , յորմէ այլ և  
այլ կարելի պատահարաց մէջ կարենայ օգ-  
նութիւն և պաշտպանութիւն յուսալ : Ուս-  
տի ձեղ , սիրելի բարեկամ , կամ մանաւանդ  
ձեր երկու աղնիւ դստերաց կը յանձնեմ զօ-  
րիորդ Զարմանդուխտ : Արդարեւ պիտի տես-  
նեն դստերքդ թէ որչափ քաղցր , բարերա-  
րոյ և կիրթէ այս մանկամարդ զոր կը յանձ-  
նեմ խնամոց և սիրոյ նոցա . անտարակոյս ու-  
րախ պիտի ըլլան մտերմանալով նմա :

Ամենայն վստահութեամբ յանձնեցի նմա  
նամակս զոր պիտի մատուցանէ ձեղ երբ հառա-  
նի հոն . և որովհետեւ գիտեմ թէ ամէնքդ-  
մարդասէր և բարերար էք , ըսած եմ նմա թէ  
ձեր քաղցր ընդունելութիւն պիտի հանդար-

տեցնէ և միմիթարէ զնա բոլորովին : Այս շը-  
նորհք զոր ձեր հին և մտերիմ բարեկամու-  
թենէ կը սպասեմ՝ շատ յարդի պիտի ըլլայ  
կնոջս և ինձ , և պիտի համարինք զայն որ-  
պէս թէ մեր անձին եղած :

Ուստի արդէն իսկ չնորհակալ կ'ըլլամ ձեղ ,  
սիրելի բարեկամ , բոլոր այն նպաստից և  
պաշտպանութեան համար զոր պիտի մատու-  
ցանէք այս պանդուխտ աղջկան . չնորհակալ  
կ'ըլլան ձեղ նաեւ թշուառ պանդխտելոյն սրբ-  
տառուչ ծնողք , գիտնալով թէ իրենց այս  
միակ սիրելի դստեր միմիթարութիւն և եր-  
ջանկութիւն դուք պիտի ըլլաք :

Ողջոյն սիրոյ և յարդանաց ձեր տիկնոջ և  
սիրելի դստերայ :

Կաթողին բարեկամ ձեր

( Թուական )

Ա. Ա.

101. Առ ըստանի բարեկամ ոք յանձնարական նամակ :

### Սիրելի Ատոմ:

Լսելով որ վաղիւ առաւօտուն պիտի մեկ-  
նիս կարին երթալ , և գիտնալով թէ բարե-  
կամի համար աշխատութիւն կրելէ չես փախ-  
չիր , կը համարձակիմ ծանրութիւն մը տալ  
քեզ : Պիտի տամքեղ երկու ուղեկից , զորս  
ջերմապէս կը յանձնեմ խնամոց քոց : Վաղիւ  
կ'ուղարկեմ առ քեզ այս երկու ուղեկիցներն՝

աղաչելով որ ողջ և առողջ հասցունես զնոսա  
առ քեռին իմ Պարոյր, որ կը բնակի Ա. Նշա-  
նի փողոց, թիւ 1:

Այս փոքրիկ ճանապարհորդք, թէպէտ  
շատ փափուկ չեն իրնե, կարօտ են մեծ խնա-  
մոց, և կարծեմ բաւական ձանձրութիւն պի-  
տի տան քեզ, և կ'աղաչեմ, մի նեղորտելով  
խառես զփոքրիկ գլուխս նոցա, մանաւանդ  
որ խորովուելով կարեն լինել համեզ պա-  
շար ճանապարհի: Պարտիս զգուշանալ նախ  
որ երկար ատեն արեւու մէջ չմնան, և երկ-  
ըրորդ՝ որ խոնաւ տեղ չնստին: Երկար անօ-  
թութեան եւս չեն դիմանար. կը վնասուին  
մանաւանդ, եթէ խնայես ստէպ զով և մա-  
քուր ջուր արբուցանել նոցա: Սա եւս ըսեմ  
քեզ կանխաւ թէ նոքա կատուէ և չունէ այն-  
պէս կը վախնան որ լեզապատառ կ'ըլլան. մի-  
ով բանիւ, կը խնդրեմ, սիրելիդ Ատոմ, ա-  
մէն կարելի հոդ տանիս նոցա, եթէ կ'ուզես  
որ ջերմ չնորհակալութիւններ մատուցուին  
քեզ, երբ յանձնես զնոսա իրենց տիրոջը:  
Ո՞վ են, պիտի ըսես, այս փափկիկներն: Ալ  
Բնչ երկայն ընեմ. զոյդը որ քեզ ուզեկից  
պիտի ըլլան և որոց ինպաստ այսչափ երկայ-  
նաբանութիւն ընել հարկ եղաւ, երկու  
հնդկահաւ են, և փոքրիկ կողով մը գետնա-  
սունկ: վերջինս այս վասն քո:

Ծնկալ, սիրելի, սերտ բարեկամութեանս

վկայութիւն. և ծանիր զիս քեզ յաւերժ  
բարեկամ:

( Թառական )

Ա. Ա.

ռռռռռ

102. Քահանայի ումեք կը յանձնուի դժբախտ ըն-  
տանեաց հայր մը :

Յարգելի Տէր Աւագերէց .

Գիտեմ որ ձեր յարգութեան ողորմու-  
թեան գործ առաջարկել՝ զձեզ երջանիկ  
ընել է: Եւ զայս թուղթ ձեր յարգութեան  
գրելու զիս համարձակեցնողը ձեր այն մար-  
դասիրութիւնն է որոյ փորձը տեսած են  
ստէպ ձեր վիճակին կարօտեալք :

Ձեր բարի գերդաստաններէն մին, ձեզ  
դրացի և շատ կողմանէ արժանի ձեր ուշա-  
գրութեան և հայրական խնամոց, այս օ-  
րերս հանդիպեցաւ ծանր ձախորդութեան,  
որ մեծ նեղութեան մէջ ընկզմեց հինգ մանր  
որդեկաց տէր այր և կին: Այս ընտանեաց  
հայրն Վարդան Ռոշտունի, արհեստիւ ծե-  
փարար, մինչ քաղաքիս բազմադանձ, այլ ոչ  
բազմողորմ սեղանաւորի մը տան սրահին ծե-  
փը նորոգելու համար սանդղին վրայ կ'ելնէր,  
սահելով կ'եյնայ, և աջ դաստակն այնպէս կը  
վնասէ որ անկարող կ'ըլլայ աշխատել, և որ

չարագոյնն է՝ սանդղին ծայրը զարնուելով  
հարիւր ոսկի արժող մեծ հայելոյ մը, հայե-  
լին կտոր կտոր կ'ընէ :

ինչպէս ըսի, մեր բազմագանձ բայց սա-  
կաւողորմ սեղանաւորն հայելոյն դինը պա-  
հանջելով դժբախտ գործաւորէն, ոչ միայն  
անոր մի ամսեայ վարձքն ութ ոսկին չի տար,  
այլ և մնացեալ իննուուն և երկու ոսկին կը  
ստիպէ հատուցանել՝ սպառնալով ոստիկանու-  
թեան ձեռօք առնուլ զայն գումար : Վարան-  
եալ ծեփարարն այս ահագին գումարն հատու-  
ցանելու համար դըբեթէ իւր տան բոլոր կա-  
րասին, մինչեւ խոհարանին վերջին պղնձէ  
կաթսան, կը վաճառէ, և ինք հիմա ձեռօքը  
կապած կը պառկի տունը կանամբ և հինգ  
զաւկներով նօթի և ծարաւի : Բժշկին խօսքին  
նայելով թշուառ մարդն հաղիւ քանի մը ամ-  
սէ կրնայ թերեւս աշխատելու մկսիլ : Ութ օր  
է որ ես, ձեր ծառան, ի սէր Աստուծոյ կը  
հոգամ այս ընտանեաց պիտոյքը՝ բժշկին և  
գեղագործին ծախիւքն հանդերձ :

Կ'աղաջեմ և կը պաղատիմ, Տէր Հայր,  
այն քրիստոնէական եռանդով որով հարիւ-  
րաւորներու օգնութեան հասած էք՝ համել  
յօդնութիւն նաեւ այս հէք ընտանեաց : Գի-  
տեմ որ ողորմած սիրտն անսպառ է միջոցներ  
հնարելու ասոր նման յետին տարակուսանաց  
մէջ : Անտարակոյս, Տէր Հայր, ուրիշ գուռ-

պիտի զարնէի, եթէ քան զձեզ ողորմած մի-  
անգամայն աղդեցութեան տէր այլ ոք ճա-  
նաչէի : Ներեցէք, ձեր ծառային համարձա-  
կութեան, որ սպասելով յաջող պատասխան-  
ւոյ նամակիս, եմ

Աստուածասէր Հօրդ

Խոնարհ հոգեւոր որդի

(Թոռական )

Ա. Ա.

103. Պատասխանի նախընթաց նամակին :

Սերելի որդւոյդ ի Տէր ողջոյն .

Նամակի ընկալայ և ուրախ եմ որ աղքա-  
տաց և տառապելոց վրայ այսպէս գութ ու-  
նիս : Մեծ ցաւ տուաւինձ մեր ծեփարար եղ-  
բօր ձախորդութիւն : Տէրը Հարիւրապատիկ  
հատուցանէ քեզ, սիրելի, այն օգնութեան  
փոխարէն զոր այս դժբախտ ընտանեաց ըրած  
ես : Կը զարմանամ թէ ինչպէս մեր հարուստ  
սեղանաւոր եղբայր որ եկեղեցւոյ սեմը կը  
մաշեցնէ և կուրծքը բախելէ չի դադարիք՝  
կըցաւ դիպուածով եղած վնասու մը համար  
բարի ընտանեաց հայր մը մոխրոյ վրայ նըս-  
տեցունել : Երբ նամակդ առի, վարանեցայ  
յոյժ և կը խորհէի թէ որու դիմեմ : Արդարե  
շատերուն մարդասիրութիւնը գիտեմ, բայց  
և ոչ առ մին ինոցանէ կը համարձակէի մօ-  
տենալ, քանզի ամէնքը մօտերս բաւական մեծ

գումար նուիրեցին ի պէտս կարօտելոց իմով  
ձեռամբ : Յանկարծ միտքս եկաւ ազնուական  
անձ մը զորոյ անուն չեմ ուզեր տալ : Այս ան-  
ձը բարեպաշտ համարուած չէ ընդհանրապէս,  
հազիւ տարին անդամ մը կը տեսնուի եկե-  
ղեցւոյ մէջ . ինձ եւս շատ ծանօթ չէ , բայց գիտ-  
նալով որ բարիք ընել կը սիրէ , մանաւանդ  
այսպիսի դիպուածներու մէջ , իսկոյն թուղթ  
դրելով պատմեցի դէպքը , աղաչելով որ ի  
դերեւ չհանէր յոյսս , և արդարեւ չհանեց՝  
զրկելով երկու հազար հինգ հարիւր ֆրանք  
զոր ահա կը զրկեմ քեզ : Կ'ուզեմ որ այս գու-  
մարով անմիջապէս հոգաս այն տառապեալ  
ընտանեաց պէտքը : Մի մասով կրնաս գը-  
նել հարկաւոր կարասին վաճառուածներուն  
տեղը լեցունելու համար . մնացեալը կրնայ  
գործածուիլ վասն օրըստօրական ծախուց նո-  
ցա , մինչեւ որ ծեփարար եղբայրն կարող ըլ-  
լայ սկսել զիւր սովորական աշխատութիւն :  
կը տեսնես , սիրելի , որ ողորմածութիւնը վեր-  
ցած չէ աշխարհէս , և եթէ կան անդութ և  
անիրաւ հարուստներ , կան նաեւ ճշմարտիւ  
աղքատասէր հարուստներ , որ ոչ թէ , աւե-  
տարանին մեծատան պէս , իրենց սեղանին  
փշրանքէն կը կերակրեն զաղքատն , այլ իրենց  
բերնին պատառն անդամ պատրաստ են տալ  
կարօտելոց : Արդարեւ կարող է Աստուած ,  
ինչպէս կըսէ Ս. Գիրքը , ի քարանց յարուցա-

նել որդիս Աբրահամու : Այսպէս՝ բարեպաշտ  
չկարծուածներու ձեռօք խնամէ Տէր զաղ-  
քատն և զորլ , որպէս զի յամօթ ընէ ար-  
ծաթասէր բարեպաշտները :

Ողջ լեր , սիրելի , և մի մոռանար գութն  
ու բարերարութիւնը : Տէր ընդ քեզ : Գիտ-  
ցիր որ եմ միշտ քու խանդակաթ հայրդ ի  
Տէր

Տէր Ա. Ա. Աւագերէց  
Եկեղեցւոյ Սրբոյն Սանդխտոյ  
որ ի . . . .

(Թառական )



## ԳԼՈՒԽ ԹԱ.

ԵՐԱՑՑՈՒՈՒԹԵԱՆ , ՅԱՆԴԻՄԱՀՈՒԹԵԱՆ ԵՒ  
ԳԱՆԳԱՏԱՆԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆ

Խրատուութեան նամակ կը կոչուին այն նա-  
մակներ որով խրատ կու տանք մենէ խոր-  
հուրդ խնդրող անձանց : Այս տեսակ նամակ-  
ներ շատ զգուշալի են : Յայտնի է թէ երբ  
դործ մը յաջողութիւն չի գտներ՝ յանցանքը  
խորհուրդ տուողին վրայ կը ձգուի : Շատ ան-  
դամ եւս մարդիկ խորհուրդ կը խնդրեն, թէ-  
եւ արդէն որոշած են թէ ինչ պիտի ընեն .  
այնպիսիներուն դիտաւորութիւն մեր հա-  
ւանութիւնը կորդել է արդէն որոշուած բա-  
նի մը համար քան խրատ առնուլ հետեւելու  
համար : Ուստի ի տալ մեր խրատ՝ լաւա-  
գոյն է օգուտն և վսաս ցուցնելով որոշու-  
մը խնդրողին թողուլ, առանց ըսելու թէ այս-  
պէս կամ այնպէս ընէ : Բայց եթէ դիտենք  
թէ խորհուրդ խնդրողն արդարեւ տարակու-  
սանաց մէջ է և ստուգիւ խրատ կ'ուղէ, պէտք  
է ըստ խղճի մտաց խրատ տալ նմա , ասելով,  
եթէ ես քու տեղդ ըլլացի , այսպէս կամ այն-  
պէս կ'ընէի . բայց դարձեալ դու դիտես :

Յանդիմանութեան նամակներու մէջ կը յիշենք  
անիրաւութիւնն զորս ըրած է մեղ այս ինչ  
անձը , և կամ, եթէ անիրաւութիւն չենք  
կրած , լոկ կը ցուցնենք անոր թէ այս ինչ  
դործն անվայել է : Այսպիսի նամակնե-  
րու մէջ պարտ է զգուշանալ կրիւք խօսելէ ,  
ապա թէ ոչ փոխանակ զգաստութեան բե-  
րելու՝ կը խստացունենք : Ինչպէս հեղինակ մը  
կ'ըսէ , Դիւրին է դէպ ի վեր հոսել տալ ջու-  
րը , քան ուժացեալ սիրաը նորէն ջերմացնել  
կշտամբանօք : Բայց կամ դէպք յորս խստու-  
թիւնը կ'արդարանայ . զորօրինակ երբ բարե-  
կամ մը նենդութիւն ըրած է մեղ , կամ ե-  
րախտեաց դէմ մեծ ապերախտութիւն դոր-  
ծած է : Որովհետեւ յայսպիսի դէպս նորէն  
հաշտութիւն շատ դժուարին , դընթէ ան-  
հնար է , խստագոյն կշտամբանքն իրաւա-  
ցի է :

Տեսակ մը կշտամբանք եւս կայ , յորում  
կշտամբողն յետ յիշելոյ յանցանքը կամ անի-  
րաւութիւնը , կը սկսի արդարացնել յանցա-  
սորը , որպէս թէ սխալմամբ կամ առանց չար-  
դիտաւորութեան ըրած է , և կամ ըսել թէ ,  
այսպիսի բան մը լսած ենք , բայց ամենեւին  
չենք հաւատար , քանզի չենք յուսար այս-  
պիսի դործ այն անձէն :

Յանդիմանութեան նամակաց կարդը կը  
դասուին զանգատանաց նամակներ , յորս տըր-

տունջ կ'ընենք նամակի մը պատասխան չորուելուն կամ բնաւ նամակ չգրուելուն դէմ. բայց այս յանդիմանութիւն բարեկամական մեղադրանք է մանաւանդ քան բուն յանդիմանութիւն :



104. Հօրեղբայր ոմն կը ծանուցանէ իւր եղբօրորդւոյն թէ հասած է ինոր պաշտօն :

### Սիրելի Երուանդ .

Վերջապէս ընկալայ Ռումէլոյ Երկաթուղւոյն գործակալէն նամակիս պատասխանը զրդ գու և ես անձկանօք կը սպասէինք, և կը փութամ աւետիս տալ քեզ որ ընդունուած ես իբրև երրորդ հաշուեկալ Ադրիանուպոլսոյ կայանը վեց հարիւր ֆրանդի ամսական թոշակաւ :

Այս արագ միանդամայն յաջող ելք շատ ուրախացուց զիս, և, ճշմարիտը խօսելով, ամենեւին չէի յուսար այս բախտին հանդիպել: Դու եւս, սիրելիդ Երուանդ, Երախտագէտ ըլլալու ես ընդ իս գործակալին անոր այս մարդասիրութեան, և մանաւանդ արագութեան համար: Մի յապաղեր յայտնել չորհակալութիւնդ որչափ մարթ է՝ փութով, ես եւս կը խորհիմ այցելութիւն ընել նմանացունելու համար անձամբ թէ ինչ մեծ պա-

տիւ ըրաւ ինձ այս չնորհքն ընելով երկու ցունցս :

Այս պաշտօն, սիրելիդ Երուանդ, փոքր է արդարեւ, բայց ինչպէս կ'ըսէ նոյն իսկ գործակալն ինամակին զոր գրած է առ իս, այս ուրիշ բան չէ բայց մեծ պալատի մը առաջին գաւիթը կոխել. տակաւին կը մնայ հոյակապ սանդուղներէն վեր ենել և մտանել փառաւոր սրահներն և գահիթները. իսկ ըստ իմ հաշուիս, կ'ըսեմ թէ այսչափն եւս արդէն մեծ քայլ է, և գժուարագոյնն էր հոս համել : Հիմա կը մնայ քեզ ամէն չան ի գործ գնել առ ի բարւոքել առ յապայ զայս համեստ վիճակ, և տարակոյս չունիմ թէ բարի վարուք, պաշտօնիդ պատշաճը կատարելու ստէպ փութով, և հանճարովդ որ ինձ ծանօթ է, պիտի շահիս վերակացուացդ յարգանքն ու սէրը :

Պաշտօնիդ պարտականութիւններն շատ ծանր չեն, ոչ իսկ գժուարին գէթ առ այժմ, և բաւական ժամանակ պիտի ունենաս պարագր: Ուստի խրատ կու տամ քեզ, ամենայնիւ ջանալ կրթել զքեզ ուսանել ինչ որ պիտոյ է աւելի բարձր պաշտօնի մը համելու. այսպէս պիտի գտնուիս պատրաստ յառաջացման օրը որ, ինչպէս կը յուսամ, պիտի համնի ի մօտոյ, այնպէս որ արդէն յարմար ըլլաս քեզ տրուելու նոր պաշտօնին

բարձրութեան : Ի վեր քան զամենայն ջանա  
սորվիլ ձեր սահմանին ընդարձակութիւնը ,  
երթեւեկութեան սահմանները տնօրինելու  
եղանակը , վարչութեան կանոնները , բոլոր  
գծին տեղագրութիւնը , միով բանիւ ինչ որ  
պիտոյ է վարժ տնօրէնի մը ընդարձակ եր-  
կաթուղոյ բոլոր շարժումներն ուղղելու ան-  
վրէպ : Ընկերներդ և մանաւանդ տնօրէնն ո-  
րոց հետ պիտի գործես՝ կրնան լաւ եւս հը-  
րահանդել զքեղ քան ես , եթէ անոնց գործո-  
ղութեան ընթացից արթնութեամբ միտ դնես :

Ողջ լեր , սիրելիդ երուանդ , ընկալ միւս-  
անդամ սերտ խնդացութիւնս քու նոր աս-  
պարիդիդ յաջող սկզբնաւորութեան համար ,  
և հաւատա միշտ որ եմ յառաջադիմու-  
թեանդ փափաքող և ջանացող :

Խանդակաթ հօրեղբայր քո

(թոռական )

Ա. Ա.

105. Յանդիմանական նամակ եղօր առ եղբայր եւր , որ գոր-  
ծը թողլով օտար երկիր բախտ խաղելու . համար գաղթել կը  
խորհի :

Սիրելի եղբայր .

Կինդ լուր տուաւ մեղ թէ միտք ունիս  
միւս եւս անդամ թողուլ բարեկամներդ ,  
գործդ , տեղն ուր ծնար և մնար , Եղիպտոս  
երթալու համար ի խնդիր բախտի :

Ի՞նչ , սիրելի եղբայր , առաջին գժբախտ  
փորձը զոր ըրիր քանի մը տարի առաջ , քեզ  
ուրիշ հայրենիք մը շինելու ուր կը յուսայիլ  
հարստութիւն միանդամայն երջանկութիւն  
գանել , միթէ բաւական խիստ գաս չեղաւ  
քեզ : Միթէ մոռցաք այն ահագին հողմը որ  
զքեզ յափանց Սեաւ ծովուն ուր կ'ուզէիր  
հաստատուիլ՝ Ռուսիոյ սառնապատ կողմերը  
նետեց մանկամարդ ամուսնով և երկու մա-  
տաղ մանկամբք որոց մին զոհ եղաւ քու սր-  
խալմանդ , չըսեմ թէ անիմաստութեանդ .  
մոռցաք , կ'ըսեմ , նաեւ այն անագորոյն հար-  
կը որ ստիպեց զքեզ երկու տարի ծիւրել ծա-  
ռայութեամբ օտարներու գուռ քանի մը  
ըուալի ամսականով , մինչեւ , այլ եւս անկարող  
ապրելու , հազիւ գտար , զքեթէ սքանչել-  
եօք , ազգայնոյ մը բարեկար ձեռքը որ օդ-  
նեց քեզ գտոնալ ի հայրենիս , և ինչ տա-  
ժանմամբ :

Ի՞նչ պիտի ընես , սիրելի , Եղիպտոս .  
բամբակի մշակութիւն : Ի՞նչպէս կը յուսաս  
յաջողել գու որ հողագործութեան մէջ փորձ  
չես : Քանի մը ողորմելի գրոց կամ լրագրաց  
յօդուածներու վերացեալ կանոններ , ցնո-  
րելոց ոմանց խրախոյս որ միշտ յաջողու-  
թիւն կ'երազեն զոր երբէք գտած չեն , այս  
բաներ , կ'ըսեմ , կը հրապուրեն և կը ձգեն  
զքեզ , գիտեմ . բայց փորձն , անողոքելի

փորձն , շատ յոյսեր , շատ յանդուդն ձեռ-  
նարկութիւններ , կը համէ ի գերեւ : Չես գի-  
տեր առակը թէ երազի մէջ խնջոյք սովոյ հա-  
ւասար է : Յիշէ նաեւ որ ի գարձիդ ի թուսիոյ  
ինչ տառապանօք կազմեցիր տուն մը զոր նո-  
րէն ցրուել կ'ուզես : Ո՞յ աղաջուրն դրաւ ինե-  
լապատակիդ մէջ զայս յիմար խորհուրդ :

«Գործին ձախող դին ինձ կը ցուցինես , » պի-  
տի ըսես : Ոչ այնպէս . ես ոչ քաջալերող եմ  
և ոչ վհատեցնող , միայն նոր և անկանգնելի  
կործանմանէ կը վախնամ . և դիցուք թէ եր-  
կիւզս հաստատուեցաւ , դու ոչ այն մանկու-  
թիւն ունիս և ոչ այն զօրութիւն որ քեզ  
միջոց տուին կանգնելու առաջին անդամ :

Ահա ըսի ինչ որ կրնայի ըսել , սիրելիդ  
Մարտիկ : Ուր որ ըլլաս , ինչ վիճակի մէջ որ  
գտնուիս , դիտցիր որ միշտ քու օդտիդ հա-  
մար կը խորհի քու վաթմանմեայ եղբայրդ ,  
և թէ քու սերտագոյն բարեկամդ է միշտ :

Մի ամէն հովէ շարժիր . իմա ինչ որ կ'ը-  
սեմ , գարձեալ կամեցիր ինչ որ կը հաճիս ,  
և ողջ լեր :

Հարազատ քո  
Ա. Ա.

(Թուուկուն)



## ԳԼՈՒԽ Ժ.

ՆԱՄԱԿԻ ՇՈՒՐԱՑ ԵՒ ՀՐԱԿԻՐԱՆԱՑ

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆ

Նուիրաց և Հրաւիրանաց նամակներ հա-  
մառօտ գրուածներ են , որոց ոճ պարզ և  
զուարժ ըլլալու է : Նուիրաց նամակներու  
մէջ պարտ է մանաւանդ զգուշանալ որ նուիր-  
եալ իրին շատ մեծ յարդ չընծայուի : Ընծայ  
ընելուն նպատակն է զուարծութիւն մատու-  
ցանել զայն ընդունողին , ոչ թէ անուղղակի  
կերպով պարտք դնել անոր վրայ չնորհա-  
կալ ըլլալու :



106. Ընծայ ընդունուած մատեսի մը համար չսորհակալութիւն:

Սիրելի բարեկամ .

Ընկալայ գեղեցիկ մատեանը զոր տպել  
տուիք , և որմէ օրինակ մը հաճեցաք ընծայ  
ընել ինձ : Հաւատացէք որ ձեր այս բարե-  
կամութեան նշանը շատ յարդի է ձեր հին  
ընկերին , որ միշտ չնորհակալ պիտի ըլլայ  
ձենէ : Կամէի ձեր գիրքը կարդալ ամբողջ ,  
և ապա գրել զայս նամակ , բայց այնչափն  
եւս զոր կարդացի՝ բաւական է , սակայն կը  
ըսեմ ասոր վրայ , քանզի գիտեմ ձեր հա-

մեստութիւնը որ խուլ է գովիճատի : Բաւա-  
կան կը համարիմ չնորհակալ լինել ձեզ որ  
գուարճալի ժամեր անցունելու առիթ տու-  
իք ինձ ի միայնութեանս , ցուցնելով միան-  
գամայն որ զիս կը յիշէք և կը սիրէք :

Վաղեմի հաւատարիմ ընկեր ձեր

(Թուական )

Ա. Ա.

107. Միսաք կը դրկէ ըսծայ առ մօրաքեռորդին իւր կարեն :

### Սիրելիդ կարեն .

Երբ անցեալ տարի այս եղանակիս առ  
մեզ էիր , քաջ կը յիշեմ որ մեր սալորներուն  
համար կ'ըսէիր թէ շատ սքանչելի են , և որ-  
շափ սիրով կ'ուտէիր , մանաւանդ վարի պար-  
տէզին գեղձերը :

Այս տարի այն պտուղներն հասած տես-  
նելով՝ մօրս ըսի . կարեն այս տարի մեր քով  
չէ , նա մենէ հեռու է , և մեք ի նմանէ . թող  
զրկեալ չմնայ գոնէ պտուղներէն որ ախոր-  
ժելի են նմա : Ուստի պատրաստ եղիր ,  
սիրելի . այս երեկոյ պիտի ընդունիս երկու  
կողով մեր պտղանոցին երախայրիներէն : Այ-  
սօր առաւօտեան իններրորդ ժամուն յանձ-  
նեցի կողովներն երկաթուղոյ տնօրէնին , և  
կ'իմացունեմ քեզ որ անյապաղ երկաթուղ-  
ոյն կայարան երթալով պահանջես կողով-

ներն յումմէ արժան է , գուցէ փորձանք մը  
պատահի , քանզի գիտես թէ այսպիսի բա-  
ներու թշնամիք շատ են : Պտուղները թղթե-  
րու մէջ պատած եմ . զգուշութեամբ տանել  
տուր , մանաւանդ գեղձերը :

Կը համբուրենք զքեզ կաթողին , թէպէտ  
արժանի ես ծանր յանդիմանութեան նամակդ  
ուշացնելուդ համար : Ընծայի հետ փոքրիկ  
յանդիմանութիւն մը մեծ բան չէ :

Ողջ լեր :

Մօրաքեռորդիդ Միսաք

(Թուական )

Ա. Ա.

108. Բարեկամի ումեր ըսծայ կը դրկուի :

### Սիրելիդ վահէ .

Հայրս որ հնդետասան օր առաջ հաւուս  
հետ գնաց յորս , կ'երեւի թէ մեծ նախճիր  
կոտորած են , քանզի երէկ իրիկուն շատ որս  
զրկեց մեզ , դրելով մօրս ձեզ եւս մաս հա-  
նել ի նոցունց :

Ուստի ըստ ընտրանաց մօրս՝ այս առտու  
կը յանձնեմ երկաթուղւոյն սակառ մի , յո-  
րում պիտի գտնես զյուգ մի նապաստակ և  
եօթն զյուգ կաքաւ , որ ձեզ պիտի համին  
կէս օրէն կէս ժամ ետքը : Մայրս շատ

ուրախ է որ, թէպէտ զրկուածը չնչին է, յարմար է սակայն ձեր ճաշակին, և կ'աղաշէ զձեղ ողջունել ձեր տիկին մայրը, և յիշեցունել նմա որ չմոռնայ այս ձմեռ մեղ այցելութիւն ընելու խոստումը:

Ընկալ, սիրելի, մեր սիրալիր ողջոյն :

Հաւատարիմ բարեկամ ձեր

(թագավան)

Ա. Ա.

~~~~~

109. Մանուկ իւր կենդանագիրը կը դրէտ առ հօրաքոյր իւր :

Սիրելի հօրաքոյր .

Քու սիրուն փոքրիկ նամակիդ մէջ զոր կը զրես ինձ յերզնկայէ ուր ողջամբ հասած ես, կըսես թէ, մենէ բաժնուած ըլլալուդ տըխութիւնը փոքր ի շատէ փարատելու համար ուրախ պիտի ըլլաս ընդունել կենդանագիրս : Շնորհակալ եմ, ազնիւ հօրաքոյր, քու այդ փափաքանացդ համար, որ նոր ապացոյց է ինձ թէ որչափ կը սիրես նուաստ եղբօրորդիդ :

Երբ առլ նամակիդ, իսկոյն գնացի լուսանկարը որոյ հասցէն տուած ես ինձ, և հանել տուի պատկերս ըստ պատուէրի քում շատ փոքր, որպէ զի փոքրիկ արծաթէ տըխկանդ մէջ կարող ըլլաս դնել : Ծրարը յանձնեցի մեր երկայնականջ տափաքիթ սպասաւորին Պարսամաց . կը յուսամ թէ անմիսաս կը

համնի ձեռքդ : Առաջիկայ նամակիդ մէջ, սիրելի հօրաքոյր, մի մոռնար իմացնել թէ ճշդիւ ինձ նման է կենդանագիրս : Գիտես որ մարդ իւր վրայ արդար դատաստան չի կրնար ընել . ես, շիտակը խօսելով, չկրցայ որոշել թէ ճիշդ իմ կերպարանքս է, թէպէտ մեծ նմանութիւն կը տեսնեմ :

Հոս ամենքս ողջ և առողջ ենք, միայն կարօտ քեղ, մանաւանդ չարաճճի եղբօրորդիդ, որուն այնչափ երես կուտայիր որ ահա կը յանդդնի այսչափ համարձակել առ քեղ : Հայրս ապսպրեց գրել քեղ որ յետ Զատկի չուշանաս, ինչպէս որ խոստացար, ապա թէ ոչ հոգ պիտի ընենք վասն քո :

Խանդակաթ եղբօրորդիդ

(թագավան)

Ա. Ա.

→→→○←←←

110. Բարեկամական հրաւէր ի ճաշ՝ ընտանեկան ոճով :

Տիկին .

Կինս կը պատրաստուէր ձեր գիւղը գալքանի մը ժամ անցունելու համար ձեր զարմանալի պարտէզին անուշահոտ կակղիներուն տակ, մինչ յանկարծ հիւր եկաւ ի Նստաձորոյ, կին և աղջկունք մեր ծերունի միալզացին : Այս պոռոտախօս գեղջուկներն արգելք եղան կնոջս դիտաւորութեան որ ակամայ ստիպուե-

յաւ մնալ տունը : Ուստի ապսպրեց ինձ յայտ-
նել ձեղ իւր յաւ , և յիշեցնել ձեղ ձեր
խոստումը գալ ճաշել ընդ մեզ օր մը յառա-
ջիկայ եօթնեկիս : Եւ որովհետեւ հաճեցաք
թողուլ մեղ այն օրուան ընտրութիւնը , կը
խնդրենք որ , եթէ արգելք չկայ , առաջիկայ
շաբաթ օր հրամէք . այն օրը բոլորովին աղատ
եմ , և կը յուսամ հանդարտ երեկոյթ մը
վայելել ձեր և ձեր չքնաղագեղին Սաթինկան
հետ , որ կը յուսամ թէ պիտի չուզէ մերժել
մեր հրաւերն և սրտառուչ ընել զմեղ : Գիտէ
թէ որչափ սիրելի է մեզ , և եթէ չգայ , դոր
Աստուած մի արացէ , որչափ պիտի բարկա-
նայ կինս :

Գրեցի նաեւ ձեր եղբօր , աղաչելով որ
նոյն օրը գայ օգնել մեղ պարտկելու երեք-
լրտերեան արքայաձուկը և զոյդ մը խեցգե-
տի զոր պիտի զրկէ մեղ ուրբաթ մեր մաղա-
ցին որդին : Մեր բարեկամը գիտէ նաեւ թէ
ինչպէս յաջողակ է կինս պատրաստելու նոր
անուանի սուրճը որ այնպէս մարսողական է
կերակրոյ վրայ : Ոչինչ նուազ յաջողակ եմ
ես , ինչպէս գիտէ , բանալ ամէն սրուակ որոյ
բերանը կնքուած է կարմրամոմով , և հեղուլ
ի բաժակս փրփրոտ ըմպելին , երբ աղնիւ
բարեկամք իբրեւ զձեղ կը բոլորեն սեղանս
ընդ հովանեաւ մեր մեծ կիսագարեան կնծ-
նոյն : Գիտնալով , տիկին , մեր բարեկամին ,

ձեր զուարթ եղբօր , մարդասիրութիւնը , բը-
նաւ չեմ տարակուսիր թէ պիտի զլանայ այս
փոքրիկ ծառայութիւնը մեզ , որ է պատուել
մեր սեղանը :

Կատակը մէկդի , կ'աղաչեմ , տիկին , նե-
րեցէք հրաւերանացս եղանակին որ գիտեմ
համաձայն չէ ճիշդ օրինաց հրաւերման . բայց
բարեկամաց մէջ բացառութիւնն եւս երբեմն
օրինաւոր է : Այսպէս համարելով իմ հրաւերը
եւս , մի սպասցնէք զմեղ , տիկին , կ'աղաչեմ :
Առ այժմ ողջոյն :

Ձեր վաղեմի հաւատարիմ դրացին
(Թուական) Ա. Ա.

Առաջաւագ

111. Գեղացի ընտանիք այգեկութի կը հրաւերով :

Սիրելի Մուշեղ .

Առաջիկայ կիրակի օր մեր փոքրիկ այդին
պիտի կթենք , և յայտնի է թէ չենք կարող
առանց օգնութեան քու առոյդ մանչերուդ ,
որոց յաջողակութեան և անխոնջ աշխատու-
թեան տեղեակ ենք : Անցեալ տարի մի և
նոյն առթիւ անոնց ժրութիւնը գեռ մոռցած
չենք , մանաւանդ պարտէզին ձողարարձները
կթելու ատեն անոնց ճարտարութիւնն և ա-
րագութիւնը որով թեթեւ սամոյրներու պէս
կ'ելլէին կ'իջնէին առանց կոտրելու ձող մը :

ЧИТАТЬ
„КРАСИРАЦ“

Ուստի կ'աղաչեմ, սիրելի եղբայր, կանուխ ճամբայ ելէք, կարծեմ թէ երեսուն արտավար ընդարձակ այդի մը կթող բարեկամաց օդնութեան համելու համար կամուխկեկ գալ հարկ է : Կնոջս յոյսը քու տիկնոջդ և երկու կայտառ ճորտերուդ փրայ է . ընտիր կողովներ և միրատներ ձեզի համար արդէն պատրաստ են : Խոկ ես ոչինչ ընդհատ քան զնա անձուկ ունիմ տեսանել զքեզ : Մեր վաղեմի դէպքեր յիշելով քանի մը ժամ անցունելու համար սպիտակ կաղամախւոյն տակ՝ գիտեմ որ շատ պատրաստութիւն պէտք չէր . պատուականագոյն բանն արդէն ունիմ . կարմիր, ճերմակ, դեղին հին գինի դողթան և խողու երշիկ զոր անձամբ պատրաստած եմ :

Քու հին բարեկամդ

(Թառական)

Ա. Ա.



112. Հրաւեր ի խրախութիւն :

Սիրելի պաշտօնակից իմ .

Որդիքս, կինս և տղայութեանս բարեկամք որ Սրբոյն Վարդանայ պաշտպանիս փառաւոր նահատակութեան օրը երբէք չեն մոռնար՝ երէկ եկան խմբովին չնորհաւորել անունս : Եւ ես սովորութիւն ունիմ ամէն տարի փոխանակ տօնի տօն հատուցանել նոցա ,

մանաւանդ որ, ինչպէս գիտես, կոչունք իը սիրեմ : Եւ թէպէտ սրտին յիշատակն արտաքին նշաններու պէտք չունի ինքզինք յայտնելու, սակայն և այնպէս կարծեմ թէ անկեղծութեան բնաւ չի վնասեր փոքր պարահանդէս մը մեր տղայոց համար, և ճաշ մը որ զմեղ ամէնքս կը ժողվէ :

Մեր ակումբն ու խրախութիւնը թերի պիտի ըլլայ անտարակոյս, եթէ գուք մեր մէջ չգտնութիք : Ուրեմն հաճեցէք, տէր, դուք և տիկին ձեր, մեր կոչունքը պատուել առաջիկայ չորեքշաբթի . գիտցէք որ ձեզմով մեր բարեկամաց թիւը կրկն պիտի ըլլայ : Եւ որովհետեւ դուստրս Շարուհի կը պնդէ թէ իրեն համար մեր խրախութիւնը ցուրտ տօն պիտի ըլլայ՝ եթէ օրիորդ Անոյշ չգտնուի հրաւերելոց մէջ, կը խնդրեմ որ բերէք նաեւ զնա : Ոչ թէ հրաւեր է այս որ կը նեմ, այլ աղերս, թախանձանք մեր Շարուհոյն կողմանէ որ կը պնդէ թէ իւր աղաչանք ձեր քով մեծ աղդեցութիւն ունի : Ապա չորեքշաբթի առաւօտուն երկաթուղւոյն առաջին կառաչուով զձեզ երեքինդ կը սպասենք :

Կինս առանձին կ'ողջունէ ձեր տիկինը և կ'աղաչէ թախանձանօք չմերժել մեր հրաւերը : Ողջ լերուք :

Մտերիմ պաշտօնակից ձեր

(Թառական)

Ա. Ա.



113. Ամարանոցի այցելութեան հրաւէր :

Տիկին .

Բաւական ժամանակ է որ ես և այրս խորհենք գիւղային ճամբորդութիւն մը ընել զբօսանաց համար , բայց մեր այս խորհուրդը թերեւս տակաւին առանց գործադրութեան պիտի մնար , եթէ յաջող պարագայ մը մեղ այս անորոշութենէն չհանէր :

Մոռցած չէք , կարծեմ , Շահունեանց չքնաղագեղ տիկինը որ երկու տարի առաջ զիս տեսնելու եկաւ մեր փոքրիկ ձմերոցը մօտ յթնդդ : Այս տիկինը որ վան կը բնակի՝ անտի իրր չորս հրասախ հեռու գեղեցիկ ամարաստուն մը ունի Արճշոյ գիւղն ուր գացած է հիմա ընտանեօք ամառն անցունել : Հիմա կը հրաւիրէ զմեղ թախանձանօք այցելութիւն ընել իւր շքեղ այգեստանին , խնդրելով որ դուք , ձեր քոյրը , մօրաքոյրը և ձեր պատուական ամուսինը մեր հետ ընկերանաք : Գիտցած ըլլաք , տիկին , որ եթէ այս հրաւէրն ընդունիք , տիկինն ի խոր պիտի խոցի , և զմեղ սրտառուչ պիտի ընէք :

Միտք ունինք կիրակի առաւօտ կանուխ անկանել յուղի ութ ժանուռվ իւրաքանչիւրը չորս անդրուարաւ : Մեր կարդադրութիւնն այս է որ կառքերն զկայ առնուն գրեթէ ի

կէս ճանապարհին , և մեք իջնելով գալար խոտին վրայ ճաշենք Արծրունեաց հին աւերակին ներքեւ , որ ժամանակաւ ամրոց էր քաջին գագկայ , որոյ պատմութիւնն այնպէս կը շարժէր զմեղ ի մանկութեան : Անտի պիտի երթանք շիտակ Շահունեանց ամարանոցը ուր կը սպասէ մեղ տիկինը : Շաբաթ պիտի դառնանք Սուրբ Կարապետ , քանզի գիտէք որ հետեւեալ օրը , կիրակի , Պենտեկոստէ է :

Զկրցայ անձամբ գալ հրաւիրել զծեղ , քանզի այսօր հիւր ունիմ : ուստի փութացայ գրել ձեղ , տիկին , որպէս զի պատճառ չունենաք ըսելու թէ կանխաւ լուր չտրուեցաւ ձեղ պատրաստութեան համար : Վաղիւ կը յուսամ գալ տեսնել զծեղ , որպէս զի մեր երթալու ժամը որոշենք , և ժամադիր ըլլանք ուր արժան է իրար գտնել :

Ընդունեցէք , տիկին , անկեղծ յարդանքս որ առ զեղ :

Հաւատարիմ ձեր

(Թուական)

Ա. Ա.

114. Հրաւէր ըսդունելէ հրաժարելու նամակ :

Տէր .

Կը ցաւիմ որ պիտի չկրնամ ընդունել ձեր սիրուն հրաւէրն , քանզի այս վայրկենիս կը գտնուիմ յանկողնի , և ստիպեալ , հրամանաւ

բժշկին , քանի մը օր փոխանակ կերակրոյ շատանալ դեղահատիւք և ապրով առանց արդանակի , դժբախտութեամբ խթէ բռնըուած ըլլալով հարկահանութեան համար ճամբորդութեանս ատեն :

Ուստի ընկալարուք , տէր , հրաժարումն , և ձեր տիկինն եւս հաճեցուցէք , հրաւիրեալ բարեկամաց եւս ըսէք թէ որչափ ցաւ է ինձ որ հրաժարելու ստիպուած եմ , և ուրիշ կերպով չեմ կրնար ձեր փառաւոր ակմբին մէջ գտնուիլ , բայց եթէ սրտիւ և մոօք :

Երբ ստանամ առողջութիւնս , որ կարծեմ շատ պիտի չուշանայ , կը յուսամ այս բռնի բացակայութեան վնասն հանել՝ դալով անձամբ չնորհակալ լինել ձեզ , որ այսպէս մըտերմաբար յիշեցիք զիս :

Առ այժմ հաճեցէք ընդունել , սիրելի բարեկամ , անկեղծ սէրս :

Բարեկամ ձեր

Ա . Ա .

(Թուական)

ԳԼՈՒԽ ՃԱՌ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԱՄԱԿԱՆ

ԴԻԾՈՂՈՒԹԻՒՆ

Նիւթ ընտանեկան նամակաց , որպէս յայտ է յանուանէն , յիշատակութիւն է առտնին դիպաց կամ գործոց , և ունի ընդհանրապէս պատմական մասն , ուստի և ինքնին կը հաւկըցուի թէ ոճն պարտի լինել պարզ , բայց ծանր : Յետ յիշելոյ , որչափ հնար է համառօտիւ դէպքը կամ իրը , կրնանք յաւելուլ , ըստ հարկի և պատշաճութեան , բանս գովեստի , չնորհակալութեան , սիրոյ , և կամ , նոցին հակառակ , թեթեւ ինչ յանդիմանութեան կամ մեղադրանաց և գանգատանաց , սակայն միշտ մեղմով և քաղաքավարութեամբ , մանաւանդ եթէ նամակն ուղղեալ է առ աւագ ոք և մեծարոյ :

~~~

115 • Հայր ոմն առ որդին իւր որ հիւանդութենէ նոր ելած է :

Հոգերէն զոր հիւանդութեանդ համար ունեցայ՝ կրնաս դատել թէ որչափ մեծ եղաւ ուրախութիւնս , երբ առողջանալուդ-

լուրն առի : Շատ շնորհակալ ըլլալու ես Աստուծոյ որ գքեղ չար արկածէ պահեց , քանզի աչքիդ իջուածը կրնար աղետալի հետեւանք ունենալ : Կը գովեմ շնորհակալութիւնը զոր կը յայտնես մօրդ ինամոց համար որ առ քեզ , և կը յուսամ թէ չես մոռնար զերախտիս նորա , և հատուցումն ըստ արժանաւոյն կ'ընես՝ պատշաճ հպատակութիւնը մատուցանելով նմա : Նամակդ շատ հաճոյ թուեցաւ ինձ . իմաստութեամբ գրուած է . առողջանալուդ պարագաներն , ինչպէս նաեւ այժմու վիճակդ , շատ մանր և յստակ կը նկարագրես : Նորէն դպրոց երթալու մի փութար . և կը խրատեմ զքեղ զուարճալի բաներ միայն կարդալ , մինչեւ բժիշկն հրաման տայ քեզ նորէն սկսել աշխատել որպէս առաջ : Իմ կողմանէս սերտ ողջոյն մատու ուսուցիդ , և ջանա որ զզջայ նեղութեանց համար զորս կրած է վամն քո : Կը յուսամ ի մօտոյ տեսնել զքեղ , առ այժմ կը խնդրեմ ողջոյնս տալ քերցդ , թէպէտ չեմ դիտեր թէ դեռ հրաման ունին այց առնել քեզ . եթէ այսպէս է , ողջոյնս տալու մի աճապարեր , մինչեւ թոյլ տրուի նոցա դալ առ քեզ : Ողջ լեր , սիրելի որդեակ , և դիտցիր որ եմ

Խանդակաթ հայրդ  
Ա. Ա.

(Թուական)



116. Շնորհակալութեան նամակ առ ուսուցիչ ուն :

Սիրելի ուսուցիչ .

Իբր երկու տարի է որ ձեր սանը հեռացած է ձենէ , բայց մհուցած չէ զձեզ : Բնական է մեզ յիշել զմեզ սիրողներ , և ձեր խընամքը և հայրական սէրն առ իս այնպէս խոր տպաւորութիւն ըրած են սրտիս , որ ձեր յիշատակն յաւիտեան չպահել անհնար է ինձ :

Ձեր պաշտօնակիցներէն մին , Ա. Ա. , որ ձեր քաղաքին Մեսրոպեան վարժարանը կ'երթայ իբրեւ դասատու ճարտասանութեան՝ յանձն առաւ անձամբ մատուցանել ձեզ նամակ մի զոր ի վաղուց կը խորհէի գրել ձեզ : Նոյն անձը կրնայ վկայել ձեզ թէ ինչպէս օր քան զօր կ'առաւելու երախտագիտութիւնս և սէրս առ ձեզ , և յանուն իմ շնորհակալ պիտի ըլլայ ձեզ սիրոյ այն նոր ապացուցին համար զոր տուիք յանձնելով զիս թախանձանօք առեւտրական ընկերութեան գլխաւորին որ , ինչպէս կը լսեմ , ձեր վաղեմի աշակերտն է , և որուն քով մտած եմ գրագրութեան պաշտօնիւ :

Միտք ունիմ տարւոյս վերջը թողուլ զայս քաղաք , ուստի և պաշտօնս . քանզի հայրս որ զիս բաւական կը թուած կը համարի գրագրութեան արուեստին մէջ՝ կը խորհի զիս

իւր գործին մէջ առնուլ։ Այս աւետիսը որ  
այս օրերս հասաւ ինձ՝ շատ կ'ուրախացունէ  
զիս, քանզի յետ սակաւուց ընտանեացս մէջ  
պիտի գանուիմ, և առիթ պիտի ունենամ  
երբեմն երբեմն ձեր քով դալ խօսել անցեալ  
ուսմանցս վրայ զոր թերեւս քիչ մը մոռցած  
եմ. բայց մոռցած չեմ և պիտի չմոռնամ  
երբէք վարուց և կենաց բարի սկզբունքը  
զորս ընդունած եմ ձենէ, ինչպէս նաեւ ձեր  
ինամոց և սիրոյ ապացոյցները :

Ողջ լերուք, սիրելի ուսուցիչ իմ, և վըս-  
տահ ձեր նախնի աշակերտին կաթողին սի-  
րոյն, հաճելով պահել ձեր բարերար խը-  
նամքն առ նա որ է խորին յարգանօք

Խոնարհ աշակերտ ձեր

(Թագավորական )

Ա. Ա.



117. Պատանի ոմն կ'իմացնէ իւր մօք թէ  
խօսուեցաւ այս անուն օրիորդին։

Սիրելի մայր .

Ձեր խորհրդոյն համեմատ օրիորդ Նար-  
տիկ Սիրեան ինութեան ինդրելու՝ խօսեցայ  
առ տէր և տիկին Սիրեան, և ուրախութեամբ  
կը ծանուցանեմ ձեզ որ առաջարկութիւնս  
սիրով ընդունուեցաւ, ուստի և աճապարե-  
ցի իմացունել նախ ձեզ, քանզի պարտական  
եմ ձեզ՝ ինչ յաջող և ուրախալի բան որ կը  
պատահի ինձ :

Մեր ամուսնութիւնը պիտի կատարուի  
թունիսի 17 ին : Ապա գեռ երկու ամիս կայ ,  
և այս միջոցին ջանալու եմ ամէն կարեւոր  
պաշտօնական գիր հայթայթել, այնպէս որ  
յիշեալ թուականէն գոնէ ութ օր առաջ ա-  
մենայն ինչ պատրաստ ըլլայ : Ուստի կը խընդ-  
րեմ որ սոյն ամսուան մէջ այս ամուսնու-  
թեան համար ձեր հաճութեան վաւերաց-  
եալ գիրը զրկէք ինձ . հանել տաք նաեւ  
ծննդեանս թուականը և ուրիշ ինչ որ ի պաշ-  
տօնէ պիտի պահանջուի կառավարութենէն  
ամուսնութեան մուրհակը պաշտօնապէս չի-  
նելու, քանզի, ինչպէս գիտէք, հոս ամուս-  
նութիւնը քաղաքային է :

Կը յուսամ, սիրելի մայրս, որ մինչեւ յիշ-  
եալ օրը կ'առողջանաք, և առաջիկայ գտնը-  
ուելով ձեր որդւոյն ուրախալի հանդիսին՝ գոնէ  
և զուարթ կ'ընէք զիս և խօսեալս, օրիորդ  
նարգիկ :

Բոլոր Սիրեան ընտանիքը, մանաւանդ-  
յատուկ սիրով և յարգանօք օրիորդ Նար-  
տիկ, կ'ողջունեն զձեզ, մաղթելով ձեզ ա-  
ռողջութիւն և երկար կեանք, ընդ որս ձայ-  
նակից է նաեւ ձեր

Հնաղանդ որդին

(Թագավորական )

Ա. Ա.



118. Եղբայր ոմն կը զրէ առ քոյր իւր նուէց պատրաստել իրենց մօրը տօնին օրուան և իրենց ստուտովն համար:

### Սիրելի քոյրս .

Այս նամակը կը գրեմ քեզ՝ ոչ թէ յիշե՞ցնելու համար որ երկու շաբաթ ետքը մեր սիրելի մօր անուան տօնն է , քանզի գիտեմ թէ այն օրը հաշուած ես և կը յիշես միշտ , ինչպէս և ես , այլ կ'ուզեմ խօսիլ այն օրուան պատրաստութեան վրայ :

Ո՞ւր հասաւ քսակը զոր կը բանէիր մեր մօր համար . կարող պիտի ըլլա՞ս ժամնակին աւարտել զայն : Զեմ գիտեր թէ ձեր գըպ-րոցին վարժուհին միւս բաներն եւս պատրաստելու հրաման տուա՞մ քեզ , այսինքն բազ պաններն և վղնոցը : Կը խնդրեմ որ իմացունես ինձ :

Ես ի մօտոյ կ'աւարտեմ դաշտանկարը զոր երեք ամսէ հետէ մեծ խնամնվ կը գծագրեմ: Մեր գծագրութեան դասատուն շատ դոհ է այս աշխատութենէս : Բաց այս նկարէն կը գծեմ նաև աշխարհագրութեան տախտակ մը և ուրիշ բաներ գըչով: Այսոքիկ են ձեռագործ նուէրք զորս պիտի ընդունի մեր սիրելի մայրը , և որչափ պիտի ուրախանայ մեր յառաջադիմութիւնը տեսնելով: Կը խընդրեմ , սիրելիդ նունիկ , ջանա որ ձեռագործդ թերութիւն չունենայ :

Բայց նպատակս մեր այս փոքր աշխատութեանց վրայ միայն խօսիլ չէ , ունիմ ուրիշ կարեւոր առաջարկութիւն մը որ երէկ իրեկուն եկաւ միտքս : Գիտես որ մեր ստնտուն վարդենի որ մեր տունէն ելլելէն ետքը իւր գիւղը գնաց և հիմա բաւական պառուած է , ինչպէս կը լսեմ , և ճշմարիտ է , մեծ կարոտութեան մէջ է : Հանդերձ չունի դուրս ելլելու . թշնաւու կին : Մեր մայրը որ շատ կը սիրէ զնա , քանզի կ'ըսէ թէ մեծ դութունէր մեր վրայ մինչ մեր ստնտուն էր , ամսէ ամիս օգնութիւն մը կ'ընէ , բայց ինչ դարման կրնայ ըլլալ այս փոքր նպաստը թշուառ գերդաստանի մը այնչափ կարօտութիւններուն : Հիմա կը խորհիմ , սիրելի նունիկ , որ նոյն խոկ մեր մօրը հաճելի գործ մը կ'ընենք , եթէ երկուքս միանալով մեր քսակէն ընծայ մը ընենք այս հէք ստնտուին : Ես ձմեռուան համար ասուելին զգեստ մը կը շինեմ անոր հանդերձ վերարկուով , և դուքանի մը զոյգ սպիտակ ագանելիք , զանկապան և խոյր պատրաստել տուր : Կրնանք պառաւ կնոջ մը քան զայս աւելի կարեւոր ընծայ ընել : Ի՞նչպէս կը թուի քեզ խորհուրդը , նունիկ . կ'ուզեմ լսել նաեւ քու կարծիքդ :

Եթէ քեզ եւս հաճոյ կը թուի խորհուրդը , իմացու ինձ որ գրեմ մեր հաւուն , ու

ըսոյ ձեռքն է մեր հայրենական ժառանգութէ  
թիւնը, զրկել մեղ առ այս հարկաւոր դրամը։  
Մնացիր բարեաւ, սիրելի քոյք, դիտ-  
ցեր որ եմ միշտ

Խանդակաթեղբայր քո

(Թիւնական )

Ա. Ա.

→→→օ<<<

119. Բարեկամ տիկին ոմն կը զրէ առ նորոգ ամուս-  
նացեալ կին սնտեսութեան վրայ։

Սիրելի որդեակ .

Ահա վերջապէս տանտիկին եղար, ընտիր  
ամուսնով մը որ կը սիրէ զքեզ, և դու զնա,  
ինչպէս արժան է։ Կը չնորհաւորեմ քեզ ի սըր-  
տէ, և կը մաղթեմ որ բարեբախտութիւնդ  
միշտ առաւելու։

Շնորհ ունիմ քեզ փոքրիկ սիրուն նամա-  
կին համար զոր գրեցիր այս աւետիսը տա-  
լու համար ինձ։ Ուրախ եմ որ չես մնոցած  
հաւատարիմ բարեկամդ որ երբէք անհոգ  
չեղաւ և չէ կենացդ պատահարներուն, և  
չեմ զարմանար, քանզի գիտես սէրս որ առ  
քեզ, և պատճառ ունիս հաւատալու թէ իդ-  
ձերուս համաձայն է ամուսնութիւն մը որ ձեր  
բոլոր գերդաստանը և ամէն բարեկամ լը-  
ցուց ինդութեամբ։

Յետ ամուսնութեանդ, ինչպէս կը տես-

նեմ, գլխաւոր փոյթդ եղած է դիտել թէ  
ինչպէս կը վայլէ կնոջ լինել տնաշէն, ուստի  
և ինէ խորհուրդ կը խնդրես տնտեսութեան  
վրայ, վստահելով իմ վաղնջուց փորձառու-  
թեանս և բարեկամութեանս որ առ քեզ։  
Այս փոյթդ, սիրելի որդեակ, ըստ իս մեծ  
պատիւ և գովիեստ է քեզ, և որովհետեւ իմ  
խորհուրդս կը հարցնես այս կարեւոր կէտին  
վրայ, կը փութամ աւասիկ պատախանել  
ըստ կարի՝ չնորհակալ ըլլալով քեզ վստա-  
հութեանդ համար որ առ իս։

Այդ՝ տնտեսութեան համար, սիրելիդ  
շուշան, կըսեմ թէ կծծութիւնը խնայողու-  
թիւն չէ, ուստի և լաւ սնտես չեմ համա-  
րիր տան տիկին մը որ իւր քսակին բերանը  
դողդողալով կը բանայ . զգուշանալու ես ու-  
րեմն նախ որ չափազանց ճշդութիւնն ի ծախս  
քեզ ուշդութեան չտանի։ Այդ կը շահի ա-  
միսն 2600 դահեկան . և դու ամիսը 1500 դա-  
հեկանի եկամուտ մը բերիր օժիտ, ապա ու-  
նիք ամսէ ամիս աւելի քան չորս հազար դա-  
հեկան եկամուտ։

Այս եկամուխն համեմատ ըրէ ձեր տարե-  
կան տան ծախքը, միշտ երեւելի մաս մը ե-  
կամուտէն պահելով արտաքոյ կարգի ծա-  
խուց համար։

Տնտեսութիւն ընողներն ընդհանրապէս կը  
հարցունեն թէ տան համար գնուած պաշար

կամ՝ պարէն կանխիկ թէ ապառիկ վճարուելու է : Եթէ այս խնդիրը լուծել թողուէր ինձ, պիտի ըսէի . Զանա ըստ կարի միշտ կանխիկ վճարել, այնպէս որ հաշիւ չունենաս վաճառականին քով։ Ով որ կ'առնու և կ'առնու առանց գիտելոյ իւր քսակին հաշիւը՝ թերեւս դիւրին բան կը կարծէ առնուլը . բայց կը սարսափի, երբ ի վերջ ամսոյն կը տեսնէ հաշիւը :

Խրատ կ'ուտամ քեզ նաեւ տարեկան պաշար ունենալ, մանաւանդ այն բաներուն որ օր ըստ օրէ պիտոյ են : Զոր օրինակ՝ ունեցիր միշտ կոգի աղած և ձէթ ի թակոյկս՝ ձեր տարեկան պիտոյից համեմատ այսչափ կամ այնչափ լիտր . նոյնպէս աճառ և մոմ, շաքար և որիդ և ածուխ և փայտ ըստ բաւականին՝ գէթ քանի մը ամսուան համար պատրաստ : Եթէ այսպիսի բաներ իւրաքանչիւր իւր եղանակին և լաւագոյն պայմանաւ գընուին, մեծ տարբերութիւն կ'ըլլայ ի ծախս, քան թէ օրէ կամ եօթնեկէ գնելով, մանաւանդ ժամանակ եւս կը շահուի, քանզի բաւական բան կ'ունենաս ձեռքիդ տակ պատրաստ :

Քիչ մը յառաջ ըսի ապառիկ չգնել վաճառականէն, մանաւանդ եթէ մանրավաճառ է : Բայց կայ մանրավաճառ որմէ ապառիկ գնել օդտակարագոյն է, այն է մսավա-

ճառը : Ուստի, եթէ հնար է, սակ արկ մնավաճառի մը հետ, տարւոյ մը կամ վեցամսեայ և կամ գէթ եռամսեայ ժամանակի համար, տալ քեզ սա երեք տեսակ մսէն, եզան, որթու և ոչխարի, այս ինչ գնով, զոր օրինակ 2 ¼ կամ 3 դահեկան կէս լիտրը : Այսպէս թերեւս երբեմն կորուստ կ'ընես, մանաւանդ հասարակ կտորներու համար, բայց փոխանակ այս փոքր կորստեան՝ սա մեծ օդուտը կ'ունենաս, որ միշտ չափաւոր գնով մայ ընտիր կտորներ պիտի գտնուին սեղանիդ վրայ :

Եթէ ունիս մառան, և մանաւանդ եթէ պարագաները կը թողուն կամ կը պահանջեն, գինին մի մոռնար : Այրդ, պտտելրավ գինւոյ նաւահանգիստը կամ գինւոյ մթերանոյներ, կրնայ ընտիր գինի գտնել դիւրագնի : Եթէ կրնաք գինւոյ տեսակներն ընտրել, հասարակ և բնական գինին ընտրելի է, մանաւանդ եթէ ջուր կը վերցնէ . քանզի այսպէս գինին թէ առողջարար է և թէ խնայողական, այսինքն գրեթէ հարիւրին 50 կը շահուի, և սեղանդ կը գտնուի միշտ այս զուարթ ըմպելին, որոյ կիրառութիւնը որչափ խորշելի է գուրսը, այնչափ ընդունելի և շահաւէտ է առանին, մանաւանդ ի սեղանի :

Բնակարանի գալով, սիրելի որդեակ, ամիսը 600 դահեկան վարձ տալու խօսք կ'ը-

Նես : Ինձ կը թուի թէ այս դումարը գէթ առայժմ քիչ մը բարձր է : Դեռ տղայ չունիք , և կ'ըսես թէ դայեակ կամ ստնտու բռնելու միտք չունիս : Եթէ այսպէս է , թէ պէտ տան վարձերն հիմայ բարձր են , կարծեմ 400 դահեկանի տուն կամ գէթ յարկ մը ձեղի համար առայժմ հերիք է :

Արդ խօսքս կը վերջացնեմ ըսելով , սիրելի դուստր իմ , թէ ամենեւին մի զարհուրիք , եթէ ի սկզբան հաշիւդ ճիշդ չելլեր միշտ : Ամէն հասակի մէջ մարդ կը խսրուի , բայց լու տանտիկին և իմաստուն տնտես ըլլալու համար կարեւորագոյն բանը փորձառութիւնն է :

Մնաս բարեաւ , սիրելի որդեակ , ընդունէ մաղթանքս , և հաւատա զիս մտերիմ բարեկամ քեզ ( զոր չեմ դանդաղիք որդեակ կոչել՝ քանզի ձեռքս ծնար և սնար ) , և այրկանդ՝ զոր կը սիրեմ և կը յարդեմ , իբրեւ արդարեւ արժանաւոր ամուսին քեզ : Ողջ լեռուք երկոքին , և մի մոռնաք ձեր պառաւեալ բարեկամը որ արդէն գերեզմանին մօտ՝ ուրիշ բանի չի փափաքիք , բայց անդամ մի եւս տեսնել զձեզ :

Հաւատարիմ ձեր  
( Թիուական )

Ա . Ա .

120. Աղջիկ ոմն կու տայ իւր հօրը առողջութեան աւետիմն առ հօրաքյոր իւր :

Սիրելի հօրաքյոյր .

Ահա ձեզ աւետիս : Բժիշկն այսօր շատ հանդարտ և գոհ էր , և յոյս տուաւ մեզ թէ հայրս վտանդն անցուց և առողջանալու վրայ է :

Արդարեւ տենդը դեռ կը տեւէ , թէպէտ շատ ազդու միջոցներով կը մաքառուի ընդդէմ : Այսօր մետասաներորդ օր է որ հայրս ժամ մի անդամ քուն չտեսաւ , քանզի քուն չըսուիր թմրութիւնը յոր կ'իյնայ ատեն ատեն ախտացեալ մը չարաշար ընկճուելով հիւանդութենէն : Այս շարունակ քննատութիւնն և պահեցողութիւն շատ նիհարցուցին հէք հայրս : Բայց և այնպէս խաղաղ են մեր սիրտերը բժիշկներուն երեկուան խորհրդակցութեան վրայ . երեք բժշկաց կարծիքը միարան էր յայսմ թէ՝ ներքին գործարանաց մէջ խանդարում չկայ , ուստի և վտանդ չըշկայ մեր սիրելի հիւանդին կենաց . սակայն , ըսին , ապաքինութիւնը շատ ծանր յառաջ պիտի երթայ , և թէ զգուշութեամբ և խընամով միայն կրնայ կատարեալ առողջութեան համնիլ :

Կը տեսնէք ուրեմն , սիրելի հօրաքյոյր , որ մեր հիւանդին այժմու վիճակն աւելի մը .

խիթարական է , այնպէս որ յոյս , նա մանաւանդ վատահութիւն ունինք թէ նախախնամութիւնը մեր հայրը պարզեւեց մեղ : Ուրախութեամբ կը հաղորդեմ ձեղ զայս լուր , այսուհետեւ եւս կը գրեմ ձեղ ինչ փոփոխութիւն որ պատահի յընթացս հիւանդութեան :

Մայրս կ'ողջունէ ձեղ կաթողին , նոյնպէս , և աւելի եւս , ես որ եմ

Խանդակաթ եղբօր դուստր ձեր

( Թառական )

Ա. Ա.

121. Մօրեղբայր ոմն գրելով առ եղբօր դուստր իւր այրի կ'առաջարկէ նմա ամուսնութիւն :

**Սիրելի Զարդիկ .**

Այս օրերս յանձնուեցաւ ինձ շատ փառակ , միանդամայն դժուարին պաշտօն մը որ վերաբերութիւն ունի քեզ . և կը խոստովանիմ թէ անհնարին էր ինձ ընդունել զայն , եթէ չստիպէին զիս սէրն զոր ունիմ առ քեզ , և զիս միջնորդ կացուցանող անձին բարեկամութիւնը : Թերեւս այս յառաջբանէն հասկցար թէ ինչ առաջարկութիւն պիտի ընեմ քեզ . բայց զիարդ և իցէ , ոչ ապաքէն պարտական եմ ըսել յայտնապէս : Գիտցիր ուրեմն , սիրելի դուստր , որ ամուսնութիւն է զոր կ'ուզեմ առաջարկել քեզ :

Արդէն վեց տարի է որ այրի ես , Զարդիկ : Քու դժբախտ այրութեանդ ժամանակն յիշելով , որդեակ իմ , ըսել չեմ ուզեր թէ միխթարուած կամ միխթարուելու ես քու սքանչելի առնդ մահուան վրայ . գիտեմ որ քու դորովալի սիրտ սփովելու համար դարեր բաւական չեն մոռցնել քեզ այն քաղցր ամուսնական եռամեայ կենաց յիշատակը : Բայց հարկ է երբեմն բանականութեան ձայնին լսել , երբ այս ձայնը մեղ կը խօսի յօդուտ այլոց որ սիրելի են մեղ , և որոց շահը նախամեծար ընտրելու ենք քան զմերն :

Դու , սիրելիդ Զարդիկ , ունիս երկու դուստրիկ զորս կը սիրես կաթոգի . անոնց համար ունիս մեծամեծ և բարձր փափաքներ զորս ունենալ մօր մը ներելի է . քու բոլոր իզգ , բոլոր խորհուրդներդ են տեսնել զանոնք օր մը երջանիկ և վայելուչ կերպով զետեղեալ : Ասոնք աղէկ , սիրելիս , բայց ըսէ ինձ ձեռս ի կուրծս , հաստատուն յոյս ունիս դորձադրելու ինչ որ կ'ըզձաս անոնց համար : Կարծեմ թէ ոչ . սիրել և ըզձալ մօր մը ձեռքն է , բայց դորձադրել՝ ոչ :

Ուստի , սիրելի դուստր իմ , թուփ ինձ թէ , զայտոսիկ խորհելով , բաւական պատճառ պիտի չգտնես մերժելու ամուսնութիւն մը որ քեզ և սիրելի դուստրացդ համար եր-

ջանիկ և ցանկալի ապագայի մը հաստատա-  
դոյն երաշխաւորութիւնն արդէն կու տայ :

Տէր Զաւէն Գուրգենեան բարի , ուղիղ ,  
զգօն , հարուստ , միանգամայն առատաձեռն  
է , և կարող , ինչպէս գիտեմ , քեզ երջանիկ  
ընելու . երջանիկ կըսեմ սա մոռք , որ անով  
պիտի ունենաս հզօր պաշտպան մը քու մա-  
տաղ ընտանեացդ և բարեկամ մը վասն քո .  
վասն քո՝ որ դեռ քսան և չորեքամեայ այ-  
րի , զգաստ , հանճարեղ և գեղեցիկ , հօրէ  
և մօրէ զուրկ , գոյզն եկամոխ գրեթէ ան-  
տես թողուած ես , հեռի նաեւ մօրեղբօրէդ  
որ միմիայն պաշտպանդ եմ քո :

Տէր Գուրգենեան քառամամենի է , բայց  
ունի ամէն յատկութիւն լինելոյ այր և հայր :  
Արդէն մեծ համբաւոյ և ստացուածոց տէր ,  
ապագային մէջ եւս քան զեւս փայլելու յոյ-  
սեր եւս ունի : Արդէն քու զգաստութեանդ  
համբաւը լսած և տեսած է զքեզ երկու  
անգամ պարտէզը , և վերջին անգամ  
իւր դերձակին խանութը ուր գլխարկդ նո-  
րոգել կու տայիր , և յետ երկար խորհելոյ  
իւր կողմանէ կորոշէ քեզ իրեն ամուսին ը-  
նել , և որովհետեւ հօրդ ժամանակէն մեր  
մտերիմ բարեկամն է , և մեծ վատահութիւն  
ունի իմ վրաս , գիմեց ինձ , գիտնալով որ  
հօր տեղ եմ քեզ , և ահա անոր կողմէն փո-  
խանորդաբար կըխնդրեմ քու հաճութիւնդ :

Հիմա կը թողում քեզ խորհել ազատա-  
բար : Չեմ ուզեր ստիպել զքեզ , ոչ ալ ազ-  
եցութիւն բանեցունել քու վրադ , միայն ,  
և քեզ սիրելուս համար , Զարդիկ , դուստր  
իմ , կըսեմ թէ , եթէ առաջարկութիւնն ըն-  
դունիս , ուրախութեամբ պիտի նում . կը  
յաւելում նաեւ թէ քու հաճութեանդ լու-  
րը երջանիկ պիտի ընէ ընդ քեզ նաեւ զնա-  
որ այս առաջարկութիւնն իմ բերնով կ'ընէ  
քեզ :

Ողջ լեր , դուստր իմ , և փութացուր որ-  
շափ հնար է պատասխանդ որում անձկանօք  
կը սպասէ

Խանդակաթ հօրեղբայր քո  
(թուական ) Ա. Ա.

122. Նկարագրութիւն Ճանապարհորդութեան :

Սիրելի ծնողք .

Յետ երեքամսեայ ճանապարհորդութեան  
հասայ ըիոյ ժանէիրոյ , հօրեղբօրս տունը .  
բայց գիտէք , սիրելի ծնողք , որ թէպէտ  
հիմա հանդարտ և երջանիկ եմ , նեղութիւ-  
նը զոր կրեցի ի ճանապարհին անհնարին էր ,  
և նաւագնացութիւնս լի գժուարին և աղե-  
տալի պատահարօք :

Ինչպէս գիտէք , նաւը մտանք Մայիսի  
լկին , և օդը որ հնդետասան աւուրց հետէ

շատ պարզ էր՝ կը խոստանար մեղ յաջող ճա-  
նապարհ։ բայց մեր նաւարկութեան հետեւ-  
եալ օրը հարաւային արեւելեան հով փը-  
չելով՝ չեղեցուց զմեղ յուղոյն։ Նաւապետն  
այր հմուտ և փորձ նաւարկութեան ար-  
ուեստին, և մանաւանդ, ինչպէս կ'ըսէին նա-  
ւաստիք, ովլիխանոսի, որդը ամէն հնարք խոր-  
հեցաւ մեր ապահովութեան համար։ Մերթ  
տեղի կու տար հողմոյն, մերթ կ'ընդդիմա-  
նար, յուսալով այսպէս յաղթել բռնու-  
թեան տարերն, և պրծել քանի մը օրուան  
յապաղմամբ կամ դոյլն վեսով միայն։ Բայց  
յետ սակաւ միոյ բրդաւ մրրիկ մը, ահարկու  
մրրիկ, քանզի մեր նաւը որ ամուր էր և պըն-  
դակաղմ՝ իրբեւ ընկուղի կեղեւ չկրցաւ դի-  
մանալ կատաղի ալեաց։ Բոլոր առադասու-  
ներն ամիտիուեցան, բաց ի միոջէ փոքրա-  
գունէն որ բաց մեաց պահելու համար նաւն  
ի հաւասարակշուութեան, միով բանիւ նա-  
ւավարութեան արուեստին բոլոր ճարտա-  
րութիւնը գրուեցաւ ի գործ, բայց ի զուր։  
Մեր կայմերը խորտակուելով տարուեցան ա-  
միքներէն մի առ մի։ նոյն արկածը կրեց նա-  
եւ մեր զեկը։ կոհակները, մէն մի իրբեւ ա-  
հագին լեառն, իւրաքանչիւր վայրկեան նա-  
ւն վրայ իյնալով՝ կ'աւէին ինչ որ կը գըտ-  
նէին տախտակամածին վրայ, մակոյի, մա-  
լուխ, չուան, կահ և կաղմած աղգի աղգի։

ինչ երկնյնեմ, մեր նաւն եղաւ իրուե-  
կոճղ ոստաքանց, զոր չէր հնար ուղղել այս  
կամ այն կողմ։ Այսպէս մեր փրկութիւնը  
կամ կորուստը նախախնամութեան ձեռքն  
էր։ Եթեք օրհասական եօթնեակ թափառե-  
ցանք այսպէս ովկիանու վրայ, խնայելով  
մեր պաշարը որ տակաւ կը նուազէր, այն-  
պէս որ երկրորդ մեծ հոգ այս էր մեզի հա-  
մար։ Դժբախտութեամբ բնաւ չպատահեցաւ  
նաւ մը որ մեղ օդնութեան համնէր։ անոնք  
որ հեռուն կը տենուէին՝ չէին կրնար նշմա-  
րել ոչ մեր կոճղացեալ նաւը, և ոչ նշան-  
ները զոր կու տայինք։ Վերջապէս Աստուած-  
լուաւ մեր աղօթքը, և օր մը այդուն ցամա-  
քը երեւցաւ մեղ արեւմտից կողմը։ այս ցա-  
մաքն էր Ամերիկայի մէջ Անդղիացւոց եր-  
րորդութեան կղզին։ Բարէ, սիրելի ծնողք,  
եթէ գիտնայիք, ինչ անպատում խնդու-  
թիւն կը զգայ նաւաստին, երբ, յետ անցու-  
ցանելոյ այնչափ օր ի մէջ կենաց և մահու,  
կը տեմնէ ցամաքը։ նաւաստոյն և բոլոր նա-  
ւորդաց ցնծութիւնը նկարագրել անհնար է։  
Ուրախութենէ մեռնելու մազ կը մնայ, երբ  
մարդ ոտքը խոտաւէտ և ծաղկալից հողին  
վրայ կը դնէ, հաստատուն հողին՝ որ կը փո-  
խանակէ ալեաց շարժուն երեսը։

Կղզին ուր ելանք, կամ, լաւ եւս ըսեմ,  
ուր հովը մեղ նետեց, ինչպէս ըսի, երրոր-

դութեան կղզին էր, Անդիլեանց հարաւա-  
յինը, գէմ յանդիման այն տեղւոյն ուր Օ-  
բենող գետ կը թափի ի ծով։ Այս կղզւոյն  
վրայ երկինք միշտ կապոյտ են, միշտ պարզ  
և գետինն այնպէս զուարթ և բերքի է, որ  
կղզին յերաւի կը կոչուի Դրախտ Անդիլեանց :

Երեք օր հոս մնացինք, մինչեւ որ սպա-  
նիացի առագաստանաւ մը գալով տարաւ ըզ-  
մեղ Ռիոյ Ճանէիրոյ, ուր եմ, քառասուն և  
ութ ժամ է, սքանչելի մօրեղբօրս տունը,  
գգուեալ և սիրեալ և երջանիկ։ Լսելով որ  
նաւ մը կար սլատրաստ Գաղիա երթալու և  
անկէ արեւելք, փութացայ գրել այս քա-  
նի մը տողը։ Թէ ինչպէս է Պրազիլիա, և ինչ-  
պէս եմ ես, առ այժմ բան մը չեմ կրնար ը-  
սել, քանզի գեռ բան մը չեմ գիտեր, և ոչ  
իսկ ուշաբերած եմ նաւարկութեան ահագին  
թմրութենէն :

Մնաք բարեաւ, սիրելի ծնողք. որչափ  
ուրախ եմ որ այն սոսկալի վտանգէն աղա-  
տեցայ, նոյնչափ տխուր եմ զի հեռու կը  
գտնուիմ ձենէ, թէպէտ, ինչպէս ըսի, անդ-  
րանիկ որդւոյ պէս եմ, գրգեալ և գգուեալ։

Կաղաչեմ, սիրելի հայր իմ, գրեցէք փու-  
թով, մի մոռնաք ձեր անձկայրեաց որդին :

(Թուական )

Ա. Ա.

## ԳԼՈՒԽ ԺԲ.

ՑՈՒՍԱԿՆԵՐ, ԱՅԼԵՒԱՅ, ԴԻՊԱՑ ԵՒ ԳՈՐԾԻ  
ՆԱՄԱԿՆԵՐ

ԴԻՑԱՂՈՒԹԻՒՆ

Տոմսակն համառօտ նամակէ որ կ'ուղղուի  
շատ ընտանի բարեկամներու և կամ առ  
ստորնագոյնս, բայց ոչ բարձր աստիճանի մար-  
դոց, և կը տարբերի բուն նամակէ այնու զի  
շատ համառօտ կը գրուի և սովորաբար յեր-  
բորդ գէմս, թէպէտ երբեմն կրնայ յառաջին  
գէմս գրուիկ։ Տոմսակներ կը զրկուին ընդ-  
հանրապէս հրաւիրանաց, ընծայի, ընտանե-  
կան դէպէք մը, զոր օրինակ ծնունդ, հարսա-  
նիք, մահ ծանուցանելու համար։ Տոմսակի  
մէջ թուականը վերը կը գրուի, և վերնա-  
գեր և ստորագրութիւն չի գրուիր, եթէ  
տոմսակն երբորդ գէմք գրուած է, որպէս  
մինի ըստ սովորութեան :

Այնայլ զիսպաց նամակներ կը գրուին աղգա-  
կանի կամ բարեկամի և կամ ու և իցէ ումեք  
յաջող կամ ձախող դէպէք մը ծանուցանելու  
համար, ինչպէս արկած մը, ամուսնութիւն,  
ծնունդ, հիւանդութիւն, մահ, այլովքն հան-  
գերձ։ Շատ անդամ հարկ կըլլայ այսպիսի  
նամակ մը գրել այնպիսի անձի ընդ որում

ընտանութիւն կամբարեկամութիւն չունինք.  
և անատեն պէտք է լոկ դէպ.քը պատմել  
կամ իմացնել. բայց եթէ ազգականի կամ  
մտերիմ բարեկամի և կամ մեզ վերաբերու-  
թիւն ունեցող անձի մը կը դրենք, կընանք  
դիմաց մանր պարագաներն եւս յայտնել.  
ընտանի անձինք ընդհանրապէս կամին պա-  
րագայիւք դիմանալ ինչ որ մեզ կը պատահի,  
շատ անդամ կը վշտանան իսկ, եթէ պարա-  
գաները կը ծածկենք կամ չենք յիշեր, զոր  
օրինակ երբ մէկուն կը ծանուցանենք անոր  
ազգականին մահը, այն մարդը կ'ուզէ որչափ  
հնար է անոր հիւանդութեան և մահուան  
մանր մանր գէպ.քն անդամ լսել, նա մանա-  
ւանդ կը մխիթարուի զանոնք դիմանալով:

Գործի նամակներն, որպիսի են հաշիւ ինդրե-  
լու, առնելիք պահանջելու, գործի կամ  
դժուարութեան վրայ առաջարկութիւն ընե-  
լու նամակներ, մի և նոյն բնութիւնն ունին,  
այսինքն ծանր նիւթերու վերաբերեալ են և  
պէտք է որ ծանրութեամբ գլուխն: Այս տե-  
սակ նամակներու մէջ, դարձուած, զարդ,  
զուարձաբանութիւն չի պահանջուիր, այլ  
յստակութիւն և պարզութիւն, և այն բանը  
միայն ըսել որ կարեւոր է. բայց ըսել չենք  
ուզեր թէ ոճոյ և վայելչութեան դէմ մե-  
զանչելու է. առանց վայելչութեան ոչ պար-  
զութիւն կայ և ոչ յստակութիւն: Գործոյ նա-

մակներու համար մանաւանդ առաւելագոյն  
փոյթ և զգուշութիւն կը պահանջուի. այսպի-  
սի նամակներ գրել գրեթէ դժուարին է քան  
ուրիշ տեսակ նամակներ գրել: եթէ ոք յըս-  
տակ և լուրջ միտք չունի, չի կրնար երբէք  
այսպիսի նամակներ գրելու մէջ յաջողիլ:



### ՕՐԻՆԱԿԻ ՏՈՄՍՈՎԱՅ

1. Հրաւեր ի ճաշ կամ ի հանդէս:

1.

24 Մարտ, 1881

Այս անուն Տէր և Տիկին յարդանօք ողջու-  
նելով զայս անուն Տէր և Տիկին կ'աղաշեն դնա  
հաճիլ գալ երկուշարթի միջօրէին ի միասին  
ճաշելու այս ինչ ժամուն:

2.

Այս անուն Տէր և Տիկին ողջունելով զՏէր  
և զՏիկին այս անուն՝ կը խնդրէ ամսոյս 7 ին,  
հինգշարթի օր, հաճիլ կէսօրուան ճաշին լի-  
նել սեղանակից: Հրաւերեալ են նաեւ Տէր  
այս անուն, Տէր այս անուն և Տիկին այս անուն հան-  
գերձ դստերբ իւրով այս անուն օրիորդաւ: Ճա-  
շը պատրաստ պիտի ըլլայ ճիշդ կէս օրին:

3.

Տէր և Տիկին այս անուն երեքշաբթի դիշեր  
երեկոյթ ունենալով ի պատիւ տօնի մօր իւր-  
եանց այս անուն Տիկնոջ, կ'աղաչեն զՏէր և զՏի-  
կին այս անուն հանդերձ բոլոր ընտանեօք,  
պատուել առաջիկայութեամբ իւրեանց այս  
ընտանեկան հանդէսն ուր բոլոր հրաւիրեալ-  
ները բարեկամներ են :

ՊԱ.ՏԱ.ՍԻԼ.Ն

1.

Տէր և Տիկին այս անուն սիրով և չնորհակա-  
լութեամբ կ'ընդունին այս անուն Տեառն և Տիկ-  
նոջ ճաշու հրաւէրը :

2.

Տէր կամ Տիկին այս անուն չնորհակալու-  
թեամբ կ'իմացունէ, այս անուն Տեառն կամ  
Տիկնոջ, որ ընդունած է հինգշաբթի աւուր  
կէսօրուան ճաշու հրաւէրն, ուստի և պիտի  
փութայ սահմանեալ ժամուն գտնուիլ:

3.

Տէր առ անուն՝ Տեառնէ և Տիկնոջէ ներում

խնդրելով կ'իմացնէ որ իւր Տիկնոջ խօթու-  
թեան պատճառաւ չի կրնար գտնուիլ երեք-  
շաբթի աւուր երեկութին :

~~~~~

2. Տոնակ ժամադրութեան :

1.

2 Յունիս, 1881

Տէր այս անուն կարեւոր գործի մը համար
իբր կէս ժամ ուղելով տեմնել զՏէր այս ա-
նուն կը խնդրէ թէ հնար է արդեօք վաղիւ
տեմնել զնա ի տան նորա (կամ այս ինչ տեղ)
առաւօտեան ութ և կէս ժամուն :

2.

Տէր կամ Տիկին այս անուն մեծ չնորհ.ք ը-
րած պիտի ըլլայ, եթէ կիրակի ժամը տասն
ու կէսին հաճի քանի մը բոպէ չնորհել այս
անուն Տեառն կամ Տիկնոջ որ կը փափաքի ան-
ձամբ գալ և խօսել առանձին այս ինչ գործոյ
վրայ :

3.

Տէր այս անուն երէկ մայրաքաղաքս հասած
ըլլալով կ'աղաչէ զՏէր այս անուն վաղիւ հինգ-

շարթի օր դալ տեսնել զնա թերա այս ինչ պահա-
գոկ, Ա. յարկ, թիւ Դ: կարեւոր լուրեր ու-
նի հաղորդել, և ներում կը խնդրէ անձամբ
չգալուն համար ի պատճառս անհանդսոսու-
թեան, որ թէեւ թեթեւ, պիտի չտայ թոյլ
քանի մը օր սենեկէն դուրս ելլեւ:

ՊԱՏԱՍԽԱՆ

Տէր այս անուն ներում խնդրելով այս անուն
Տեառնէ կիմացունէ որ, վաղիւ առաւօտուն
այս ինչ տեղ կամ այս անուն անձիս երթալ խոստա-
ցած է, ուստի և չի կրնար տեսնել զՏէր այս
անուն, բայց հետեւեալ օրը որ է ուրբաթ՝
պատրաստ է ընդունել զնա մինչեւ կէս օր,
օրուան որ ժամ և հաճոյ թուի այս անուն
Տեառն պատուել զնա իւրով այցելութեամբ:

Օրիսակ տոմսակի որ կը գրոի երբ տունը չի գտնուիր
անձ մը որուն այցելութիւն եղած է:

Տէր այս անուն կարեւոր գործի մը վրայ խօ-
սելու համար այսօր առաւօտեան ժամը 9 ին
այս անուն Տեառն այցելութիւն ընելով, դըժ-
բախտութեամբ չգտաւ զնա ի տան, ուստի
կիմացունէ որ այսօր ժամը երեկոյեան երեք
ու կէսին դարձեալ պիտի զ այ, և թէ շատ

շնորհակալ պիտի ըլլայ, եթէ յիշեալ ժամուն
տունը դանէ զնա. և եթէ Տէր այս անուն չի
կրնար վերոյիշեալ ժամուն տունը դանուիլ,
հաճի իմացնել թէ երբ կրնայ ընդունել ըլ
Տէր այս անուն :

~~*~~

3. Ա. յիւայլ նիժոց վրայ տոմսակներ :

1.

Տէր այս անուն շնորհակալութեամբ ետ կը
դարձունէ այս ինչ մատենին առաջին հատորը
զոր կարդալու համար փոխ առած էր այս ա-
նուն Տեառնէ, աղաչելով զրկել իրեն միւս
հատորը զոր կը խոստանայ դարձուցանել ընդ-
հուպ :

2.

Տէր և Տիկին այս անուն ողջունելով զՏէր
այս անուն կը խնդրեն իմացունել իրենց թէ
արդեօք յաջողութեամբ հասան իրենց տու-
նը, վասն զի ժամանակն անագան էր և օդն
աւրուած . ուստի յիշեալ Տէրն և Տիկին մեծ
անձկութեան մէջ են, և անյապաղ լուր կը
խնդրեն :

ՊԱՏԱՍԽԱՆ

Տէր և Տիկին այս անուն շնորհակալ են այս
անուն Տեառն և Տիկինով հոգ ընելուն համար,

և կը փութան իմացնել որ, թէպէտ ճամբան քիչ մը դժուարութիւն կրեցին, կառապանին անփորձ ըլլալուն համար, սակայն հասան անվաս իրենց տեղը :

3.

Տէր այս անուն իւր այդեստանին երախայրին կողով մը մշկահամ խաղող դրկելով առայս անուն Տիկին, կ'աղաչէ զնա ընդունել զայն և փութալ իմացունել իւր առողջութիւնը, մանաւանդ այս անուն օրիորդինը որուն համար ըսուեցաւ թէ տկար էր :

ՊԱՏԱՄԱՆ

Տիկին այս անուն սիրով ընդունելով այս անուն Տեառն խաղողը, կը փութայ իբրեւ նշան չնորհակալութեան առաքել առ նա երկու մեծ սրուակ իւր տան հին դինիէն, զոր Տիկին այս անուն ախորժելով կ'ըմպէ : Կ'իմացունէ նաեւ թէ ինք և օրիորդ այս անուն ողջ և առողջ են :

4. Այեւայլ ձեռագիտաց գրուելու տոմսակաց օրինակներ :

1.

Տէր այս անուն կ'աղաչէ զՏէր այս անուն դերակ վաղիւ առաւօտեան ութերորդ ժամուն հաճի գալ այս անուն Տեառն տունը՝ բերելով երկու զոյդ բեղոյդ սեաւ բարձր, և երկու զոյդ ցած գլխարկ ի թաւչէ : Կը խնդրուի որ գլխարկները նոր և արդի ճաշակին յարմար ըլլան :

գալ տուն, այս անուն Տեառն և նորա որդւոյն համար մէն մի վերարկուի և մի մի զոյդ անդրավարտեաց և բաճկոնի չափ առնելու, և կը խնդրուի որ սեւ քաշմիրի օրինակներ բերէ աղնիւ և միջին տեսակէն :

2.

Տէր այս անուն կօշկակարէն կը խնդրուի վաղիւ կէս օրէն ժամմ մը ետքը գալ ի տուն այս անուն Տեառն երկու զոյդ մուգաց, և վեց զոյդ հողաթափի չափ առնելու :

3.

Տէր այս անուն խոյրարար վաղիւ առաւօտեան ութերորդ ժամուն հաճի գալ այս անուն Տեառն տունը՝ բերելով երկու զոյդ բեղոյդ սեաւ բարձր, և երկու զոյդ ցած գլխարկ ի թաւչէ : Կը խնդրուի որ գլխարկները նոր և արդի ճաշակին յարմար ըլլան :



ԳԼՈՒԽ ԺԳ.

ՏԱՆՈՒՑԱԳԻՐ ԿԱՄ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ,
ՄԱՀ, ՄՆՄԴԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԻՄԱՑԵԵԼՈՒ ՀԱՄԱՐ

—

ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Հարսանիք կամ մահ, ինչպէս նաեւ կնոջ մը ծննդաբերութիւնը ծանուցանելու համար գորուած նամակներ շատերու կը զրկուին, այս պատճառաւ շրջաբերական կը կոչուին։ Ասոնք սովորութիւն է տպել տալ նամակի թուղթի վրայ։ Հարսանեաց շրջաբերականը կը դրուի յերրորդ դէմն հարսնացելոյն կամ փեսայցելոյն ծնողաց կողմանէ, եթէ ասոնք ողջ են։ ծննդաբերութեան շրջաբերականը նոյն պէս յերրորդ դէմն՝ ի դիմաց առն։ իսկ մահուան շրջաբերականը կը դրուի ննջեցելոյն բոլոր ընտանեաց կողմանէ, նշանակելով հանդուցելոյն տարիքը, մեռելոյն տունը, մահուան աւուր թուականը, և ժամը. և ապա թաղման օրը և ժամը։

Օրինակ

Տիկին այս անուն և մականուն, յանուն իւր և որդւոց, դստերաց և բոլոր ընտանեաց իւ-

րոց, մեծ տրտութամբ կը ծանուցանէ ազդականաց և բարեկամաց, որ իւր սիրելի ամուսինը

Տէր այս անուն և մականուն,

Յետ կարճատեւ կամ երկարատեւ հիւանդութեան (այս մասը կրնայ զանց առնուլ), (ոմանք կ'աւելցունեն նաեւ) ընդունելով եկեղեցւոյ խորհուրդները, հանդեաւ ի Տէր այսօր կամ երէկ, Մարտ 22, Հինգշաբթի, ի տան իւրում այս նու տեղ, գիշերուան չորրորդ ժամուն, ի հասակի 54 ամաց։

Ննջեցելոյն յուղարկաւորութիւնը և թաղումը պատուել կամեցողք կը հրաւիրուին ի տուն մեռելոյն այս ինչ թաղ, այս ինչ փողոց, թիւ այս ինչ։ Յետ կատարման սովորական արարողութեանց հանդուցելոյն մարմինը պիտի տարուի յեկեղեցի այս անուն, և անտի այս ինչ գերեզմանատուն յիւր հայրենական շիրիմ։

(Թոռական)

Ա. Ա.

Օրինակ շրջաբերականի հարսանեաց։

Այս ինչ թաղ, 2 Յունիս, 1881
Տէր.

Տէր և Տիկին այս անուն և մականուն ուրախութեամբ կը ծանուցանեն ձեզ իրենց սիրելի

Որդւոյն կամ Գյոտեր , Տեառն կամ Օրիորդի այս
անուն և մականուս ամուսնութիւնն ընդ այս անուն
և մականուն Օրիորդի կամ Տեառն , և կ'աղաչեն
զձեղ պատուել ներկայութեամբ ձերով հար-
սանեաց հանդէսը որ պիտի կատարուի ի տան
իւրեանց կամ յեկեղեցւոջ այս անուն , Յունիս 14,
Կիրակի օր այս ինչ ժամուն . կը փափաքին նաեւ
սեղանակից ունել զձեղ նոյն երեկոյին :

Ուրիշ օրինակ

Այս ինչ թաղ , 7 Յունիս 1881

Տէր կամ Տիկին .

Տէր և Տիկին այս անուն և մականուն կը հրա-
ւիրեն զձեղ և ձեր Տիկինը , կամ հանդերձ
ընտանեօք , ի հանդէս պսակի Որդւոյ կամ
Դատեր իւրեանց այս անուն և մականուն ընդ այս ա-
նուն և մականուն Օրիորդի կամ Տեառն :

Պսակի խորհուրդը պիտի կատարուի ա-
ռաջիկայ Կիւրակէ Յունիս 22, Երեկոյեան այս
ինչ ժամուն յեկեղեցւոջ այս անուն թաղ , կամ
ի տան իւրեանց թաղ , փողոց և թիւ այս ա-
նուն : կը փափաքին նաեւ որ պատուէք ձե-
րով առաջիկայութեամբ հարսանեաց ճաշը
նոյն երեկոյին :

Երջաբերական ծննդաբերութիւն ծանուցանելու :

1.

Այս ինչ տեղ , 10 Մեպտ . 1881

Տէր կամ Տիկին .

Տիկին այս անուն և մականուն յաջողութեամբ
աշխարհ բերաւ ուստր մի երէկ , Ապրիլ 15 ,
Երեկոյեան ժամը 11 ին : Մայրն և մանուկը
ողջ և առողջ են : Տէր այս անուն և մականուն ու-
րախութեամբ կը հաղորդէ ձեղ այս լուրը :

2.

Այս ինչ թաղ , 21 Դեկտ . 1880

Տէր .

Տէր այս անուն և մականուն ուրախութեամբ կը
ծանուցանէ ձեղ որ ամուսին իւր Տիկին այս
անուն և մականուն յաջողութեամբ ծնաւ այսօր ,
Դեկտ . 21, առաւօտեան չորրորդ ժամուն
ուստր կամ դուստր մի : Մայրն և մանկիկը ողջ
և առողջ են :



ԳԼՈՒԽ ԺԴ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ԱՅԼԵՒԱՅԼ ՆԱՄԱԿՆԵՐ

Որդւոյ մը նամակն առ հայր իւր իմացնելու անոր
զամնութելութիւն իւր:

Սիրելի հայր իմ.

Ամուսնութիւնս ընդ այս անոն և մականոն օ-
րիորդի կատարուեցաւ այսօր կիրակի, Ապ-
րիլ 27: Եկեղեցիէն ելլելով կը փութամ ահա
ձեր պատուէքին համեմատ իմացունել ձեզ
այս լուրը որ ինձ համար կարեւոր է: Հիմա
ուրիշ բան չի պակսիր ինձ բայց ձեր առաջի-
կայութիւնը որ շատ հարկաւոր է: Ներեցէք
որ չեմ կարող գրել ձեզ այսօր երկար. քանի
մը օր ետքը կը յուսամ տալ ձեզ մանը տե-
ղեկութիւն հարսանեացս վրայ: Կինս կը թուի
դոհ:

Ողջ լերուք, սիրելի հայր, կը համբուրեմ
զձեզ բոլոր որտով:

Հնազանդ որդի ձեր
Ա. Ա.

Նամակ սանտուի քով գտնուած մանկան մահն իմացնելու :

Տէր և Տիկին .

Շատ տխուր լուր մը պիտի տամ ձեզ, և
գիտնալով որ այս լուրն այնչափ պիտի վշտա-
ցունէ զձեզ որչափ զիս վշտացոյց, մեծ վա-
րանման մէջ եմ, և չեմ գիտեր թէ ինչպէս
համարձակիմ ըսել: Չեր թշուառ մանկիկը
մեռաւ յետ քսան և չորեքժամեայ հիւան-
դութեան: Ոչ իմ խնամքս և ոչ բժշկաց օգ-
նութիւնը կըցան նպաստել ախտացելոյն, թէ-
պէտ ամենեւին բան մը զանց չառնուեցաւ
հիւանդութեան սկիզբէն: Արդարեւ առաջ
այնչափ ծանր չթուեցաւ ախտը, բայց ա-
րագ արագ ծանրանալով շուտով իմացուց
թէ մահացու էր: Ըստ բանի բժշկին՝ ուղղոյ
հիւանդութիւն էր: Այլոս մեռելին համար
պէտք եղածը պիտի ընէ. եթէ հրաման մը
ունիք շուտով հաղորդեցէք հեռագրով: ի-
մացուցէք նաեւ թէ ինչ ընելու եմ տղուն
վերաբերեալ հանդերձ և կարասի:

Խոնարհ աղախին ձեր

(Թագավորական)

Ա. Ա.

Սանտուի մը յանդիմանութիւն :

Սանտու .

Ինծի տրուած տեղեկութեանց նայելով՝
անփոյթ ես մանկիկս հոգալու : Շատ դժգոհ
եմ քենէ, և կ'իմացնեմ քեզ որ ստնտուի մը
պարտականութիւնն այս չէ : Կը լսեմ թէ շատ
անդամ մինակ թողլով տղան կ'երթաս զրօս-
նուլ կամ դրացեաց հետ շաղփաղիկել, թէ
շատ կ'աշխատիս, այնպէս որ կաթդ կը ջեռ-
նու, թէ խլւան անդամ կը խնայես, մինչեւ
սոէպ անօթի մնալ տղուն . վերջապէս ան-
փոյթ ես նաեւ տղուն մաքրութեան որ շատ
հարկաւոր է տղայոց, մանաւանդ այն հասա-
կին մէջ :

Ասոնք լսելով մեծ վարանման մէջ եմ, և
միտք ունիմ գալ անձամբ ստուգել : Եթէ
ճիշդ են ըսուածները, քենէ պիտի առնում
մանկիկը, և գանդատներս պիտի ընեմ որու
որ անկ է : Կ'ողջունեմ դքեզ :

(Թուական)

Ա. Ա.

~~~

Այս նամակին պատասխան :

Տիկին .

Խոր տրտմութեան մէջ ընկղմեց զիս նա-  
մակ ձեր : Եթէ միսիթարութիւն մը կայ, սա

է, որ կը խոստանաք գալ անձամբ ստուգել  
ըսուածները : Որչափ հնար է փութացէք գալ,  
Տիկին, շատ շնորհակալ պիտի ըլլամ, քանզի  
մանկիկը տեսնելով իսկոյն պիտի հասկնաք  
թէ ըսուածներն սուտ և զրպարտութիւն են:  
Եթէ երբեմն կը ստիպուիմ դուրս երել, թէ-  
եւ դուն ուրեք կը պատահի, տղան երբեք  
մինակ չի մնար . միթէ այնչափ անմիտ եմ որ  
կաթնկեր տղայ մը մինակ կամ փոքրիկ տը-  
ղոց հետ տունը թողում: Միշտ խոհեմ բա-  
րեկամի կը յանձնեմ, և եթէ շատ մօտ տեղ  
կ'երթամ, կը յանձնեմ երեց դստերս որ ար-  
դէն երկոտասանամեայ է և շատ հանձարեղ:  
Տղուն դիրութիւնը և պայծառ դոյնը բաւա-  
կան են ցուցնելու թէ ոչ կաթս ջերմութիւն  
ունի, և ոչ երբէք անօթի մնացած է տղան:  
Խոկ տղան մաքրուր պահելուս ուրիշ ապացոյց  
չեմ կրնար տալ բայց եթէ տանս և զաւկը-  
ներուս մաքրութիւնը : Այս, աղքատ եմ,  
Տիկին, բայց չեմ այն կիներէն որ չքաւորու-  
թիւնը բարուր ընելով կը ծխրին աղտեղու-  
թեան մէջ, բոլոր օրը պղերգութեամբ դը-  
րացեաց դուռներն անցունելով: Մնալով ձեր  
գալստեան, Տիկին, կը խոստովանիմ զիս ձեզ  
խոնարհ աղախին

(Թուական)

Ա. Ա.

~~~

Նամակ գրեալ առ աղջական ոմն կամ բարեկամ խընդ-
բելու համար որ կնքահայր ըլլայ :

Սիրելի հօրեղբօրորդիս .

Կինս ի մօտոց որդի մը պիտի ծնանի , ուս-
տի կը խնդրեմ ի ձէնջ , յանուն իմ և նորա ,
ձեր բարեկամութեան նոր ապացոյցը , այն
է հաճել լինել կնքահայր ծնանելի ման-
կան : Շատ բարերախտ պիտի համարինք ըզ
մեղ , եթէ ընդունիք մեր առաջարկութիւնը
մանաւանդ որ քան զօրինակ ձեր աւելի ըն-
տիր օրինակ վարուց չենք կրնար մատուցա-
նել մեր զաւկին , և ոչ քան զձեղ աւելի
սերտ բարեկամ և բարերար ունինք որում
ընենք այս առաջարկութիւնը :

Ծնկալարուք , սիրելի հօրեղբօրորդիս իմ ,
խորհակալութիւնս :

Ձեր հօրեղբօրորդին

Ա. Ա.



ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ

Սիրելի հօրեղբօրորդիս .

Ենորհակալ եմ որ խորհեցաք աղաշել զիս
լինել կնքահայր ձեր որդեկին : Սիրով կ'ըն-
դունիմ զձեր առաջարկութիւն , և եթէ , զոր
Աստուած մի արացէ , ձեր մանկիկն օր մը

պէտք ունենայ ուրիշ խնամածուի բաց իւր
հօրմէն , վստահ լերուք որ պիտի գտնէ զիս
պատրաստ ամէն օգնութիւն մատուցանե-
լու նմա , թէպէտ միշտ յօժար պիտի ըլ-
լամ սիրել և հոգալ զնա իրբեւ զիմ որդեակ :
Գիտելով սէրս որ առ ձեղ՝ կրնաք հաւատալ
թէ անկեղծ կը խօսիմ : Ողջ լեր , սիրելիս :

Հօրեղբօրորդի քո

Ա. Ա.



ԲԱՑԱՍԽԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Սիրելի հօրեղբօրորդիս .

Հաճութեամբ կ'ընդունէի զառաջարկու-
թիւն ձեր՝ լինել կնքահայր ձեր որդեկին , բայց
զայս ծառայութիւն ցարդ շատերու ըրած-
եմ , և որոշած եմ այլ եւս չընդունել այսպի-
սի առաջարկութիւն . և որովհետեւ ոչ սա-
կաւ ազգականաց և բարեկամաց զլացայ ,
չեմ կրնար ընդունել զձերն՝ առանց ի խոր
խոցելոյ զնոսա : Այս է միմիայն պատճառ ,
սիրելի հօրեղբօրորդիս , որ հարկ ի վերայ կը
դնէ ինձ զայս բացասական պատասխան տալ
ձեղ : Կշռերով այս պարագան , կը յուսամ թէ
իրաւունք պիտի տաք ինձ , հաւատալով զիս
ձեր միշտ

Հաւատարիմ հօրեղբօրորդին

Ա. Ա.



Նամակ՝ ստուգի մը քով գտնուած մանկան հիւան-
դութիւնը ժանուցանելու :

Տէր և Տիկին .

Չեր մանկիկն հիւանդէ քանի մը օր կայ ,
և ես ամէն խնամ տանելով կը տեսնեմ որ
տղան օր քան զօր կը ծանրանայ : Երէկ կան-
չեցի բժիշկը , որ բաւական երկիւղ տուաւ
ինձ : Տղան գժուարաւ ծիծ կ'առնու , և կու
լսյ անդադար : Գիտցէք , Տէր և Տիկին , որ
գիշեր ցորեկ արթուն և մոտղիր եմ , և ան-
հընար պիտի ըլլայ ինձ միխթարուիլ , եթէ
դժբախտաբար կորսնցնեմ տղայ մը զոր կը
սիրեմ իբրեւ զմին յիմնցո , չըսեմ թէ աւե-
լի քան զնոսա : Այսուհետեւ կ'իմացունեմ
ձեղ ինչ փոփոխութիւն որ պատահի յընթացս
հիւանդութեան իլաւն կամ ի յոռին . իսկ
եթէ չգրեմ , գիտցէք որ փոփոխութիւն
եղած չէ :

Խոնարհ աղախին ձեր

Ա. Ա.



Նամակ՝ իմացնելու համար թէ տղան վտանգէ աղատած է :

Տէր և Տիկին .

Տղուն առողջութիւնը երէկուընէ հետէ
լաւադոյն է . բժիշկը քիչ մը առաջ հոս էր ,
խնամով քննեց հիւանդը , և ըստ թէ , եթէ

անակնկալ դէպք մը չպատահի , մանկիկը
զերծ է արդ վտանգէ : Ուստի փութացայ
հաղորդել ձեղ այս լուրը : Տղան հիմա զուար-
թագոյն է , կը սկսի դիել , դոյնը կու գայ , կը
քնանայ , և կրնանք վտահիլ թէ անդուլ
խնամօքս ընդ հուպ պիտի դտնէ մանկիկն
զիւր առաջին առողջութիւն : Շատ աղաչեցի
զԱստուած , որ ողորմելով ինձ պահեց ման-
կիկը զրբ կը սիրեմ իբրեւ զիմն :

Եմ , Տէր և Տիկին ,

Խոնարհ աղախին ձեր

(Թուական)

Ա. Ա.



Նամակ՝ ստուգի մը վրայ տեղեկութիւն իմսղելու :

Տէր .

Թէպէտ զձեղ անձամբ ճանաչելոյ պա-
տիւն ունեցած չեմ , գիտելով սակայն ձեր բա-
րութիւնը՝ չեմ վարանիր աղաչել զձեղ տե-
ղեկութիւն տալ ինձ այս անոն կնոջ վրայ որ
ձեր գիւղը կը բնակի , և եկաւ խնդրել յե-
նէն յանձնել նմա դիեցունել նորածին ման-
կիկս : Կը ցանկամ գիտել միայն թէ արդեօք
այս կինը պարկեշտ և տնաշէն է , և ձեռըն-
հաս ըստ արժանւոյն հոգալու մանկիկս : Զեր
խորհուրդը չառած կնոջը հետ պայման ընել
չեմ ուզեր ստնտուութեան համար , և որով-

Հետեւ գիտեմ թէ անհամբերութեամբ կը
սպասէ պատասխանւոյ , եթէ հնար է , փու-
թացէք դրել առանց երկար յապաղելոյ , և
շատ շնորհակալ պիտի ըլլամ , Տէր , խոստո-
վանելով զիս հաւատարիմ ձեզ :

(Թուական)

Ա. Ա.

Մայր մը կ'իմացնէ որդւոյն թէ հայր նորա ծանր հիւանդ է :

Սիրելի որդեակ .

Վեց օր է որ հօրդ կուրծքին իջաւ , և
ըստ բանի բժշկին , տակաւ կը ծանրանայ
ախտն , և շատ քիչ յոյս կայ : Հիւանդն զգա-
լով թէ պիտի չկրնայ ազատիլ , կը ցանկայ
տեսնել զքեզ : Եթէ կը ցանկաս ընդունել
հօրդ վերջին օրհնութիւնը , և միմիթարել
զիս անոր կորսուեան վրայ , մի յապաղեր
գալ : Աստուած միայն , սիրելի որդեակ , կա-
րող է դարձուցանել մեր դլխէն այս չարիքը .
ապա աղաչէ զնա , ինչպէս որ ես կ'ընեմ ա-
մէն օր , թերեւս Ամենակալն ողորմելով շնոր-
հէ մեզ թշուառ հայրդ . շատ կը խորհիմ թէ
ինչ պիտի լինի վիճակ մեր , եթէ այս սիրե-
լի հիւանդ մենէ յափշտակուի : Աճապարէ ,
որդեակ իմ , և փոյթ տար չյամել վերջին
ողջնդ և համբոյրդ տալ սիրելի հօրդ :

Խանդակաթ մայր քո

(Թուական)

Ա. Ա.

Նամակ՝ հօր մը մահ ն իմացնելու որդւոյն :

Սիրելի որդեակ .

Զարիք մը հասաւ մեր վրայ՝ անակնկալ :
Հայրդ որ դեռ այս առաւաօտ ողջ և առողջ
էր՝ ժամ մը կայ որ զոհ եղաւ կաթուածի մը
հարուածոյն յանկարծ , որպէս թէ շանթա-
հար , այնպէս որ ամէն դարման անօդուտ
եղաւ : Սոսկալի արկած է այս զոր Աստուած
զրկեց մեզ , սիրելի որդեակ . պարտինք համ-
բերել քաջութեամբ և գիտել հնազանդել
վճռոց Ամենակալին , թէպէտ և ծանր է հար-
ուածն : Կը սպասեմ գալստեանդ երկաթուղ-
ւով , որպէս զի կարենաս հատուցանել վեր-
ջին պարտիքդ այնպէս բարի և բարերար հօր ,
որ ոչ այլ ինչ կը խորհէր բայց զերջանկու-
թիւն քո և մեր , և որ յամենայն կեանս իւր աշ-
խատեցաւ թողուլ մեզ գիւրաւ ապրելոյ միջոց :
Պահենք զյիշտակ նորա , սիրելի որդեակ , և
ջանանք երկոքին արժանանալ գովեստից նո-
րա , երբ օր մը միանանք ընդ նմա ի յաւի-
տենականութեան : Ողջ լեր , որդեակ իմ ,
եղբայր քո և քորք համբուրեն երկու աշ-
կունքդ :

Գալստեանդ անձկանօք սպասող մայր քո
(Թուական)

Ա. Ա.



Այր ոմն ծանուցանէ իւր կոտջ մահս հօր իւրում:

Սիրելի հայր իմ.

Մեծ ցաւով կիմացնեմ քեզ կնոջս մահը:
Մեռաւ նա այս առաւօտ, հինդերորդ ժամոն, յետ երկար և ցաւագին հիւանդութեան, դժկամակելով թողուլ այս կեանքը, ոչ թէ իրեն, այլ ինձ և իւր որբերուն համար: Դուք, սիրելի հայր, դուք որ քաջ դիտէք այս սքանչելի կինը՝ կինաք հասկնալ ցաւոյս սաստկութիւնը, և թէ ինչ մեծ կոռուստ ըրինք ես և որդիքս: Առաջին աստիճանի դժբախտութիւն է այս վասն իմ, և բոլորովին ի կոր կը կործանէ զիս: Եթէ առաջի աչաց չունենայի տղայքս որոց սպառըսպուռ նուիրեալ պիտի ըլլայ այսուհետեւ կեանքս, անհնար էր ինձ մնալ կենդանի:

Ողջ լերուք, սիրելի հայր իմ, միշտ ձեր միխթարութեան և խրատուն կարօտ որդիձեր

(Թագավորական)

Ա. Ա. .

Հայր ոմն իւր որդւոյն մահը կը ծանուցանէ միւս որդւոյն:

Սիրելի որդեակակ.

Կը փութամ տալ քեզ ցաւագին լուր մը որ կը տիսրեցնէ ծերութիւնս, և եւս քան

զեւս ցանկալ կու տայ ինձ վախճանի կենացս որոյ իւրաքանչիւր օր, կրնամ ըսել, նշանաւոր եղաւ ցաւով կամ դժբախտութեամբ իւփիք: Թշուառ եղբայրդ ննջեց բազկացս մէջ յետ կարճ բայց ցաւագին հիւանդութեան: Կենաց մինչեւ վերջին վայրկեանը խելքը վըրան էր, ցաւելով որ չկրցաւ տալ քեզ զիւր վերջին ողջոյն լաւագոյն կեանք մը երթալու համար: Ահա մնացի մինակ, քու հեռաւութիւնդ կը զրկէ զիս օգնութենէն որում կարօտ եմ մանաւանդ հիմա: Կը սպասեմ որ դաս օգնել ինձ մեր վերջին պարտիքն հատուցաներու այնմ որ այնչափ կը սիրէր զմեզ և նուիրեց զիւր մանկութիւն առ ի քաղցրացուցանել ծերութեանս օրերը: Նախախնամութիւնն պարտէր կոչել ոչ զնա, այլ զիս որոյ կենաց ընթացքն հասած է ի կատարած: Մինչդեռ հիւանդ էր հանգուցեալն, քանիցս անդամ խնդրեցի յԱստուծոյ թողուլ զնա կենդանի և փոխանակ նորա կոչել զիս առ իւր, այլ, բարէ, շառեցաւ աղօթքս:

Ողջ լեր, որդեակալ իմ, և լեր երջանիկ քան զիս:

Խանդակաթ հայր քո

(Թագավորական)

Ա. Ա. .

Փոքրիկ տղաւ մը մահը կը ծանուցուի :

Սիրելի բարեկամ.

Աւազ, կորուսի փոքրիկ Սանդիկս յետ
չորեքօրեայ հիւանդութեան : Բժշկական առ-
ուեստին յարատեւ խնամք և նպաստներն
անօգուտ եղան . այսօր երեկոյին մեռաւ
դատրիկս, սիրուն որդեակս, ի բորբոքմանէ
աղեաց : Մայրն անհնարին թախծութեան
մէջ է, այնպէս որ կը վախնամ թէ հիւան-
դութիւն դայ վրան : Ննջեցեալ մանկան յու-
ղարկաւորութիւնը պիտի ըլլայ վաղիւ առա-
ւոտեան տասներորդ ժամուն . եթէ կրնաս
մեղի մօտ դտնուիլ այն դժուարին ժամե-
րուն, չնորհակալ կ'ընես զմեղ :

Ողջ լեր, սիրելի բարեկամ, և հաւատա-
որ եմ

Հաւատարիմ բարեկամ քո

(Թուանիան)

Ա. Ա.

Մոտաւոր ազգականի մը մահը կը ծանուցուի :

Սիրելի որդեակ .

Հօրեղբայրդ մեռաւ այսօր առաւօտուն
յետ երկար և դժուարատար հիւանդու-
թեան : Յուղարկաւորութիւնը պիտի կատա-
րի յետ վաղուին, առաւօտեան տասներորդ
ժամուն : Վասն սիրոյ և խնամոց ննջեցելոյն

որ առ քեզ՝ պարտիս յուղարկել զնա ի վեր-
ջին բնակարան իւր և աղօթել վասն նորա,
ուստի կը սպասեմ զքեզ ընդ հուպ :

Գիտես որ հօրեղբայրդ ժառանդ որդի
չունի և ոչ դուստր, բայց չես գիտեր թէ
նա իւր սակաւ ստացուածոց մէկ մասը թո-
ղուց մեղ կտակաւ, և քեզ առանձինն, իբ-
րեւ յիշատակ, զիւր ոսկի ժամացոյց՝ զո՞ր
կըեց ի կենդանութեան իւրում :

Փութալով դալ առ մեղ, ընկալ խանդա-
կաթ ողջոյնս :

Հայր քո

Ա. Ա.

(Թուանիան)



ԳԼՈՒԽ ԺԴ.

ԳՈՐԾԻ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Առնելիք կը պահանջուի :

(թուական)

բարեկամ.

Շատ գոհ պիտի ընէք զիս, եթէ կարող
էք այս ամիս հատուցանել 40 ֆրանքը զոր
պարտիք ինձ. բաւական մեծ դումար մի ու-
նիմ հատուցանել ի մօտոյ, և թէպէտ այս
դումար զոր կը պահանջեմ ձենէ՝ փոքր ինչ
է, շատ հաճելի պիտի ըլլայ ինձ սակայն ըն-
դունել զայն, և արդէն վստահ եմ թէ պի-
տի ընէք ինչ որ ի կարի ձերում է յիշեալ
դումարն հասցունելու համար ի ձեռս իմ :

Հաւատարիմ բարեկամ ձեր

Ա. Ա.

~~~

Նոյն սիմթին վրայ այլ նամակ :

(թուական)

Տէր .

Գիտէք, կարծեմ, թէ պարտիք ինձ 500  
ֆրանք, և թէ մեծ հրդեհի ժամանակէն  
հետէ շատ նեղութեան մէջ գտնուելով պէտո

ունիմ այն ստակին, զոր և քանիցս աղաչե-  
լով ինդրեցի ձենէ : Դարձեալ կը ինդրեմ  
հատուցանել ինձ յիշեալ դումարն մինչեւ  
հնդետասան օր : Կը ստիպուիմ ակամայ ըսել  
ձեզ, Տէր, թէ, ի լրանալ այսր պայմանաժա-  
մու, եթէ շվճարէք, հարկ պիտի ըլլայ ինձ  
դատաստանաւ պահանջել ձենէ զայն :

Ընկալարուք, Տէր, ողջոյնս :

Հաւատարիմ ձեր

Ա. Ա.

~~~

Սամկութեան հաշուետեսէ (սիստիք) մը տեղեկութիւն
կը խալքուի :

(թուական)

Տէր .

Մին եմ ի պարտատեարց այս անուն մնան-
կացելոյն որոյ, ինչպէս կը լսեմ, հաշուետես
կարգուած էք դուք : Անտարակոյս գիտէք
հիմա մնանկացելոյն առնիքն ու տալիքը,
ուստի և կրնաք ճանչնալ հաւանականապէս
թէ որչափ ինչ մասն պիտի կինայ իւրաքան-
չիւր պարտատեառն : Շատ չնորհակալ պիտի
ըլլամ ձեզ, Տէր, եթէ հաճիք իմացունել
ինձ զայս, միանգամայն ըսել թէ երբ պիտի
սկսիք բաժնել մնանկացելոյն գոյքը որ մաս
ցած է պարտատեարց համար :

ЧИТАЛИЩЕ
„КРАСИРА“

Կը սպասեմ, Տէր, ձեր կողմանէ արագ և
որոշ պատասխանւոյ, խնդրելով որ ընդունիք
զյարդանս իմ:

Հաւատարիմ բարեկամ ձեր

Ա. Ա.



Աւագերէցէ մը մկրտութեան վկայական կը խնդրուի:

(Թուական)

Տէր Աւագերէց.

Որդիս, վարդան Մանկեան, որ 1851 ին
ապրիլ ամսուն մկրտուած է ձեր եկեղեցին,
պիտի ամուսնանայ ի մօտոյ: Նօտարն որ ա-
մուսնութեան պայմանագիրը պիտի խմբա-
գրէ՝ կը պահանջէ զվկայագիր մկրտութեան
նորա ստորագրութեամբ ձերով վաւերացեալ,
ուստի կ'ազաշեմ, տէր Հայր, չնորհք ընէք հա-
նել մկրտութեան դիւանագրէն մեր վարդա-
նայ մկրտութեան արձանագիրն, և վաւե-
րացնելով զրկել մեղ:

Եմ յարդանօք, տէր Աւագերէց,

Խոնարհ և հնազանդ ծառայ ձեր

Ա. Ա.



Թաղական խորհրդոյ անդամէ տեղեկութիւն կը խնդրուի
անձի մը վրայ:

(Թուական)

Տէր.

Աւագ Աւագեան, արուեստիւ կարուակ,
1868 ին կը բնակէր ձեր թաղը: Բարձրահա-
սակ, հաստաբազուկ, կարմրայտ, արդ իրը
երեսունեւհինդամենի: Ժառանգութիւն մը
բացուած է, յորում յիշեալ անձն ունի քա-
ռորդ բաժին, բայց անոր բնակութեան տե-
ղը ծանօթ չէ: Ուստի կը խնդրուի ձենէ,
Տէր, որ տեղեկանալով իմացունէք ինձ թէ
Աւագ Աւագեան անուն անձը տակաւին ձեր
թաղին մէջ կը բնակի, և եթէ ելած է անտի,
ուր գացած է բնակել: Գիտնալով թէ այս-
պիսի բարեսիրական աշխատութենէ չէք փախ-
չիր, համարձակեցայ գրել ձեզ զայս նամակ,
որոյ պատասխանւոյն սպասելով կը խոստո-
վանիմ զիս

Մտերիմ ձեզ

Ա. Ա.



Ազգային հիւանդանոցի մնօրէնէ չնա ըսդունուած անձի
մը վրայ տեղեկութիւն կը խնդրուի :

(Թագավորական)

Տէր .

Մեր դայեկին տագերորդին Մարդար
Պետեան , դործաւոր կահագործ (մարանկօղ) ,
որ Սեւեան Ցեառն Որդկան քով կ'աշխատէր
հոս մեր քաղաքը , անցեալ մարտի 22 ին
զրկուեցաւ ազգ ային հիւանդանոց : Թուա-
կան վերջին նամակին զոր դրած է առ ըն-
տանիս իւր՝ է 7 Յունիս 1880 , և այս թուա-
կանէ հետէ լուր ընդունուած չէ ոչ հիւան-
դին և ոչ յայրէ : Վստահելով ձեր բարու-
թեան վրայ կը խնդրեմ , Տէր , խմացնել ինձ
թէ արդեօք այս երիտասարդն բժշկուելով
ելաւ հիւանդանոցէն , թէ մեռած է : Ծնտա-
նիքն որ ի մեծ հոգս է զնմանէ , չնորհա-
կալ պիտի ըլլայ ձեզ , Եթէ հաճիք հարկա-
ւոր տեղեկութիւնը տալ այս դժբախտ ան-
ձին վրայ : Ես եւս ընդ նոսա չնորհակալու-
թեամբ կը խոստովանիմ լինել

Խոնարհ ծառայ ձեր

Ա. Ա.

Վէճ ունեցող անձ մի կ'առաջարկէ իւր հակառակորդին
յանձնել դժուարութեան լուծումն իրաւարարի :

(Թագավորական)

Տէր .

Ինչպէս դիտէք , ի մէջ իմ և ձեր դժուա-
րութիւն ծագած է հաշուի մը պատճա-
ռաւ . երկոքին միաբան չենք քանի մը յօդ-
ուածներու վրայ : Եթէ երթանք ի դատ , բաց
ի ժամանակի կորստենէ , երկոքին եւս բաւա-
կան ծախք պիտի ընենք , մեր բարեկամա-
կան յարաբերութիւնը պիտի դադրի , և թե-
րեւս թշնամի պիտի ըլլանք իրարու : Խորհե-
ցայ որ , Եթէ կը հաճիք , մեր վէճը յանձ-
նենք բարեկամաց ոմանց որոշման , և ընդու-
նինք ինչ որ վճռեն նոքա : Եթէ առաջար-
կութիւնս ընդունելի է ձեզ , գրով իմացու-
ցէք ինձ մինչեւ ութ օր , և ժամադիր ըլլանք
ի մի վայր գալով վստահութեան արժանի մի
կամ երկու անձ ընտրենք իրաւարար :

Հաճեցէք , Տէր , ընդունել զյարդանս զոր
ունիմ առ ձեզ իրբեւ վաղեմի բարեկամ ձեր :

Ա. Ա.

Վերի նամակին պատասխան :

(Թուական)

Տէր .

Ես եւս իրեւ զձեղ կը փափաքիմ առանց դատի վերջացնել դժուարութիւնը որ կայ ի մէջ մեր . ուստի կ'ընդունեմ զառաջարկութիւն ձեր և յանձնել մեր խնդիրն իրաւաբարի :

Եթէ կը հաճիք դալ առ իս այս ինչ օր , ընտրենք երկու անձ , և թուղթ մը ստորագրենք որով երկոքին խոստանանք ընդունել առանց բողոքոյ ինչ որ որոշեն իրաւաբարք մեր : Եթէ երկու իրաւաբարք անմիաբան դանուին խնդրոյն որոշման վրայ , արտօնութիւն ունենան երրորդ մը ընտրել որ վերջին վճիռը տայ :

Ընկալալուք , Տէր , ողջոյնս , և հաւատացէք զիս ձեղ մտերիմ բարեկամ :

Ա. Ա.



Խրաւախոչ ըլլալու առաջարկութիւն :

Տէր .

Կը փափաքիմ իրաւախոհ լինել ընդ ձեղ ի դատին որ սկսած է ի մէջ իմ և ձեր , մի գուցէ ծանր ծախսք վրայ գալով անհնար ընեն իրաւախոհութեան ամէն միջոց : Ատելի է ինձ

ամէն դատ , և կ'ուզեմ զապացոյց սորին տալ ձեղ առաջարկութիւն մը ընելով որ , կարծեմ , ընդունելի պիտի ըլլայ ձեղ եւս :

Ի մէջ իմ և ձեր կալուածոց ի վաղուց հետէ անդորձ մնացած քանի մը արտավար հողի համար է դժուարութիւն մեր : Երկոքին կը պիտենք թէ մերն է հողը որ չարժեր աւելի քան հարիւր ֆրանք : Զիջանել իրարու անպատութիւն կը համարենք մեղ՝ երկոքինս իւր համարելով իրաւունքը : Բայց ոչ ապաքէն իմաստութեամբ վարուած պիտի ըլլանք , եթէ երկու բաժնելով երկերը որ առիթ եղած է վէճի , կէսը ես առնում և կէսը դուք , և ծախսք նոյնպէս կէս ընենք : Այս է , Տէր , առաջարկութիւնս , և վսահ եմ որ եթէ այս խորհուրդն ընդունուի երկուատեք , մեր բարեկամութիւնը պիտի տեւէ , և թերեւս աւելի պիտի պնդի , և խելօք վարուած պիտի ըլլանք , տեղի չտալով օտարաց ծաղրել ըզ մեղ իրեւ անմիտ և յամա :

Կը սպասեմ ձեր պատասխանւոյ մինչեւ ութ օր նամակիս թուականէն հաշուելով :

Ընկալալուք , Տէր , խորին մեծարանքս , հաւատալով զիս

Մտերիմ բարեկամ ձեղ

(Թուական)

Ա. Ա.

~~~~~

Պատասխանի նախընթաց նամակներ :

(Թուական)

Տէր .

Կ'առաջարկէք ինձ երկու հաւասար բաժին ընել այս ինչ տեղւոյ հողը որոյ վասն վէճ կայ ի մէջ երկոցունցս թէ որու կը վերաբերի այն արտը . կ'ուզէք նաեւ ծախքը որ եղաւ մինչեւ հիմա՝ երկուստէք կէս առ կէս հատուցանել : Այսպիսի խաղաղական միջոց ընդունել չեմ կրնար մերժել , քանզի ես եւս , ինչպէս գիտէք , դատի բարեկամ չեմ : Ապա կ'ընդունեմ զառաջարկութիւն ձեր , և կ'ուզեմ իրաւախոհութեան գիր մը ընել որոյ օրինակը կը դրկեմ ձեզ որ տեսնէք և խորհիք , և եթէ դիտողութիւն ունիք , կրնաք ընել , որպէս զի խորհրդակցելով միաբանինք , և ստորագրենք՝ յետ տալոյ մեր վերջն որոշումը :

Հաճեցէք ընդունել , Տէր , Խորին յարդանքս որ առ ձեզ :

Հաւատարիմ բարեկամ ձեր

Ա. Ա.



Տան տիրոջ մը կ'առաջարկուի նորոգութիւն ընել :

Տունը զոր վարձած էք ինձ , կարօտ է մեծ նորոգութեան , որոյ վասն արդէն քանի մը անդամ գրեցի ձեզ , և դուք խոստացաք կատարել , երբ այս տարուան վարձն հատուցի ձեզ կանխիկ : Ահա նորէն կը ինդրեմ , և կը յուսամ թէ կը հասկնաք որ վարձակալ մը վայելելու է վարձու բռնուած տեղւոյն դիւրութիւնը և արդիւնքը : Մեծ սրահին ջերմացը (սօսա) սոսկալի կերպով ծուխ կու տայ , այնպէս որ անհնար է լուցանել , մանաւանդ երբ հողմն հարաւային է , և տարւոյն կէսն այս հովը կը փչէ . ննջարանին պատուհաններն աղջէկ չեն գոցուիր , փեղկերէն մին վըտած է և նորոգութեան կարօտ . մառանին դուռը կտոր է , առաստաղի յարկին պատուհանն այնպէս մաշած է որ չենք համարձակիր բանալ որ դուցէ խորտակի : Հարկ է որ այս նորոգութիւններն ըլլան որչափ հընար է արագ , և եթէ ասոնք չշինուին մինչեւ ի լրումն պայմանաժամու տան վարձուն , արդէն կ'իմացունեմ ձեզ ակամայ , թէ վարձէն բաւական մեծ դումար մը պիտի զեղչեմ :

Ողջ լերուք :

Հաւատարիմ բարեկամ ձեր

Ա. Ա.



Տանուտեառնէ մի կը խնդրուի տան վարձագիրը նորոգել :

**Տէր .**

Պայմանաժամ վարձագրին (դօնթրաթ) որ  
եղաւ ի մէջ երկոցունցս այս ինչ թուակա-  
նին այս ինչ տարուան համար, ինչպէս գի-  
տէք, կը լրանայ այս ինչ թուականին : Հիմա  
կ'առաջարկեմ ձեզ նորոգել զայն նոյն դնոյ և  
նոյն պայմաններով այսչափ տարուան համար : կը  
պահանջեմ միայն այս ինչ նորոգութիւններ . . .  
կը ինդրեմ, մինչեւ այս ինչ օր պատասխանել  
ինձ, ապա թէ ոչ իրաւունք կ'ունենամ ա-  
ռաջարկութիւնս իբր չեղած համարելով, ու-  
րիշ տեղ յարմար տուն վնասուել ինձ :

Ընկալարուք ողջոյնս, Տէր, և համարե-  
ցէք զիս

**Հաւատարիմ բարեկամ ձեզ**

Ա. Ա.



Յանձնաբարական նամակ ի նպաստ գործաւորի :

**Տէր .**

Այս նամակը բերողն առ ձեզ՝ է գործա-  
ւոր փոյթ և հանճարեղ. ի վաղուց կը յանչ-  
նամ և մասնաւոր կերպով կը յանձեմ զնա  
ձեզ: կրնաք գործածել կամ ուրիշի մը յանձ-  
նել զնա առանց երկիւզի թէ թերեւս զղջաք

օր մը : ի դիպել առթի ես եւս պատրաստ  
եմ նոյնպիսի ծառայութիւն մը մատուցա-  
նել ձեզ:

**Մտերիմ ձեր**

Ա. Ա.



Յանձնաբարական նամակ գործաւորէ ի նպաստ  
այս գործաւորի :

**Սիրելի բարեկամ.**

Կը զրկեմ քեզ ընկերներէս մին, որ ար-  
ուեստակից մեր է : Գաջ գործաւոր է, փոյթ  
և բարեբարոյ երիտասարդ, և որ գիտեմ թէ  
տժգոհ չըներ երբէք զորս կ'ընդունեն զնա  
ի ծառայութիւն : Զանա ուրեմն, կ'աղաչեմ,  
գործ գանել վաճն նորա . զայս առնելով զիս  
եւս չնորհակալ կ'ընես . յիշէ որ պարտական  
ենք օգնել իրարու :

**Մտերիմ քո**

Ա. Ա.



Գործաւոր ոմն չսորհակալ լինի այլում որ յանձնաբա-  
րութիւն ըրած է ի նպաստ նորա :

**Ենորհակալ եմ վաճն յանձնաբարական**  
**թղթոյն զոր տուիք ի նպաստ իմ առ այս ա-**  
**ռուն Տէր :**

Ի չնորհս այն յանձնաբարութեան, ինչ-

պէս նաեւ նոյն Տեառն ջանիւք և միջնորդութեամբ , հետեւեալ օրն յետ համելոյ իմոյ այսր՝ յաջողեցայ գործ դանեւ : Հիմա կ'աշխատիմ , և գործին տէրը կը թուի գոհ զինէն , և ես կը ջանամ իմովանն գոհացունել դնա , քանզի չեմ ուզեր որ դժագ ձեր յանձնարարութեան համար , և կամ ձեր երեսը զարնուի մարդասիրութիւն ձեր առ իս :

Պատիւ համարիմ ինձ , Տէր , խոստովանել զիս

Խոնարհ ծառայ ձեր

Ա. Ա.

Որմնադիր ոմն կը ինսդրէ գործ :

Տէր .

Լսելով թէ ունիք ի մտի շինել զտուն ձեր որ անցեալ տարուան հրդեհին այրեցաւ՝ կը լինդըեմ յանձնել ինձ այն շինուածոց որմնադրի գործն , եթէ արդէն ուրիշի հետ կապուած չէք պայմանաւ : Անունս արդէն ծանօթ է ձեզ , և եթէ գործիս որպիսութեան վրայ և ուրիշ կողմանէ տեղեկութիւն կ'ուզէք , կրնաք դիմել ձեր դրացիներէն այս անուն և այս անուն անձանց , որոց տուներուն որմնագրական բոլոր աշխատութիւնն իմն է , և , ինչպէս կը յուսամ , կրնան ձեզ ընել այս

մասին : Վստահ լերուք , Տէր , որ մեծ հաճութեամբ և փութով պիտի ջանամ գոհացուցանել զձեղ : Գնոյն գալով , կարծեմ թէ իմ գիներս բաւական չափաւոր են : Շիտակ պատերու համար սովորութիւնն է պահանջել պաշտի գահեկան առ կանգուն , իսկ կամարներու համար ուրոյն սակարկութիւնն կ'ընեմ . միայն կը պահանջեմ որ գործաւորներն ես բերեմ , կամ գէթ գտնուին ընդ իմով հրամանաւ : Սպասելով պատասխանւոյ մինչեւ այս ինչ օր , եմ յարդանօք

Խոնարհ ծառայ ձեր

Ա. Ա.

Հասարակ գործաւոր ոմն կը ինսդրէ գործ :

Տէր .

Կը ինդըեմ ընդունել զիս իբրեւ գործաւոր ոստայնանկ ձեր արուեստէն : Աշակերտութիւն ըրբած եմ այս ինչ տեղ , այս ինչ ժամանակէ հետէ , աշխատած եմ անընդհատ այս անուն գործատեարց քով միշտ կատարելագործելով արուեստու : Կը համարձակիմ ըսել , Տէր , թէ յաջող գործաւոր եմ . իսկ բարոյից մասին կրնաք հարցունել յիշեալ գործատեարց , մանաւանդ վերջնոյն առ որում էի առաջին գործաւոր , թէպէտ բաւական յայտնի կը

ցուցնեն վկայականներս , զորս պատրաստ եմ  
մատուցանել ձեզ , եթէ հաճիք ընդունել  
զիս :

Հաճեցէք , Տէր , որչափ հնար է արագ  
պատասխանել , քանզի մինչեւ չընդունիմ ձե-  
նէ վերջին պատասխանին , չեմ ուզեր դիմել  
այլում գործատեառն :

Խորին յարդանօք եմ

Խոնարհ ծառայ ձեր

Ա. Ա.

## ԳԼՈՒԽ ԺԵ:

### ՕՐԻՆԱԿ ՊԱՑՄԱՆԱԳՐԻ

—

1. Վաճառման պայմանագիր :

Տէր Սեպուհ Արդարեան ոսկերիչ և Տիկին  
Ասանէթ Արդարեան , ամուսինք , իւրեանց  
աղատ կամօք և միաբան հաճութեամբ , կը  
վաճառեն Տեառն Գառնկայ Մինասեան , նը-  
պարավաճառի , երկու հազար հարիւր (2,100)  
ոսկեոյ , իւրեանց քարաշէն տուն եռայարկ ,  
որ է յայս նիշ թաղի , փողոց այս անուն , թիւ այս  
լիչ , հանդերձ 350 կանդուն պարտիզաւ որ  
տան ետին է՝ երկու կանդուն բարձր որմով  
պատած , և կը համնի մինչեւ ետեւի այս ա-  
նուն վողոց :

Վերոյիշեալ Տէր և Տիկին , իբրեւ օրինա-  
ւոր Տեարք յիշեալ ստացուածոյն որոյ վասն  
ունին վաւերացեալ մուրհակներ , յանձն կ'առ-  
նուն վաճառել զայն Տեառն Մինասեան ըստ  
հետեւեալ պայմանաց :

1. Տէր Մինասեան իւր աղատ կամօք կը  
գնէ յիշեալ տունը և պարտէզն վերոյիշեալ  
գնոց որ է ոսկի Օսմանեան երկու հազար հա-  
րիւր , որոց երեսունը հատուցանելով իբրեւ  
առհաւատչեայ պայմանագրիս ստորագրու-

թեան օրը, մնացեալ երկու հազար եօթա-  
նասունը պարտի հատուցանել յաւուր յորում  
տունը յանձնուի նմա ըստ պայմանի :

2. Տէր և Տիկին Արդարեան կը խոստա-  
նան յանձնել յիշեալ տունը և պարտէզն  
Տեառն Գառնկայ Մինասեան, յետ 31 աւուրց  
ի թուականէ պայմանագրիս :

3. Տէր և Տիկին Արդարեան պարտին յանձ-  
նել զտունն, ի լրանալ պայմանաժամին,  
ողջ և անարատ, ապա թէ ոչ պարտին իւր-  
եանց ծախիւք նորոգել որ և իցէ վլած կամ  
կոտրած կամ վնասուած մասն, զոր Տէր Մի-  
նասեան պարտի ցուցնել յառաջ քան զմուտ  
իւր ի տունն :

4. Եթէ երկու կողման մին գրժելով պայ-  
մանին չուզէ զնել կամ վաճառել տունը,  
Տէր Մինասեան, զնող, բաց ի կորուսանելոյ  
երեսուն ոսկի առ հաւատչեայն, պիտի տուժէ  
հարիւր ոսկի առ Տէր և Տիկին Արդարեան,  
երբեւ վոխարէն ծախուց զոր այս վերջինք պի-  
տի ընեն տան վաճառման պատճառաւ . իսկ  
Տէր և Տիկին Արդարեան, վաճառողք, պիտի  
վճարեն Տեառն Գառնկայ Մինասեան երե-  
սուն ոսկի առ հաւատչէին երեքպատիկը :

Գրուեցաւ կրկին 18 Փետր. 1881

( Սահմանադրութեան )

2. Պայմանագրի խոստման տուն մը վարձու տալու :

Տէր Յարութիւն Մարդարեան ոստայնանկ  
տանուտէր, այսու պայմանագրով կը խոս-  
տանայ, սկսեալ յառաջնմէ մարտի 1881, ե-  
րեք տարուան համար վարձու տալ Տեառն  
Ոսկանայ Տրիտուրեան, սեղանաւորի, զիւր  
քարաշէն տուն կրկնայարկ որ է յայս ինչ գեղջ,  
փողոց այս անուն, թիւ այս նաև, հանդերձ ախո-  
ռիւ որ աջ կողմէն կից է տանն, ինչպէս նա-  
եւ պարտէզն և այդին որ տանը ձախակող-  
մը և ետին են, տարին հարիւր յիսուն ոսկ-  
ոյ, կամսիկ վճարելի ի սկզբան իւրաքան-  
չիւր տարւոյ :

Տէր Տրիտուրեան կը վարձէ յիշեալ տու-  
նը և նմին վերաբերեալ մասեր նախ սա  
պայմանաւ որ ինք պիտի բնակի հոն իւր ըն-  
տանեօք, արտօնութիւն չունենալով պայ-  
մանեալ երեք տարուան միջոցին վարձել  
այլում զտունն, առանց գիտութեան և հա-  
ւանութեան տանուտեառն, ոչ բոլորովին և  
ոչ ըստ մասին . բայց արտօնութիւն պիտի  
ունենայ վարձել պարտէզը կամ այդին, կամ  
վաճառել անոնց բերքը որոյ վայելումը  
լիովին իւրեան կը վերաբերի :

Երկրորդ՝ Տէր Տրիտուրեան կը պարտի  
տունը և նմին վերաբերեալ մասերը, մանա-  
ւանդ պարտէզն և այդին, պահել այնպէս

որպիսի են՝ ըստ արժանւոյն մշակել տալով զնոսա յարմար եղանակին, ինչպէս նաեւ դարմանել տալով ծառերն և որթերը, ընդպատճով տուժելոյ ամէն վնաս որ այս պայմանի զանցառութենէն կրնայ յառաջ գալ: Պարտիզին և այդւոյն ըստ պայմանի մշակուիլն ստուգելու համար Տէր Մարդարեան, վարձատուն, արտօնութիւն պիտի ունենայ տարին երկիցս, դարնան և աշնան եղանակներուն, յայց ելանել այն կալուածոց :

Երրորդ՝ Տէր Տրիտուրեան պարտի ընել մանր մանր նորոգութիւններ, և կամ ինչ նոր շինութիւն որ կ'ուզէ՝ իւր քսակէն, պարտի սակայն խնդրել տանուտեառն հաճութիւնը: Յանակնկալ արկածից, զոր օրինակ կարկտէ, սասանութենէ և ուրիշ ասոնց նման պատահարներէ գործուած վնասուց համար Տէր Տրիտուրեան պատասխանատու չէ: Այսպիսի պատահարաց երեսէն, ինչպէս նաեւ մեծամեծ նորոգութեանց համար ամէն ծախք պարտի ընել Տէր Մարդարեան տանուտէր: Նոյն պէս Տէր Մարդարեան պարտի վճարել ստացուածոց վրայ դրուած կամ դրուելու որ և իցէ հարկ :

Չորրորդ՝ երկու կողման որն որ իւր պայմանին դրժէ, մին վարձու տալ և միւսը վարձու առնել չուղելով, պարտի տուժել միւս կողման քսան ոսկի:

Պայմանագիրս կը զօրէ մինչեւ ի կատարումն բուն վարձատուութեան պայմանադրութեան, որ պիտի ըլլայ առաջիկայ հինգշաբթի 24 Փետր. 1881, յատենի ձեռնհաս իշխանութեան :

Գրուեցաւ կրկին, Կ. Պոլիս Բերա

21 Փետր. 1881.

( Սահմանադրութեան )

Այլ պայմանագիր վարձու տան :

Ես, այս անուն, այսու պայմանագրով վարձու կու տամ այս անուն Տեառն այս նիշ թաղի, փողոց այս անուն, թիւ այս ինչ, փայտակերտ տանս երկրորդ յարկը որ ունի երեք սենեակ, այսինքն՝ ննջարան, ճաշարան և խոհանոց. գարձեալ փոքրիկ մառան մի և նկուղ ի վերայ գետնայարկին. բակն և ջրհորն կամ գուր (առնել), ինչպէս նաեւ սանդուղն, հասարակաց են :

Վարձատուութեան գինն է տարեկան այսափ գահեկան (զուրուշ), որոյ քառորդ մամն որ է գահեկան այսափ՝ Տէր այս անուն պիտի հատուցանէ ամէն երեք ամիս կանխիկ :

Վարձատուութեան օրը պիտի սկսի առաջիկայ Մայիսի 1 էն. բայց երկու կողմն եւս պարտական պիտի ըլլայ սպասել լրանալոյ տարւոյն, այլ կրնայ հրաժարել՝ իւրաքան-

Հիւր յաջորդ եռամնեայ ժամանակէն ամիս  
մը առաջ ազգ առնելով միւս կողման :  
Գրուեցաւ կրկին, կոստանդնուպոլիս  
ի 4 Դեկտ. 1881

•••••

Օրինակ պարտամուրչակի :

Ստորագրեալս այս անուն և մականուն կու տամ  
ղայս մուրհակ այս անուն Տեառն իբր վկայու-  
թիւն վաթսուն Օսմանեան ոսկւոյն զոր փոխ  
առած եմ յիշեալ Տեառնէն ընդ պարտուք  
հատուցանելոյ, յետ վեց ամսոյ ի թուականէ  
մուրհակին, այն է Յուլիս 5, 1881, հարիւրին  
Դ տոկոսեաւ զոր պիտի հատուցանեմ ի վախ-  
ճանի իւրաքանչիւր ամսոյ՝ նոյնպէս յոսկի Օս-  
մանեան :

Ի կոստանդն. Բերա, 5 Յունի. 1881

( Ա.Յ. անուն )

•••••

Օրինակ վաճառելի մուրչակի ( պօնո )

Կոստանդն. 6 մայիս, 1881

Գումար 50 ոսկւոյ :

Առաջիկայ Յունիսի 15 ին պիտի հատու-  
ցանեմ Տեառն Նշանայ Զարդարեան, կամ

պարտամուրհակս բերողին, յիսուն Օսմանեան  
ոսկի, որոյ փոխանակ ընդունած եմ նոյնչափ  
գումար առձեռն պատրաստ, կամ, որոյ փո-  
խանակ ընդունած եմ նոյնչափ արժողու-  
թեամբ վաճառք :

Վարդ Բարկենեան, Հացագործ :

•••••

## ԳԼՈՒԽ ԺԶ.

ԱՂԵՐՍԱԳԻՐ

ՖԻԾՈՂՈՒԹԻՒՆ

Աղերսագիր կը կոչուին այն տեսակ նամակ՝ ներ որ կուղղուին պաշտօնական անձանց՝ իրաւունք մը պահանջելու, անիրաւութենէ մը գանդատելու, չնորհք մը խնդրելու համար, այլովքն հանդերձ :

Աղերսագրին սկիզբը կը յեշուին աղերսագիրը տուողին անունը, և ուրիշ անձնական կարեւոր պարագաներ, այնպէս որ իմացուի թէ ովէ : Ապա կը յանձնուի խնդիրն ուշադրութեան կամ խնամոց աղերսագիրն ընդունողին, և ապա կը բացատրուի որչափ հնարէ համառօտիւ, և յարդական ձեւով կաւարտի նամակն :

Աղերսագրին ոճը պիտի ըլլայ յարդական բայց ոչ կարի ծառայական :



Առ Պատրիարքն ուղղեալ աղերսագիր ուր գեղի մը երիցուէն կը գանգատուի :

Սրբազն Տէր .

Ստորագրեալքս, բնակիչք այս հաչ գեղի, հետեւեալ կարեւոր խնդիրը կը յանձնենք ձեր Սրբազնութեան ուշիմ և արդարակորով խորհրդածութեան :

Յայտնի է, ինչպէս կարծենք, ձեր Սրբազնութեան թէ յետ վախճանելոյ ի Տէր մերոյ գիւղի եկեղեցւոյն ծերունի քահանային Տեառն Մեսրոպայ Նչեցւոյ, փոխանակ հանգուցելոյն՝ յանձնուեցաւ հոգեւոր հովուութիւն գիւղիս մերոյ, ձեր Սրբազնութեան հրամանաւ, Տեառն Վարդանայ Խորենեան, Երիտասարդ քահանայի : Այս Երիցուն գայթակղական ընթացք շատերուն ծանօթ էր, ուստի և զարմանք չէ որ մեր գիւղէն եւս հեռատես անձանց ոմանց կողմանէ առ մեղ առաքումն նորա ընդդիմութիւն կրրեց : Բայց որպէս զի ձեր Սրբազնութեան կամաց հակառակած չթուէինք, խորհելով նաեւ թէ թերեւս փորձն հասարակաց համարման հակառակ ցուցնէ մեղ յիշեալ քահանայն, լաւագոյն թուեցաւ մենէ մեծագոյն մասին ձեր Սրբազնութեան կարդագրութեան հաճութիւն տալ : Սակայն, Սրբազն Տէր,

գժբախտութեամբ կը ստիպուինք այսօր  
խոստովանել թէ փորձը մեր յոյս չհաստա-  
տեց, և Տէր Վարդան այսօր այնպիսի է  
յաշս գրեթէ բոլոր գիւղացւոց, որ եթէ տա-  
կաւին մնայ ի պաշտաման հովութեան,  
աղետալի գժառութեան, գայթակութեան  
և երկպառակութեան պատճառ պիտի ըլլայ  
գիւղիս : Արդէն բարեկարգութիւնը վերցած  
է մեր եկեղեցին . պաշտօնն արհամարուած  
է, բարեպաշտութեան հոգին երթալով կը  
նուազի մեր ժողովրդեան մէջ, և մեր Հովիւն  
ուրիշ օգուտ չունի, եթէ ոչ իւր հօտին կա-  
թըն ուտել և բուրդը հագնել, և ոչ միայն  
փոյթ չունի հիւանդը հոգալ, կորուսեալը  
վնտուել և յուսահատեալը միկթարել, այլ  
և է անձնատուր զզուելի մոլութեանց ինչ, և  
տունէ տուն ձանձրալի երթեւեկութեամբ որ  
անվայել է հովուական պաշտաման՝ ընտան-  
եաց հայրերու կասկածը կը զարթուցանէ  
յիւր վերայ :

Ուստի, Սրբազն Տէր, ստորագրեալքս կը  
ինդրենք որ ձեր Սրբազնութիւնն ըստ օրինի  
և ըստ եկեղեցական կանոնաց քննելով յիշեալ  
եկեղեցականին դէմ այս միաձայն ամբաստա-  
նութիւնը՝ փութայ գարման տանել այս չար-  
եաց ըստ թելագրութեան իւրոյ բնաբոյս խո-  
հեմութեան և հանդարտութեան :

Յուսալով թէ այս գանդատ մեր ձեր

Սրբազնութեան ուշադրութեան միանդամայն  
փութոյն նիւթ պիտի ըլլայ, և սպասելով  
ձեր արագ տրամադրութեան այս չարեաց  
առաջն առնելու, մնամք խորին յարդանօք  
և հնազանդութեամբ

Ձեր Սրբազնութեան

Հոգեւոր որդիք  
( Սուրբ Հովութիւնն )

Այս ինչ գիւղ, 21 Ապր . 1881



Թաղի մը ժողովյն ուղղեալ աղերսագիր :

Առ պատուական Տեարս Թաղական Խոր-  
հըրդոյ այս ինչ թաղի :

Տեարք .

Ստորագրեալս Արմիկ Վարդեան, կին  
Մարգարայ Ծերունեան Սոկերչի, խոնարհա-  
բար կը յանձնեմ պատուական ժողովոյդ խոր-  
հըրդածութեան և վճռոյն հետեւեալ գան-  
դատու :

Ստորագրեալս, հինգ տարիէ հետէ ա-  
մուսնացեալ ընդ Մարգարայ Ծերունեան,  
հաղիւ տարի մը փոքր ի շատէ վայելեցի ա-  
մուսնական խաղաղութիւն ի կենդանութեան  
սկեսրառնս լուսահոգի Տեառն Սուրենայ Ծե-  
րունեան : իսկ և իսկ յետ մահուան այս պա-

տուական ծերունւոյն , թշուառ այրս , չդիւտեմ ինչ գիւական թելադրութենէ հրապուրեալ , սկսաւ ատել զիս փոխանակ սիրոյն և խնամոց զոր ունէի և տակաւին ունիմ առնա , և քիչ ժամանակի մէջ փոխելով իւր վարքը և ընթացքը , թողուց գործը , սկսաւ յաճախել գինետուններ և այլ անարժան տեղուանք : Ինչ որ բերած էի հօրս տունէն , և ինչ որ մնացած էր լուսահոգի սկեսրառնս ժամանակէն՝ վաճառեցան . յետին աղքատութիւն , և որ ի հարկէ կը հետեւի անտի , նուաստութիւն , հիւանդութիւններ , անօթութիւն , մերկութիւն հասան մեր վրայ : Այս ամենուն համբերել թերեւս հնար էր , եթէ դժբախտ այրս Մարդար ծերունեան , գինեմոլութեան և ուրիշ զզուելի մոլութեանց վրայ չյաւելոյր նաեւ գաղանային կատաղութիւն , որում նշաւակ եղած եմ ամէն դիշեր , չարաչար գանակոծ լինելով արբեցութեան չար ոդիէն ըսմբունեալ վրաս յարձակող այս հրէշին ձեռքէն : Բոլոր թաղեցիք ցաւով կը վկայեն թէ ինչ ցաւալի վիճակ հասած եմ այս քսանեւհինդամեայ հասակիս մէջ , և ինչ սոսկալի վիճակի մէջ կը դտնուի թշուառ այրըս : Ինչ աստիճան գձձութեան և եղկութեան կը մատնէ մոլութիւնն զմարդ :

Արդ յետին յուսահատութեան մէջ կը դիմեմ ի գիտութիւն պատկառելի թաղական

Տեարցդ , որոց պաշտօնին պարտականութիւններէն մին է անմեղ և անօդնականներ ընտանեկան հարստահարութենէ աղատել , աղաչելով զձեղ արձակել գթած նայուածք մը թշուառ աղախնոյս վրայ որ յետ Աստուծոյ զձեղ միայն ունիմ պաշտպան : Կը խընդրեմ ուրեմն որ ստուգելով ըստ օրինի գանգատներուս ճշմարտութիւնը , կամ ստիպէք , եթէ հնար է , ամուսինս փոխել զիւր վարս , և կամ աղատէք ձեր թշուառ աղախին երքք մատաղ մանկամբս անուղղայ մարդու մը անտանելի գաղանութենէն՝ բաժնելով զմեզ գէթ առ ժամանակ մի : Միթէ արժան է որ չորս անմեղներ կորսուին հոգւով և մարմնով ի կորուստ մատնեալ մոլեգնելոյ մը ձեռքք :

Սպասելով անհամբերութեամբ արագ տնօրէնութեան ի կողմանէ պատկառելի թաղական խորհրդոյդ , մնամ խոնարհութեամբ Պատուական Տեարցդ

Նուաստ աղախին

( Թագավորական )

Ա. Ա.

~~~

Աղեքսագիր ուղղեալ առ Քաղաքական ժողով :

Առ պատկառելի անդամն Քաղաքական ժողովոյ .

Տեարք .

Ստորագրեալս, Մահտեսի խաչատուր թագւորեան Խարբերդցի, Հացագործապետ և աշուրապետ յայս անուն թաղի, յարդութեամբ յանձնելով պատկառելի ժողովոյդ խորհրդածութեան հետեւեալ ինդիրս, կը սպասեմ արագ և վճռական պատասխանւոյ :

Իբր երեք տարի առաջ, ըստ առաջարկութեան Ազգային Վարչութեան, Հաճութեամբ և հրամանաւ Ծնդհանուր ժողովոյ, ստորագրեալս տուի ազգին 100,000 դահեկան, կամ հազար Օսմանեան ոսկի փոխ, ինչպէս կը վկայեն պաշտօնական ստորագրութեամբ և կնքով վաւերացեալ մուրհակներ : Ազգ . Տնտեսական ժողովը դիաէ որ երր երկու տարիէ հետէ այս գումարին տարեկան 100 ին 3 տոկոսը որ դոյզն ինչ է՝ չհատուցուեցաւ : Երբ, (և այս քանի մը անդամ եւ զաւ,) թէ յիշեալ գումարին և թէ տոկոսոյն հատուցման համար դիմեցինք առ աղդային Վարչութիւնն, միշտ ետ դարձանք սա պատասխանւով թէ ի մօտոյ պիտի հատուցուի մայրը հանդերձ փոխորդւով :

Այսպէս վերոյիշեալ գումարն, եթէ չհատուցուած տոկոսն ի միասին հաշուենք, կ'ընէ իբր 1090 ոսկի . բայց ստորագրեալս, ի դիւրութիւն ազգային արկեղ միանդամայն կամելով ծառայութիւն մը ընել ազգիս, կը պահանջեմ միայն մայրը՝ տոկոսւոյն վերաբերեալ 90 ոսկին չնորհելով ազգային չիւանդանոցին, որում ազգային արկղը պարտական ըլլայ յիշեալ գումարն առանց տոկոսւոյ : Բայց այս տրամադրութիւնս պիտի զօրէ, եթէ 1000 ոսկի մայր գումարն հատուցուի ինձ ազգային արկղէն ի միջոցի առ առաւելն 31 առուր . եթէ այն գումարը չտրուի մինչեւ յիշեալ պայմանաժամն, վերոյիշեալ տրամադրութիւնս անզօր և ոչինչ պիտի ըլլայ : Սա եւս պարտիմ իմացունել պատկառելի ժողովոյդ, որ, թաղիս անցեալ շարթուան ապականիչ հրդեհին ստորագրելոյս փուռն և աղօրին, 300 պարկ ալերբ և 1000 քոռ ցորենով որ կը գտնուէին հոն՝ հրոյ ճարակ եղան, ուստի ստիպեալ եմ վերոյիշեալ գումարը որ առնելիքս է՝ պահանջել ազգային արկղէն, և այնպիսի անձկութեան մէջ կը գտնուիմ այսօր որ, եթէ, Աստուածմի արասցէ, պատկառելի ժողովդ զյանայ կատարել ինդիրս զոր կ'ընեմ ազգային արկեղ այսչափ շահաւոր պայմանաւ, պիտի բռնացատուիմ ուրիշ միջոց ձեռք առնուլ : Կը յու-

սամ թէ պատկառելի ժողովդ կը հաւատայ ,
որ այս վերջին դիտողութիւնս ոչ իբր սպառ-
նալիք կ'ընեմ , այլ վերջին աստիճան դժ-
ուարին կացութիւնս պիտի հարկադրէ զիս
այնպէս ընել :

Վատահ ըլլալով թէ ժողովոյդ իմաստու-
թիւնը պիտի ջանայ այս դործին բարեկամա-
կան կերպով վախճան տալ , մնամ խորին
յարգանօք

Պատկառելի ժողովոյդ

Խոնարհ և հաւատարիմ ծառայ
ի կոստանդնուպոլիս

Ա. Ա.

28 Մայիս, 1881

ԳԼՈՒԽ ԺԷ .

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

ԳԻԾՈՂՈՒԹԻՒՆ

Առեւտրական կ'ըսուին այն տեսակ նամակ-
ներ զորս վաճառականք սովոր են գրել
իրարու : Առեւտրական նամակաց գլխաւոր
և էական յատկութիւնք են պարզութիւն ,
համառօտութիւն և յատկութիւն . ուստի
զարդ , ձեւ , դարձուած , քաղաքավարական
երկայն բանք , և ամէն տեսակ խրթնութիւն
խորշելի են այս նամակաց մէջ : Առեւտրական
նամակներու ոճին այս յատկութիւններն
յայտնի պիտի ըլլան օրինակներէն :

Վաճառականք իրարու կը գրեն այլեւայլ
նիւթոց վրայ , ուստի և առեւտրական նա-
մակներու շատ տեսակներ կան զորս պարտէ
գիտնալ որոշել իրարմէ : Այս տեսակներն են

1. Շրջաբերական նամակներ , որովք նոր
տան մը կամ առեւտրական ընկերութեան
հաստատութիւնը , լուծուիլը և կամ արդի
վիճակին մէջ փոփոխութիւն մը կը ծանուց-
ուի : Այս տեսակ նամակներ շատերու կը
դրկուին , և այս պատճառաւ կրնան նաեւ լի-
նել տպեալ :

2. Գործ առաջարկելու նամակներ : Այս տեսակ նամակ կը գրուի , երբ վաճառական մը ուրիշ վաճառականի կամ գործի տէր եղող անձի կամ ընկերութեան կը յայտնէ զիւր յօժարութիւն յարաբերութիւն հաստատելու :

3. Նոր յարաբերութեան մտնելու կամ դործի սկզբնաւորութեան նամակ :

4. Առև գնոյ նամակներ , այսինքն խընդարել վաճառականէ մը այս ինչ վաճառք գընել կամ վաճառել ՚ի հաշիւ իւր :

5. Տեղեկութիւն տալու կամ խնդրելու նամակներ :

6. Վաճառաց առաքման նամակներ , այսինքն ծանուցանել ումեք թէ վաճառք կը զրկենք :

7. Նամակք որովք կը ծանուցուի թէ այս ինչ վաճառք ընդունուած կամ հասած են :

8. Նամակներ որովք կը ծանուցուի թէ դումար մը զրկուած է :

9. Նամակներ որովք կը ծանուցուի թէ դումար մը հասած է :

10. Ստակ խնդրելու նամակ :

11. Թուլացեալ յարաբերութիւն մը պընդելու համար գրուած նամակ :

12. Յանդիմանութեան նամակ :

13. Զքմեղութեան նամակ :

14. Հաշիւ տեսնելու կամ ցուցնելու նա-

15. Վարկի նամակներ . այսինքն՝ գրել ումեք որ ուրիշի մը վարկ (քրէտի) ընէ :

16. Յանձնարարութեան նամակ :

17. Շնորհակալութեան նամակ :

18. Մաղթանաց և ցաւակցութեան նամակներ , այլովքն հանդերձ :

19. Զախորդութիւն , մնանկութիւն և այլն ծանուցանելու նամակներ :

Որովհետեւ մատենիս անձկութիւնը չի թողուր աւելի ընդարձակ գրել , առեւտրական նամակաց յիշեալ տեսակներէն մէն մի օրինակ միայն կու տանք :

~~~

1. Օրինակ շրջաբերականի :

Կեսարիա , 12 դեկտ . 18 . . .

Տէր .

Կը ծանուցանեմ ձեզ որ առաջիկայ յունուար ամսոյն առաջին օրէն սկսելով պիտի կազմուի քաղաքիս մէջ առեւտրական տուն մը՝ ֆառնակ , ծիրայր և Ընկ . ձեռնագրով : Մեր գործը պիտի ըլլայ ամէն տեսակ ապրանք վաճառել ՚ի հաշիւ մեր կամ յանձնարարութեամբ : Հաճեցէք , Տէր , նշանակել մեր ստորագրութիւնները , ընդունելով մեր յարգանաց ողջոյնը և գիտնալով որ պատրաստ ենք միշտ ծառայել ձեզ սիրով :

ՓաՌՆԱԿ , ՏԻՐԱՅՐ ԵՒ ԸՆԿ .

~~~

Ա. Ա. օրինակ :

Տէր .

Կը ծանուցանեմ ձեզ որ , ի պատճառս
ցաւալի կորստեան որ պատահեցաւ մեղ մահ-
ուամբ հօր մերոյ Տեառն Միհրանայ Աւադ-
եան , ընկերութիւն մեր հասաւ ի վախճան :
Մեր սիրելի եղբօր Նշանայ Մ. Աւադեան յանձ-
նուած է ածել յաւարտ մեր գործերն և հա-
շիւներ :

Ընկալարուք , Տէր , մեր չնորհակալութիւն
այն վստահութեան համար որով հաճեցաք
պատուել զմեղ ցարդ :

Մ. Ա. Ա. Գ. Ե. Ա. Ն. ՈՐԴԻՒՔ

→→→••←←←

2. Գործի առաջարկութեան նամակի օրինակ :

Տփղիս , 20 Ապրիլ 18 . . .

Առ Տէր Շմաւոնեան ի Բարիդ .

Կը ծանուցանենք ձեզ , Տէր , որ , հրամա-
նաւ և ի հաշիւ բարեկամին մերոյ Տեառն Զա-
րեհի Շահեան , համարձակեցանք քաշել ձեր
վրայ փոխանակադիր 5,500 ֆրանքի , որ յետ
երից ամսոց պիտի հատուցուի ի հրաման
Տեառն Մինասայ Բարիկեան . կը խնդրենք
ձենէ ընդունել զայս տնօրինութիւն :

Այսու առթիւ կը փութանք յայտնել ձեզ
զյօժարութիւն մեր ծառայելոյ ձեզ : Արդա-

բեւ ուրախ պիտի ըլլանք յոյժ , եթէ ստէպ
դանենք պատեհութիւն դործել ձեր պատ-
ուական տան հետ :

Փակեալ պիտի գտնէք ի նամակիս գործի
համար մեր սովորական պայմաններուն ցու-
ցակը : Ողջունեմք զձեղ , Տէր , մոտերմաբար
գԱՌՆԻԿ ԿԱՐՄԻՐԵԱՆ ԵԽ ԸՆԿ .



3. Գործի սկզբնաւորութեան նամակի օրինակ :

Կոստանդնուպոլիս , 24 Յուլիս 18 . . .

Առ Տէր Նորայր Պարտիզպանեան յԱմըս-
տերդամ .

Տէր .

Ընկալայ ի ժամանակին զարչարերականն
զր հաճեցաք գրել ինձ ի 26 անցեալ նոյեմ-
բերի , ձեռամբ մերոյ և ձերոյ բարեկամին
Տեառն Մարուդէի Վարդեան : Զեր նորա-
հաստատ տան հետ իսկ և իսկ թղթակցելու
առիթ չունենալով՝ ցարդ առանց պատաս-
խանւոյ թողի զնամակ ձեր :

Այսօր առ ձեզ գիմելոյ առիթ ունենա-
լով՝ կը գրեմ ձեզ խնդրելով գնել վասն մեր
1,500 է մինչեւ 2,000 քիլոկրամ (յայս իսչ սիւթոյ) ,
կենդինարն 50 ֆիորին , եթէ կարող էք գը-
նել այսչափոյ , և յուղարկել ընդ ծով , միշ-

նորդութեամբ Տեառն Զաւէնի Տրիտութեան
ի Մարսիլիա , տալով ապահովագրել զվա-
ճառն :

Տարակոյս չունիմ , Տէր , թէ պիտի գո-
հացունէ զմեղ այս փորձ ըստ արժանւոյն ,
մինչեւ փութալ մեղ նոր վաճառս ա-
պլապրել ձեղ :

Գոհ լիցուք մեծապէս , եթէ ստէպ տեղե-
կութիւն տաք մեղ զվոփոխութենէ . գնոյ
վաճառաց ձեր շուկային :

Հաճեցէք ընդունել , Տէր , զողջոյն մեր
յարդական :

ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԵՆԵԱՆ

~~~~~

4. Առ և գնոյ նամակի օրինակ :

Մարտիլիա , 31 Օգոստոս 18 . . .

Առ Տէր Տիրան Գրասէրեան ի Աթոքհոլմ .

Տէր .

Հաստատելով զնամնակն գրեալ յինէն առ  
ձեղ յշ ամսոյս , փութամ ծանուցանել ձեղ  
զի , բաց յայն վաճառաց զորս ապապրեցաք  
ձեղ յառաջին նամակի մերում , գնէք նաեւ  
վամն մեր

100,000 քիլոկրամ երկաթ , զորոյ օրինակն  
պիտի ընդունիք սուրհանդակաւ , և յուղար-  
կէք առ մեղ ընդ Գալէ : Հաճեցէք , Տէր ,

բարւոք ուշ դնել որպիսութեան օրինակին ,  
և ջանալ յուղարկել առաջին նաւով , և սա-  
կաւ վարձու , որչափ հնար է : Աւելորդ է  
ասել թէ այս վաճառաց , ինչպէս նաեւ միւ-  
սոց , գիներուն փոյթ տանիք զի լիցին մեղ  
շահաւոր , և միշտ ջանաք լաւագոյն տեսակ-  
ներ ընտրել :

Ընկալարուք , Տէր , զողջոյն յարդանաց  
մերոց :

ՇԱԽԱՐԵ ԴԻՄԱՔՍԵԱՆ

~~~~~

5. Տեղեկութեանց նամակի օրինակ :

Առ Տէր Միսաք Տագեսեան վաճառական
ի Լոնտոն .

Զմիւռնիա , 9 Փետր . 18 . . .

Տէր .

Կը հաստատենք զվերջին նամակ մեր գըր-
եալ առ ձեղ ի 26 Հոկտեմբերի :

Ձեր քաղաքի տուներէն մին , Տ. Տ. Վ. Ս.
և Ընկ . , որ կը զբաղի յատկապէս ոգեղինաց
և գինույ առեւտրով՝ ցուցած էր մեղ զձեր
պատուական տուն իբրեւ ինքեան ծանօթ ,
և կարող տալ մեղ ստոյգ տեղեկութիւնս
զդրամական և զբարոյական որպիսութենէ
նորս . ուստի համարձակեցաք աղաչել զձեղ
հաճել լոյս տալ մեղ զնանէ , և ասել թէ

ինչ աստիճան վարկի և վատահութեան արժանի է այն տուն : Կարէք վատահ լինել, Տէր, թէ ինչ որ գրէք՝ ծածուկ պիտի մնայ առ մեղ :

Ընկալարուք, Տէր, զողջոյն մեր ի սերտ սրտէ :

ԹԱԹՈՒՆ, ԱԼԱՆԵՍՆ ՈՐԴԻ

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ի

Առ Տէր Թ. Ա. ի Զմիւռնիա .

Լոնտոն, 27 Փետ. 18 . . .

Տէր .

Ընկալաք զնամակ ձեր դրեալ առ մեղ յ9 Փետրուարի : Կը զրկէք մեղ զերկուս առաջինսն ըստ կանոնի, այն է՝ ֆր. 6,000 և 10,000 :

Տունն զորմէ տեղեկութիւն կը խնդրէք մենէ՝ է ընդ տնօրէնութեամբ երկուց երիտասարդաց որք անդամ մի սնանկացան : Նպաստ գտնելով յիւրեանց դերդաստանէն որոյ համեստութիւն կը գովուի առ հասարակ՝ նորէն սկսան գործի որ առայժմ յաջող կը թուի, բայց ինքեանք տակաւին չեն վայելեր մեծ վատահութիւն : Ապագան պիտի ցուցնէ թէ արդեօք ձախող փորձն ըրած այս երիտասարդ վաճառականներն այնպէս զգօն և

յառաջատես, ինչպէս կը պահանջէ այժմու վիճակ նոցա :

Ընկալարուք, Տէր, մեր սիրոյ և յարդանաց վկայութիւն :

ՄԻՍԱՔ ՏԱԳԵՍԵԱՆ

6. Վաճառաց առաքման նամակի օրինակ :

Առ Տէր Մինաս Հովուեան ի կոստանդն .

Մարտիիա, 26 Մարտ 18 . . .
Տէր .

Հատ հրամանի ձերում որ առ Տէր Տիրան ծաղկեան, կը դրկենք ձեղ Ասիա անուն շոգենաւաւ որ յետ եօթն աւուր պիտի համնի ինաւահանգիստ ձեր, քիլոկրամը 20 ֆրանքէ 1,000 քիլոկրամ այս նույն վաճառներէն որոց վրայ մանր տեղեկութիւն պիտի գտնէք ի ցուցակին որ փակեալ է ինամակիս : Գին վաճառացն է

Ֆր. 8,614. 85, զոր անցուցէք ի հաշիւ մեր առնեաց :

Կ'աղաշենք, Տէր, հաճեցէք իմացունել մեղ զգոհութիւն ձեր յիշեալ վաճառաց համար, որպէս զի կարող լիցուք այլ նուազ գործել ձեր տեղեկութեան և կամաց համեմատ : Հաւատացէք որ շատ կարեւոր կը համարինք ունել յարաբերութիւն ձեր պատ-

ուական տան հետ , և թէ ամէն ջանք պատրաստ ենք ընել գոհ ընելու համար զձեղ :

Հաճեցէք , Տէր , ընդունել զիրալիր ողջն մեր :

ՄԵՍՐՈՊ ՇԱՀԵԱՆ



Առ Տէր Վրոյը ՍԵՆԵՔԵՐԻՄԵԱՆ ի ԹՐԻԵՍԴ .
ի ՏՐԱՊԻՂՈՆ , 10 Մարտ 18 . . .

Տէր .

Հաճութեամբ ծանուցանեմ ձեղ որ , ըստ հրամանի ձերում յանձնեցինք առ Տէր երամեան վ . Ս . Նշանագրովք վեց հակ այս ինչ վաճառէն զորոյ զցուցակն գտանէք փակեալ ի նամակիս , և որոյ գինն է

Ֆր . 1,104 . 25 : Հաճեցէք անցուցանել զայս գումար ի հաշիւ առնելեաց մերոց :

Ամէն փոյթ տարուեցաւ մեր կողմանէ յիշեալ վաճառաց առաքման համար , և կը յուսանք թէ գոհ պիտի ըլլաք :

Միշտ պատրաստ ըլլալով ձեր հրամանաց , եմք մտերիմ բարեկամք ձեր

ՄԵԳՐԱՔ և ՆՇԱՆ



7. Վաճառաց ըադունկութեան նամակի օրինակ :

ԹԵՍԱՊՈՆԻԿԻ , 22 Ապրիլ 18 . . .

Առ Տէր Մակար Վահանեան ի Թուլոն .

Տէր .

Ընկալաք երեկ հակս 77 այս ինչ վաճառէն . մի հակ և եթ պակաս էր զոր տուժեց ընկերութիւն նաւին : Կշիռ վաճառացն զորս կը դըրկէք՝ է 3,374 քիլոկրամ , որ , քիլոկրամը 58 ֆրանքէ , կ'ընէ ֆր . 1,956 . 92 , համաձայն ձեր ցուցակին զոր զրկած էիք մեղ ի 14 Ապրիլի :

Ի հատուցումն այս վաճառաց կը զրկենք առ ձեղ փոխանակագիր մի 1,956 ֆր . 92 , զոր աղաչեմք անցուցանել ի հաշիւ առնելեաց մերոց :

Կ'ողջունեմք զձեղ , Տէր , սեռն սիրով :

ՏԻԳՐԱՆ ՈՍԿԵԱՆ



8. Նամակ որով կը ծանուցուի թէ այս ինչ գումարը կը որկուի :

Կոստանդնուպոլիս , 27 Յունուար 18 . . .

Առ Տէր Զորայ ի Բարիդ .

Տէր .

Ընկալայ գնամակն գրեալ ի ձէնջ ի 4 ամբ

սոյս, հանդերձ ցուցակաւ վաճառաց զոր յուղարկած էիք առ մեզ: Ըստ ցուցակին՝ պարտք մեր է ձեղ վասն այն վաճառաց

Ֆր. 7,850. 30, զոր դրեմք ի հաշիւ առնըլեաց ձերոց, դրկելով ձեղ հետեւեալ դումարներն ի թուղթ հատուցանելի:

Ֆր. 1,000 որոյ հատուցման ժամն հասած է.

| | | |
|------------|-------------|----------------|
| » 3,211 | հատուցանելի | ի 14 թուլիսի |
| » 900 | » | առ օրին |
| » 1,817 42 | » | յետ 10 աւուրց. |

Ընդ ամենայն ֆր. 6,928. 42, զոր հաճեցէք անցուցանել ի հաշիւ առնըլեաց մերոց, և ծանուցէք մեզ զընդունելութիւնն:

Հաճեցէք, Տէր, Ընդունել զողջոյն մեր:
ՍԵՊՈՒՀ ՇԱՀԻՆԵԱՆ

9. Նամակ որով կը ճանուցուի թէ այս ինչ գումարն հասած է:

Առ Տէր Մանուկ Փողեան ի կոստանդն.

Բարիզ, 23 Մեպտ. 18 . . .

Տէր.

Ընկալաք մեծ հաճութեամբ զնամակ ձեր դրեալ ի 29 անցեալ ամսոյ: Նամակ ձեր բերաւ մեզ փոխանակագիր մի ի ձէնջ քաղաքիս վրայ, Ֆր. 9,000 որ պիտի անցնի ի հաշիւ առնըլեաց ձերոց:

Փոխանակագիրն զոր քաշած էք Մդրազ պուրկի վրայ՝ հատուցաւ մի և կէս կորստեամբ առ հարիւր, ուստի և փոխանակ 2,100՝ Ֆր. 2,068. 5 անցաւ ի հաշիւ ձեր առնըլեաց:

Աճապարեցէք, Տէր, զրկել մեզ զգումարսն որ, ըստ հաշուեցուցակի զոր նամակիս միւս էջին վրայ կը տեմնէք, դրեթէ հաւասար կ'ուգայ ձեր պարտուց որ առ մեզ. կը մնայ միայն փոքր գումար մի, Ֆր. 140. 97: Մեր սիրտը բոլորովին հանդարտ էր ձեր վրայ, ուստի և կրնայիք յապաղել զհատուցումն ձեր պարտուց մինչեւ ի նախընթաց երեկոյ մեր պայմանաժամին զոր կանխեցիք մարդասիրաբար:

Կ'ողջունեմ ձեղ, Տէր, յարդանօք:
ԿՈՐԻՒԽՆ ԱՐԱՄԵԱՆ ԵԽ ԷՆԿ.



10. Ստակ ինսդրելու նամակի օրինակ :

Առ Տէր Միրայր ձերմակեան յԱղեքսանդրիս :

Միս, 20 Հոկտ. 18 . . .

Տէր.

Ի վախճանի իւրաքանչիւր տարւոյ սովոր ենք վակել մեր հաշիւներն, ուստի և կը զրկենք ձեղ նամակաւ ձեր հաշուին ցուցակը, յորմէ կը տեմնուի թէ պարտական մնա-

ցած էք մեղ, յետ վերջին հատուցման, Ֆր. 2,068. 85: Կը յանձնենք զայն ձեր քննութեան, աղաչելով որ իմացունէք մեղ թէ ուղիղ է հաշիւն, և կ'աղաչենք առաքել մեղ հատուցանելի թղթով զհաւասարն վերոյիշեալ պարտուց ձերոց :

Մնալով ձեր հրամանաց ողջունեմ զձեզ:
ԵՐՈՒԱՆԴ, ԶԱՐԵՀ ԵԽ ԸՆԿ.

Նոյնք առ նոյն :

Տէր .

Յետ աւուրց ինչ պէտք պիտի ունենանք ստակի, ուստի համարձակեցանք քաշել ձեր վրայ հետեւեալ փոխանակագրերն ի հատուցումն պարտուց ձերոց որ առ մեղ, Ֆր. 1,921. 50: Ահա փոխանակագիրք զորս խնդրեմք ընդունել:

| | | |
|-----|--------|--------------------|
| Ֆր. | 500 » | հատուցանելի ի վախ- |
| | » | ճանի Մարտ ամսոյ |
| » | 600 » | հատուցանելի ի վախ- |
| | » | ճանի Ապրիլ ամսոյ |
| » | 822.50 | հատուցանելի ի վախ- |
| | » | ճանի Մայիս ամսոյ. |

Ծնդ ամենայն Ֆր. 1,122. 50, որ պիտի անցնի ի հաշիւ առնլեաց ձերոց :

Յուսամք թէ մեր այս տնօրէնութիւնը

պիտի ընդունիք, մանաւանդ որ բաւական երկայն պայմանաժամ տուած ենք ձեզ, թէ եւ մեր պէտքը կը սափէր արագ հատուցումն պահանջել ի ձենջ :

Մտերիմք ձեր

ԵՐՈՒԱՆԴ, ԶԱՐԵՀ ԵԽ ԸՆԿ.

11. Թուլացեալ յարաբերութիւն մը սնդելու համար գուած նամակի օրինակ :

Առ Տէր Ա. և Բ. ի բարիդ.

Կոստանդնուպոլիս, 14 Նոյ. 18 . . .

Տէր .

Կը յիշեցունենք ձեզ Յուլ. 19 թուականով գրուած մեր նամակը, որով յշեցաք առ ձեզ Ֆր. 1,500. յետ այնորիկ ընկալաք նամակ մի գրեալ ութ օր յետոյ քան զմերն, և որով զրկած էիք մեղ փոխանակագիր մի 1,333. 44 Փրանքի ի վերայ այս անուն Տեառն: Այս գուամըն անցուցինք ի հաշիւ առնլեաց ձերոց :

Շատ կը ցաւինք, Տէր, որ գործերուն ուազութիւնը թուլացոյց զյարաբերութիւն մեր որ ապաքէն օգտակար լինելոց էր երկուստեք և հաճելի բայց յուսամք թէ ընդհուպ կարող պիտի ըլլանք զօրացնել զյարաբերութիւն մեր որպէս էրն ի սկզբան :

Ընկալարուք, Տէր, զողջոյն մեր ի սերտ
սրտէ :

Ա. Ա. ԵԿ ԸՆԿ.



12. Օրինակ յանդիմանութեան նամակի :

Առ Տեարս Դ. և Դ. ի Բարիդ.

Ճենովա, 21 Յունվար 18 . . .

Տեարք .

Չեմ կրնար լուել թէ ինչ մեծ եղաւ զար-
մանքս երբ ընկալայ զնամակ ձեր գրեալ
դեկտ. 20: Այդ նամակաւ կ'իմացնէք թէ
պիտի չկրնաք տալ 5,000 դլուխ (թօփ) թուղ-
թը պայմանեալ ժամանակին, թէեւ ոչ բերնով
միայն, այլ ե. գրով խոստացաք յանձնել մեզ:

Ես կատարելու համար խոստումս առ ձեզ,
նաւիս մէջ 5,000 դլուխ թղթոյ համար տեղ
պահեցի, և մերժեցի զառաջարկութիւնս այ-
լոց որ կ'ուղէին նոյն վաճառէն տալ ինձ:
Տեսէք արդ թէ որչափ վնաս եղաւ ինձ, որ
ոչ միայն վաճառը չստացայ, այլ և նաւը
պարապ մնաց: Գիտէք, Տեարք, թէ այսպէս
խոստմունք չկատարելով ուրիշին անհուն
վնաս հասցունելն առանց պատասխանատու-
ութեան չէ, և թէ ամէն մարդոյ իրաւունքն
է վնասուց հատուցում պահանջել:

Ընկալարուք, Տեարք, ողջոյնս :

Ա. Ա.

13. Զքմելլութեան նամակի օրինակ :

Առ Տէր Ժ. ի Կոստանդնուպոլիս .

Զմիւռնիա, 4 Յունվար 18 . . .

Տէր .

Ժամանակին ընկալայ ձեր երկու նամակ-
ներն, զգրեալն ի 28 Յուլիսի և ի 5 այսր
ամսոյ: Առաջնովն ընկալայ փոխանակագիր
ի վերայ այս անուն Տեառն քաղաքիս ֆր. 275.
45, զոր անցուցի ի հաշիւ առնեաց ձերոց:

Երկրորդաւն կը գրէք թէ ի մեծ հոգս
էք, քանզի այն նամակին համար բան մը չը
գրեցի ձեզ: Եթէ զայն ընդունելս ժամա-
նակին չիմացուցի ձեզ, ներումն կը խնդրեմ:
Լուղթիւնս իրին նուազ կարեւորութեան
համար էր. գիտէք թէ կը ջանամ միշտ ա-
նօգուտ նամակներու համար չտալ ձեզ պատ-
ճառ ծախուց:

Ի հաշիւ պարտուց ձերոց գրեցի

ֆր. 200, զոր տուի առ Տէր այս անուն, ըստ
հրամանի այս անուն Տեառն, թղթակցին ձե-
րոյ:

Շնորհակալ եմ, Տէր, ձեր շնորհաւորու-
թեան համար վասն նորոյ տարւոյ, և կ'ա-
զաշեմ, հաւատացէք որ նոյնչափ անկեղծ են
իղձերս վասն ձեր: Կը փափաքիմ առիթ ու-
նենալ այնպիսի ծառայութիւններ ընել ձեզ

ЧИТАЛ
"КРАСИРА"

որ եւս քան զեւս համողուիք թէ եմ ձեզ
հաւատարիմ ձեր :

Ա. Ա.



14. Հաշիւ տեմսելու կամ ցուցնելու նամակներ :

Վաճառականք սովորութիւն ունին ի
վախճանի տարւոյն կամ ուրիշ որոշ ժամա-
նակներ քննել իրենց տեսրակներուն մէջ
զառնիս և զտալիս այլ և այլ անձանց, և
արդիւնքը յայտնել նոցա : Այսպիսի ար-
դիւնք մը յայտնելու նամակի օրինակ է հե-
տեւեալն :

Առ Տէր Յ. ի կոստանդնուպոլիս .

Բարիդ, 28 Դեկտ . 18 . . .

Հոկտ . 24 ին և ամսոյս 5 ին ձենէ գրուած
նամակներն հասան մեզ :

Վերջին նամակաւ կը յայտնէք մեզ մեր
մինչեւ 21 Դեկտ . առնեաց և տալեաց հաշ-
ուին արդիւնքը, որմէ կիմանանք թէ պար-
տական մնացած ենք ձեզ ֆր . 5,857: Քըն-
նելով կ'իմացունենք ձեզ թէ այդ հաշիւ է
համաձայն մեր տումարներուն թէ ոչ :

Ընկալարուք, Տէր, զշնորհակալութիւն
մեր վասն մաղթանաց զոր կ'ընէք յաղագու
մեր ի սկզբան նորոյ տարւոյ : Նոյն իղձեր, և
նոյնչափ սեռնութեամք, կ'ընենք մեք ի ձեր

աղագու, իմացնելով միանդամայն թէ կը փա-
փաքինք մեր յարաբերութիւններն յաճա-
խել, եթէ պարագայք նպաստեն :

Ընկալարուք, Տէր, մեր սերտ ողջոյններ :

Ա. Ա. ԵԽ ՈՐԴԻՒՔ



15. Վարկ իմակնելու նամակի օրինակ :

Զմիւռնիա, 4 Մարտ 18 . . .

Տէր Ա. ի բարիդ .

Նամակս ձեզ բերողն է Տէր այս անուն, զոր
կը խնդրեմ ընդունել մարդասիրաբար :

Հաճեցէք տալ նմա ի հաշիւ իմ մինչեւ
չորս հազար ութ հարիւր ֆրանք, ընկալա-
գիր առնլով և ձեր ծախքը զեղչելով : Գրե-
ցէք, կ'աղաչեմ, այս նամակիս տակ ինչ գու-
մար որ կու տաք յիշեալ Տեառն :

Ընկալարուք, Տէր, զհաւաստիս իմոց
յարգանաց :

Ա. Ա.



16. Յանձնարարութեան նամակի օրինակ :

Կոստանդնուպոլիս, 3 Մարտ 18 . . .

Տէր Լ. Պ. ի բարիդ .

Զայս նամակ պիտի տայ ձեզ որդիս այս

ասուն, որ մեծ պատիւ կը համարի իրեն ան-
ձամբ ճանչնալ զձեղ։ Որովհետեւ ծանօթ
չունի պատանին ձեր քաղաքին մէջ, կը հա-
մարձակիմ, Տէր, յանձնել զնա ձեր տան,
որպէս զի հաճիք տալ նմա տեղեկութիւն-
ներ, զորս երբեմն երբեմն խնդրելով պիտի
ձանձրացնէ զձեղ։ Այս ձանձրութեան փո-
խարէն, կ'աղաշեմ, Տէր, պահանջեցէք յի-
նէն ինչ ծառայութիւն որ կ'ուզէք։

Հաւատարիմ բարեկամ ձեր

Ա. Ա.

17. Շնորհակալութեան նամակի օրինակ :

Կոստանդնուպոլիս, 3 Հոկտ. 18 . . .

Տէր Ա. Ա. ի Համպուրի .

Ճնամակ ձեր գրեալ ի 23 ֆետրուարի ըն-
կալսյ, և անցուցի ի հաշիւ առնեաց ձերոց
Ֆբ. 4,925, զոր ճիշդ համաձայն դտայ իմ տետ-
րակներուս։

Շնորհակալ եմ վասն մարդասիրութեան
զոր ցուցանէք եղբօրորդւոյս. արդարեւ կըր-
կին պարտական ըրիք զիս ձեղ։

Շատ ուրախ եղայ տեսնելով ձեր որդին :
Ձեր ընտանեաց բոլոր անհատները սիրելի
են, բայց այս պատանւոյն վրայ տեսայ յա-
տուկ բարութիւն, քաղցրութիւն և այնպիսի

մէր առ ընտանիս իւր, որ արդէն տայ գու-
շակել թէ պատանին նշանաւոր անդամ պիտի
ըլլայ և օրհնութիւն ձեր ազնիւ գերդաստա-
նին. և գիտէք թէ ամէն բարիք որ կ'ըլլայ
ձեղ՝ կը համարիմ լեալ ինձ :

Ընկալարուք, Տէր, սեռն սիրոյ ողջոյնս :
Ա. Ա.



18. Շնորհակալութեան և ցաւակցութեան նամակի օրինակ :

Հավուր, 3 Դեկտ. 18 . . .

Տէր Ա. Ի Բարիղ.

Նամակ ձեր գրեալ յ9 ամսոյս կը պա-
րունակէր մեր տալեաց և առնեաց հաշուին
արդիւնքը, որուն նայելով գուք պարտա-
կան կը մնաք մեղ Ֆբ. 28. 94 : Այս հաշիւն
համաձայն է մերիններուն :

Շնորհակալ ենք ձեր նոր տարւոյ մաղ-
թանաց համար, և կ'աղաշենք ընդունել մե-
րիններն եւս վասն ձերոյ առողջութեան և
երջանկութեան, և գիտենք որ կը հաւատաք
թէ ինչ որ կ'ըսենք՝ ի սրտէ է : Եթէ ձեր բա-
րեկամութիւնը կը շարունակէք առ մեղ, վրս-
տահ լերուք զի և մեր կողմանէ ջանք երբէք
պակաս պիտի չըլլան զօրացնելու մեր յարա-
բերութիւններն առաջիկայ տարւոյս մէջ։

Նիւ Եորքէն գրուած նամակներուն լուրը

կութեան պայմանագրին։ Կը յուսամ, Տէր, որ լինելով կարեկից թշուառութեանս՝ արդէլք չէք դներ յիշեալ պայմանագրին։ Ինչ որ ըլլան իմ այն օրուան պայմաններս, գիտեցէք, Տէր, որ կորուստ ընել չեմ տար ձեզ, միայն փոքր ինչ ժամանակ աւելի պիտի սպառէք

Ընկալարուք, Տէր, զհաւաստիս իմոց մեծարանաց։

Ա. Ա.

Կը հասնի մինչեւ դեկտ. 20։ Կը կարդանք թէ սարսափ հրդեհին այն ինչ կը սկսի փարատիլ, և թէ որոշուած է ամենայն հնարիւք օգնել հրդեհի ապահովութեան ընկերութեանց, այնպէս որ հրկիղելոց պահանջները հատուցուին ամբողջ և անյառաղ։ Այս տխուր դէպք ուղղակի վնաս չունի մեզ, և կը յուսանք թէ վասն ձեր եւս այնպէս է։

Կրկնեմք, Տէր, զհաւաստիս մերոյ կատարեալ մոերմութեան։

Ա. Ա. Եւ Ընկ.




19. Զախորդութիւն, սահնկութիւն և այլն ճանուցամելու նամակ։

Լիոն, 10 Յունիս 18 . . .

Տէր։

Անտարակոյս գիտէք թէ սնանկ հրատարակուեցայ դժբախտութեամբ ամսոյս 2 ին վճռով, և թէ պարտատեարքս պիտի ժողվուին ի 20 ամսոյս ըստ հրամանի ձեռնհաս իշխանութեան։

Միտք ունիմ այն օր իմ դժբախտ վիճակիս համեմատ առաջարկութիւն ընել նոցատալով երաշխաւորութիւն։ Ուստի կ'աղաչեմ, Տէր, որ դուք եւս հոս ձեր կողմանէ փոխանորդ ցուցնէք, որ գտնուի ի ժողովին պարտատեարց և դնէ ստորագրութիւն սնան-



ՑԱՆԿ

| | | |
|-------|--|----|
| ՄՈՒՏ. | Նամակագրութեան վերաբերեալ ընդհանուր
սովորութիւնը ինչ և ձեւք բանից | 3 |
| 1. | Թուղթ նամակի | 3 |
| 2. | Թուական նամակի | 4 |
| 3. | Վերնագիր նամակի | 5 |
| 4. | Մարմին նամակի | 6 |
| 5. | Վերջ նամակի | 6 |
| 6. | Յետ զբութեան | 8 |
| 7. | Ստորագրութիւն | 9 |
| 8. | Նամակներ փակել կամ ծաւել | 9 |
| 9. | Նամակներ կնքել | 10 |
| 10. | Հասցէ նամակի | 10 |
| 11. | Այլ և այլ աստիճանի և կարգի անձանց
կամար վերնագրի, պատուանուան և
հասցէի ձեւեր | 11 |
| | Վերնագրի | 11 |
| | Պատուանուն կամ վերադիր գործա-
ծելի ի նամակին | 12 |
| | Օրինակը հասցէի | 13 |
| ԳԼ. | Ա. Նամակը մաղթանաց · Գիտողութիւն | 15 |
| Ա. | Նամակը նոր տարւոյ | 17 |
| 1. | Մանուկ որդի որ հեռու տեղ ի դպրոց
է առ ծնողս իւր | 17 |
| 2. | Հեռու տեղ ուսում սորվող երիցագոյն
որդի առ ծնողս իւր | 18 |

| | | |
|--------|---|-------|
| 3. | Ա.ՅԼ օրինակ նոյն նիւթոյ | 19 |
| 4. | Ա.ՅԼ օրինակ նոյն նիւթոյ | 20 |
| 5. | Ա.ՅԼ օրինակ նոյն նիւթոյ | 21 |
| 6. | Ի պատանւոյ առ ծնողս իւր | 22 |
| 7. | Յամուսնացեալ որդւոյ առ ծնողս իւր . | 23 |
| 8. | Յորդւոյ առ հայր իւր | 24 |
| 9. | Ռւստր կամ դուստր առ հայր կամ առ
մայր իւր | 25 |
| 10. | Հեռու տեղ ուսում սորվող դուստր առ
մայր իւր | 27 |
| 11. | Նոր տարւոյ մաղթանք որդւոյ առ հայր ,
կարգացուելու համար | 28 |
| | Կամակը նոր տարւոյ առ աղբականս | 29 |
| 12. | Մանուկ մի առ հաւ իւր | 29 |
| 13. | Մանուկ մի առ հօրեղբայր իւր | 30 |
| 14. | Ա.ռ կնքահայր կամ առ կնքամայր | 30 |
| 15. | Ա.ռ մտերիմ բարեկամ | 31 |
| 16. | Հայր ոմն առ դաստիարակ որդւոյն հան-
դերձ ընծայիւ | 32 |
| 17. | Ա.ռ բարերար ոք | 34 |
| 18. | Յումերէ առ դաստիարակ կամ վարդա-
պետ իւր | 34 |
| 19. | Ա.ռ մեծարոյ ոմն | 36 |
| 20. | Ա.ռ բարեկամ ոք որ ի յաջողութեան է . | 37 |
| 21. | Ա.ռ բարեկամ ոք որ է ի ձախողութեան . | 39 |
| 22. | Ա.ռ բարեկամ ոք առ որ երկար ժամա-
նակէ հետէ նամակ գրուած չէ | 40 |
| 23-29. | Պատասխանիք | 42-47 |

| | | | |
|-----|--|---|----|
| Բ. | Կամակը տարեղաբճի ծննդեան կամ անուան ուրուք | 47 | |
| 30. | Ա.ռ հայր յաւուր տօնի անուան | 47 | |
| 31. | Ա.ռ մայր յաւուր տօնի անուան նորա . | 48 | |
| 32. | Ա.ռ հայր կամ առ մայր յաւուր տօնի
անուան նոցա | 49 | |
| 33. | Ա.ՅԼ օրինակ նոյն նիւթոյ | 50 | |
| 34. | Ա.ռ պաշտպան ոք յաւուր տարեղաբճի
ծննդեան նորա | 51 | |
| 35. | Գուրդէն առ մօրեղբայր իւր ի տարե-
ղաբճի ծննդեան նորա | 51 | |
| 36. | Նոյն նիւթոյ վրայ առ հօրեղբայր . . . | 52 | |
| 37. | Ա.ռ կարի մտերիմ բարեկամ ոք՝ նոյն
նիւթոյ վրայ | 54 | |
| 38. | Ա.ռ ծանրաբարոյ ոմն յաւուր տարեղաբ-
ճի ծննդեան նորա | 55 | |
| ԳԼ. | Բ. | Կամակը խնդակցութեան վասն պէսպէս պատ-
ճառաց . Գիտողութիւն | 57 |
| 39. | Ա.ռ այր կամ կին նորոգ ամուսնացեալ | 58 | |
| 40. | Ա.ռ այր ոք նոյն նիւթոյ վրայ | 59 | |
| 41. | Ա.ռ կին ոմն նոյն նիւթոյ վրայ | 60 | |
| 42. | Ա.ռ հայր կամ առ մայր վասն ծննդեան
որդւոյ | 61 | |
| 43. | Ա.ռ ծնողս վասն ծննդեան ուստեր . . | 62 | |
| 44. | Ա.ռ տիկին ոք որոյ դուստր պիտի ա-
մուսնանայ | 63 | |
| 45. | Ի տիկնոջէ առ այլ տիկին որ դուստր
մի ծնած է | 64 | |

| | | |
|-----|---|----|
| 46. | Առ հայր վասն ամուսնութեան դստերն . | 65 |
| 47. | Առ ոմն որ նոր պաշտօն ընդունած է . | 66 |
| 48. | Առ պաշտպան ոք որ հասած է բարձր
պաշտօնի | 67 |
| 49. | Առ բարեկամ ոք որ յետ երկար պան-
դըկտութեան հասած է ի հայրենիս . . | 69 |
| 50. | Առ բարեկամ ոք որ նոր առողջացած է
ծանր հիւանդութենէ | 70 |
| 51. | Խնդակցութեան ընդհանուր պատաս-
խանի | 72 |
| 52. | Այլ պատասխանի | 73 |
| Գլ. | Գ. Նամակը ցաւակցութեան . Դիտողութիւն . | 74 |
| 54. | Ցաւակցութեան նամակ առ բարեկամ
ոք վասն մահու հօր կամ մօր նորա . | 75 |
| 55. | Առ այր որոյ կին մեռած է | 75 |
| 56. | Առ կին որոյ այրն մեռած է | 77 |
| 57. | Այլ նամակ նոյն նիւթոյ | 78 |
| 58. | Ցաւակցութեան նամակ վասն մահու
սիրելոյ (որդոյ , ազգականի , բարե-
կամի) | 79 |
| 59. | Ուստր կամ դուստր առ հայր կամ առ
մայր իւր՝ վասն մահուան միոյ ինոցանէ. | 80 |
| 60. | Այլ նամակ նոյն նիւթոյ վրայ | 81 |
| 61. | Հօրեղայր ոմն առ եղբօրորդին իւր ո-
րոյ մայրն մեռած է | 83 |
| 62. | Բարեկամ ոմն ծանուցանէ բարեկամին
իւրում զմահ եղբօր նորա , և կը միշ-
թարէ զնա | 85 |

| | | |
|---|---|-----|
| Ցաւակցութեան նամակի պատասխան . Դիտողութիւն . | 87 | |
| 63. | Ցաւակցութեան նամակի պատասխան . | 88 |
| Գլ. Դ. Մխիթարական նամակներ . Դիտողութիւն . | 89 | |
| 64. | Մխիթարական նամակ առ բարեկամ
ոք որ ձախորդութեան հանդիպած է . | 90 |
| 65. | Առ մայր որոյ դուստրն հիւանդ է . . . | 91 |
| 66. | Առ բարեկամ ոք որոյ տուն և գոյք այ-
րած են մեծ հրդեհէ | 92 |
| 67. | Առ պատանի ոմն որ հիւանդութեան
պատճառաւ չէ կարացեալ առնուլ զա-
ռաջին մրցանակն | 94 |
| 68. | Հանի ոմն մխիթարէ ընծայիւ զիւր աղ-
ջիկ թոռն , որոյ եղբայրն զիշերօթիկ
դպրոց գացած է | 95 |
| 69. | Առ քեռորդի որ ծանր դրամական կո-
րուստ ըրած է | 97 |
| Գլ. Ե. Շնորհակալութեան նամակներ . Դիտողութիւն . | 99 | |
| 70. | Երախտեաց համար շնորհակալութիւն . | 100 |
| 71. | Պաշտօնի հասնող մը առ այն որոյ միջ-
նորդութեամբ հասած է յայն պաշտօն . | 101 |
| 72. | Առ բարեկամ ոք որ փոխ տուած է նա-
մակը զրողին | 102 |
| 73. | Շնորհակալութեան նամակ հանդերձ
ընծայիւ առ բժիշկ ոք | 103 |
| 74. | Կնքահայր ոմն առ սան իւր որ անոր
անուան դարձը շնորհաւորած է . . . | 104 |

75. Ոմն առ ընկեր իւր վասն ընծայի նորա . 105
 76. Պատանի ոմն առ մօրաքոյր իւր 106
- ԳԼ. Զ. Ներումն խնդրելու կամ չքմեղութեան նամակներ . Դիտողութիւն 108
77. Պատանի ոմն իւր հաւէն ներում կը խնդրէ անոր հետյանդգնաբար վարուելուն համար 109
78. Աշակերտ ոմն ներում կը խնդրէ վարժապետէն զոր անարգած է 110
79. Փոխ առնուած զիրքը ետ դարձնելու ակամայ յապաղող մը ներում կը խնդրէ իւր բարեկամէն 111
80. Երեւելի պաշտպանի մը նամակ զրել ուշացնող մը ներում կը խնդրէ 112
81. Վշտացեալ բարեկամներէ ներում խընդրելու նամակ 114
- ԳԼ. Է. Խնդրուածոյ , պահանջման , յանձնառութեան և մերժման նամակներ . Դիտողութիւն 116
82. Ոմն կը յանձնէ բարեկամի մը խնամոց զիւր որդին որ Բարիդ կ'երթայ ուսման համար 118
83. Դասատուէ մը կը խնդրուի դաս տալ պատանւոյ ումեք ի տան 120
84. Պաշտօնատար ոմն ընկերութեան մը տընօրէնէն կը խնդրէ ամսական մը կանխիկ 121

85. Մայր ոք կամելով զիշերօթիկ դպրոց գընել իւր որդին՝ կը խնդրէ բարեկամէ մը ցուցնել յարմար դպրոց 122
86. Փոխ ստակ խնդրող խարդախ վաճառականի կը զլացուի ստակ տալ 124
87. Պատանի ոմն որ Մարսիլիա կը գտնուի՝ կը խորհի ձանապարհորդել , և հայր նորա աղաչէ նոյն քաղաքը բնակող բարեկամի յորդորել զպատանին ի բաց կալ այն նպատակէն 126
88. Բժշկէ մը կը խնդրուի գալ դարմանել հիւանդ մը 127
89. Խնդրուած առ տիկին ոմն 128
90. Տիկին ոմն կը խնդրէ աղախին ի հօրաքեռէն իւրմէ 129
91. Կառք մը գնել կ'առաջարկուի ումեք . 130
92. Զի մը գնել կ'առաջարկուի ումեք . . 131
93. Ոմն կ'իմացունէ իւր բարեկամին թէ վարձու համար շատյարմար տուն մը կայ . 132
94. Տիկին ոմն կը յայտնէ ուրիշ տիկնոջ երեկոյթը երթալէ Հրաժարելուն պատճառներ 134
95. Ոմն կ'իմացունէ իւր բարեկամին թէ չկարէ փոխ տալ նմա այն ինչ գումարը կոր կը խնդրէ 136
96. Պարտքը չհատուցանող ումեք կը զլացուի նորէն փոխ տալ 136
- ԳԼ. Ը. Յանձնարարութեան նամակներ . Դիտողութիւն 138
97. Վարժարանի տեսուչ մը ուրիշ վարժա-

- բանի տեսչին վարժապետցու մը կը
յանձնէ 139
98. Թշուառ այրւոյ մը օգնել կը խնդրուի
ի կոմուհւոյ 141
99. Իրաւագէտ պատանի ոմն կը յանձնուի
առեւտրական ժողովոյ նախագահին 144
100. Օտար երկիր գացող սպասաւոր աղջիկ
մը կը յանձնուի բարեկամ գերդաս-
տանի մը 145
101. Առ ընտանի բարեկամ ոք յանձնարա-
րական նամակ 147
102. Քահանայի ումեք կը յանձնուի դժբախտ
ընտանեաց հայր մը 149
103. Պատասխանի նախընթաց նամակին 151
- ԳԼ. Թ. Խրատուութեան, յանդիմանութեան և գան-
գատանաց նամակներ . Դիտողութիւն 154
104. Հօրեղբայր ոմն կը ծանուցանէ իր եղ-
բօրորդւոյն թէ հասած է ի նոր պաշ-
տոն 156
105. Յանդիմանական նամակ եղբօր առ
եղբայր իւր որ գործը թողլով օտար
երկիր բախտ խնդրելու համար գաղ-
թել կը խորհի 158
- ԳԼ. Փ. Նամակք նուիրաց և հրաւիրանաց . Դիտո-
ղութիւն 161
106. Ընծայ ընդունուած մատենի մը համար
շնորհակալութիւն 161
107. Միսաք կը զրկէ ընծայ առ մօրաքեռոր-

- դի իւր կարեն 162
108. Բարեկամի ումեք ընծայ կը զրկուի . 163
109. Մանուկ իւր կենդանագիրը կը դրէ
առ հօրաքոյր իւր 164
110. Բարեկամական հրաւէր ի ճաշ՝ ընտա-
նեկան ոճով 165
111. Գեղացի ընտանիք այգեկութի կը հը-
րաւիրուին 167
112. Հրաւէր ի խրախութիւն 168
113. Ամարանոցի այցելութեան հրաւէր . 170
114. Հրաւէր ընդունելէ հրաժարելու նա-
մակ 171
- ԳԼ. ԺԱ. Ըստանեկան նամակներ . Դիտողութիւն 173
115. Հայր ոմն առ որդին իւր որ հիւանդու-
թենէ նոր ելած է 173
116. Շնորհակալութեան նամակ առ ուսու-
ցիչ ոմն 175
117. Պատանի ոմն կ'իմացնէ իւր մօր թէ
խօսուեցաւ այս անուն օրիորդին 176
118. Եղբայր ոմն կը զրէ առ բոյր իւր նուէր
պատրաստել իրենց մօրը տօնին օր-
ուան և իրենց ստնտուին համար . 178
119. Բարեկամ տիկին ոմն կը զրէ առ նո-
րոդ ամուսնացեալ կին տնտեսութեան
վրայ 180
120. Աղջիկ ոմն կուտայ իւր հօրը առողջու-
թեան աւետիսն առ հօրաքոյր իւր 185
121. Մօրեղբայր ոմն զրելով առ եղբօր
դուստր իւր այրի կ'առաջարկէ նմա-

| | |
|---|----------------|
| ամուսնութիւն | 186 |
| 122. Նկարագիր ճանապարհորդութեան | 189 |
| ԳԼ. ԺԲ. Տոմակներ , այլեւայլ դիպաց և գործի նամակներ . Դիտողութիւն | 193 |
| Օրինակը տոմակաց | 195 |
| 1. Հրաւէր ի ճաշ կամ ի հանդէս | 195 |
| Պատասխան | 196 |
| 2. Տոմակ ժամադրութեան | 197 |
| Պատասխան | 198 |
| Օրինակ տոմակի որ կը զրուի երբ
տունը չգտնուիր անձ մը որուն այցե-
լութիւն եղած է | 198 |
| 3. Այլեւայլ նիւթոց վրայ տոմակներ | 199 |
| Պատասխան | 199 |
| Այլեւայլ ձեռագիտաց զրուելու տոմ-
ակաց օրինակներ | 200 |
| ԳԼ. ԺԳ. Ծանուցագիր կամ շրջաբերական՝ հարսանիք,
մաս , ծննդաբերութիւն իմացնելու համար | 202-205 |
| ԳԼ. ԺԻ. Տեղեկութիւններ տարու այլեւայլ նամակներ | 206 |
| Որդույ մը նամակն առ հայր իւր՝ իմա-
ցնելու անոր զամուսնութիւն իւր | 206 |
| Նամակ ստնտուի քով գտնուած ման-
կան մահն իմացնելու | 207 |
| Սահտուի մը յանդիմանութիւն | 208 |
| Այս նամակին պատասխան | 208 |
| Նամակ զրեալ առ ազգական ոմն կամ
բարեկամ խնդրելու համար որ կնքա-
հայր ըլլայ | 210 |

| | |
|--|------------|
| Պատասխանի հաստատական | 210 |
| Պատասխանի բացասական | 211 |
| Նամակ՝ ստնտուի քով գտնուած ման-
կան հիւանդութիւնը ծանուցանելու . | 212 |
| Նամակ՝ իմացնելու համար թէ տղան
վտանգէ աղատած է | 212 |
| Նամակ՝ ստնտուի վրայ տեղեկութիւն
խնդրելու | 213 |
| Մայր մը կ'իմացնէ որդւոյն թէ հայր
նորա ծանը հիւանդ է | 214 |
| Նամակ՝ հօր մահն իմացնելու որդւոյն | 215 |
| Այր ոմն ծանուցանէ իւր կնոջ մահն
հօր իւրում | 216 |
| Հայր ոմն իւր որդւոյն մահը կը ծա-
նուցանէ միւս որդւոյն | 216 |
| Փոքրիկ տղու մը մահը կը ծանուցուի | 218 |
| Մօտաւոր ազգականի մը մահը կը ծա-
նուցուի | 218 |
| ԳԼ. ԺԵ. Գործի նամակներ | 220 |
| Առնլիք կը պահանջուի | 220 |
| Նոյն նիւթին վրայ այլ նամակ | 220 |
| Սնանկութեան հաշուետեսէ (սինտիք)
մը տեղեկութիւն կը խնդրուի | 221 |
| Աւագերէցէ մը մկրտութեան վկայա-
կան կը խնդրուի | 222 |
| Թաղական խորհրդոյ անդամէ տեղե-
կութիւն կը խնդրուի անձի մը վրայ . | 223 |
| Ազգային հիւանդանոցի տնօրէնէ հոն
ընդունուած անձի մը վրայ տեղեկու-
թիւն կը խնդրուի | 224 |

- Վէճ ունեցող անձ մը կ'առաջարկէ իւր
հակառակողին յանձնել դժուարու-
թեան լուծումն իրաւարարի 225
Վերի նամակին պատասխան 226
Իրաւախոհ ըլլալու առաջարկութիւն մը 226
Պատասխանի նախընթաց նամակին . 228
Տան տիրոջ մը կ'առաջարկուի նորո-
գութիւն ընել 229
Տանուտեառնէ մը կը խնդրուի տան
վարձագիրը նորոգել 230
Յանձնարարական նամակ ի նպաստ
գործառի 230
Յանձնարարական նամակ գործառորէ
ի նպաստ այլոյ գործառորի 234
Գործառոր ոմն շնորհակալ լինի այլում
որ յանձնարարութիւն ըրած է ի նը-
պաստ նորա 234
Որմնագիր ոմն կը խնդրէ գործ 232
Հասարակ գործառոր ոմն խնդրէ գործ 233
- ԳԼ. ԺԶ. Օրինակը պայմանագրի 235
1. Վաճառման պայմանագիր 235
2. Պայմանագիր խոստման՝ տաւն մը վար-
ձու տալու 237
3. Ա. Ալ պայմանագիր վարձու տան 239
Օրինակ պարտամուրհակի 240
Օրինակ վաճառելի մուրհակի (պօնօ) 240
- ԳԼ. ԺԷ. Աղերսագիր . Գիտողութիւն 242
- Առ Պատրիարքն ուղղեալ աղերսագիր
ուր գեղի մը երիցուէն կը գանգատուի 243
Թաղի մը ժողովզյն ուղղեալ աղերսագիր 245
Աղերսագիր ուղղեալ առ քաղաքական
ժողով 248

- ԳԼ. ԺԸ. Առեւտրական նամակներ . Գիտողութիւն 251
1. Օրինակ շրջաբերականի 253
Ա. Ալ օրինակ 254
2. Գործի առաջարկութեան նամակի օ-
րինակ 254
3. Գործի սկզբնաւորութեան նամակի օ-
րինակ 255
4. Ա. Ա. գնոյ նամակի օրինակ 256
5. Տեղեկութեանց նամակի օրինակ 257
Պատասխանի 258
6. Վաճառաց առաքման նամակի օրինակ 259
7. Վաճառաց ընդունելութեան նամակի
օրինակ 261
8. Նամակ որով կը ծանուցուի թէ այս
ինչ գումարը կը զրկուի 261
9. Նամակ որով կը ծանուցուի թէ այս
ինչ գումարն հասած է 262
10. Ստակ խնդրելու նամակի օրինակ 263
Նոյնք առ նոյն 264
11. Թուլացեալ յարաբերութիւն մը պնդելոյ
համար գրուած նամակի օրինակ 265
12. Օրինակ յանդիմանութեան նամակի 266
13. Զքմեղութեան նամակի օրինակ 267
14. Հաջու տեսնելու կամ ցուցնելու նա-
մակներ 268
15. Վարկ խնդրելու նամակի օրինակ 269
16. Յանձնարարութեան նամակի օրինակ 269
17. Շնորհակալութեան նամակի օրինակ 270
18. Շնորհաւորութեան և ցաւակցութեան
նամակի օրինակ 271
19. Զախորդութիւն, սահնկութիւն և այլն
ծանուցանելու նամակ 272

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂԱ

Նամակագրութիւնը գրագիտութեան կարեւոր ճիւղերէն մին է, և հարկաւոր դրեթէ ամէն առաջինի մարդոց : Կայ վիճակ որ չունենայ պէտոյ յաճախ դիմելոյ առ այս պարզ միջոց գրաւոր հաղորդակցութեան : Թէպէտ պարզ և սովորական, ունի սակայն այս արուեստ բաւական դժուարութիւններ որ կը հարթուին ի խոհեմութենէ թելադրեալ այլեւայլ կանոններով և ընտիր հեղինակաց գործնական օրինակօք :

Մեր այս փոքրիկ քարտուղար կը պարունակէ այս կանոններ համառօտիւ, և որովհետեւ օրինակն ազդու է քան զպատուէրս, ի մատենական աստ փոյթ տարուած է յաճախել պատուէրներ : Պիտի գտնեն աստ ընթերցողք զայլեւայլնիւթոց իբր երկերիւ նամականի, որոց ոչ միշտ այն ընտրութեան, այլեւ լնդուին եւ ոճոյն պարզութեան եւ մաքրութեան խնամով միտ դրուած է . յատկապէս ջանացուած է քաղցր գործել դընտանեկան ոճ : Ունի նաեւ մատենիկս պայմանագրի, աղերսազրի, ծանուցմանց եւ առեւտրական նամակաց ոչ սակաւ օրինակներ : Հետինական ակն ունի թէ նամականիս օգտակարութեան հետ զուարձութեան եւ ընտիր ճաշակի եւս պիտի նպաստէ մեր ժիր մանկտոյն :



9714

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0082471

